

84

U-82

110

12 MAR 2011

FP





1705 841 54

84

890.43  
1730.0 10

Մ-82

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ Մ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

ՀԱՆՐԻ ՄԻՒՐԺԷ

21

ԴՐՈՒԱԳՆԵՐ  
ՊՈՋԵՄՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԷ

(ԵՐԳԻԾԱԿԱՆ ՎԷՊ)

ԹԱՐԳՄ. Յ. ԱԼՓԻԱՐ



ՍՈՒՐԲ ԿԵՐՄԵՍ ԾՆՈՐՀԱԼԻ  
ԳՐԱԴԱՐԱՆ  
ST. NERSES SHNORHALI  
LIBRARY

Տպագր. Մ. ՏԵՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

1928



ԻՆՉՊԷՍ ԿԱԶՄՈՒԵՑԱԻ

ՊՈՋԵՄՆԵՐՈՒ ԱԿՈՒՄԲԸ

Ա.

Ահա թէ ի՛նչպէս զիպուածը, որուն համար ըս-  
կեպարկները կ'ըսեն թէ Աստուծոյ զործակատարն է,  
օրին մէկը իրարու դէմ հանեց այն անձերը, օրոնց  
եղբայրական ընկերակցութիւնը պիտի կազմէր եւ-  
քէն՝ ակումբը Պոնէմներու այն մասին, զոր այս  
դիրքին հեղինակը ջանաց ծանօթացնել հասարա-  
կութեան:

Աստու մը (Ապրիլի 8 էր), Ալէքսանդր Շոնար,  
որ նկարչութեան և երաժշտութեան ազատ արուեստ-  
ները կը մշակէր կրկին, յանկարծ քունէն արթնցաւ  
այն աղմուկէն, զոր կը յարուցանէր դրացի աքաղաղ  
մը որ իբրև ժամացոյց կը ծառայէր իրեն:

— Անիծից արմատ, գոչեց Շոնար, իմ փեարա-  
զարդ ժամացոյցս առաջ կ'երթայ, կարելի չէ որ ար-  
դէն այսօր եղած ըլլայ:

Այս խօսքերը արտասանելով խենդի պէս վար  
ցատկեց ճարտարօրէն հնարած իր մէկ կորուսիէն, որ  
գիշերը անկողնի դեր կը խաղար (դեր մը զոր շա-  
գէշ կը կատարէր, ըսել չըլլայ) և որ ցերեկը պաշտօն  
ունէր տեղը բռնելու բոլոր այն կարասիներուն, զորս  
նախընթաց տարւոյն սաստկաշունչ ձմեռը առած  
տարած էր: Տեսակ մը ամէն—բան, ինչպէս կը  
տեսնուի:

Առաւօտեան ցուրտին դէմ ինքզինքը պատասա-  
րելու համար, Շոնար վրան անցուց ծաղկենկարներով

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՐԹԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԼ ԿՐԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

861-2011



գանակուած վարդազոյն սնդուսէ «միսօ» մը զոր սե-  
նեկազգեստի աեղ կը գործածէր:

Այս կեղծ վերարկուն, դիմակաւոր պարահանդէօր  
գիշեր մը, յիմարութիւնը պատկերացնող ծպտուած  
կին մը, որ խենդութիւնը սենեցած էր հաւատալու Շո-  
նարի խաբերայ խօսքերուն, մոռցած էր արթիւթիւն  
սենեակը, մինչ ա՛ն ալ իր կարգին ծպտուած էր իբրեւ  
Մօնաօրի մարքիզը և սր զրպանին մէջ կը շխրասց-  
նէր հրապուրիչ հնչիւնը երկօտասանեակ մը մետաղի  
կտորէ շինուած կեղծ ոսկիներու, զորս թոցուցած էր  
թատրոսի մը մանրասարքէն:

Այդ տունի հագուստով իր արդուզարդը ընելէ  
եաքը, արուեստագէտը գնաց բացօթ պատուհանը եւ  
անոր փեղկը: Արեւի ճառագայթ մը լուսաշող նետի  
մը պէս մէկէն ի մէկ ներս թափանցեց եւ ստիպեց որ  
ան խարխափէ դեռ քունին մշուշովը քողարկուած իր  
աչքերը:

— Նո՛յն ինքն արշալոյսն է, մրմնջեց Շոնար,  
զարմանալի՛ բան, բայց, աւելցուց պատէն կախուած  
օրացոյցի մը վրայ աչք պտտցնելէ եաք, գործին մէջ  
սխալ մը կայ: Գիտական ծանօթութիւնները կը հա-  
տատեն թէ տարւոյն այս եղանակին, արեւը պէտք է  
որ ծագի ժամը հինգուկէսին, մինչդեռ հիմա հինգն է  
միայն և արդէն անիկա ոտքի է ելեր: Դատապարտելի  
եռանդ: Արեւը յանցաւոր է: Օղերեւութական պաշ-  
տօնատունը պիտի երթամ իրեն դէմ բողոքելու հա-  
մար: Միւս կողմէ սակայն, աւելցուց, ամէն բանէ  
առաջ նախ մտմտուքը առնելու էր զիս: Այսօր երէկ-  
ուան վաղն է և քանի որ երէկ ամսուն եօթն էր և  
քանի որ Սաթուրնոս ետ ետ քալելու սովորութիւնը  
չունի, այսօր սւրբմն պէտք է որ Ապրիլի ութը ըլ-  
լայ, և եթէ հաւատք ընծայելու ըլլամ ու գրուածքին  
պարունակութեանը հրօսաւ Շոնար, և գնաց վերստին  
կարգալու պատէն կախուած այն ազդարարագիրը,  
որով դատարանին բարապանը հրաւեր կը կարգար  
տունէն ելլելու, այսօր պէտք է որ ճիշտ կէսօրին

սենեակը պարպեմ և Պ. Պէրնուաօի, ամառիտոյն ա-  
փին մէջ համբիւ եօթանասունըհինգ Ֆրանքի դուար  
մը, անցած երեք ամիսներու վարձքիս համար և զոր  
ինձմէ կը պահանջէ, անճոռնի գրութիւնով մը: Ես  
կը կործէի. ինչպէս միշտ, թէ զիպուածը յանձն պիտի  
առնէր այս գործը կարգադրելու, բայց կ'երեւայ թէ  
առավ զբաղելու ժամն չգտաւ. ինչ և իցէ, դեռ վեց  
ժամ ունիմ առջիս, զորս լաւ գործածելով կարելի է  
որ...: «Հայտէ՛», «հայտէ՛», ճամբայ իյնանք, ա-  
ւելցուց Շոնար:

Այն միջոցին որ կը պատրաստուէր հագնելու  
բալթօ մը, որուն կերպասը նախապէս մազոտ էր,  
բայց հիմա հերթափութեանէ բռնուած ըլլալ կը թուէր  
յանկարծ խելքին փչեց և սկսաւ խելագարի պէս պա-  
րել իր հեղինակած մէկ կայթերգը, զոր հասարակաց  
պարահանդէսներու մէջ պարել տուած ըլլալուն հա-  
մար արժանացած էր ոտականական պատիւներու:

— Սաչոր, ազոզակեց, առտուան օդը ներշնչ-  
չու մներ կուտայ մարդուս. ինձի անտնկ կուգայ որ  
փնտուած եղանակիս պոչէն պիտի բսնեմ: Փորձենք:

Եւ Շոնար գրեթէ մերկ, գնաց նստաւ գաշնա-  
կին առջեւ, և փոթորկալից դափիւնով մը այդ գոր-  
ծիքը քունէ արթնցնելէն եաքը, սկսաւ մէկ կողմէն  
մենախօսելով ստեղնաշարին վրայ հետապնդել այն  
քաղցրանուագ հատուածը զոր շատոնց կը փնտաէր:

— So, ուր, մի, տօ, լա, սի, աօ, բէ, հը՛մ,  
հը՛մ. Փա, բէ, մի, բէ: Ա՛յ, ա՛յ, աա ճրէ՛նն Յուգո-  
յին պէս նենգ է, ըսաւ Շոնար և սաստկօրէն հար-  
ուածներ իջեցուց կասկածելի հնչիւն սենեցող խաղին  
վրայ: Հիմա «միսէօր»ին նայինք, պէտք է որ ան  
ճարպիկ կերպով պատկերացնէ մանկամարդ ազլիկ մը  
որ կապոյտ լճակի մը մէջ ճերմակ ապրիմ-մեռնիմ մը  
փեթրտելու վրայ է: Ահաւաօիկ գաղափար մը, որուն  
բերանը ապահովապէս կաթ չի հոտիր: Եւ քանի որ  
«մօտա՛ն օս է և որովհետեւ հրատարակիչ մը կարելի  
չէ գանել որ յանձն առնէ ապագրել վիպերգ մը, որուն



մէջ կապոյտ լճակ մը չի կայ, ուրիշ կերպ կարելի չէ  
ընել, պէտք է համակերպիլ:

Տօ, սօլ, մի, աս, լա, օր, աս, րէ, աս գէշ չէր-  
թար կոր, եթէ ոչ ապրիմ-մեռնիմի, բայց դոնէ  
գտակածաղիկի գաղափարը կուտայ կոր, մա-  
նաւանդ անոնց՝ որ ակար չեն բուսաբանութեան մէջ:

Լա, մի, աս, րէ, շունչանորդի, րէ, Աստուած  
պէլադ տայ: Հիմա, կապոյտ լճակը լաւ մը պատ-  
կերացնելու համար, խոնաւ երկնագոյն, լուսնի  
ճառագայթի մը պէս բանի մը պէտք ունիմ (Գործին  
մէջ լուսին ալ կայ): Հէ՞, կարծես կ'ըլլայ կոր, կա-  
րպան ալ չմտնանք, ֆա, մի, լա, սօլ, շարունակեց  
Շոնար վերի օքթօվին վրայ բիւրեղածայն խաղեր  
հնչեցնելով: Ազջկան մնաք բարովը մնաց, պահիկէ մը  
ինքզինքը կապոյտ լճակին մէջ պիտի նետէ երթալ  
միանալու համար իր օրականին, որ ձիւնին քակ  
թաղուած է:

Այս վախճանը շատ յստակ չէ, բայց ասէն պա-  
րագայի մէջ դիւրին չէ ատկէ աւելի շահեկան բան  
սը գտնել: Շատ դորովալի, մեյամաղձիկ բան մը  
պէտք էր, ահա կուգայ կոր, կարծեմ գտայ, ահա-  
ւասիկ մէկ երկոտասնեակ խաղեր, որ Մագթաղինէ-  
ներու պէս կը հեծկլտան, ըսաւ Շոնար, ծաղկեկար-  
ներով զանակուած «սիսօ»ն վրայ անցնելով: Եթէ  
այս եղանակը սիրտերը կարենալ ճեղքելուն պէս  
ճեղքէր նաև սա անկողնիս տակի մարդուկը, որ զիս  
շատ կը նեղէ երբ հրաւիրեալներ ունիմ կերակուրի:  
Աս գէշ չէր ըլլար, կտորուանքներովը կրակ կը վա-  
ռէի: Հիմա, լա, լա, ... րէ, մի, կ'զգամ թէ ներ-  
չնչումը կուգայ կոր հարբուխի մը մէջ փաթթուած,  
ի՛նչ ընենք, ասանկ թող երթայ, կայնէ սա աղջիկը  
մէջ մը խեղդենք:

Միշտ մտաները կը չարչրկէին դաշնակին արո-  
փուն ստեղնաշարը: Շոնար վառ աչքով ակամջները  
անկած, իր մեղդիին ետեւէն կը վազէր, իրբեւ թէ  
անիկա անչօջփելի օդօղի մը ըլլար ուսուսող այն  
թանձր սչուշին մէջ, զոր դաշնակին թրթուումները  
կարծես կը կազմէին սենեակին մէջ:

— Հիմա նայինք, վրայ բերաւ Շոնար, գտած  
եղանակս և բանաստեղծին խօսքերը իրար կը բռնե՞ն  
կոր:

Եւ ըթին տակէն անախորժ ձայնով մը մրտալ  
սկսաւ բանաստեղծական հետեւեալ հատուածը, որ  
Օբէրաֆօմիլքի և առասպելական պատմուածքներու  
մէջ կը քշուի:

Խարտեաչ աղջիկը  
Աստեղագարդ երկնքին  
Գլխուն քողը հանելով  
Հեղ ակնարկ մը կը նետէ  
Եւ երկնագոյն ալեաց մէջ  
Արծաթ կոհակ լճակին

Ընտօ՞ր, ընտօ՞ր, ըսաւ Շոնար արդար ցասու-  
մով մը ինքզինքէն ելած, առոր ուշադրութիւն չէի  
ըրած, այս ըսուածը խիստ վիպական է. այդ բա-  
նաստեղծը յիմարին մէկը ըլլալու է որ ո՛չ արծաթ  
տեսած ունի և ոչ ալ լճակ մը: Իր հեղինակած գե-  
ղօնը պարզօպէս տխմար է: Միւս կողմէ իր ոտա-  
նաւորին ձեւը բնաւ չի յարմարի իմ երածշաու-  
թեանս: Ասկէ ետքը ոտանաւորներն ալ ես պիտի  
գրեմ: Ահա անմիջապէս դործի կ'սկսիմ, քանի որ  
ներչնչումս տեղն է այսօր. կայնէ ոտանաւորին մէկ  
ստուերօգիքը շինեմ, որուն վրայ ետքէն եղանակը  
յարմարցնելի դիւրին կ'ըլլայ:

Եւ Շոնար գլուխը երկու ձեռքերուն մէջ առած  
ինքզինքին տուաւ այն կերպարանքը, զոր հասարակ  
մահկանացուները կ'զգենուն, երբ յարաբերութեան  
մէջ կը մտնեն մուսաներուն հետ:

Քանի մը վայրկեան տեւող այս անձնատուութենէ  
ետքը, յղացած էր անանկ «անճոռնի» ոտանաւոր մը  
որուն «այլանդակութիւն» տնունը կուտան այն յոն-  
գաւոր գրողները, որոնք հեղինակներու ներչնչումին  
ծառայող առժամանակեայ ստուերագրեր կը պատրաս-  
տեն: Ահաւասիկ այդ հատուածը:



Ութը և ութը տասն և վեց  
 Վեց կը դնեմ, ձեռք կայ սէկ  
 Շատ ուրախ պիտի ըլլայի  
 Եթէ մէկը գտնուէր  
 Ազգատ բայց պատուաւոր  
 Որ ութ հարիւր ֆրանք փոխ տար  
 Որ պարաքերս վճարեմ  
 Երբ որ ատեն ունենամ

ՅԱՆԿԵՐԳ.— Եւ երբ հնչէ ժամը յետին  
 Տաներկուքին քառորդ մնացած  
 Պարկեշտօրէն պարաքս ամս  
 Պարոն Պէրնառին

— Չոր սատանայ, ըսաւ Շոնար գրածը աչքէ  
 անցընելով, «յետին» և «Պէրնառին», ահա՛ ձեզի յան-  
 դեր որ միլիոնատէր չեն. բայց ժամանակ չունիմ դի-  
 րենք հարստացնելու. հիմա նայինք վանկերը խաղե-  
 րուս հետ համաձայն կ'երթան կոր:

Եւ իրեն յատուկ զոնչական ձայնովը քթին տա-  
 կէն մուտաւ սկսաւ իր հեղինակած կտորը:

Գոհ՝ ձեռք անցուցած արդիւնքէն, շնորհաւորեց  
 ինքզինքը երեսի խնդագին այն ծամածուծութիւնով որ  
 «աքտան սիրքօնֆլէքս»ի մը պէս կուգար կը հեծնար  
 քթին վրայ, ամէն անգամ որ ինքնիրսէ դոհ ըլլալու  
 պատճառներ կ'ունենար: Բայց այս գոռօզ երանու-  
 թիւնը երկար չքչեց:

Մտաւկայ զանգակատան մը ժամացոյցը տասնը  
 մէկ զարկաւ: Այդ ժամհարութեան ամէն մէկ հար-  
 ուածները կուգային կը սխուէին սենեակին մէջ և  
 կը վերածուէին անանկ հիգնական հնչիւնի մը որ  
 կարծես տարաբարա Շոնարին ըսել կ'ուզէր,

— Պատրա՞տ եօ:

— Ժամանակը եղջերուի պէս կը վազէ, ըսաւ,  
 երեք քառորդ ժամ սենիմ սողիօ, եօթանասուն հինգ  
 ֆրանք և նոր բնակարան մը ճարելու համար, և  
 զլուխը երկու ծունկերուն միջեւ դնելով մտածմունքի  
 անդունդին մէջ գահավիժեցաւ:

Հինգ վայրկեանները շուտ մը սահեցան և Շոնար

զլուխը վեր տաւ առանց գտած ըլլալու բան մը, որ  
 եօթանասունըհինգ ֆրանքի նմանէր:

— Ասոր տակէն ելլելու համար, ինծի մէկ բան  
 միայն կը մնայ ընել, առնել քալել. խիստ հաւանա-  
 կան է որ բարեկամս դիպուածը գուրսը Արևին մէջ  
 կը պարտկի կոր, անհրաժեշտ է որ ան զիս ալ սիրէ,  
 մինչև որ Պ. Պէրնառի հետ հաշիւս կարգադրեմ:

Շոնար ձեռքին տակ ինկածներովը լեցնելէ ետքը  
 բալթօին դրպանները, որ խորունկ էին գետնափոր  
 շտեմարանի մը պէս, թաշկինակի մը մէջ ծրարեց  
 քանի մը կտոր ձերմակեղէն և մեկնեցաւ սենեակէն  
 առանց մտնալու հրաժեշտի վերջին ողջոյն մը տալու  
 թողած բնակարանին:

Բակէն անցած միջոցին, դռնապանը՝ որ իր ճամ-  
 բան կ'սպասէր, յանկարծ կայնեցուց զինքը:

— Ինծի նայեցէք, Պ. Շոնար. ըսաւ արթիւթիւն  
 ճամբան կարելով, անշուշտ չէք մտնար որ այսօր ամ-  
 սուն ութն է:

— Ութը ութն ալ տասնըվեց

Վեց կը դնեմ, ձեռք կայ մէկ

Մուտաց Շոնար, ես ալ ճիշդ ատար վրայ կը մտա-  
 ծէի կոր:

— Ձեր կարասիները փոխադրելու համար կար-  
 ծես քիչ մը ուշ մնացած էք, ժաօը տասնըմէկուկէսն  
 է և ան որ ձեր սենեակը վարձեց, մէկ վայրկեանէն  
 միւսը կրնայ վրայ գալ: Գէշ չպիտի ըլլար եթէ քիչ  
 մը աճապարէիք:

— Եթէ այդպէս է, թող աուէք որ անցնիս, եր-  
 թամ և փոխադրութեան կառք մը կանչեմ:

— Ատանկ է, բայց ձգել երթալէ առաջ պզտիկ  
 ձևակերպութիւն մը կայ, զոր պէտք չէ մտնալ: Հր-  
 բաման եղած է ինծի մող մը անգամ վերցնել չափ  
 ձեր կարասիներէն, առանց վճարելու ձեր յե-  
 տընեալ եռամսեան, և կարծես թէ իմ իճակի էք ատիկա  
 ընելու:

— Աս ալ հարցնելի՞ք բան է, պատասխանեց քայլ  
 մը առնելով դէպ առաջ:



— Եթէ այդպէս է, սենեակս եկէք, որպէսզի ստացագրերը տաս:

— Վերադարձիս կ'առնեմ:

— Հիմա եկէք լմնցնենք, պնդեց դոնապանը:

— Պէտք է որ նախ լուծայափոխին երթամ, վրաս մանրուք չունիս:

— Հը՛մ, հը՛մ, վրայ բերաւ դոնապանը տեսակ մը մտահոգութեամբ, լուծայափոխին երթալու պէտք ունիք հէ՞, եթէ այդպէս է և ձեզի պզտիկ ծառայութիւն մը մատուցած ըլլալու համար, ձեր ձեռքի ծրարը քովս ձգեցէք, ձեզի ալ բեռ չըլլար:

— Պարոն դոնապան, ըսաւ Շոնար, գլուխ բռնելով, կ'երեւայ թէ՛ բաւական վստահութիւն չունիք վրաս, ի՞նչ, կը կարծէք թէ՛ բոլոր կարասիներս մէկ թաշկինակի մէջ ծրարած, կ'առնեմ կը տանիմ կոր:

— Ներեցէք, պարոն, վրայ բերաւ դոնապանը ձայնը մեղմացնելով, Պ. Պէնսառ մասնաւորապէս յանձնարարեց ինծի չթողուլ ձեզի որ մազ մը իսկ վերցնէք, առանց վճարած ըլլալու ինծի ասանկ պատէր եղած է:

— Եթէ այդպէս է, ըսաւ Շոնար ծրարը անոր առջին բանալով, տեսէք թէ՛ տարածներուս մէջ մազի նմանող բան կա՞յ. քանի որ շապիկներն են ասոնք, որ ասկէ քսան քայլ հեռու, լուծայափոխին քովիկը գտնուող լուացարարուհիին կը տանի՞մ կոր:

— Այդ տարբեր բան է, ըսաւ դոնապանը, ծրարին պարունակութիւնը լաւ մը աչքէ անցընելէ ետքը: Առանց անգաղտնապահութեան կրնամ հարցնել թէ ո՛ւր է ձեր նոր հասցէն:

— Ռիվօլի փողոցը կը բնակիմ, պատասխանեց Շոնար պող կերպով և ոտքը դուրս դնելով շուտ մը հեռացաւ:

— Ռիվօլի՛ փողոց, մրմնջեց դոնապանը, ընտո՞ր կ'ըլլայ որ Ռիվօլի փողոցին սէջ իրեն վարձու սենեակ կուտան և անգամ մը հոռ չեն դար իր վրայ տեղեկութիւններ առնելու համար: Ասոր խելքս չի հասնիր, ինչ և երցէ բաւական է որ պարտքը չվճարած կարասիները չի տանիր կոր: Աստուած տայ սր նոր վարձա-

կալը Պ. Շոնարին փոխադրուած պահուն վրայ չը հառնի, սանդուղներուն վրայ ասանկ արկածարանութիւն գործիս չի դար. ահա՛, ըսաւ, լուխր դրան ծակէն դուրս հանելով, նոր վարձակալնիս ալ կուգայ կոր:

Իրաւ ալ, ճերսակ և Լուզովիկոս ԺԳ. գլխաւոր մը դրած երիտասարդ մը նախագաւիթէն ներս մտաւ, ետին ձգած բեռնակիր մը որ շալկած բեռին տակ կքելու երևոյթը չունէր:

— Պարոն, հարցուց գինքը դիմաւորելու դացող դոնապանին, արդեօք յարկաբաժինս արամադրելի՞ է:

— Ոչ տակաւին, բայց պահիկէ մը պիտի ըլլայ: Մէջը նստողը հիմա դուրս ելաւ փոխադրութեան կռք մը կանչելու համար: Ա՛յն պարագայի մէջ և սպասելով անոր վերադարձին, պարոնը կրնայ իր կարասիները դեռեղել տալ բակին մէջ:

— Կը վախնամ որ չանձրեմ, պատասխանեց երիտասարդը, հանդարտօրէն ծածմելով ակռաներովը բռնած մանուշակի փնջիկ մը: Ինծի նայէ՛, բեռնակիր, ըսաւ խօսքը ուղղելով ետին կայնած մարդուն, որուն ձեռքին մէջ գտնուած հիւսկէն շալկացին պարունակութեանը դոնապանին խելքը շխտաւ, սըւտնք սրտեղ գաւիթին մէջ ձգէ և ելած տունս դարձիր և արժէքաւոր կարասիները ու ծանր կտորները ա՛ն հոս բեր:

Բեռնակիրը պատին կռթնցուց վեց եօթը ոտք բարձրութիւն ունեցող քանի մը չրջանակաւոր տախտակներ, մէջէ՛ մէջ ծալուած, որ ուզուած տան կը բացուէին, կը գոցուէին:

— Սըւոր նայէ. ըսաւ երիտասարդը բեռնակրին, կէս մը բանալով չրջանակներէն մէկը և ցոյց տալով մտձլաթի վրայ պատուածք մը, աս ի՞նչ փորձանք բերիր գլխուս, Վենետիկեան հայելիս ճաթեցուցեր ես, կրկին գալուդ ճամբան ու չարութիւնը ըրէ, մասնաւոր գրադարանիս:

— Վենետիկեան հայելիս ըսելով, ի՞նչ բռնկ'ուզէ արդեօք, մրմնաց դոնապանը, պատին կըռ-



Թընցուած չըջանակներուն չորս կողմը պատելով: Հայելի չեմ տեսներ կոր, տեսածս հողմարդել մըն է: Նայինք բեռնակիրը միւս անգամ գալուն ի՞նչ պիտի բերէ հեար:

— Սա ձեր վարձակալը արդեօք շատ պիտի աւջանայ, կէս օրը կէս ժամ անցեր է և կ'ուզեմ տեղաւորուիլ, ըսաւ երիտասարդը:

— Հիմա ուր օր է կուգայ, յետոյ, առայժմ դեռ վնաս մը չի կայ, քանի որ ձեր կարասիները տակաւին չհերին, ըսաւ այս վերջին բառերը չեղեցով:

Երիտասարդը պիտի պատասխանէր, երբ բակէն ներս մտաւ պառզամակիր զինւորական մը:

— Պարոն Պէրնա՞, հարցուց քովէն կախուած խոշոր թղթապանակէն նամակ մը դուրս հանելով:

— Հո՛ս է, պատասխանեց զոնապանը:

— Ահաւասիկ իրեն համար նամակ մը, ստացաւ զիր մը տուէք, և զոնապանին ներկայացուց թուղթի կտոր մը, զոր ստորագրելու համար զոնապանը դէպի իր սենեակը ուղղուեցաւ:

— Ներողութիւն եթէ զձեզ մինակ կը թողում, ըսաւ զոնապանը երիտասարդին, որ անհասրերու թեամբ, բակին մէջ կերթար կուգար, պէտք է որ նախարարութենէն եկած այս նամակը տանիմ յանձնեմ տանախոջ Պ. Պէրնաբին:

Դոնապանը ներս մտած միջոցին, Պ. Պէրնառ օձիւռելու վրայ էր:

— Ի՞նչ կայ, Տիւրան, ըսաւ:

— Պա՛րոն, պատասխանեց զոնապանը, գլխարկը հանելով, զինուորական մը նամակ մը բերաւ, նախարարութենէն ըլլալու է:

Եւ Պ. Պէրնաբին երկնցուց պատերազմական նախարարութեան նամակագլուխը կրող պահարանը:

— Աստուած իմ, ըսաւ Պ. Պէրնառ անանկ յուզմունքով մը որ քիչ մնաց երեսին միտը պիտի կտրէր օձելիով, պատերազմական նախարարութենէն, ապա-

հովապէս երկար առենէ ի վեր սպասած էժիօն Թոնէօրի ասպետութեան աստիճանի անուանուիլս ծանուցանող պաշտօնագիրը ըլլալու է. վերջապէս, բարի վարուցս վարձատրութիւնը կը արուի:

Եւ ձեռքը գրպանը տանելով:

— Ա՛ն սա հինգ ֆրանքնոցը, Տիւրան, և քանկենաց զինի մը խմէ, ըսաւ. բայց դրամապանակ վրաս չէ եղեր, կայնէ, հիմա կուգամ:

Դոնապանը յուզուած իր տիրոջ այս շանթահարող առաւանձեռութենէն որուն վարժուած չէր, անըզգալաբար գլխարկը նորէն գլուխը դրաւ: Բայց Պ. Պէրնառ՝ որ ուրիշ առթիւ պիտի կշտամբէր զինքը, ընկերական կարգապահութեան դէմ իր գործած օրինազանցութեան համար, այս անգամ հօն տեղուանքը չեղաւ: Ակնոցները քիթը անցուց և պատուեց պահարանը այն յարգալիլ յուզմունքով, որով Մեծ Սպարօզոս մը Սուլթանէն եկած «Ֆէրման» մը կը կարդայ, և ապա ոչքը պտոցուց պաշտօնագրին վրայ:

Առաջին տողերուն իսկ, զարհուրելի դիմաձուլութիւն մը, իր աբեղայի ճարպոտ այտերուն վրայ բոտորագոյն ծալքեր փոքեց: Իր մանրրիկ օչքերը անանկ կայծեր արձակեցին որ քիչ մնաց իր գալարուա կեղծամին խոպոպները պիտի բռնկէին:

Վերջապէս իր բոլոր դիմագծերը անանկ մը տակնուվրայ եղած էին որ կարծես երկրաշարժ մը վրաս նուն կ'անցնէր:

Ահաւասիկ թէ ի՞նչ էր պարունակութիւնը պատերազմական նախարարութեան նամակագլուխը կրող թուղթին, զոր քիչ մը առաջ ստիկան զինուորը բերած էր ձիարշաւ վազքով մը, և որուն համար Տիւրան ստացագիր մը տուած էր:

«Պարոն կալուածատէր,

«Քաղաքագիտութիւնը՝ որ ըստ դիպտաբանութեան, նախահայրն է վայելչագիտութեան, կ'ստիպէ զիս ձեզ



ծանօթացնել թէ անապոստոլն հարկին մէջ կը գրեալ  
նուրիմ չկրնալ գոհացաւմ տալու այն սովորութեան,  
որով մարդիկ իրենց վարձքը կը վճարեն, երբ մանա-  
ւանդ այդ վարձքին փոխարէն պարտական մնացած  
կ'ըլլան:

«Մինչև այս առաւօտ գգուած էի այն յոյսը թէ  
այսօր փառաւոր օր մը եղած պիտի ըլլար ինծի հա-  
մար, եթէ կորենայի երեք ամսական վարձքիս փոխ-  
արժէքը վճարել: Բանդագուշտնք, երա՛ղ, ցնօ՛րք:

«Մինչդեռ ապահովութեան սնարին վրայ կը մրա-  
փէի, «աւղօւրտուզ»ութիւնը, որուն «անանկքէ» կ'ը-  
սկն յունարէն, ցիրուցան կ'ընէր բոլոր յոյսերս:

«Այն գանձումները, որոնց վրայ յոյսս դրած էի-  
չէք գիտեր գործերը ի՛նչ դէ՛լ կ'երթան կօր — կարելի  
չեղաւ իրականացնել և այն կարեւոր գումարներէն,  
որ ձեռքս պիտի հասնէին, հազիւ կրցայ գանձել եօ-  
րեք ֆրանք, զորս կը ներէք որ ձեզի չը տամ:

«Կասկած մի՛ ունենաք, պարոն, թէ լուսագոյն  
օրեր պիտի գան թէ՛ Ֆրանսոյի և թէ՛ ինծի համար:

«Անսիջապէս որ այդ օրերը պիտի ճառագայթին,  
թեք պիտի առնեմ թռչելով այդ աւետիսը ձեզի բե-  
րելու համար, և պիտի գամ ժողովել այն թանկագին  
իրերը, զորս ձեր կալուածին մէջ թողուցած եմ, և  
որոնք առայժմ թող ձեր քովը մնան օրէնքին պաշտ-  
պանութեան տակ. օրէնք մը, որ կ'արդիւնէ ձեզի սին-  
չև մէկ տարի գանձնք ծախելու, ինչ որ գուցէ փոր-  
ձուիք ընել ձեռք անցընելու համար այն գումարները  
որոնք արձանագրուած են ուղղամտութեանս տոմա-  
րին մէջ, ձեր պահանջին կողմը:

«Մասնաւորապէս ձեր խնամոց կը յանձնարարեմ դաշ-  
նակօ և այն մեծ չրջանակը, որուն մէջ պահուած են  
վաթսուը մագի փնջիկներ, որոնց տարբեր գոյները  
վարտական երփնաւորումին ամէն աստիճանները շօ-  
շափած են և որոնք Շնորհքներու ճակատէն փրցուած  
են Սիրոյ հերձազանակով:

«Կրնաք ուրեմն, Պարոն Տանաէր, ձեր ուղած ե-  
զանակով արամադրել բոլոր այն իրեղէնները, որոնց

վրայ բնակեցայ: Այս արտօնութիւնը ձեզ կուտամ  
ներքև դրած կ'իջո՞վս:

Ալէքսանդր Շոնար:

Երբ կարդաց լմնցուց այսնամակը. գոր արթիւ-  
թը դրած էր պատերազմական նախարարութեան  
պաշտօնեանօրէն բարեկամի մը գրասենեակէն Պարոն  
Պէրնառ, բարկութեամբ ճմաթկեց թուղթը և աչքը  
դարձուց դէպի ծերուկ դռնապանը, որ խոստացաւ որ  
պարգևին կ'օգտօտէր, և ժամարդարաբ հարցուց թէ  
ինչո՞ւ կայներ էր հոգ:

— Կ'օգտօտեմ կօր, Պարոն:

— Ինչի՞:

— Բայց այն նուէրին, զոր Պարոնը պիտի տար  
. . . այդ բարի լուրին համար, փոփսոց դռնապանը:

— Դո՛ւրս կորսուէ, անպիտան, ի՛նչպէ՞ս ալ կը  
համարձակիս դէմս կենալ գլխարկը գլուխդ:

— Բայց, Պարոն . . .

— Զայնդ քեզի քայէ, կորսուէ՛, գնա՛ . . .  
բայց չէ. կայնէ՛: Իեզի հեռ վեր պիտի ելլենք: Եր-  
թանք աչքէ անցընենք օս կրողը տանելիք արթիւ-  
թին սենեակը, անպիտանը առեր քալեր է, ասանց  
պարտքը վճարելու:

— Ընտօ՞ր, ընտօ՞ր, հարցուց դռնապանը, Պա-  
րոն Շոնար . . .

— Այո՛, շարունակեց տանաէրը, որուն բարկու-  
թիւնը չափ չուներ. եթէ երեք կարասիի կտոր մը  
խօս հեռը տարած է, այլեւս հոս գործ չունիս, կը  
վանտեմ քեզ:

— Բայց այդ խանկարելի է, մրմնջեց դռնապանը:  
Պ. Շոնար կարասիները չփոխադրեց, մինակ դուրս  
ելաւ, Պարոնին ստակը բերելու և կռք մը ապսպը-  
րելու համար, որ կարասիները փոխադրէ:

— Կարասիները տանիլ մի՞. վագնէք երթ  
ապահով եմ որ անիկայ վերը ժողուրտուք ընել  
բայ է. զքեզ սենեակէդ հեռացնելու համար  
խաղացած ըլլալու է, միւս կողմէ իր գործը  
լու մտք. աւանակ քեզի:



— Ո՛հ, Աստուած իմ, աւանակ հէ՛, գոչեց Տիւ-  
ան. դողդալով թանախրոջ ողիմպական բարկու-  
թեան առջեւ, և հետեւեցաւ թնոր դէպի սանդուխ-  
ները:

Բակը հասած միջոցնուն, ձերմակ գլխարկով ե-  
րիասարգը դէմերնին ելաւ և հարցուց:

— Ինձի նայէ՛ դոնապան. դեռ շա՞տ պիտի ըս-  
պասեմ սենեակիս արամադրելի ըլլալուն: Այսօր Ապօ-  
րիւին ութը չէ՞, հոս չէ՞ որ սեւեակ մը վարձեցի և  
քեզի ալ տուի մուտքի ընծան, այո՞ կամ ոչ:

— Ներողութիւն, Պարոն, ներողութիւն, ըսաւ  
թանաէրը, քիչ մը համբերեցէք. Տիւրան, աւելցուց  
դոնապանին դառնալով. ձգէ որ Պարոնին պատաս-  
խանք ես տամ: Իուն վեր վազէ, հարկու սա ան-  
պիտան Շոնարը ետ գարձած ըլլալու է, ունեցածը  
չունեցածը վերցնելու համար. եթէ վրայ հասնիս,  
գուօր վրայէն կզպէ և վար իջիր ու գնա ոտախկան  
մը կանչէ:

Ծերուկ Տիւրան դէպի սանդուխները անհետացաւ:  
— Ներողութիւն, Պարոն. ըսաւ, երիասարգին  
առջեւ խոնարհելով, որուն հետ մինակ մնացած էր:  
Որո՞ւ հետ պատիւն ունիմ խօսելու:

— Պարոն, ես ձեր նոր վարձակալն եմ, ձեր Թան  
վեցերորդ յարկը սենեակ մը վարձեցի և չեմ հասկը-  
նար թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ սենեակը դեռ պարապ չէ:

— Շատ կը ցաւիմ, Պարոն, պատասխանեց Պ.  
Պէրնառ, պզտիկ արքերութիւն մը ծագեցաւ իմ և  
մէկ վարձակալիս միջեւ, ճիշդ անօր հետ, որուն պի-  
տի յաջորդէք:

— Պարոն, Պարոն, պոռաց ծերուկ Տիւրան,  
թանք ամենէն վերի յարկի մէկ պատոնհանէն, Պ.  
Շոնարը հոն չէ, բայց սենեակը իր տեղն է, նայէ՛  
ի՞նչ ապուշ եմ, այսինքն ըսել կ'ուզեմ թէ նոյնիօր  
մազ մը չէ վերցուցած:

— Շատ աղէկ. վար իջիր, պատասխանեց Պ.

861-2011

Պէրնառ: Աստուած իմ, չարունակեց խօսքը երիա-  
սարգին ուղղելով, քիչ մը համբերութիւն ունեցէք,  
կը խնդրեմ: Իուն պանը հիմա վարի մասանը պիտի  
իջեցնէ առաւ փախաւ վարձակալիս կարասիները. կէս  
ժամէն կրնանք արամադրել սենեակը: Սա ալ կայ որ  
ձեր կարասիներն ալ տակաւին չեն եկած:

— Ներեցէք, Պարոն, պատասխանեց երիասար-  
գը նանդարտօրէն:

Պ. Պէրնառ չորս կողմը պատցուց աչքերը և ու-  
րիշ բան չտեսաւ. բայց միայն այն մեծ հողմարգել-  
նեցր, որ այնքան մտանոգութիւն պատճառած էին  
դոնապանին:

— Ինչի՞ս ներողութիւնն է այդ, բայց-բան մը  
չեմ տեսնիր կոր, մըմտաց:

— Ահաւասիկ, պատասխանեց երիասարգը, և  
բացաւ հողմարգելին չրջանակներուն ծախքերը և պար-  
զեց թանախրոջ աչքերուն առջեւ յասպիտէ սիւներով,  
քանդակներով և մեծ վարպետներու վրձինէն ելած  
նկարներով զարդարուած, պալատական ներքնագա-  
ւիթի մը պատկերը մոմլաթի վրայ դնուած:

— Բայց ձեր կարասիները՞:

— Ահաւասիկ ասոնք են, պատասխանեց երիա-  
սարգը, և ցոյց տուաւ փառաւոր կահկարասի մը, որ  
նկարուած էր, թաւրոնի մը ամուրդէն ծախու առ-  
նուած մոմլաթէ վարպետի մը վրայ:

— Պարոն, վրայ բեր ու Թանաէրը, նս այնպէս  
կը կարծեմ թէ ասոնցմէ աւելի լուրջ կարասիներ ու-  
նենալու էք:

— Անչուշտ չէք պահանջել որ Պուլի քանդակած  
կարասիներէն ունենամ:

— Իուք ալ անչուշտ կը հասկնաք թէ վարձքիս  
փոխարէն երաշխաւորութիւն մը ունենալու եմ:

— Այդ տեղ ճիշտ ըրիք, արդեօք պալատ մը  
չի՞ բաւեր ձեզի ձեզնայարկի մը փոխարէն:

— Ո՛հ Պարոն, ո՛չ, կարասիներ կ'ուզեմ, կ'ու-  
ցընէ կարասիներ, մահակներէ:





— Աւա՛ղ, Պարսն, ո՛չ ոսկին և ոչ ալ մահոկե-  
նին զմեզ չեն երջանկացներ, ըսած է հին ասենուածն  
մարդուն մէկը: Եւ յետոյ աչքս տեսնել չուզեր այդ  
ապուշ փայտը, զոր ամէն մարդ կ'ունենայ:

— Բայց վերջապէս, որեւիցէ կարասի մը ունիք  
անշուշտ:

— Ոչ, կարասիները շատ տեղ կը բռնեն յարկա-  
րաժիններու մէջ. ուղածիդ չափ աթոռ ունեցիր, նո-  
րէն ո՛ւր նստելիքդ չես գիտնար:

— Բայց, զոնէ անկողին մը անշուշտ ունենալու  
էք: Ի՞նչ բանի վրայ կը հանգչիք:

— Նախախնամութեան վրայ:

— Ներեցէ՛ք, հարցում մը եւս, ձեր արհեստը  
ի՞նչ է:

Այդ վայրկեանին, երիտասարդին հետ եկող բնո-  
նակիրը երկրորդ անգամ կուգար և կը մտնէր բակէն  
ներս. իր շուկած հիւսկէն ասպրակին մէջէն պատ-  
կերակալ մը կ'երեւար:

— Ա՛խ, Պարսն, աղաղակեց Տիւրան օտակոմով,  
և աստօրիոջ պատկերաչալը ցոյց տալով, աս ալ նը-  
կարիչ է եղեր:

— Մտքէս անցաւ որ, աս ալ արւեստագէտ մը  
ըլլալու էր, բայցադանչեց Պ. Պէրնառ, որուն կեղծա-  
մին մազերը ահաբեկուսէն անկուեցան. նկարի՛չ մը,  
բայց կանխաւ ինչո՞ւ իր վրայ տեղեկութիւն չառիր  
և չի հարցուցիր ինչ գործ ընելը:

— Ի՞նչ գիտնամ, պատասխանեց խեղճ մարդը,  
հինգ ֆրանք բանալիի նուէր տուած էր ինծի, ի՞նչ  
պէս մրքէ՞ս անցընէի:

— Է՛յ, ասոր վերջը ե՞րբ պիտի գայ, հարցուց  
երիտասարդը իր կարգին:

— Պա՛րսն, յարեց Պ. Պէրնառ, ակնոցները քի-  
թին անցընելով, քանի որ կարասի չունիք, ասունէն  
ներս չէք կրնար մտնել: Օրէնքը կ'արտօնէ մերժել  
վարձակալ մը, որ ո՛ւրեք երաշխաւորութիւն չընծայեր:

— Խօսքս բանի տեղ չէ՞ք գներ:

— Ձեր խօսքը կարասիի տեղ չի բռներ, ուրիշ

տեղ կրնաք սենեակի փնտռել: Բանալիի համար տուած  
նուէրնիդ Տիւրանը ձեզի ետ կուտայ:

— Ի՞նչպէ՞ս, բայց ես արդէն այդ հինգ ֆրանք-  
նոցը խնայողական սնտուկը տարի:

— Բայց, Պարսն, վրայ բերաւ երիտասարդը, աս  
ասեն կարելի չէ որ ուրիշ տեղ սենեակ մը գտնեմ,  
զոնէ այս գիշերուան համար վար դրէք զիս:

— Գիշերը քօցէք օթէլը անցուցէք, պատասխա-  
նեց Պ. Պէրնառ: Աղէկ միտքս եկաւ, աւելցուց կործ  
խորհրդածութենէ մը ետքը, եթէ կ'ուզէք, եկէք  
կահաւորուած վարձեմ ձեզի այն սենեակը, զոր բրա-  
նել կ'ուզէք, ուր արդէն կը կենան իմ աւաւ փախաւ  
վարձակալիս կարասիները: Բայց ինչպէս որ գիտէք,  
այս կարգի վարձակալութիւններու դրամը կանխիկ  
կը վճարուի:

— Մինակ գիտնամ թէ ի՞նչ գին պիտի ուզէք  
այդ ծակին համար, ըսաւ արդիսդը, նեղը մնացած:

— Բայց սենեակը խիստ հանգստաւէտ է, վարձ-  
քը քոտնընինգ ֆրանք է ամիսը, ան ալ ձեր խաթէրն  
համար, մինակ դրամը կանխիկ պիտի տաք:

— Արդէն մէյ մը ըսիք առիկա, նորէն կրկնելու  
հարկ չի կար, և ձեզք գրպանը գնելով հարցուց:

— Հինգ հարիւր ֆրանքնոցի մը վրադիրը ու-  
նի՞ք:

— Հէ՞ հարցուց, աստեղը զարմացած, ի՞նչպէս  
րօիք:

— Ի՞նչ կայ որ, հազարնոցի մը կէսը, կեանքերո-  
նուդ մէջ հազար ֆրանքնոց մը չէ՞ք տեսած արդեօք,  
աւելցուց արուեստագէտը, ցոյց տալով իրենց պանք-  
տոս մը, որուն ի տես, աստեղը և զոնապան, իօ-  
րենց հաւասարակշռութիւնը կորսնցուցին:

— Մնացորդը աւա կուտամ ձեզի, յարեց Պ. Պէրն-  
նառ յարգանք, մինակ քսան ֆրանք վար պիտի դը-  
նենք, քանի որ Տիւրան իր առած նուէրը ետ պիտի  
տայ:

— Հոգ չէ թող իրեն ըլլայ, պայմանաւ որ ամէն առ-  
տու գայ ինծի ըսէ թէ ի՞նչ օր է, ամսուն քանի՞ն,



լուսնին ո՞ր քառորդը, այդօրը ի՞նչ օգ պիտի բնէ և կառավարական ի՞նչ ռէժիմի տակ պիտի ապրինք:

— Ո՞չ, Պարոն, գոչեց Տիւրան, մարմինը իննը, սուն աստիճան կորցնելով:

— Շատ աղէկ, բարի մարդուկս, դուն իբրև օրացոյց պիտի ծառայես ինձի: Հիմակուհիմայ օգնէ բեռնակրին որ կարասիները տեղաւորէ:

— Պա՛րոն, բռառ տանտէրը, ձեր ընկալադիրը հիմայ կը զրկեմ:

— Այդ իրիկունը իսկ Պ. Պէրնասի նոյ վարձաւորը, նկարիչ Մարտէլ, տեղաւորուածէր փախստական Շոնարի բնակարանին մէջ, որ պայտափ մը կերպարանքը առած էր:

— Մինչդեռ անդին, Շոնար բարեկամիւ Քարիզը տակնուվրայ կ'ընէր ստակ չափելու համար:

Շոնար ստակ փոխ ուզելը արուեստի մը բարձրութեան հասցուցած էր:

— Այն հաշուով որ օրին մէկը կրնար օտարական մը «չարփմիչ» ընել. կանխաւ սորված էր երկրագունդիս վրայ խօսուած բոլոր լեզուներով հինգ ֆրանքնոց մը զարնելու եղանակը. հիմնապէս ուսումնասիրած էր նաև բոլոր այն վարպետութիւնները, զոր մեծազը կը բանեցնէ խոյս աւելու համար իր ետեւէն վազողներուն ձեռքէն. և ծոփուն ելեւէջներուն ժառը գիացող նաւուղիդէ մը աւելի լաւ գիտէր ջուերերուն բարձրանալուն ժամանակը, այսինքն գոց բրած էր թէ իր բարեկամները և ծանօթները ո՞ր օրերը աւելի ստակ կը բռնէին. անանկ որ, տուններ կային, ուրկէ ներս մտած ատենը փոխանակ «Պարոն Շոնարն է եկողը» ըսելու «Այսօր ամսուն մէկը կամ ասանդիինգն է» կ'ըսէին:

Դիւրացնելու և կամ համաչափ ոռքի մը վրայ գնելու համար տուրք հաւաքելու փր այն եղանակը, որուն կը զիմէր նեղը մնացած ատենը. ի վիճակի եօզող բարեկամներուն դուռը ափ առնելով, Շոնար ցանկ մը շինած էր այբուբէնի կարգով, ուր արձա-

լորչի մը յաակացուած էր իրէն... երբ անձեանց ունենային:

— Ո՞ւր կ'երթաք, Պարոն, բռառ իրեն դանապանը. դէմը ելլելով:

— Պ. Փ.ին, պատասխանեց արդիօզը:

— Տունը չէ:

— Եւ Տիկինը:

— Ան ալ, Անոնք պատուեցին ինձի ըսել իրենց մէկ բարեկամին, որ կերակուրի պիտի գար այս գիշեր, թէ իրենք այս իրիկունը դուրսը պիտի ձաչեն: Եթէ երբեք դուք էք այն բարեկամը որուն կ'սպասէի, ահաւաստիկ ձեզի այն հասցէն, որ հոս ձգեցին, և Շոնարի երկնցուց ամսակ մը, որուն վրայ իր բարեկամը Փ. գրած էր:

«Կերակուրի կ'երթանք կոր Շոնարին, ... թիւ... փողոց. եկէք սեզի հոն գաէք»:

— Շատ լաւ, բռառ անել ջալելով. երբ դիպուածը գործի կը խառնուի. ասանկ զարմանալի փորձանքներ կը բերէ մարդուս գլխուն:

Շոնարի միտքը եկաւ որ երկու քայլ անդին խոհարարի խանութ մը կար, ուր երկու երեք անգամ աժաճ կարպեա ձաչերով փորք կշտացուցած էր, և քայլերը ուղղեց դէպի Մէնի սիջուզին, ուր կը գրաւուէր, անկուտի արդիւզներուն խիստ ծանօթ այգ կրպակը, որ կը պատկանէր Քատէ «տուտու»ին: Մէկ անկիւնը խոճանացով գիւնեաուն մըն էր ան, որուն յաճախորդները կը բաղկանային Օրլէանի զծին վրայ աշխատող բանուորներէ, Մօն Փառնասի երգչուհիներէ և Պապինօ թատրոնին դերասաններէն: Ամառը Լիւքսէյպուրկի մօտերը գտնուող գործաւորիներու աշկերտները, անձանթ. անկուտի գրազէտները, աննշան կորուսեալ թերթերու աշխատակիցները, ձաչելու կուզային Քատէ «տուտու»ին, որուն եփած ձագարի «եանի»ն և անխարդախ «չուքուր»ը նըշանաւոր էին, ինչպէս նաև իր մէկ ձերմակ թեթեւ գինին, որմէ կայծքարի հօտ մը կուզար:



Շոնար գնաց անդառնուեցաւ պուրակին տակ : « պուրակ » անունը կուտային Քառէ « ասուտու » ին պարտէզին մէջ մէկ երկու խեղճուկրակ ծառերուն հոգեվարք տերեւներէն կազմուած « քիթիբիտո » կա- մարին :

— Ի՛նչ կ'ուզէ թո՛ղ ըլլայ, ըսաւ ինքնիրենը Շոնար, սրտեղ փռուաւոր տեսակէն փորս կշտացնեմ : ետքէն Աստուած ողորմած է :

Եւ մէկ երկուք չրօած, ապուր մը, կէս Ալուք- րութ » և երկու կէս ճագարի « Եահնի » ապրս- պրեց :

Հաշիւ ըրած էր որ փոխանակ ամբողջ պնակը մէ- կանց ապսպրելու, եթէ երկու հատ կէս պնակնոց բե- րել տար, ամբողջին վրայ գոնէ մէկ քառորդ կը շահէր :

Այս տեսակ ճաշացուցակի մը ապսպրանքը Շո- նարի վրայ հրաւիրեց ճերմակներ հագած, գլխուն վը- րայ նարնջինի ծաղիկներ դրած, պարահանդէսի կօ- չիկներով և ուտերուն վրայ « թախլիթին թախլիթը » եզոզ շղարշ մը նետուած օրիո՛ղի մը ակնարկները :

Այդ օրիորդը մէկն էր Մօն Փանասի թատրոնին երգչուհիներէն, որոնց մէկ ոտքը անպատճառ Քառէ « ասուտու » ին ճաշարանէն դուրս չէր ելլեր :

Երգչուհին « Լուչիա » ի մէկ միջնաբարին հոն ե- կած էր ճաշելու, և սուրճը խմելու վրայ էր, ձէթի և քացախի մէջ լողացող կանկառ մը ուտելէ ետքը :

— Երկու « Եահնի » հէ՞, ապրի՛ս մարդ, ըսաւ կա- մացուկ մը սպասաւորութիւն ընող աղջկան, ահա ե- րիտասարդ մօ, որ ազէկ ու ուտելեղանակը գիտէ : Հա- չիւս քանի՞ եղաւ, Ատէլ :

— Կանկառ՝ քառսուն փարա, քառսուն փարա սուրճ, քսան փարա ալ հաց, ամէնը հարիւր փարա :

— Ա՛ն նայինք, ըսաւ երգչուհին և դուրս ելաւ քիթին տակէն երգելով :

« Այն սէրը որ Աստուած ինձ կուտայ » :  
— « Նաղար » չառնէ, ձայնը մինչեւ « լա » կը հա- նէ կոր, ըսաւ խորհրդաւոր մարդուն մէկը, որ Շոն արի հետ միեւնոյն սեղանին վրայ նստած, դիրքե- րու դէզի մը ետին կէս մը օքոզուած էր :

— Ի՛նչ կ'ըսէք, հարկաւ մինչեւ « լա » կը հանէ, և կարծեմ թէ անդին ալ կ'անցնի : Պաշտօն, խելք հասնելիք բան չէ աօրկա, ըսաւ Շոնար, մատովը ցոյց տալով պնակը, որուն մէջ « Լուչիա ար լա մէր մոր » կանկառ մը կրծած էր, քացախի թաթխուած, ինչ որ ձայնը կակուղցնելու ընոյթը չունէր :

— Իրաւ ալ քացախը ձայնի համար նպատաւոր չէ, թթու ըլլալուն, վրայ բերաւ քիչ մը առաջ խօ- սողը, Օրլէանի քացախին պէս չի կայ, նշանաւոր է :

Շոնար այդ մարդուն երեսը նայեցաւ ուշադրու- թեամբ : Ան խայծեր կ'արձակէր խօսակցութեան դու- րանալու համար :

Իր խոշոր կապոյտ այլեբուն անշարժ նայուած- քը, որ անընդհառ բան մը փնտռելու վրայ էր կար- ծես, իր կերպարանքին կուտար անանկ սրբեհի հե- ղութիւն մը ո՛ր յատուկ է կղերմնոց յաճախող վար- դապետացուներուն : Երեսին գոյնը գործածուած փղոս- կրի գոյն էր, բացի այտերէն, որոնց վրայ ծեծուած կղմինարի խաւ մը քօռած էր կարծես : Բերանը կար- ծես գծուած ըլլար գծագրութիւն նոր սարվող աշա- կերտի մը կողմէ, սրունաբմուկը հրած ըլլար մէկը աշխա- տած պահուն : Երթունքները սեւամորթերու շը- թունքներուն պէտ դէպի վեր սօթթուած, մէջտեղ կը գնէին որսի շունի ախաներ, և իր ծնօտին երկու ծալքերը կը հանգչէին ճերմակ փողկապի մը վրայ, որուն մէկ ծայրը ասօզերուն կ'օպատնար, մինչդեռ միւսը գետին կը նայէր : Թաղեայ կերթափ գլխար- կի մը անծայրածիր եղբրքներուն յազերը՝ խարտեայ ջրվէժի մը պէս ուտերն ի վար կը թափանէին : Հա-



գած էր քելլըրինոյ կաղնեգոյն բալթօ մը որուն կերօ պատր մինչեւ թեզանք մաշուած, ա՛լ կարմիրի կը զարնէր: Այդ բալթօյին լայնափեռեկ գրգաններէն քրթիւ թուղթի արցակներ գուրս կը ցցուէին: առանց կարեւորութիւն տալու այն հետազօտող ու շաղրութեան, որուն առարկայ եղած էր, շուրջը կանանկեղէնով զարդարուած «չուքրուդ» մը կ'ըմբռնէին և յաճսխակի գոհացումի բացագանչութիւններ կ'արձակէր բարձրաձայն:

Կերած ատենը, առջին բաց գրուած դիրք մը կը կարդար, որուն վրայ երբեմն բաներ մը կը նօթագրէր ականջին ետին խօթած մատիտով:

— Ինձի նայէ, պոռաց Շոնար, գանակը գաւաթին զարնելով, «եաննի» ո՛ւր մնաց:

Պա՛րոն, պատասխանեց սպասուհին ձեռքը պընակ մը բռնած, ա՛լ չէ մնացեր. ահաւատիկ վերջին կտորը, զոր Պարոնը ապսպրած էր, աւելցուց պնակը գնելով գիրքերով բեռնաւորուած մարդուն առջեւ:

— Վա՛յ շունչանորդի:

Այս շունչանորդիին մէջ անանկ մեյամաղձիկ սրանեղութիւն մը գրուած էր որ մատենակիր մարդը ներքնապէս յուզուած, վար առաւ իր և Շոնարի մէջ տեղ գտնուող գիրքերու պատնէչը և մէջտեղ դրաւ պնակը ու իր ձայնին ամէնէն անուշ թելերովը ըսաւ անոր.

— Պա՛րոն, կրնա՞մ համարձակիլ ձեռնէ խնդրելու որ բարեհաճիք այս կերակուրը միասին ուտելու:

— Պա՛մոն, պիտի չուզէի այդպիսի զրկածք մը պատճառել ձեզի:

— Ընդհակառակը, զիս կը զրկէք ձեզի հաճելի ըլլալու երանութենէն:

— Եթէ այդպէս է...

Շոնար երկնցուց պնակը:

— Ներեցէք որ գլուխը ձեզի չտամ, ըսաւ օտարականը:

— Ո՛հ, Պա՛րոն, չեմ հանդուրժեր որ...

Բայց երբ պնակը առջեւ քայլեց, տեսաւ որ օտարականը իրեն հրամցուցած էր այն կտորը, զոր կ'ուզէր իրեն համար վար դնել:

— Սըվոր նայէ, անանկ է նէ, իր քաղաքավարութիւնը ո՛ր մնաց, արառաց ինքնիրենը Շոնար:

— Եթէ գլուխը մարդու ամէնէն յարգի մէկ մասըն է, ընդհակառակն ճագարին ալ ամէնէն անախորժն է:

— Եթէ այդպէս է, շա՞տ կը ճաւիժ որ ինձի համար զրկումի մը ենթարկեցիք դուք զձեզ:

— Ի՞նչպէս, ներեցէք, վրայ բերաւ գիրքերով մարդը, գլուխը ես վար դրի, նոյնիւկ պատիւն ունեցայ կանխաւ ձեզ դիտել տալու թէ...

— Շնորհք ըրէք, խնդրե՛մ, ըսաւ Շոնար, պընակը մարդուն աչքին մէջ խօթելով:

— Այս կտորին դուք ի՞նչ անուն կուտաք:

— Տէր Աստուած, ա՛՞հ ինչ կը տեսնեմ կոր, գլուխ մը եւս, ափիս երկու գլուխով ճագար մըն է եղեր, գոչեց օտարականը:

— Երկա ... ըսաւ Շոնար:

— ... գլուխ ճագար ... ատանկ հրէշ մը կերած ըլլալու դժգոհ չեմ, հաւատացէք:

Այս միջադէպը գուռ բացաւ խօսակցութեան: Շոնար ինքն ալ իր կարգին մեծարանքի մէջ ետ չմնալու համար շիշ մը գինի ապօպրեց: Գիրքերով բեռնաւորուած մարդն ալ իր կողմէն ուրիշ շիշ մը բերել տուաւ: Շոնար աղցան մը հրամայեց: Գիրքերով բեռնաւորուած մարդը աղանդներ բերել արւաւ: Իրիկուան ժամը ութին սեղանին վրայ գինիի վեց հատ պարապ շիշ կար:

Սօսուրբատուքի միջոցին, ճերմակ գինիի մէջ թաթխուած անկեղծութիւն մը մղած էր գիրենք իրենց ինքնակենսագրութիւնը ընելու իրարու և ա-



նանկ մը ճանչցան զիրար որ իբրեւ թէ ամբողջ կեանքերնին միասին անցուցած ըլլային :

Գիրքերով բեռնաւ որուած մարդը, Շոնարի գաղտնիքներուն վերահասու ըլլալէն ետքը, հասկցուց անոր թէ իր անունը կիւսթալ Քօլին էր, որ փիլիսոփայութեամբ կ'ըզաղէր, և դասեր կուտար թուաբանութեան, առուածաբանութեան, բուսաբանութեան, և բոլոր այն գիտութեանց, որոնց ծայրը «ութիւն» մը կար :

Եւ բոլոր այն ստակը, զոր ասանկ դասեր տալով կը վաստակէր, կ'երթար կը պառկեցնէ ը գիրքերու գնման :

Իր կազնեգոյն բալթօն ծանօթ էր Քօնքօրաի կամուրջէն սկսեալ մինչեւ Սէն Միշէլի կամուրջը երկարող քարափին երկայնքը, մայթերուն վրայ հաստատուած փողոցին մէջ գիրք ծախողներուն :

Բայց ինչի՞ կը ծառայէին այս գիրքերը, զորս կարդալու հարար մարդկային կեանք մը չէր բաւեր. ո՛չ ոք գիտէր ասիկա, և նոյն ինքը՝ Քօլին նուազ քան ուրիշները : Բայց իր այս «խույ»ը մօլութեան մը հասեմառութիւններու հասցուցած էր, այնպէս որ իրիկունը երբ ասուն կ'երթար առանց թեւին տակ ունենալու նոր գնուած գիրք մը, այդ իրիկունը սովորութիւն ըրած էր բացա՝ գանչել օրս պարապ տեղը անցաւ :

Իր քծնի վարուելակերպը և խօսուածքը, որ ամէն տեսակ ոճերու մօզալիք մը կը պատկերաբնէր, ինչպէս նաեւ այն սարսափելի բառախաղերը, որոնցմով կը գեղերփէր իր խօսակցութիւնը, պարզապէս հրապուրած էին Շոնարը, որ Քօլինէն անմիջապէս խնդրեց որ արտօնութիւն ապ իրեն անոր անունը արձանագրել այն նշանաւոր ցանկին մէջ, որուն վերայ արդէն խօսեցանք :

Գիշերուան ժամը իննուկէսին Քատէ «առուած»էն

դուրս ելան գլուխնին քիչ մը ամբողջացած և անանկ ջալուածքով մը, որ յատուկ է այն մարդոց, որ խօսքի բռնեւած կ'ըլլան գինիի շիշերու հետ :

Քօլին սուրճի հրուիրեց Շոնարը և անիկա ընդունեց, պայմանաւ որ ըսկելիներն ալ ինքը հրամայէր և այսպէս սասու Սէն—Փէնմէն Լ'օքսերուա փողոցի սրճարաններէն մէկուն մէջ, որուն անունն էր «Մօմիւս»՝ չաստուած խնդուծի և խաղերու :

Սրճարանէն ներս ոտք գրած պահերնուն ներս մը սաստիկ բանավէճի բռնուած էին խանութին սովորական յաճախորդներէն Նրկուքը : Ասոնցմէ մէկը երիտասարդ մըն էր, որուն գէմքը կը կորսուէր բազմեքանգ մօրուքի մը մացառին մէջ, Իբրեւ հակադրութիւն այս ծնօտական թաւարծութեան վաղահաս ճաղնաութիւն մը հերաթափ ըրած էր ճակատը, որ ճիշդ ծունկի կը նմանէր և որուն գաղաթը բուսած մազի թունճուկ մ, որուն թելերը կարելի էր համբել պարապ տեղը կը ջանար սքօղել անոր մերկութիւնը : Սեւ զգեստ մը հագած էր, հերախուզուած արմուկներով և երբ թեւերը քիչ մը շատ վեր կը հանէր, մէջտեղ կը հանէին թեղանիքներուն վերեւը բացուած հովաբեր ծակերը : Բանթալօնը կրնար սեւ եղած ըլլալ, բայց կօշիկները, որ երբեք նոր եղած չունէին, շատ անգամներ աշխարհիս շրջանը ըրած ըլլալու երեւոյթը ունէին թափառական հրեայի մը ոտքերուն անցուած :

Շոնար գիտեց որ իր բարեկամը Քօլին և երկայն մօրուով մարդը բարեւ տուած էին իրարու :

— Այս պարոնը կը ճանչնա՞ք, հարցուց փիլիսոփային :

— Ո՛չ բոլորովին, պատասխանեց, մինակ ստէպ կը հանդիպիմ իրեն մատենագարանին մէջ, կարծեմ գրագէտ է :

— Գոնէ վրան գլուխը ատ կը ցուցնէ :



Ան՝ որուն հետ մեր գրագէտը վէճի թանուած էր, նախասահմանուած էր կաթնուածի հարուածէ մը մեռնելու, ինչպէս զիւրին էր գուշակել երկու ուսերուն մէջ ան իջապէս մխուած իր խոշոր գլխէն, ասանց վիզին միջնորդութեան:

Ապուշութիւնը գլխագիր տպոգրով գրուած էր գոգաւոր ճակտին վրայ, որուն վերեւը կ'իջլէր սեւ գառակ:

Մութօն էր անունը, պաշտօնեայ թաղապետական և Դ. չըջանակի դիւանատան մէջ, ուր մահերու վիճակագրութեան արձանագրութիւնները կը բռնէր:

— Պա՛րոն Ռօթօլֆ, գոչեց մարդը ներքինի ձայնով մը և ցնդեց երիտասարդը հագած վերարկուին մէկ կոճակէն փրցուելու ատիճան իրեն քաշելով, կ'ուզէ՞ք որ ես ալ իմ գաղափարս յայտնեմ: Ահաւասիկ. բոլոր լրագիրներն ալ տեղերնին թող կենան, բանի մը չեն ծառայեր անոնք: Ենթադրենք որ ես, օրինակի համար, զաւակներու և ընտանիքի տէր մարդ մըն եմ, չէ՞, յաւ. կ'ելլեմ արձաբան կուգամ Քրանթի՞մ մը ասինս խաղալու: Աղէկ հեռուեցէք արամարանութեանս:

— Ետ աղէկ, շարունակեցէ՛ք, ըսաւ Ռօթօլֆ:

— Այսպէս, շարունակեց Պ. Մութօն և ամէն մէկ պարբերութեանը, ձեռքը սեղանին կը զարնէր անանկ սասակութեամբ որ վրայի գաւաթները և ամանները կը գողգոջային: Ինչպէս ըսի, լրագիրները ձեռքս կ'առնեմ, անոնց մէջ ի՞նչ կը կարդամ կարծէք:

Մէկը սեւ կ'ըսէ, միւսը ճերմակ, աս ասանկ, ան անանկ: Ինծի ի՞նչ աչ ամէնը: Ընտանիքի պատուական հայր մըն եմ, որ եկած եմ . . . :

— Տօմինօ խաղալու, վրայ բերաւ Ռօթօլֆ:

— Ամէն իրիկուն, շարունակեց Պ. Մութօն, հիմա, ենթադրենք որ, հասկցա՞ր մի. . . :

— Այո՛, այո՛, ըսաւ Ռօթօլֆ:

— Մէյ մըն ալ անանկ յօգուած մը կը կարդամ որ բնա՛ չի համապատասխաներ գաղափարներու: ասոր հետեւանքը ի՞նչ կ'ըլլայ, արիւնս գլուխս կը ցատկէ, որովհետեւ լրագիրներէն շատերն ալ սուտ զուցներ են, այո՛, սուտ զուցներ, գոռաց՛ սուր շեշտ մը գնելով ձայնին մէջ և լրագրողներէն շատերն ալ Քրօֆթի՞մներ են:

— Բայց, սակայն, Պարոն Մութօն . . . :

— Այո՛, աւաղակներ, շեշտեց թաղապետական պաշտօնեան, աշխարհի բոլոր շարիք հասցնողները անոնք են, յեղափոխութիւնը անոնք բրին և պատճառ եզան տուրքերու հաստատման: Միւրան մէջտեղն է:

— Երեւէք, ըսաւ Ռօթօլֆ, Մասա՞ն բոել կ'ուզէք:

— Չէ՛, չէ՛, շարունակեց Մութօն, իմ ըսածիս անունը Միւրա է, քանի որ կը յիշեմ պղտիկութեանըս անոր յուզարկաւորութեան ներկայ եղած ըլլալու:

— Հաւասացէք որ . . . :

— Նոյնիսկ Սիոքի թատրոնը, անոր վրայ կտոր մը խաղային:

— Աղէկ որ կ'ըսէք կոր, ճիշտ անունը Միւրա է:

— Բայց ժամ մըն է ի՞նչ կ'ըսեմ, պոռաց պինդ գլուխ Մութօնը, Միւրա, ան որ մառանի մը մէջ կ'աշխատէր, հիմա, ասնկ բսնք, Պուրպօնները միթե՞ իրաւունք չունէին զայն գլխատելու, քանի որ մասնութիւն բրած էր:

— Ի՞նչ, գլխատութիւն, մասնութիւն, որո՞ւ համար կ'ըսէք կոր, կայնեցէք նայինք, պոռաց Ռօթօլֆ, ինք ալ իր կարգին Պ. Մութօնի սրտէնկօթին կոճակէն քաշելով:

— Մարային համար եմ:



— Բայց ա՛յ, ա՛յ, Պա՛րոն Մուժօն, անոր ա-  
նունը Միւրա էր, չչփոթենք, յանուն Առաւելոյ:

— Անշուշտ Մարա, ան սրիկան չէ՞ր որ 1815ին  
կայսրը մասնեց: Ասոր համար է որ կ'ըսեմ թէ ֆը-  
րանսական լրագիրները իրարմէ վար չէին մնար, շա-  
րունակեց Պ, Մուժօն իր «բացառութիւն» կոչած  
դատին խորը մտնելով, գիտէ՞ք, Պարոն Ռօօօլֆ, ես  
ի՞նչ պիտի ուզէի, նա՛, սանկ ըսեմ, ուզածս շնորհ-  
քով լրագիր մը պիտի ըլլար, թող մեծ չըլլայ, սինակ  
խոշոր խոշոր լը ջարդէ և մեծ մեծ չխօսի:

— Դժուարինս խնդրեցեր, առանց խօսքի լրագիր  
կ'ըլլա՞յ:

— Ինչո՞ւ չէ, մինակ մտիկ ըրէք ինծի:

— Կը ջանամ սասնկ բնելու:

— Ֆրանսերէն լրագիր մը որ մինակ կայսեր ա-  
ռողջութեան վրայ լուր տայ, և աշխարհիս աղէկու-  
թեան վրայ խօսի. ի՞նչ բանի կը ծառայեն բոլոր ֆը-  
րանսական լրագիրները, որոնցմէ մարգ բան չի հա-  
կընար: Հիմա, ենթադրութիւն մը: Ես թաղապետա-  
կան պաշտօնեայ մըն եմ, անանկ չէ՞, և ինծի յանձ-  
նուած է մահերու արձանագրութեան տետրակը: Արդ  
եթէ մէկը գար և ինծի ըսէր, «Պա՛րոն Մուժօն,  
դուք մահերու վիճակացոյցը կը բռնէք չէ՞, ուրեմն  
սա ըրէք, նա ըրէք. այսպէս գրեցէք, այնպէս մի՛  
գրէք, սանկ, նանկ»: Շատ աղէկ. ո՞ր մէկը ընես,  
ի՞նչպէս շարժիս, ասոր վերջը՞. ահա լրագիրներն ալ  
սասնկ ըսին ըսելով խօսքը վերջացուց:

— Իրաւունք ունի, ընդմիջեց մէկը, իբրև թէ  
բան մը հասկցած ըլլար պարօն Մուժօնի խօսքերէն:

Պ. Մուժօն, իրեն համամիտ գտնուող քանի մը  
յաճախորդներուն շնորհաւորութիւնները ընդունելէ  
ետքը, գնաց ասիինօն շարունակելու:

— Բերնին չափը տուի, ըսաւ, Ռօօլֆը ցուցու-

նագրուած էին իր բոլոր բարեկամներուն ու ծանօթ-  
ներուն անունները: Ամէն մէկ անունի դիմացը նը-  
շանակուած էր, զատ զատ ամէն մէկուն կարողու-  
թեանը համեմատ, իր փոխ առնելիք օտակին առաւե-  
լագոյն գումարը, անոնց երբ ստակ ունենալնուն թը-  
ւականները, սեղան նստելնուն ժամերը, օտանը սօ-  
վորական ճաշացուցակը միասին:

Այս ցանկէն զատ կանոնաւոր տետրակ մը կը բըռ-  
նէր, որուն վրայ կը նօթագրէր փոխ առած օտակ-  
ներուն հաշիւը, առանց զանց բնելու կոտորակները.  
որովհետեւ չէր ուզեր որ պարտքը աւելի ըլլար քան  
այն գումարը, զոր նորմանախօս մէջ իր ունեցած մէկ  
հօրեղբորմէն ժառանգելու կ'սպասէր:

Մէկու մը քսան ֆրանք պարտք ունեցածին պէս  
հաշիւը կը փակէր, և կ'երթար պարտքը կը վճարէր,  
այդ գումարը փոխ առնելով ուրիշէ մը, որուն նուազ  
պարտակօն էր: Այս եղանակով հրապարակին վրայ  
վարկ մը օտեղծած էր իրեն, որուն «ծփուն պարտք»  
անունը կուտար. և որովհետեւ ձեռքը ստակ անցաք  
ծին պէս սովորութիւն ունէր պարտքերը վճարելու:  
Բարեկամները չէին մերժեր այդ ծառայութիւնը ի-  
րեն մատուցթնելու, երբ ձեռքերնէն կուզար:

Արդ, ժամը տասնըմէկէն ի վեր որ դուրս ինկած  
էր, պէտք ունեցած եօթանասունեակինդ ֆրանքը  
րէկեղեղ բերելու համար, հազիւ կրցած էր ձեռք ան-  
ցընել երեք ֆրանք, ան ալ իր երեւելի ցանկին մէջ  
գտնուող Մ. վ. և Ռ. գիրերուն աշխատակցութեամ-  
բը. մնացեալ գիրերուն չէր կրցած դիմել, որովհետեւ  
անոնք ալ իրեն պէս պարտքեր ունէին վճարելիք և  
չէին կրնար կտտարել իր խնդիրքը:

Ժամը վեցին, սաստիկ անօթութիւն մը ճաշի  
զանգակը հնչեցուց օտամոքօին մէջ:

Այդ պահուն, Մէնի դրան մօտերը կը գտնուէր,  
ուր կը բնակէր Փ: գիրը: Շոնար ուղղակի գնաց Փ.  
...ենց տունը, ուր սովորաբար ճաշի վար կս դնէին  
գինքը, և որոնց սեղանին վրայ, իր անձեռնոցի բո-



նելով, երբ այս վերջինը կը ժամենայ այն սեղանին, որուն շուրջը նստած էին Շոնար և Քոլին:

— Սա աւանակին նայեցէք, բնաւ երկու երիտասարդներուն ցոյց տալով թաղապետական պաշտօնեան:

— Պինդ գլուխին մէկն է, արդէն առանկ ըլլալը յայտնի է աչքերուն կոպերէն, որ կառքի մը շրջաբոյն կը նմանին, և աչքերէն որ թօղաբայի պիլեաներէն տարբերութիւն չունին. բնաւ Շոնար, գործածուելէ սկսած ծխափողէն չունչ մը քաշելով:

— Ադ ի՞նչ աղուոր ծխափող է, ըսաւ Ռոտօլֆ, կեցցե՛ս:

— Ասկէ աղուորն ալ ունիմ, զոր կը գործածեմ երբ շնորհով տուներ այցելութեան կ'երթամ: Քօլին, սա ծխախոտդ չա՞ս:

— Խաչըր հատաւ, աղաղակեց փիլիսոփան:

— Եթէ կրնորէք, ես տա՛մ ձեզի, ըսաւ Ռոտօլֆ և սեղանին վրայ դրաւ գրպանէն հանած «բաքէթ»ը:

Իր այս ազնիւ մարդավարութեան փոխարէն, Քոլին պատշաճ սեպե՛ր մպելիներ ապարել: Ռոտօլֆ չէ չըսաւ և խօսակցութիւնը դարձուց գրականութեան վրայ: Ռոտօլֆ, ինչպէս արդէն իր վրայ-գլուխը եր մտանէր, յայտարարեց թէ շարունակ Մուսաներու հետ շփման մէջ կը գտնուէր և ասոր վրայ ինքն ալ խմելիքներ բերել տուաւ:

Երբ կառսօնը շեշերը պիտի վերցնէր, Շոնար կամացուկ մը խնդրեց անկէ որ իր հաշիւը Քոլինի վրայ անդրնէ, որովհետեւ անոր գրպանին մէջ երկու հինգ ֆրանքնոցի իրտու շփուիլը ականջին դարկած էր: Ռոտօլֆ, իր երկու բարեկամներուն պէս «աչքի» և կամ, սկսաւ իր սիրտը ըրանալ անոնց առջեւ:

Եւ անշուշտ մինչեւ առաւ սրճարանէն դուրս պիտի չելլէին, եթէ սպասուորները լուր չտային թէ խանութը պիտի գոցեն: Փողոցին մէջ հազիւ տասը

քայլ առած էին, ան ալ մէկ քառորդ ժամէն, յանկարծ տեղատարափ անձրեւ մը գալ սկսաւ: Քոլին և Ռոտօլֆ Բարիդի երկու հանդիպակաց ծայրերը կը բռնակէին, մին իւր-մէկ Լուիի կողմը և միւսը Մօնմարթը:

Շոնար, սր բոլորովին մոռցած էր բնակութեան վայր մը չունենալը, իր տունը հրաւիրեց զանոնք:

— Եկէք ինձի երթանք, տունը հեռու չէ, գիշերը գրականութեան և գեղարուեստի վրայ խօսելով կ'անցընենք. բնաւ:

— Դուն ալ դաշնակ կը զարնես և Ռոտօլֆէն ալ կը խնդրենք որ ոտանաւորներ արտասանէ:

— Ինչո՞ւ չէ, պէտք է զուարճանալ, քանի որ կեանքը այնքան կարճ է:

Շոնար երբ իր դրանը առջեւ հասաւ, զոր դժուարաւ կրցած էր ճանչնալ, պահ մը նստաւ անուարգելի մը վրայ և սպասեց Ռոտօլֆին և Քոլինին. որ ճամբան՝ տեղաւին բաց մնացած գինեվաճառի մը խանութը մտած էին ընթրիքի մը նախնական նիւթերը դրնելու համար: Երբ եկան միացան իրեն, Շոնար քանի սը հեղ զարկաւ դուռը, վարժուած ըլլալով այսպէս ընել, որովհետեւ դոնապանը միշտ կ'ուշանար բանալու: Վերջապէս դուռը բացուեցաւ և «պապա» Տիւրտն, առաջին քունի քաղցրութեան մէջ խորասուզուած և մոռնալով որ Շոնար այլեւս իր վարձակալը չէր, պառկած տեղէն չարժեցաւ անդամ, երբ անիկա անունը տուաւ զոնակին առջեւէն անցած պահուն:

Երբ երեքը մէկանց վեր ելան սանդուղներէն, վերելք մը տ'յնքան երկայն, որքան դժուարին, Շոնար՝ սր առջեւէն կը քայլէր, զարմացման ճիչ մը արձակեց, երբ տեսաւ սր սենեակին բանալին գրանը վրայ մնացած էր:

— Ի՞նչ կ'ըլլաս կոր, հարցուց Ռոտօլֆ:

— Խելքս չի հասնիր կոր, մրմոռաց. առտուն հե-



տըս առած բանալիս հիմա գրանս վրայ կը գտնեմ կոր։  
Եկուր ասոր տակէն ելիր։ Առաւելն գրգսնս գրած էի  
և Լէնորէն հոն է, ըսաւ, ցոյց տալով բանալին։

— Ատիկա կախարդութիւնն է, ըսաւ Քօլին։

— Ուրուացուցութիւնն ըսէ սըւոր։

— Երեւակայութիւնն, աւելցուց Ռօտօլֆ։

— Բայց, կրկնեց Ծոնար, որու ձայնը սարսափի  
սկզբնաւորութիւն մը կը մատնէր, կը լսէ՞ք կոր։

— Ի՞նչ բան։

— Դաշնակա սր ինքնիրենը կը չալուի կոր. լա,  
մի, բէ, աօ, լա մի սօլ, բէ, գեաին անցնելիք բէ,  
յաւիտենապէս կեղծ։

— Բայց այդ դաշնակը ձեր ասնը մէջ ըլլալու չէ,  
ըսաւ Ռօտօլֆ և Քօլինի ականջին դպելով կամացուկ  
աւելցուց։

— Մէկ մարդ քաղաքը տուած է։

— Ատանկ ըլլալու է և յետոյ չառածը դաշնակ  
մը չէ, հապա սրինդ մը։

— Բայց դուն անկէ վար չես մնար, դուն ալ  
քաղաքը փակեր ես, պատասխանեց բանաստեղծը փի-  
լիսօփալին, որ սեմին վրայ նստած էր

Չալուածը չօթեակ է։

— Զու. . . չհայտէ՞ ինձի նայէ Ծոնար, ըսաւ Քօ-  
լին Ծոնարին, ասոր սրունքներէն քաշելով։ Խնկրին  
մեռնին, Պարոնը կը պնդէ որ չօթեակ մըն է. . .

— Անիծից արժան, բացանչեց Ծոնար, վերջին  
աստիճանն անարեկուած, ի՞նչ կ'ուզէք ըսէք, չալուածը  
դաշնակը է իսպառ, ասոր մէջ կախարդութիւնն զայն  
— Ուրու. . . ցուցութիւն, ունաց Քօլին, ձեռ-  
քը բանած գլխիլ յիշ գեաին ձգելով։

— Երեւակայութիւնն, կողկանչեց Ռօտօլֆ։

Այս այլանդակ ժխտին յարուցած աղմուկէն,  
սենեակին դուռը բացուեցաւ յանկարծօրէն և սեմին

վրայ երեւցաւ մարդ սը ձեռքը բռնած աշտանակ մը  
երեք ճիւղերով, որոնց վրայ վարդալոյն մոմեր կը  
վառէին։

— Ի՞նչ կ'ուզէք, հարցուց մարդը քաղաքավար-  
րէն և երեքն ալ բարեւելով։

— Ո՛հ, Աստուած իմ, աս ըրածս եզա՛ւ հիմա,  
օխալեր եմ, ասիկա իմ տունս չէ ըսաւ Ծոնար։

— Պա՛րոն, աւելցուցին Ռօտօլֆ և Քօլին մէկ բե-  
րան, խօսքերնին ուղղելով դուռը բացող անձին, նե-  
րսդամիա գանուեցէք հանգէպ մեր բարեկամին, որ  
մինչև քիթին ծայրը գինով է։

Մէկէն ի մէկ պայծառութեան կայծ մը լուսաւո-  
րեց Ծոնարի գինովութիւնը և կրցաւ դրան վրայ  
կարդալ կաւիճով գրուած օտաւոր  
«Կաղանդչէքս առնելու համար երեք անգամ եկայ»

«ՖիՄի»

— Բայց չէ՛, չէ՛, ըսելիք չի կայ, տունս հոս է,  
տեւատսիկ Ֆէմիին այցաքարաբը որ հոս ձգեց կազան-  
դին օրը. սա դուռը իմս է։

— Հաւատացէ՛ք, պա՛րոն, թէ իրապէս չփոթած  
եմ, ըսաւ Ռօտօլֆ։

— Նայնդէս, պա՛րոն, աւելցուց Քօլին, ես ա՛-  
բարեկամիս չփոթութեանը կը մասնակցիմ։

Երբասարդը խնդուքը չկրցաւ զսպել։

— Եթէ կ'ուզէք, վայրկեան մը ներս հրաման-  
ցէք, թերեւս բարեկամիս տեղւոյն վրայկարենայ իր  
սխալը ուղղել, ըսաւ։

— Ասենայն սիրով։

Բանաստեղծը և փիլիսօփան, Ծոնարի թեւերէն  
քաշելով ներս ասորին սենեակէն, կամ աւելի ճիշտ է  
ըսել Մարտէլի պալատէն, զոր անչուշա ընթերցողները  
կառնեցին։

Ծոնար ակնօրկը չորս կողմը պօքացնելէ ետքը  
մըտաց։



— Զարմանալի բան, բնակարանս աս որքան ազուրցեր է:

— Ըսէ նայինք, հարցուց Քօլին, հիմա խելքդ տեղ ըրա՞ւ:

Բայց Շոնար, դաշնակը տեսնելուն պէս, դնաց նստաւ առջեւը և սկսաւ «կամ»եր զարնել:

— Մտիկ կ'ընէ՞ք կոր, հարցուց, մատները ըստեղնաչարին վրայ պարտցնելով, հա՛, սանկ, կենդանին իր տէրը ճանչցաւ, սի, լա, սօլ, ֆա, մի, ըէ. խայտառակ ըէ, մարդ ըլլալիք չունիս, չըսի՞ որ այս դաշնակը իմօ է:

— Դեռ կը պնդէ կոր, ըսաւ Քօլին Ռօուֆին:

— Ուր է նէ հօն է, պատասխանեց Ռօուֆին:

— Է՛յ ասիկա՞ հապա, յարեց Շոնար, ցոյց աւելով աստեղասփիւռ «միսօ»ն, որ աթոռի մը վրայ նետուած էր, աս զգե՞ստն ալ իմօ չէ: Եւ աչքին պօչովը Մարսէլին նայելով «և ասիկա՞» ըսաւ և պառնի վրայէն փրցուց դատարանի բարապանին ազդարարազիրը, որուն վրայ ասկէ առաջ խօստեցաւ, և սկսաւ կարգալ. «հետեւարար Պ. Շոնար պարտի տունը պարպել և իր վիճակինմէջ յանձնել թիրօջը Ապրիլիսին կէսօրէ առաջ: Իրեն յանձնեցի ներկայ ազդարարազիրը, որուն ծախսը 5 ֆրանք է»: Ես չեմ հէ՞, ան Պ. Շոնարը, զոր տունէն կը հանեն բարապանի ձեռքով, դրոշմաթուղթ զրկելու պառիւր կ'ընեն իրեն և որուն ծախսը հինգ ֆրանք է: Հապա ասո՞նք, յարունակեց Շոնար, ճանչնալով իր մուճակները, զորս Մարսէլ ոտքերուն անդուցած էր, ասոնք իմ ճշտ պուճաներս չէ՞ն հէ, սիրտկանի մը ձեռքով ինծի ընօ՞ժայ արուած:

— Հիմա կարգը ձերն է, Պ. Մարսէլ, բացատրեցէք թէ ինչպէս կ'ըլլայ որ դուք այս երգիքին տակ կը դանուիք:

— Պարտնայք, ըսաւ Մարսէլ, խօսքը ուղղելով մասնաւորապէս Քօլինին և Ռօուֆին: (Պարտնը Շոնարը ուրիշ տալով), Պարտնը իրաւ իր տանը մէջ կը դանուի, կը խոստովանիմ:

— Ո՛հ, ըսաւ Շոնար, տես՞ք հիմա:

— Բայց, յարեց Մարսէլ, ես ալ իմ տանս մէջն եմ:

— Սակայն, Պարտն, ընդմիջեց Ռօուֆի, եթէ ձեր բարեկամը կը ճանչնայ թէ . . . :

— Այո՛, շարունակեց, եթէ մեր բարեկամը . . . :

— Երբ միւս կողմէ դուք ալ կը յիշէք թէ, աւելցուց Ռօուֆի, ի՞նչպէս կ'ըլլայ որ . . . :

— Այո՛, արձագանգեց Քօլին, ի՞նչպէս կ'ըլլայ . . . :

— Հաճեցէք նստիլ, Պարտնայք, պատասխանեց Մարսէլ, եթէ կ'ուզէք, ասոր դաղանիքը բացառեմ

— Եթէ բացատրութիւնը թրջնեք, ինչպէ՞ս կ'ըլլայ, յանդգնեցաւ հարցնել Քօլին:

— Փորեքնիս կշտացնելով, աւելցուց Ռօուֆի:

Զորս երեսասարդները սեղան նստան և ամէնքը մէկանց յարձակեցան պող միսի կտորին վրայ, զոր գինեկաճառէն գնած էին:

Մարսէլ բացատրեց ինչ որ աստուն տեղի սենեցած էր իր և տանաիրօջը միջեւ, երբ եկած էր սենեակը վարձելու:

— Եթէ այդպէս է, ըսաւ Ռօուֆի, Պարտնը իրաւունք ունի, աս իր տունն է:

— Զոր ձերը կրնաք նկատել, վրայ բերաւ Մարսէլ, ջաղաքովարօրէն:

Ահագին գծուարութիւն կրեցին անցած դարձածը հասկցնելու Շոնարին: Խնդալիք միջոգէպ մը աւելի կնճռոտեց կացութիւնը: Շոնար «պիւլֆէ»ին մէջ բան մը փնտաած տեսնը, ձեռք անցուց այն հինգ հարիւր ֆրանքի փուճարը, զոր աստուն, պանքառմսի մը փոխարէն Պ. Պէրնասա տուած էր Մարսէլին:

— Ես արդէն գիտէի որ, գօչեց, բախար երեօի



վրայ պիտի չթողուր զիս, հիմա միաքս կուղայ կոր թէ ես այս առաւ անոր ետեւէն վազեցի, եսամտա- յին պատճառաւ, իրաւ է, բայց կ'եմբուայ թէ իմ հոս չեղած առանս եկած ըլլալու է: Իրարու չենք հանդի- պիր, ահա ամբողջ եղածը: Ի՞նչ աղէկ ըրեր եմ բա- նային գրանը վրայ ձգելով:

— Խելքին եկաւ. ըսաւ Ռօտօլֆ, տեսնելով որ Շոնար գրամետրը իրարու վրայ կը շարէր:

— Երա՛ղ, խարկա՛նք, այս է կեանքը, վրայ բերաւ փիլիսոսփան:

Մարտէլ կը խնդար:

Փամ մը ետքը, չորսն ալ ընտցած էին:

Հետեւեալ օրը, կէսօրին արթնցան, և շատ զար- մացան միատեղ գտնուելուն վրայ: Շոնար, Քօլին և Ռօտօլֆ, իբրեւ թէ բնաւ զիրար ճանչցած չըլլային, սկսան դարձնով խօսիլ իրարու հետ: Հարկ եղաւ որ Մարտէլ յիշեցնէր թէ իրիկունք երեքն ալ միտին եկած էին հոն:

Այդ պահուն Տիւրան ներս մտաւ սենեակէն:

— Պարոն, ըսաւ Մարտէլին, այսօր հազար ութ հարիւր քառասուն և Ապրիլի ինն է: Փողօցին մէջ ցեխ կայ և Ն. Վեհափառութիւնը Լուի-Ֆրիլիֆ Ֆրան- սայի և Նաւարի թագաւորն է միշտ:

— Վա՛յ դուք հո՞ս էք եզեր, բացազանչեց Տիւ- րան, իր նախկին վարձակալը տեսնելով: Պ. Շոնար, ի՞նչպէս ներս մտաք:

— Հեռագրով, պատասխանեց Տոնար:

— Ըսել չըլլայ, բայց դուք շտա օոյինպազ՝ մարդ էք:

— Ինձի նայէ, Տիւրան, չեմ հանդուրժեր որ սպասուորները խօսքի խառնուին, դուն սա մօտի աշարանը ա և չորս հողիի համար ճաչ մը ապրս- պրէ. առ սա ճաչացուցակը, աւելցուց, անոր երկնցը- նելով թաւղթի կօսը մը, օրուն վրայ կերակուրի ա- նուններ գրած էր, «հայտէ»:

— Պարո՛ններ, յարեց Մարտէլ. երեք երիտա- օարդներուն, երէկ գիշեր ընթրիքը դուք հրամցու- ցիք, ներեցէք որ, այսօր ալ ես հրաւիրեմ ձեզ ճաչի, ոչ թէ իմ տանս մէջ, այլ ձերինն, աւելցուց, ձեռ- քը երկնցնելով Շոնարին:

Ճաչը ըմնայէն ետքը, Ռօտօլֆ խօսք ուզեց:

— Պարոններ, ըսաւ, ներեցէք որ բաժնուիմ ձեզմէ:

— Ո՛հ, ո՛չ, ըսաւ Շոնար, զգայնիկ շեշտով մը? ասկէ ետքը իրարմէ բաժնուիլ չի կայ:

— Իրաւունք ունի, մենք հոս հանգիստնիս գը- տանք, յարեց Քօլին:

— Վայրկեան մը պիտի թողու՞մ ձեզ, շարունա- կեց Ռօտօլֆ, վաղը հրապարակ կ'ելլէ ձե՛կշարք տ'ի- րիս»ը, նորաձեւութեան լրագիր մը, որուն խմբագ- րապետն եմ, պէտք է որ երթամ փորձերը սրբագ- րեմ, ժամէ մը կուգամ:

— Հը՛մ, ըրաւ Քօլին, աղէկ միաքս ձգեցիր. ես ալ դաս մը ունիմ տալիք հնդիկ իշխանի մը, որ Բա- րիդ եկած է արարերէն սօրվելու:

— Վաղը գացէք, ըսաւ Մարտէլ:

— Չըլլար, պատասխանեց փիլիսոսփան, իշխանը այսօր ստակ պիտի տայ ինձի, յետոյ պէտք է խօսք տովանիմ թէ այս փառաւոր օրը պէտք եղածին պէս- ատնած չպիտի ըլլայի, եթէ անգամ մը աչքէ կանցը- նէի գրավաճառներուն խանութները:

— Պիտի վերադառնա՞ք չէ՞, հարցուց Շոնար:

— Վարժ ձեռքէ մը արձակուած նետի մը պէս, պատասխանեց փիլիսոսփան, որ շտա կը քիթէր որ- տառոց փոխարեութիւնները:

Եւ Ռօտօլֆին հեռ դուրս ելաւ:

— Չեզի բան մը ըսե՛մ, դիտել տուաւ Շոնար, Մարտէլին, երբ երկուքը մինակ մնացին, փոխտանակ



հոս ասանկ պարապ պարապ նստելուս, գէ՛շ կ'ըլլայ սիթէ՛ եթէ երթամ ստակ ճարեմ սա Պ. Պեռնարին բերանը գոցելու համար:

— Բայց, ըսաւ Մարսէլ վրդովուած, անպատճառ միտքերնիդ տունէն ելլե՛լ է:

— Ուղեմ չուզեմ, քանի որ բարապանով ճամբու դրուած եմ. հինգ ֆրանք ծախսով:

— Բայց, շարունակեց Մարսէլ, երբ տունէն ելլէք, կարասինիդ ալ պիտի վերցնէք, չէ՞:

— Ատանկ միտք մը սենիս, այո, և Պ. Պեռնարի ըսածին պէս թել մը մաղ անգամ պիտի չձգեմ:

— Հը՛մ, ըրաւ Մարսէլ, առիկա գործիս չի գար, որովհետեւ ես սենեակը կտակարարուած վարձեցի:

— Աս ատանկ է, յարեց Շոնար, բայց առոր հետ սէկտեղ, սա ալ իրաւ է թէ ի՞նչ բան կ'ապացուցանէ որ իմ եօթանասուն հինգ ֆրանքներս ե՛րբ պիտի գտնեմ, այսօ՛ր, վա՛ղր թէ միւս օր:

— Կայնեղէք, գոչեց Մարսէլ, միտքէս բան մը կ'անցնի կոր:

— Ըսէք տեսնեմ, ըսաւ Շոնար:

— Հիմա մեր կացութիւնը հետեւեալն է, ըստ օրինի այս բնակարանը իմս է, քանի որ մէկ ամսակաօնը կանխիկ վճարած եմ:

— Բնակարանը այս, բայց կարասինե՞րը. եթէ պարաքս վճարեմ, օրէնքով կ'առնեմ կը ասնիմ, և եթէ կարելի ըլլար, առանց օրէնքի ալ կը վերցնէի, ըսաւ Շոնար:

— Այսպէս, շարունակեց Մարսէլ, ըսել կ'ըլլայ թէ դուք կարասիներ ունիք առանց բնակարանի, իսկ ես բնակարան սը ունիմ առանց կարասիի:

— Ատանկ եղաւ, յարեց Շոնար:

— Ես այս բնակարանին շատ հաւնած եմ:

— Հապա ե՞ս, բնաւ աչքէս ելած չունի:

— Ի՞նչպէս ըսիք:

— Աչքէս ելած չունի, օ՛հ, հոգ մի ընէք, լեօշուս աղէկ գիտես:

— Եթէ այդպէս է, մինք գործը մէջերնիս կըրնանք կարգադրել: Եկէք մէկտեղ բնակինք, տունը ինձմէ, կարասիները ձեզմէ:

— Բայց վա՛րձքը, հարցուց Շոնար:

— Քանի որ այսօր ձեռքս ստակ կայ, այս անգամ ես կը վճարեմ, եկող անգամ ալ դուք: Երբ ամօնեցէք:

— Ես երբեք չեմ ստածեր, երբ ինծի եղած առջարկը հոճելի է, անմիջապէս կ'ընդունիմ, չմտանանք որ նկարչութիւնը և երաժշտութիւնը իրարու ըոյր են:

— Սիրակցորդ ըոյրեր:

Այս խօսակցութեան վրայ Ռօօուֆ և Քօլին, որ ճամբան իրարու հանդիպած էին, միտօին ներս մտան:

— Պա՛րոններ, գօչեց Ռօօուֆ, գրպանին մէջի գրամները շխրտացնելով, ամենքդ ալ կերակուրի կը հրաւիրեմ:

— Ես ալ ճիշտ այդ բանը առջարկելու պատիւը պիտի ունենայի, յարեց Քօլին, օսկի մը հանելով գրպանէն և ասօնաբար պէս աչքին անցընելով գայն: Այս օսկին իշխանս տուաւ, հնդկերէնէ արաբերէն բառաբան մը գնելու համար իրեն, օրմէ հաս մը ձեռք անցուցի վաթօուն փարայով:

— Ես ալ, ըսաւ Ռօօուֆ, երեսուն ֆրանքի կանխավճար մը ուրի թերթին գանձապետէն, առարկելով որ այդ ստակին պէտք ունէի... պատուաւ տուելու համար:

— Չըսէ՞ք որ այսօր գանձումի օր է, ըսաւ Շոնար, օտակ չընող միտակ ես մնացի, ասիկա տեսակ մը նուաստութիւն է:

— Ի՞նչ է որ, խօսքս խօսք է, զձեզ ճաշի կը հրաւիրեմ, ըսաւ Ռօօուֆ:



— Նոյնպէս ես ալ, յարեց Քօլին:  
 — Լաւ ուրեմն, եկէք «եռզը-թուրա» խաղանք,  
 նայինք ճաշին օտակը ո՞վ պիտի ցնծայ, վրայ բերաւ  
 Ռօտօլֆ:

— Չէ, պոռաց Շոնար, ես ուրիշ բան պիտի ա-  
 ռաջարկեմ, ձեր ըսածէն հազար անգամ լաւագոյն  
 բան մը, որ վերջ պիտի դնէ ձեր վարանուսին:

— Ըսէ տեսնե՞ք:

— Ռօտօլֆ թող ցերեկուան ճաշը վճարէ, Քօլին  
 ալ գիշերուանը:

— Սողոմոն իմաստունի վճիռ մը, ճշեց փիլի-  
 սօփան:

Ասիկա «Կամաչ»ի հարսնիքն ալ դեց անց տն-  
 ցաւ, յարեց Մարսէլ:

— Ճաշը տեղի ունեցաւ Տօֆին փողօցի «խըռօ»  
 ճաշարանի մը մէջ, որ նշանաւոր էր իր գրասէր  
 կոռսօններովը և «թէրաթուր»ովը:

Գիշերուան ընթրիքին տեղ պահելու համար, ա-  
 մէնքն ալ չափաւոր կերպով կերան ու խմեցին:

Նախ Քօլինի և Շոնարի և ապա Մարսէլի միջեւ  
 մէկ գիշեր առաջ հիմ գրած ծանօթութիւնը սկսած  
 էր աւելի մտերմական ըլլալ: Չորսն ալ զառ զառ ի-  
 բենց արուեստի մասին ունեցած հակումներուն գրօ-  
 շը պարզեցին հեռզնեալ և անսան թէ չորսերնին ալ  
 միեւնոյն յոյսերով զօրացած էին և միեւնոյն չափով  
 զարգացած:

Պօսելով և վիճարանելով, սա՛ համազման եկան  
 յանգեցան որ իրենց մէջ տիրող համակրութիւնը փո-  
 խազարձ էր, թէ ամէնքն ալ հուշասար չափով օժ-  
 տուած էին հեզնօղ մտաւորակութեամբ մը, որ կը  
 զուարճացնէ առանց վիրաւորելու և թէ երիտասար-  
 դական բոլոր գեղեցիկ առաքինութիւնները տեղ ու-  
 նէին իրենց սրտին մէջ, որ յուզուիլ գիտէր ի տես  
 կամ ի լուր վեհաշուք բանի մը: Չորսն ալ միեւնոյն  
 չուկէտէն մեկնած էին, միեւնոյն նպատակին հաս-  
 նելու համար:

Այսպէս խորհեցան թէ իրենց մէկտեղ գտնուիլը  
 սովորական զուգարիպութեան մը արգիւնքը չէր,  
 այլ նախախնամութեան դօրծը, որ խնամակալն է բո-  
 լոր շքուածներուն և որ իրենց ականջին կը փորձար  
 աւետարանական սա խօսքը, որ մարդկութեան միակ  
 նշանաբանը պէտք էր ըլլալ: «Օգնեցէք իրարու,  
 և սիրեցէք զիրար»:

Ճաշի վերջաւորութիւնը շատ լուրջ պայմաննե-  
 րու տան տեղի ունեցաւ:

Ռօտօլֆ ոտքի ելաւ և իրենց ապագայ երջանկու-  
 թեան համար բաժակ առ-ջարկեց: Քօլին պատասխա-  
 նեց անոր ճառով մը, որ չէր քաջուած որեւէ որքէ  
 մը, որ ոչ մէկ կերպով չէր պատկաներ վսեմ սճի  
 դպրօցին և որ կը խօսէր միամտութեան յատուկ կոր-  
 ճան, որ լաւ հասկնալի կ'ըլլայ զիմացիներն, որքան  
 որ զէշ կերպով կը բացատրէ ըսել ուղուածը:

— Քիչ մը քիչ աւանակ չէ սա փիլիսոփան, մըր-  
 մաց Շոնար, որ այլևս կարող չէր քիթին ծայրը  
 տեսնելու, եթէ ասանկ շարունակէ. պիտի օտիպուիմ  
 իրմէ պաղիլ:

Ճաշէն ետքը Մոմիւս գացին սուրճ խմելու, ուր  
 առջի գիշեր ալ միեւնոյն բանը բրած էին: Այդ գի-  
 շերու ընէ սկսեալ է որ, այդ սրճարանին սովորական  
 աճախորդները

Սուրճէն և պիլիներէն ետքը, ցոփազնացներու  
 այդ ակումբը վերջնականապէս կազմակերպուած վե-  
 րադարձաւ Մարսէլի բնակարանը, որուն «Շոնարեան  
 էլիզէ» անունը տուին: Մինչ Քօլին իր խոստացած  
 ճաշը ապօպրելու կ'երթար, միւսները գացին պայ-  
 խակներ, հրթիռներ և հրախաղութեան ուրիշ ա-  
 սարկաներ ծախու առին և սեղան նստելէ առաջ, պա-  
 տուհանէն փառաւոր հրախաղութիւն մը արձակեցին,  
 ինչ որ տակն ու վրայ բերաւ անեցիկները և որու  
 տեւողութեան միջոցին չորս ընկերները բոլոր ուժով-  
 նին սկսան երգել:

«Տօնենք, տօնենք, գեղեցիկ այս օրը, տօնենք»:



Եւ իր պատասխանը լրացուց, ձեռնակապովը  
ցոյց տալով Սուրբ Գրոց տասնաբանեայ պատուի-  
բանքներէն հետեւեալը.

Ուրբաթ օրը միս չուտես,

Ուրիշ բան ալ անոր պէտ:

Շոնար ասոր պատասխան մը չկրցաւ գտնել, շա-  
բաւակեց նկարել իր սկսած պատկերը, որ կը ներ-  
կայացնէր լերկ դաշտավայր մը, ուր մէկը կարմիր և  
միւսը կապոյտ երկու ծառեր ճիւղով մը ձեռք կը  
կարկանէին իրարու: Այս նկարը կը խորհրդանշէր  
բարեկամութեան քաղցրութիւնը, և որ զօրկ-չէր  
փրկի սոփայական չգիտեմ ինչ մը ունենայէ:

Այդ վայրկեանին դռնպանը ներս մտաւ և Մար-  
տէլի հասցէին ուղղուած նամակ մը ներկայացուց և  
ըսաւ.

— Վաթսուն փարա է:

— Ապահով ես, պատասխանեց արթիսթը: Շատ  
աղէկ, պարտքս թող ըլլայ:

Եւ գուռը գոցեց երեսին:

Մարտէլ, նամակը առնելով, պահարանը խզեց:  
Առաջին բառերուն իսկ, սկսաւ աշխատանոցին մէջ  
լրաբխաղացի մը պէս վեր վար ցառկել, և բարձրա-  
ձայն երգեց հտեւեալ վիպերգը, ինչ որ նշան էր ծայ-  
րաստիճան խանդավառ ուրախութեան մը.

Երիտասարդ չորս արթիսթներ,

Չորսերնին ալ հիւանդոս,

Հիւանդանոց տարուեցան,

Ցան, ցան, ցան:

— Այո, ատանկ է, ըսաւ Շոնար, երգը շարու-  
նակելով.

Մեծ անկողնի մը մէջ գրին,

Երկուքը վեր, երկուքը վար:

— Գիտենք ատիկա:

Մարտէլ շարունակեց.

Հետեւեալ առաուն նորէն մէկտեղուած դտան զի-  
րար, այս անգամ առանց զարմանք յայտնելու:

Իրենց գործին երթալէ առաջ, խմբովին գացին  
թեթեւ նախաճաշ մը ըրին Մամիւսին ուր երեկոյեան  
միանալու համար ժամադիր եղան և ուր ամէն օր  
յաճախել սկսան անխափան:

Ասոնք են ահա այն գլխաւոր անձերը, որ վերջո-  
տին պիտի երեւան այն պղտիկ պատմութիւններու  
մէջ, որոնցմէ յօրինուած է այս հատորը, որ վէպ մը  
չէ, և որ իր անուան ցոյց տուածէն զատ, ուրիշ յա-  
ւակնութիւն չունի, անոր համար որ ցփագնար  
կեանքի գրուագները պարզապէս բարձրու սևսում,  
նաօրութիւն մըն են:

Անոր հերոսները կը պատկանին այն դասակար-  
գին, որուն մասին գէշ գաղափար կազմուած է մինչև  
հիմա և որուն ամենէն աչքի զարնող պակասութիւ-  
նը կարգ կանոն չունենալն է, և զոր կ'արդարացնեն  
առարկելով որ ատիկա իրենց ապրելակերպին մէկ  
պատեանջն է:

Բ

Շոնար և Մարտէլ, որ առաուն կանուխէն արիա-  
բար սկսած էին աշխատելու, մէկէնիմէկ կանգ առին:

— Վա՛յ չունչանորդի, աս ի՛նչ անօթութիւն է որ  
վրաս կօխեց, ըսաւ և անփութօրէն աւելցուց.

— Ան չէ «ամմա» այսօր կերակուր չպիտի տեսնը:

Այս հարցումը, բացարձակապէս անտեղի, զար-  
մանք պատճառեց Մարտէլին:

— Երբուրնէ՞ ի վեր է որ երկու օր իրարու վը-  
բայ կերակուր սուտելը տեսեր ես, ըսաւ, երէկ  
հինգշաբթի չէ՞ր:



Մէյ մ'ալ եկաւ մայրապետ մը  
Մը, մը, մը:

— Եթէ ձայնդ չկարես, ըսաւ Շոնար, որ խե-  
լագարութեան ախտանիշեր ցոյց տալ կ'օգուտը, հիմա  
կը չալեմ, հա, «կապոյտին ազդեցութիւնը արուեստ-  
ներուն վրայ» անուն համերգի «այէկրօն»:

Եւ գնաց նստաւ գաշնակին առջեւ: Այս սպառնա-  
լիքը այն ազդեցութիւնը ըրաւ Մարսէլի վրայ, ինչ  
որ կ'ընէ պող ջուրի կաթիլ մը, ետացող հեղուկի մը  
վրայ:

Մարսէլ հանդարտեցաւ ի ըթթել ական:

— Ա՛ս նայինք, կարդա՛, ըսաւ, նամակը երկըն-  
թընելով բարեկամին:

Երեսփոխան մըն էր, արուեստից և մասնաւորա-  
պէս Մարսէլի պաշտպան մէկը, որ ճաշի կը հրաւիրէր  
Մարսէլը, որ մարդուն գեղի ասնր պատկերը շինած էր:

— Այս օրուան համար է, ըսաւ Շոնար, ցաւալի  
է որ այդ հրաւերը երկու հօգիի համար չէ: Բանը  
այն է որ կը մտածեմ թէ այդ քու երեսփոխանդ նա-  
խարարցու է, և չես կրնար, պէտք չէ որ ընդունիս  
իր հրաւերը: Գու սկզբունքներդ կ'արդիւին քեզի եր-  
թալ ուտել հաց մը, որ բանւորներու քրտինքովը  
շաղուած է:

— Որո՞ւ հօգ, ըսաւ Մարսէլ, իմ երեսփոխանո  
ձախակողմեան կուսակցութեան կը պատկանի և անց-  
եալ օր կատարութեան դէմ քուէ տուաւ: Ասկէց  
զատ, թէ՛ գործ պիտի ասյ ինծի և թէ խօսք  
տուած է զիո ներկայացնել բարձր գասու օստոննե-  
րու մէջ. սա ալ կայ որ, այսօր հակառակ Ուրբաթ  
ըլլալուն, գայի ախորժակ մը կ'զգամ, և պէտք է որ  
այսօր ուտեմ, հասկցա՞ր հիմա:

— Ուրի խօշնդոտներ ալ կան ասոնցմէ զատ, ը-  
սաւ Շոնար, որ նախանձեցաւ ընկերոջը վիճակուած  
այս բարեբախտութենէն, ինտո՞ր մարդու մէջ պիտի

ելլես ադ քու կարմիր թիկնոցովդ և «մալունածի»  
գլխարկովդ:

— Ռոտովֆին կամ Բօլինին լաթերը փոխ պիտի  
ուզեմ:

— Վա՛յ յիմար վա՛յ, կը մօտնա՞ս թէ ամուսն  
քսանն ենք այսօր և այդ պարոններուն հաղուսաները  
«թրէնթօ»ի տակ ըլլալու են այս պահուս:

— Գոնէ սինչեւ հինգ ժամ եւս ձեռք մը սեւ հա-  
գուսա կը գտնամ, ըսաւ Մարսէլ:

— Ես հօրաքրոջս աղուն հասնիքին երթալու հա-  
մար հազիւ երեք շաբաթէն «խաթ» մը սեւ լաթ ձեռք  
անցուցի, ան ալ Յունվարի սկիզբներն էր:

— Չըլլայ նէ ասանկ կ'երթամ, ըսաւ Մարսէլ  
մեծ սեծ քայլեր ասնելով, չեմ ուզեր որ ըսուի թէ  
վայելչակրութեան ասանկ ճղճիմ հարցի մը համար  
պիտի զրկեմ ես զիս. բնկերութեան մէջ մտնելու ա-  
սանկ պատեհութենէ մը:

— Ասէնք մէկ կողմ, ընդմիջեց Շոնար, որ հա-  
ճայք կ'զգար բարեկամին սիրաբ ծակելու մէջ, կօրիկդ  
ինտօ՞ր պիտի ընես:

Աննկարագրելի ցասումով սը Մարսէլ ինքզինքը  
դուրս նետեց սենեակէն: Երկու ժամ ետքը վերա-  
դարձաւ, ձեռքը օձիք մը բռնած:

— Ահա ինչ որ կրցայ գտնել, ըսաւ ողորմուկ շեշ-  
տով մը:

— Ատոր համար այդքան յոգնութիւն չէր ար-  
ժեր, պատասխանեց Շոնար, հոս մէկ «տաւրինա» օ-  
ձիք շինելու համար թո՞ւղթ կը պահուէր միթէ:

— Բայց, յարեց Մարսէլ, գլխուն մազերը փեթ-  
տելով, ի՛նչ կ'ուզէ թող ըլլայ. անպատճառ հազնե-  
լիք պիճերելու եմ:

Սե՛ն փնտտուքի ելաւ երկու սենեակներուն ծա-  
կը ճուկը:

Շոնար մը փնտտուքէ ետքը, հետեւեալ կտորները  
կրցաւ մէջտեղ հանել. «քօչէզ» բանթալոն մը, մոխ-  
րագոյն գլխարկ մը, կարմիր փողկապ մը, հաս մը



ձեռնոց, որ երբեմն ճերմակ եղած էր, և հաս մըն ալ սեւ ձեռնոց:

— Ի հարկին երկու սեւ ձեռնոց կրնաս ունենալ, ըսաւ Շոնար. գտածներդ հագածիդ պէս ծիրանի գօտիի պիտի նմանիս: Պարտաւ տեղը նկարիչ չենք ես:

Անդին Մարսէլ կօշիկները կը փորձէր:

Ի՞նչ սեւ ճակատագիր, երկու կօշիկներն ալ միեւնոյն կողսի ոտքի համար էին:

Արթիսթը ճարահատ, չորս կողմը պարտցուց աչքերը և նայուածքը հօնդիպեցաւ Աչիզմէի մը, որուն մէջ ընդհանրապէս գործածուած փամփուռները կը նետէին:

— Կսւկո՛ւկ, բացազանչեց, մարդու վրայ խնդու սիրող ընկերը, այդ կօշիկներուն մէկուն քիթը կլտր է և միւսինը օրածայր:

— Զի տեսնուիր, ես հիմա անոնց Վիեննիճ մը կը զարնեմ. կը տեսնես:

— Գէշ գաղափար չէ, մինակ գործը սեւ հագուստին մնաց:

— Ա՛խ, ըսաւ Մարսէլ, բռունցքները խածնելով, սեւ հագուստ մը ունենալու համար կեանքէս տասը տարի կուտայի, աջ ձեռքս ալ միտսին, խա՛չոր:

Դուռը նորէն զարնուեցաւ և Մարսէլ գնաց բանալու:

— Պարոն Շոնար, հարցուց օտարական մը, դըրանը սեմին վրայ կենալով:

— Ե՛ս եմ, պատասխանեց նկարիչը, օտարականը ներս հրամցնելով:

— Պարոն, ըսաւ անծանօթը, որ գաւառացի մըն էր, ինչպէս կ'երեւար իր լիւրճալը՝ դէմքէն, հօրեղբորորդիս շատ գովեց ինձի պատկեր շինելու մէջ ձեր օւնեցած տաղանդը: Ստիպուած ըլլալով ճամբորդել, դէպի հեռու գաղթավայրերը, ուր պիտի երթամ շաքարի զտարարաններու հաշուոյն, կ'ուզեմ օր, չսեկլ

նած, ինձի յիշատակ մը թողու՛մ ընտանիքիս: Եւ ինչու ձեզ գտնելու եկայ:

— Ո՛վ Սուրբ նախախնամութիւն, մալապ Մարսէլ և խօսքը Շոնարին ուղղելով:

— Պարոնին աթոռ մը չտա՛ս, ըսաւ:

— Պ. Պլանչըրօն, յարեց օտարականը, Նանթցի Պլանչըրօն, ներկայացուցիչ շաքարի ճարտարագործութեան, նախկին քաղաքագետ Վ...ի, գնդակառակ զգային պահակագործի և հեղինակ շաքարի հարցին վրայ գրուած աշխատասիրութեան մը:

— Զիս ընտրած ըլլալիդ պատիւ կը համարեմ անձիս, ըսաւ Շոնար զտարաններու ներկայացուցիչն առջեւ խոնարհութիւններ ընելով:

— Ի՞նչ ձեւով. կ'ուզէք որ ձեր պատկերը գծեմ:

— Սանկ մտնրանկար պատկեր մը, ըսաւ ցոյտալով իւղաներկ կենդանագիր մը, որովհետեւ զտացրանի պատուիրակի մը, ինչպէս նաեւ սւրիշ շաքարու համար, ինչ որ շէնքի ներկ չէ մտնրանկար կ'ըլլայ. միջին ճամբայ չի կայ:

Այս միամտութիւնը Շոնարի համար բաւական էր գիտնալու համար թէ ի՞նչ տեսակ ճիւղերի ուղի մը հեռ գործ պիտի օւնենար. երբ մտնաւանդ անիկա աւելցուց թէ կը փափօքէր օր իր պատկերը աղէկ տեսակ ներկերով դժուած ըլլար:

— Արդէն ուրիշ տեսակ ներկ չեմ գործածեր, ըսաւ Շոնար: Պարոնը ի՞նչ մեծութեամբ կ'ուզէ իր կենդանագիրը օւնենալ:

— Սըւօր չափ թող ըլլայ, ըսաւ Պ. Պլանչըրօն, քօան սանթիմէթր մեծութեամբ պատկեր մը ցօցցալով. քանի՞օ՞վ կ'ըլլայ:

— Յիսունէն—վաթսուն ֆրանք, յիսուն ֆրանք առանց ձեռքի, վաթսուն՝ ձեռքով:

— Բայց հօրեղբորորդիս ճերմակ ֆրանքով կ'ըլլայ ըսած էր ինձի:



ձեռնոց, որ երբեմն ճերմակ եղած էր, և հառ մըն ալ սեւ ձեռնոց:

— Ի հարկին երկու սեւ ձեռնոց կրնառ ունենալ, ըսաւ Շոնար. գտածներդ հագածիդ պէս ծիրանի գօթիի պիտի նմանիս: Պարտալ տեղը նկարիչ չենք ես:

Անդին Մարտէլ կօշիկները կը փորձէր:

Ի՞նչ սեւ ճակատագիր, երկու կօշիկներն ալ միւս եւնոյն կողսի սաքի համար էին:

Արթիսթը ճարահատ, չորս կողմը պարտցուց աչքերը և նայուածքը հանդիպեցաւ «չիղմէ»ի մը, որուն մէջ ընդհանրապէս գործածուած փամփուշտները կը նետէին:

— Կուկո՛ւկ, բացագանչեց, մարդու վրայ խնդալ սիրող ընկերը, այդ կօշիկներուն մէկուն քիթը կլօթ է և միւսինը օրածայր:

— Չի տեսնուիր, ես հիմա անոնց «վեռնիճ» մը կը զարնեմ, կը տեսնես:

— Դէ՛ զաղափար չէ, մինակ գործը սեւ հագուստին մնաց:

— Ա՛խ, ըսաւ Մարտէլ, բուռնցքները խածնելով, սեւ հագուստ մը ունենալու համար կեանքէս տասը տարի կուտայի, աջ ձեռքս ալ միտսին, խա՛չոր:

Դուռը նորէն զարնուեցաւ և Մարտէլ գնաց բանալու:

— Պարոն Շոնա՛ր, հարցուց օտարական մը, դըրանը սեմին վրայ կենալով:

— Ե՛ս եմ, պատասխանեց նկարիչը, օտարականը ներս հրամցնելով:

— Պարոն, ըսաւ անծանօթը, որ գաւառացի մըն էր, ինչպէս կ'երևար իր «խըմպը» դէմքէն, հօրեզբօրորդիս շատ գովեց ինձի պատկեր շինելու մէջ ձեր ունեցած տաղանդը: Ստիպուած ըլլալով ճամբորդել, դէպի հեռու գաղթալայրերը, ուր պիտի երթամ շաքարի զտարարաններու հաշույն, կ'ուզեմ որ, չսեկիջ

նած, ինձմէ յիշատակ մը թողու՛մ ընտանիքիս: Եւ ինչու ձեզ գտնելու եկայ:

— Ո՛վ Սուրբ նախախնամութիւն, մալտաց Մարտէլ և խօսքը Շոնարին ուղղելով:

— Պարոնին աթոս մը չառա՛ս, ըսաւ:

— Պ. Պլանչըրօն, յարեց օտարականը, Նանթցի Պլանչըրօն, ներկայացուցիչ շաքարի ճարտարագործութեան, նախկին քաղաքապետ Վ...ի, գնդապետ ազգային պահակազօրքի և հեղինակ շաքարի հարցին վրայ գրուած «խառաստիքութեան» մը:

— Ձիս ընտրած ըլլալնիդ պատիւ կը համարեմ անձիս, ըսաւ Շոնար զտարաններու ներկայացուցիչին առջեւ խոնարհութիւններ ընելով:

— Ի՞նչ ձեւով կ'ուզէք որ ձեր պատկերը գծեմ:

— Սանկ մտնրանկար պատկեր մը, ըսաւ ցոյտալով իւղաներկ կենդանագիր մը, որովհետեւ զտացրանի պատուիրակի մը, ինչպէս նաեւ սւրիշ շաքարու համար, ինչ որ չէնքի ներկ չէ մտնրանկար կ'ըլլայ. միջին ճամբայ չի կայ:

Այս միամտութիւնը Շոնարի համար բաւական էր գիտնալու համար թէ ի՞նչ տեսակ ըքիթիբիտօ՞ւի մը հետ գարծ պիտի ունենար. երբ մանաւանդ անիկա աւելցուց թէ կը փափաքէր որ իր պատկերը աղէկ տեսակ ներկերով դժուած ըլլար:

— Արդէն ուրիշ տեսակ ներկ չեմ գործածեր, ըսաւ Շոնար: Պարոնը ի՞նչ մեծութեամբ կ'ուզէ իր կենդանագիրը ունենալ:

— Սըւօր չափ թող ըլլայ, ըսաւ Պ. Պլանչըրօն, ջրան սանթիմէթր մեծութեամբ պատկեր մը ցոցալով. ջանի՞՞՞՞՞՞՞՞ կ'ըլլայ:

— Յիսուսէն—վաթսուն ֆրանք, յիսուն ֆրանք առանց ձեռքի, վաթսուն՝ ձեռքով:

— Բայց հօրեզբօրորդիս ճերմակ ֆրանքով կ'ըլլայ ըսած էր ինձի:



— Եղանակին կը նայի, պատասխանեց նկարիչը, ասան կայ որ ներկերուն գինը կը բարձրանայ:

— Չրո՞հք որ շաքարին պէս է:

— Կատարելապէս:

— Յիսուսն Ֆրանք թող ըլլայ, հոգ չէ, ըսաւ

9. Պլանշըրօն:

— Աղէկ չէք ըներ կոր. եթէ ասօր Ֆրանք աւելի ասք, ձեր ձեռքերն ալ կը նկարեմ, անոնց վրայ դնելով շաքարի հարցին վրայ ձեր յօրինած օւսումնասիրութիւնը, ասանկով ձեր պատկերը աւելի փառաւոր կ'ըլլայ:

— Շատ աղէկ, ըսածնուզ պէս թող ըլլայ:

— Հա՛յ աւանակ հա՛յ, ըսաւ Շոնար ինքներեանը, եթէ ասանկ շարունակէ, կէս մէջքէս պիտի ձաթիմ և կը վախնամ որ կը վիրաւորեմ զինքը կտորուանքներու մէկովը:

— Ձեռքդ ի՞նչ ես, հարցուց Մարօէլ ականջին:

— Ի՞նչ բանի:

— Վրայինը սեւ հագուստ է:

— Միտքդ հասկցայ, դուն ինձի ձգէ:

— Լաւ ուրեմն, Պարոն, ըսաւ նեկայացուցիչը, ե՞րբ պիտի սկսինք, օւշ մնալու չիգար, օրովհետեւ սօսերս պիտի մեկնիմ:

— Ես ալ ձեզի պէս պզտիկ ճամբորդութիւն մը օւնիմ ընելիք. վաղն իօկ Բարիզէն կը մեկնիս. հետեւաբար եթէ կ'օւզէք, անմիջապէս սկսինք. կանոնաւոր նկար մը գործը կը դիւրացնէ:

— Բայց պահիկէ մը մտնելը պիտի կօխէ, և չեմ կարծեր որ ճրագով կարելի ըլլայ նկարել:

— Աշխատանքը ասանկ ձեւով օր շինուած է օր մէջն ժամու կտրելի է աշխատիլ, յարեց նկարիչը, եթէ կ'ուզէք հանեցէք ձեր լաթերը և գէմս նստէք նայինք, ահա կ'սկսինք կոր:

— Լաթերս հանե՞մ, աս ինչո՞ւ:

— Չըսի՞ք որ ձեր պատկերը ընտանիքնուզ համար չիսեկ պիտի ասք:

— Անշուշտ:

— Քանի որ ասանկ է, պէտք է որ դուք ներկայացուած ըլլաք ասանկի հագուստով, արդէն աս է սովորութիւնը:

— Բայց սենեկազգեստս հետս չէ:

— Հոգ չէ, ես իսինս կուտամ ձեզի, արդէն մենք այդ պարագային ասալքը ասած ենք:

Եւ մարդուն ասջին դրու ներկի բիծերով բեռնաւորուած զգեստ մը, որ ասջի բերան նոզկանք ազգեց պարկեշտ գաւառադիրն:

— Աս ի՞նչ «թօհաֆ» զգեստ է:

— Ի՞նչ ալ թանկագին, պատասխանեց նկարիչը:

— Ատիկա թուրք Ստարաղամին մէկը ընծայ ըրած էր 9. Հօրաս Վէրնէյի, որ ետքէն ինձի ասուաւ. ես անօր աչակերան եմ:

— Վէրնէի աչակե՛րան էք, իրա՛ւ, հարցուց 9.

Պլանշըրօն:

— Այո՛, և օրուն համար հպարտ եմ: Եւ ինքնիրենը աւելցուց:

Սոսկու՛մ, աստուածներակ'ուրանաւ կոր:

— Իրաւունք սւնիք, բարեկամ, հպարտ ըլլալու, յարեց ներկայացուցիչը, վրան անցընելով ազնուազարմ այդ ներքնազգեստը:

— Պարոնին հագուստները պատէն չկախե՞ս, հրամայեց Շոնար իր բարեկամին, աչքի նշանակալից ակնարկ մը նետելով անօր:

— Ինձի նայէ, ճրմնչեց Մարօէլ, իր օւտարին վրայ նետուելով և Պլանշըրօնը ցոյց ասլով, մէկ մարդը քիչ մը վար կրնա՞ս գնել:

— Պիտի ջանամ, ատիկա խնդիր չէ, դուն հագուէ շուա մը և կծիկը գնելը նայէ: Մինակ աշխատէօր ժամը ասօնին հաս ըլլաս. մինչեւ ան ատեն ես մարդը կը խաղցնեմ. մինակ մի մասնար ինձի համար դէր-պանդ բան մը գնելու:



— Կը խօսաանամ անտնոս մը բերել քեզի, ը-  
սու Մարտէլ կծիկը գնելով:

Սենդի պէս հագուելէ ետքը մարդուն հոգուս-  
ները, որ կարծես իր վրայ կարուած էին, աշխատ-  
նօցին ետեւի դռնէն անյայտացաւ:

Շոնար սկսաւ գործի. գիշերը վրայ եկած էր և  
կրք Պ. Պլանչըրօն իմացաւ ժամացոյցին ժամը վեց  
զարնելը. միտքը եկաւ որ տակաւին կերակուր չէր  
կերած և խնդիրը հասկցուց նկարչին:

— Ես ալ չեմ կերած, բայց ձեզի ծառայութիւն  
մը մատուցանելու համար, կարեւորութիւն չունի ե-  
թէ այս գիշեր բերանս բան չդնեմ: Իրաւ է թէ այս  
գիշեր ալ ճաշի հրաւիրուած էի Սէն Փէռմէն թաղը  
քնակող բարեկամի մը կողմէ, բսաւ Շոնար: Բայց  
պէտք չէ որ մեր տեղէն շարժինք, ապա թէ ոչ նմա-  
նութիւնը կը վառնգենք:

Եւ շարունակեց նկարել:

— Այսու արեանայնիւ, վրայ բերաւ յանկարծ, օ-  
տանց անդափօխուելու փորերնիս կրնանք կշտացնել-  
վարը սքանչելի ճաշարան մը կայ, ուրկէ ուզածնիւ  
կրնանք բերել օտ:

Եւ Շոնար սպասեց անտնելու համար թէ իր ե-  
տանուագ յոգնակիները ի՛նչ ազդեցութիւն պիտի գոր-  
ծէին մարդուն վրայ:

— Դադափարնիդ գէշ չէ, ըսաւ Պ. Պլանչըրօն, և  
տար փոխարէն կը յուսամ թէ զիս պիտի պատուէք  
օնգանակից ըլլալով ինձի:

Շոնար խոնարհութիւնով մը պատասխանեց:

— Աստուած վկայ, ըսաւ ինքնիրենը, մարդու-  
քսելիք չունիմ, նախախնամութեան կողքէ զրկուած  
ճշարիտ օտաքեալ մը: Կը հաճի՞ք արդեօք դուք ըսել  
թէ ի՛նչ կ'ուզէք որ բերել տանք:

— Զիս պարտաւորած կ'ըլլաք, եթէ այդ հօգը դուք  
վրանիդ ասնէք:

«Անտնկ է նէ վայ դիսուգ» երգը երգելով, Շո-  
նար յորս առ չորս վար իջաւ օանդուիներէն:

Ճաշարանէն ներս մտնելուն ատօթկեանին զը-  
լուխը անցաւ և անտնկ կերակուրներ ապսպրեց որ  
քիչ մնաց ճաշարանապետին խելքին պիտի գար:

— Պորտոյի գինի, սկիզբէն մինչև վերջը:

— Ստակները ո՞վ պիտի օտայ:

— Հաւանական է որ տուողը ես չպիտի ըլլամ,  
բսաւ Շոնար, ցնծացողը իմ մէկ հօրեղբայրս պիտի  
ըլլայ, որ փափկակերին մէկն է: Հետեւաբար նայե-  
ցէք որ երես ճերմկցնէք և կէս ժօսէն ամէն բան  
պատրաստ ըլլայ. կերակուրները յախճապակեայ բո-  
պաներով բերելու չմոռնաք:

Ժամը ութին, Պ. Պլանչըրօն ալ պէտքը զգաց իր  
չաքարի ճարտարարուեստին վրայ ունեցած գաղտ-  
փաթները գուրօ տայաւ և Շոնարի առջեւ արտօտանել  
օկտու իր աշխատասիրութեանը պարունակութիւնը,  
զոր գօց ըրած էր:

Շոնար դաշնակին վրայ ընկերացաւ իրեն:

Ժամը ասօնին իրար փաթթուած կը պարէին և  
«գու»ով կը խօսէին իրարու հետ: Տասնըմէկին եր-  
գուս ըրին իրարմէ չբաժնուելու և կտակներն ըրին  
փոխադարձաբար, իրարու ձգելու ունեցած կար-  
գութիւններն:

Կէս գիշերին Մարտէլ օտն եկաւ և զանոնք զը-  
տաւ մէկը սիւսին գրկին օէջ, յորդառաա արցունք  
թափելու վրայ: Մարտէլ օնգանին զարնուելով, անոր  
վրայ նշմարեց փառաւոր ճաշի մը աւելցուքները:  
Շիշերը աչքէ անցուց և տեսաւ որ ամէնքն ալ կա-  
տարելապէս պարապ էին:

Ուզեց Շոնարը արթնցնել, բայց անիկա օպառ-  
նաց զինքը օգաննել, եթէ ձեռքէն խլելու ելլէր Պ.  
Պլանչըրօնը, զոր իրբեւ բարձ կը գործածէր:



— Ապերախտ, ըսաւ Մարտէլ, ափ մը կազին հանելով գրգռանէն, ես ալ իրեն ուտելիք բերած էի:

### Գ.— ՄԵԾ ՊԱՀՈՑ ՍԷՐԵՐ

Մեծ պահոց մէջ, իրիկուն մը, Ռոստօլֆ կանուխ ասն եկաւ աշխատելու հաստատ մտադրութեամբ. բայց հազիւ տեղաւորուած էր սեղանին առջեւ և գըրիչը կաղամարին մէջ թաթխած, արաստովոր շուկ մը բութիւնը գրաւեց և ահանջ դնելով այն անխորհրդապահ միջնորմին, որ զինքը քովի սենեակէն կը բաժնէր, կատարելապէս և օրձ կերպով իմացու համբոյրներէ և ուրիշ նմանաձայնութիւններէ խառն խօսակցութիւն մը, որ պատին միւս կողմը տեղի կ'ունենար:

— Վա՛յ շուտիկ վա՛յ, մտածեց Ռոստօլֆ, պատէն կախուած ժամացոյցին նայելով, ասկաւին յատուչ չէ, բայց դրացուհի Ժիւլիէթ մըն է, որ իր Ռօսէօն հաւախօտէն շատ ետքն ալ վար է դրած. ա՛լ չեմ կըրնար ես այս գիշեր հօտ աշխատիլ:

Եւ գլխարկը առնելուն պէս դուրս ելաւ: Բանաւին դանապանին սենեակը ձգած պահուն, անոր կինը կէտ սը բանտարկուած գտաւ սիրականին թեւերուն մէջ: Խեղճ կինը անանկ մը յանկարծակիի ետեւ և որ, հինգ վայրկեանէն հազիւ կրցաւ քաշել դուռին շուտնը:

— Աս կ'ապացուցանէ որ, մտածեց Ռոստօլֆ, վայրկեաններ կան ուր դանապանուհիներ ալ կին կը կորին:

Դուռը բացած թէ ոչ, անոր ետին հանդիպեցաւ հրչէջ զինուորի մը, որ սպասուհի մը հետ ձեռք

ձեռքի տուած օրոյ կանխավճարներ կուտային մէկ մէկու:

— Ա՛ք քեզի, ըսաւ Ռոստօլֆ, զինուորականը և անոր գիրուկ բնկերուհին ակնարկելով, անհաւատներ, որ մօքերնուն անգամ չեն անցըներ թէ Մնծ պահոց մէջ կը գտնուինք:

Եւ մօտերը բնակող բարեկամի մը ասունը հանգիպելու որոշումով ճամբան շարունակեց: «

— Եթէ Մարտէլ դուրս չէ ելած, ըսաւ ինքնիրեն, գիշերը միտօին կ'անընենք ֆօլինի միօր ուտելով, վերջապէս բան մը ընելու է, չէ՞:

Հուժկու կերպով հարուած մը ասլէ վերջը, դուռը կիսովին բացուեցաւ և մէկ շապիկով և ակնոցները քիթին անցուցած երիտասարդ մը ներկայացաւ գէմը:

— Քեզ չեմ կրնար ընդունիլ, ըսաւ Ռոստօլֆին:

— Ինչօ՛ւ, հարցուց անիկա:

— Նայէ՛, ըսաւ Մարտէլ, ցոյց տալով կանացի գլուխ մը, որ վարագոյրներուն ետեւէն կ'երեւար, ահա պատասխանօ:

— Դո՞նէ ազուոր ըլլար, պատասխանեց Ռոստօլֆ, որուն քիթին բերնին կը գոցուէր դուռը:

— Հիմա ի՞նչ ապուր ուտելու է, մտածեց, երբ փողօցին մէջ գտնուեցաւ. եկուր ֆօլինին երթամ և Մարտէլը բամբասելով ժամանակնիս կ'անցընենք:

«Ռէտթ» փողօցէն անցած պահուն, փողօց մը, ուր միշտ մութը կը արհեստ և ուր շատ անցուղարձ չէր ըլլար, Ռոստօլֆին աչքին զարկաւ օտուեր մը, որ մեղմազակի քայլերով պատերուն տակ կը սլքաար, ահաաներուն տակէն օտանաւոր մը արտասանելով,

— Հէ՞, հէ՞, ո՞վ է ան հնչեակը որ փողօցին մէջ ասանկ ման կոճգայ. ֆօլին, դո՛ւն ես:

— Վա՛յ, Ռոստօլֆ, ո՛ւր ասանկ:

— Քեզի կ'երթայի կոր:



- Զիս հոն պիտի չգտնես:
- Դուք ի՞նչ գործ ունիս հաս:
- Կ'սպասեմ կոր:
- Եւ ինչի՞ կը սպասես կոր նայինք:
- Ա՛խ, ըսաւ Քօլին, հեգնոտ ճշարտմամբ մը, ի՞նչ բանի կ'ուզես որ սպասէ քոսն տարու եզող մը, երբ ասողեր կան երկնից կամարին վրայ և օգին մէջ նուագներ կը թրթռան:
- Արձակ խօսիս նէ չը՛լլար:
- Կնկան մը կ'սպասեմ:
- Անանկ է նէ գիշեր բարի, ըսաւ Ռօտօլֆ և շարունակեց ճամբան, այսօր արդեօք Արքոյն Կուրի-տոնի տօնն է աէ ե՞ս «խապար» չունիմ. ամէն մէկ քայլիս, սիրահարեալներ դէմս կ'ելլեն: Աս ի՞նչ անբարոյականութիւն է, ի՞նչ գայթակղութիւն: Աս-տիկանութիւնը ի՞նչ կ'ընէ կոր:

Լիւքսէնպուրկի պարտէզը տակաւին բաց ըլլա-լուն, Ռօտօլֆ ճամբան կարճեցնելու համար հոնկէ ներս մտաւ. ամայի ծառուղիներու երկայնքը, հոս, հոն, իր սոսնձայնէն ահարեկած զոյգեր խոյս կու-տային իրարու փաթթուած, այլուր փնտռելու հա-մար մութին և լուսեան կրկին հեշտանքները, ինչպէս ըսած է բանաստեղծ մը:

— Ահաւասիկ, ըսաւ Ռօտօլֆ, իրիկուն մը, որ ռօմանսէ մը ընդօրինակուած ըլլալու է: Եւ սակայն ինքն ալ իր կարգին օրրօհալ հեշտանքով մը տագոր-ուած, նստարանի մը վրայ տեղաւորուեցաւ և զգայ-նիկ կերպով սկսաւ նայիլ լուսնին:

ժամանակ մը ետքը, ինքն ալ զգայախափ տե-ղէ մը բռնուած, իրեն անանկ կը թուէր թէ պար-տէզին մէջ գտնուող մարմարիոնէ չաստուածները և գիւցազները կ'անջատուէին իրենց պատուանդաննե-րէն, երթալ դարպաս ընելու համար իրենց դրացի գիցուհիներուն: Իրեն անանկ կուգար որ մեծափորն

Հերակլէս կը օրրօհանէր Վալլէտայի հետ. սրուն-պատմուեանը կարճցած երեւցաւ աչքին:

Նստած տեղէն նշմարեց աւագանին մէջի կարօպը որ կ'երթար կը յարձակէր քովիկը գտնուող յաւեր-ժահարօր արձանի մը վրայ:

— «Թամսո», մտածեց Ռօտօլֆ, ակնատես ըլ-լալով դիցարանական բօլոր այս արշաւանքներուն. Կիմա ալ Արամազդն է որ ժամագրութիւն կուտայ Լէտային. Աստուած տայ աէ պահապանը վրայ չի գայ:

Յետոյ ճակատը երկու ձեռքերուն մէջ առաւ և միբճուեցաւ զգացումներու սրափուշերուն մէջ, բայց իր երազներուն ամէնէն գեղեցիկ մէկ վայրկեանին, Ռօտօլֆ յանկարծ ինքզինքին եկաւ այն հարուածնե-րէն զորո պահապան մը իր ուսերուն կ'իջեցնէր:

— Պարոն, պէտք է դուրս ելլել:

— Աղէկ որ ըօրր, մտածեց Ռօտօլֆ, հինգ վայր-կեան եւս եթէ կենալու ըլլամ, սրտիս մէջ աւելի շա-տ վէրկիս-մայն նիխթ» շղիկներէն պիտի գտնուի, քան ինչ որ կայ Ռէնի ափանց վրայ և կամ Ալֆօնօ Քարի վէպերուն մէջ:

Եւ ոճապարանքով ինքզինքը դուրս նետեց պար-տէզէն, ճամբան դած ձայնով մրմնջել սկսաւ զգայ-նիկ վիպերգ մը, որ իրեն համար օրրոյ մարտէյեէզն ըէ:

Կէս ժամ ետքը զինքը կը գտնենք Բրատօյի սըր-ճարանը, գաւաթ մը «փոնջ»ի առջեւ, խօսակցութեան բռնուած՝ մարմնեկ երիտասարդի մը հետ, որ նշանա-ւոր քիթ մը ունէր, քիթ մը որ եզական առանձնա ընօրհու մը ունէր արծուեռունգն ըլլալու, քովէն նայուած առեն և ասփունջ՝ գէմէն՝ փասաւոր քի-թով պարոն մը, որ զուրկ չէր մտացիութենէ, և որ կիներու աչխարհին մէջ մտած ելած ըլլալուն, կրնար այդ մասին խորհուրդներ տալ իր բարեկամներուն և օգտակար ըլլալ անոնց:



— Ըսէ՛ տեսնենք, կ'ըսէր Ալէքսանտր Շոնար, սա քիթը ի՞նչ եղաւ, և յետոյ ըսէ տեսնեմ, սիրուհարա՞ծ ես:

— Այս սիրելիս, նստած տեղս յանկարծ տառնկ բան մը վրաս եկաւ, ճիշտ ակառօյի ցաւին պէս, զոր կ'զգայ մինչեւ սրտին խորը:

— Անանկ է նէ սա ծխախոտ գտար:

— Երեւակայէ որ երկու ժամէ ի վեր սիրահարուածներու կը հանդիպիմ շարունակ. կիներ և էրիկ մարդիկ զոյգ զոյգ: Ստանկ Լիւքսէնպուրկ մանաս ըսի և չըլլալիք բաներու ակամատես եղայ, ինչ որ տարօրինակ կերպով տակն ու վրայ ըրին սիրտս. մայելու և վաւաւելու փափաք մը կայ վրաս. կէս մը գտանուկ և կէս մըն ալ աղունի կտրած եմ: Ստանկ վրաս գլուխս տչքէ անցուք մէյ մը, գրաւ կը դնեմ որ մարմնոյս վրայ բուրգ և փետուրներ բուսած ըլլալու են:

— Դուն տնպատեալ քիչ մը խմած ըլլալու ես, չիտակ զրուցէ, հարցուց Շոնար անհամբերութեամբ, միտքդ քիթիս խնդալ է արդեօք:

— Եսայ որ չէ, անկեղծութեամբ կը խօսիմ, ըսաւ Ռոսուլֆ: Այսինքն օ՛չ, մինակ գիտցած եղիր որ բանի մը և կամ մէկու մը փաթթուելու փափաք ունիմ այս վայրկեանիս: Գիտցած ըլլաւ, Աղէքսանդր, որ մարդս մինակը չի կրնար ապրիլ. մէկ խօսքով, ըսելիքէս շատուիս սակայն. պէտք է որ օգնես ինծի կնիկ մը գանելու համար: Եկուր սա պարասրահէն ներս մտնենք և քեզի ցոյց տալիք տաղին կնկանս պիտի երթաս, պիտի ըսես թէ կը սիրեմ զինքը:

— Դուն ինչո՞ւ չուզողակի չըսես իրեն, պատասխանեց Աղէքսանդր, իր սովորական զանչակուն ձայնովը:

— Ա՛խ, հաւատա, սիրելիս, ըսաւ Ռոսուլֆ, բարօրովին մտցած եմ թէ ինտօ՛ր կ'ընեն այդ բանը

զրուցելու համար, յառաջբանը միբա բարեկամներս գրած են, և շատերն ալ վերջաբանը: Երբեք չեմ կըրցած սէր մը սկսիլ:

— Գործը վարջացնելու վրայ է, աւելցուց Աղէքսանդր. բայց ըսել ուզածդ հասկցայ: Ես մանկամարդ աղջիկ մը կը ճանչնամ որ շատ կ'ախորժի հովուերգութիւններէ, թերեւս տնիկա գործիդ կուզայ:

— Ա՛խ, բաւական է որ ձերմակ ձեռնոցներ և կապոյտ աչքեր ունենայ:

— Հող տեղ լիալիթ» քրիր, կապոյտ աչքերը կը հասկնամ, բայց ձեռնոցները... Ամէն բան սիւննոյն տեսն կարելի չէ ունենալ, չէ՞, Այոսու հանդերձ եկուր երթանք սա «խըշխըշուք»ներու մէջ փնտանք ուզածդ:

— Ահա, ըսաւ Ռոսուլֆ, ներս մտնելով այն սըրբակէն, ուր կը հաւաքուէին թաղին զի նոցանէնները, և յատկը ցոյց տալով վայելչապէս հագուած գեռաափ աղջիկ մը, որ անկիւն մը կեցած էր.

— Դուն ինծի ձգէ, ըսաւ Աղէքսանդր, դուն տանկ անդին գնա կայնէ, ես քու հաշուոյդ կ'արձակեմ սիրային հրթիռը և պէտք եղած տեսն զքեզ կը կանչեմ:

Տասը վայրկեան շարունակ Աղէքսանդր տեսակցեցաւ աղջկան հետ, որ մերթ ընդ մերթ բարձրաձայն քրքիչներ կ'արձակէր և վերջ ի վերջոյ Ռոսուլֆի դառնալով ժպիտ մը ուղղեց անոր հասցէին, ժըպիտ մը՝ որ ըսել կ'ուզէր.

— Եկէք, փոքտարաննիդ շահեցաւ:

— «Հայտէ» նայինք, յարեց Աղէքսանդր, յաղթութիւնը մեր կողմն է, երեւցածին նայելով մէկ մարդը շատ դէշ ապրանք ըլլալու չէ, բայց սկիզբ միամտութեամբ վարուէ հետը:

— Ատանկ յանձնարարութիւն մը ընելու պէտք չի կար:



— Եթէ այդպէս է, օտ ծիւղապառ ասու ան-  
ճեմ, անկէ ետքը գնա մօտեցիր, ըսաւ Աղէքսանդր:

— Ո՛հ, Աստուած իմ, ըսաւ աղջիկը երբ Ռօ-  
տօլֆ եկաւ նստաւ քովիկը. ձեր բարեկամը աչ ի՞նչ  
գթօհաֆ մարդ է, գալարափողի մը պէս կը խօսի կոր:

— Ասանկ խօսելուն պատճառը իր երաժիշտ ըլ-  
լալն է, պատասխանեց Ռոտօլֆ:

Երկու ժամ ետքը, Ռոտօլֆ և իր ընկերուհին  
կանգ առած էին Սէն Տընի փողոցի մէջ գանձուող  
տան մը առջեւ:

— Ես հօս կը բնակիմ, ըսաւ աղջիկը:  
— Լաւ, բայց ո՛ւր և ե՛րբ դձեց պիտի կրնամ  
կրկին տեսնել, սիրելի Լուիզ:  
— Ձեր տանը մէջ, վաղը, իրիկուան ժամը  
ուրիշ:

— Չխաբէք զիս:  
— Ահաւասիկ խոստումս, պատասխանեց Լուիզ,  
իբ կաթնաթոյր այտերը ներկայացնելով Ռոտօլֆին,  
որ խածածակ անտիական և կենսունակ այդ պը-  
տուղները:

Ռոտօլֆ կէս խենդ կէս գինով ասունէն ներս  
մտաւ:

— Ա՛խ, բաղադանչեց, սենեակը խոշոր քայլե-  
ցով չափչփելէ ետքը, ասանկ չըլլար, պէտք է որ օ-  
տանուորներ գրեմ:

Հետեւեալ առտուն, դռնապանը բանաստեղծին  
սենեակին մէջ գետինը նետուած երեսուն կտոր  
թուղթ գտաւ, որոնց ամէն մէկ երեսին վրայ, վե-  
հաշուք կերպով գրուած էր հետեւեալ մենաւոր օ-  
չէքսանորեան աղը:

«Սէր, սէր, ո՛վ անտիական դու իշխան»:  
.  
.  
.  
Այդ օրը, այսինքն հետեւեալ առտուն, իր օո

վարութեանը հակառակ, Ռոտօլֆ շատ կանուխ ար-  
թընցաւ, և հակառակ գիշերը քունը բնաւ տարած  
չըլլալուն, խենդի պէս վար-ցաակեց անկողնէն:

— Ա՛հ, ըրաւ, այսօր է ուրեմն սպասած հան-  
գիտաւոր, մեծ թուականս: Առջեւնիս տասներկու  
ժամ ունինք սակայն, ասաներկու յաւիտենականու-  
թիւններ:

Աչքը գրասեղանին վրայ պարացուցած պահուծ  
իրեն անանկ թուեցաւ որ գրիչը կեցած տեղէն կը  
շարժէր և կարծես կ'ըսէր իրեն. — Աշխատէ՛:

— Աշխատե՛լ, ադ էր պակաս, արգէն հօս կե-  
նալ կարելի չէ, սենեակը ամբողջ մեջան կը հտարի գոր:  
Եւ այնպիսի օրճարան մը գնաց նստաւ ուր բա-  
րեկամներու հանդիպելու վախ չի կար:

— Սիրահարուած ըլլալս «չախմիշ» կ'ընեն, և  
կանխաւ կը կաղապարեն իտէալս, ըսաւ:

Շատ թեթեւ ճաշէ մը ետքը երկաթուղիի կայա-  
րանը գնաց և վազօնի մը վրայ ցտակեց:

Կէս ժամ ետքը Վիլ-Սօվրէի անտառօն մէջ կը  
գտնուէր:

Ամբողջ օրը, գեղազուարթ բնութեան տուած  
ինքզինքը, հօս ու հօն սլքակաց և իրիկնամուտին  
միայն վերագարձաւ Բարիդ:

Քրչ մը կորգ կանոն դնել տուաւ այն մեհեանին  
մէջ, ուր իր պայած կուտքը, իր սիրական Լուիզը  
պիտի ընդունէր:

Վրան գլուխը կակեց, ինչպէս պարագաները կը  
պահանջէին և շատ ցաւ զգաց որ չէր կրնար ճերմակ  
զգեստներ հագնիլ:

Ժամը եօթէն ութ, սպասման ահարկու տենդէն  
բոնուեցաւ, չալ շարանք մը սրուն ենթարկուած ըլ-  
լալը յիշեց իր վաղեմի օրերուն, երբեմն սէրերուն  
բերմամբ: Յետոյ, ըստ իր սովորութեանը մտքովը



պատկերացուց մեծ համեմատութիւններով, ահագնաօգորդ արիփ մը, ասոր հասորնոց սիրահարութիւն մը, սիրային ճշմարիտ եղբերգութիւն մը, որու մէջ ո՛չ լուսնին շողերը կը պակտէին, ոչ սայրամուտքի արեւներք, ոչ ուռնիններուն ապկ ժամադրութիւններք, ոչ նախանձի տեսարաններ, ոչ հառաչներ և ոչ ալ մնացածք:

Եւ ամէն անգամ ասանկ կը պատահէր. երբ գիպուածը կին մը կը բերէր դրանը ասջին, ոչ մէկը իր սէ չէր բաժնուեր, առանց հետը ասնելու արցունքի լուսապսակ մը ճակտին վրայ և մանեակ մը վզին:

— Առոնց տեղ աւելի պիտի նախընտրէին անոնք գլխարկ մը և կամ «պօթին»ներ, կ'ըօէին իր բարեկամները:

Բայց Ռոսուլֆ, հակառակ գլխէն շատ մը փորձանքներ անցած ըլլալուն, կը յամառէր իր ընթացքին մէջ, որմէ չէր կրնար բժշկուիլ: Միշտ դալըստեանը կ'սպասէր անանկ հնկան մը որ կուռքի դերեր խաղար. թաւիչէ շրջազգեստով հրեշտակ մը, որուն կարելի ըլլար ձօնել ուռնիի արեւներու վրայ գրուած հնչեակներ:

Վերջապէս «Սուրբ ժամը» հնչեց և երբ Ռոսուլֆ մացաւ վերջին դանդիւնը, որ կ'արձագանգէր մեռողէ թափակին վրայ, իրեն անանկ թուեցաւ որ ժամացոյցին վրայի արագորէ սիրոյ շատուածը և Բօրիչէն կը գիրկզնգխառնուէին: Ճիշտ այդ վայրկեանին դրանը ետին մեղմիկ հարուածներ արուեցան:

Ռոսուլֆ գնաց բացաւ գուռը: Լուիզն էր:

— Սոսքիս աէրն եմ, տեա՛ր, բաւ:

Ռոսուլֆ վարագոյրները գոցեց և վառեց նոր մօմ մը:

Լուիզ գեղեցիկ ըլլալէ աւելի շնորհալի ազդիկ ժըն էր: Իր թարմագեղ կերպարանքը չքմեղութեան և չարածէիութեան համով զուգակցութիւն մը կը ցուց-

ցընէր: Տեսակ մը հրէօզի պատկեր, որուն մէջ կա՛մասնի վրձին խաղցուցած ըլլա՛ր:

Մանկամարդ աղջկան հրապուրիչ թարմութիւնը կը շեշտուէր շնորհիւ իր «թուալէթ»ին որ թէեւ պարզ, բայց ի յայտ կը բերէր պշրանքի այն բնածին գիտութիւնը, զոր ամէն կին կ'ունենայ, մանկական շարերէն սկսեալ մինչեւ հարստեական շրջազգեստը:

Ասկէց դատ, Լուիզ մասնաւոր կերպով ուսումնասիրած ըլլալ կը թուէր նիստ ու կացի վարպետութիւնը, այնպէս որ, երբ Ռոսուլֆ արուեստագէտի անքով կը նայէր իրեն, անոր զանազան զգլխի կացքերուն մէջ աւելի շատ հրապոյր կը գտնէր քան բընականութիւն:

Անանկ նրբակերտ կօշիկներ անցուցած էր ոտքերուն, որոնք մանրութեան տեսակէտով գոհացուցիչ կրնային համարուիլ նոյնիակ Անտալուզեան կամ Չինական մանրանկար տափկներուն սի,տհար վիպագրի մը համար:

Ձեռքերուն գալով, անոնց փափկութիւնը կը մասնէին ախտաութենէ մեկուսացում մը, քանի որ վեց ամիսներէ ի վեր չէին ենթարկուած առողին խայթուածքներուն: Ի մի բան, Լուիզ այն յեղյեղուկ և անցաւոր թաչուններէն էր, որ քմայքի մը համար և կամ պէտքէ մղուած կ'երթան իրենց բոյնը կը դնեն օր մը, կամ աւելի լաւ եւս է ըսել գիշեր մը «Քարթիէ Լաթէն»ի մանաւարաններուն մէջ և սիրով քանի մը ասան կը կենան հոն եթէ երբեք գիտան գիրենք վար դնել քմայքալիր կամչաութեամբ մը և կամ քանի մը կանգուն ժապաւէններով:

Ժամ մը Լուիզին հետ խօսուընտելէ ետքը, Ռոսուլֆ իբրեւ օրինակ, ցոյց տուաւ իրեն Միրոյ Բօրիչէի խմբանգրին:

— Պօզ և վերգրիւն չն' ասոնք, հարցուց Լուիզ:

— Այո՛, պատասխանեց Ռոսուլֆ, ասջի բերան չը հակառակու համար անոր:



— Ի՞նչ ալ ազուրոք նձանցուցեր են:

— Աւա՛ղ, մտածեց Ռոտուֆ, երեսն ի վեր նախալուծ, խեղճ աղջիկը գրազանուծութենէ ճխաղարձ չունի. ես այնպէս կը կարծեմ թէ օրտի սւղղագրութենէ անգին անցած չունի, ուղղագրութիւն մը որ յոգնակի ներուն ծայրը «եր» մասնիկը գնել զանց կ'առնէ: Զէ՛, ասանկ չըլլար, քերականութիւն մը գնելու է ձեռքը:

Սահայն Լուիզ կը գանգատէր թէ կօշիկները կը նեղեն զինքը: Ռոտուֆ ազնուութեամբ օգնեց իրեն՝ ապօթինձին կապերը քակելու:

Յանկարծ ճրագը մարեցաւ:

— Աս ի՞նչ է, մովիս վրայ ո՞վ փչեց արդեօք, գոչեց Ռոտուֆ:

Քանքահ մը եղաւ այդ հորցման պատասխանը: Քանի մը օր ետքը, Ռոտուֆ բարեկամի մը հանդէպեցաւ փողօցը:

— Ի՞նչ ջուրի վրայ ես նայինք, քանի մը օր է մէջանդ չի կաս. ոս ո՛ւր, հորցուց բարեկամը:

— Առանին բանաստեղծութիւններ յօրինելու վրայ եմ, պատասխանեց Ռոտուֆ:

Թշուառականը շիտակ կը զրուցէր, Ռոտուֆ պահանջած էր որ Լուիզ կրցածէն աւելին թայ իրեն: Տկճօրէ մը քնարի հնչիւններ կարելի չէ սպասելու Այդ աղջիկան խօսածը սիրոյ կորճայ լեզուն էր. մինչ գեռ Ռոտուֆ, անպատճառ կ'ուղէր գեղեցիկ բարբառը գործածել: Ասոր համար չկրցան համաձայնիլ իր քու հետ:

Ութ օր ետքը, ճիշտ այն պարտօրահի մէջ, ուր հանդիպած էր Ռոտուֆին, Լուիզ փակաւ խարտեաչ երիտասօրդի մը, որուն հետ քանի մը հեղ պարելէ ետքը, առտուան դէմ միասին ելան ասուն գացին:

Պարսթեցները աւարտելու մօտ երիտասօրդ մըն էր ան, որ հեշտ կերպով կը խօսէր հրճուանք:

ներու լեզուն, աղուոր աչքեր ունէր և լեցունկեկ գրպաններ:

Լուիզ. մեկան և թղթի կտոր մը ուզեց իրմէ և յետեւեալ իմաստով նամակ մը գրեց Ռոտուֆին:

«Վրաս բնավ հոյս ջի դնէս, վէտչին անքամ կը յամփուռէ՞մ զգեզ:

Մնաս փառով:

ԼՈՒԻԶ

Մոտուֆ երբ իրիկունը ասուն եկաւ և նամակը բացաւ կարդալու համար, ճիշտ այդ վայրկեանին մօտ մը յանկարծ մարեցաւ:

— Ահաւասիկ, ըսաւ Ռոտուֆ, մտածկոտ շեշտով մը. ասիկա ճիշտ այն մօմն է զոր Լուիզին եկած գիշերը վառեցի. մեր սիրոյն չափ տեւեց անիկա, եթէ ասանկ ըլլալը տուաջուցգիտնայի, աւելի երկայն մոմ մը կ'առնէի, և այս խօսքերը ինքնիրենք ըսաւ աս նանկ շեշտով մը, որուն մէջ կէս մը դա՛նութիւն կար և կէս մըն ալ ցասում. և գնաց օրհականին նամակը պահեց այն գզրոցին մէջ, որուն անունը դրած էր «Մէտերուս դամբարանը»:

Օր մը Մարտչին սենեակը գանուած միջոցին, երբ ձխափողը վառելու նպատակաւ գետին կճկուեց ցաւ թուզթի կտոր մը առնելու համար, այդ թուզթի կտորին վրայ աչքին զարկաւ Լուիզի ձեռագիրը և սւղղագրութիւնը:

— Միեւնոյն անձէն ձեռագիր մըն ալ ես ունիմ, ըսաւ բարեկամին, մինակ իմինիս մէջ երկու օխալ պակաս կոյ, ասիկա կ'ապացուցանէ թէ ան զիս քեանէ շատ կը սիրէր:

— Ատիկա կ'ապացուցանէ թէ պարզապէս շոշորգին մէկն ես: Սպիտակ ուսերը և ճերմակ թեւերը քերականութիւն գիտնալու պէ՞տք չունին:

Դ.

Հիւրասեր ժամանակ մը արտաքսման խեցեվը-ձիւսովը համակուած, Ռոտուֆ ժամանակէ մը ի վեր



ամպերէ աւելի թափառական կ'ազդէր և կը ջանար կատարելագործել առանց կերակուրի պակեկու արուեստը, ինչպէս նաեւ առանց պակեկու կերակրուելու արուեստը: Իր խօսարարին անունը «Իրպոնած» էր և ստէպ հիւր կ'ըլլար «Ընդ աստեղօք» պանդոկին:

Երկու բան սակայն զինքը չէին լքաներ բնաւ, զուարթամտութիւնը և «Վրէժինդրական» անուն առաջի մը ձեռագիրը, որ շրջանը ըրած էր բոլոր թառերական աշխարհին, առանց տեղ մը կարենալ կանգ առնելու:

Օրին մէկը. Ռօթօլֆ ոստիկանապետն տարուեցաւ «մակարեան» բռնած սեռելական կաքաւը հրապարակաւ պարած ըլլալուն յանցանքով, և հոն գէմադէմ գանուեցաւ իր մէկ ժօրեղբորը՝ Պարոն Մօնէթթի, արհեստով վառարան շինող, աղգային պահակախումբի մէջ յիտնապետ մը, զոր յաւիտենականութենէ մը ի վեր առած չունէր:

Իր քեռորդուոյն դժբախտ և ողորմելի վիճակէն զգածուած, Մօնէթթի մօբարը խոտաացաւ դարման մը գտնել անոր կացութեան և այդ դարմանին ինչ ըլլալը հասկնալու համար, ընթերցողը պէտք չէ սոսկայ վեց յարկ վերելքէ մը:

Բռնենք ուրեմն բազրիքները և ելլենք վեր. ո՛ւրի հարիւր քառասուն և հինգ օանդուդ: Վերջապէս հասած ենք. քայլ մը եւս և տէա սենեակին մէջ ենք, ուրիշ քայլ մը և այլեւս հոն չենք ըլլոր: Պզտիկ է սենեակը, բայց առոր փոխարէն օգաւէտ է և զեղեցիկ տեսարան ունի:

Սենեակին մէջ իբրեւ կարասի, գերման սիթէմով շինուած շաա մը «չըմինէ»ներ, երկու «սօպա»:

— Երբ մասնաւանդ անոնց մէջ կրակ չի վառիր, բրտի կաւէ և կամ երկաթաթիթեղէ մէկ երկօտասենեակ խողովակներ եխել մը ջեռուցման յատուկ գործիքներ: Չմոռնաք նաեւ կահացուցակը ամբողջացնելու համար պատերուն վրայ գամուած երկու գամերէ աւելի անկողին մը, պարտէզի աթոռ մը, մէկ օտ-

քէն անդամահառուած աշտանակ մը իր պօպէշ»ով, և ասոնց նման ուրիշ այլեւայլ գեղօրներ:

Քովի սենեակը՝ պալքօն մը և թողարի մէջ տընկուած երկու գաճաճ կիպարիսներ ամառնային պարտէզի երեւոյթը կուտային անոր:

Ներս մտած ատեննիս, սենեակին տէրը հագուած օրէքա քովքներու մէջ խաբչիկի դերեր խաղացողի մը պէս, ճաշը աւարտելու վրայ է. ճաշ մը՝ որով մարգարէին դրած օրէնքը անպատկառօրէն եղծանելու վրայ է, ինչպէս կ'երեւի նախկին «ժամպօն»ի կտորէ մը և շիշէ մը որ լեցուն ըլլալու էր յանցելուն: Կե. րակուրը լիննալուն երիտասարդ խաբչիկը գեաինը, տախտակամածին վրայ երկնցաւ. արեւելքցիի մը պէս և մեղկօրէն սկոռ ծխել նարկիլէ մը, որուն վրայ Փ. Կ. «մարքա»ն փորագրուած էր:

Անձնատուր եղած ասիական այդ երանութեան, տանն առնն կը շօյէր «թէն նէօօ» շունի մը կունակը և այդ կենդանին անշուշտ այդ գգուանքին փոխարէն պտտաստան մը պիտի աար եթէ շինուած չըլլար... խեցեղէն նիւթէ:

Յանկարծ սօքի ճայներ յօուեցան նրբանցքին մէջ և դուռը մէկէն ի մէկ բացուելով մարդուն մէկը ներս մտաւ և առանց բան մը արտասանելու շիտկէ շիտակ գնաց մօտեցաւ «սօպա»ի մը, որ գրտեղանի ալ դեր էր կատարէ և այդ վառարանին դուռը բանալով մէջէն դուրս հանեց թուղթի պտտառ մը, զոր ուլադրութեամբ զննել սկսաւ:

— Աս ի՞նչ է, պուտց նորեկը բիէմօնթէզի առողանութեամբ, տակաւին «օդ առնելիք ծակ»երուն դուրսը չե՞ր ուարաեր:

— Ներեցէք, մօբար, պտտաստանեց խաբչիկը, օղածակերուն գլուխը ձեր երկաթիութեան ամենէն կարեւոր մէկ հատուան է, որ մասնաւոր ուսումնասիրութեան կը կարօտե: Հեռեւաբար ուսումնասիրելու վրայ եմ:

— Բայց, թշուառական, ամէն անգամ միեւնոյն



բանք կը կրկնես: Սա մեր ճշմարտութիւններուն գլուխը ի՞նչ եղաւ:

— «Բայց արժեքներուն գործը կարգին է, բայց ազգի միտքս եկաւ, մօբար, եթէ ինձի քիչ մը փայտ զրկելու ըլլաք գէշ չէք ընէր: Հոս տեղ պղծիկ Սիւսի պերիտ մըն է, անանկ կը մօրիմ կոր որ, բաւական է այժմերս ջերրայափին դարձնեմ անմիջապէս զէրօյն վար իջեցնելու համար զայն:

— Մէկ արցակ փայտը տառնկ շուտ մը հատցուցի՞ր:

— Ներեցէք, մօբար, արցակ կայ արցակ ալ կայ, ինչպէս անշուշտ գիտէք և յետոյ ձերինը այնքան պղծիկ էր որ...:

— Բնագի խնայողական կոճղ մը զրկեմ վաճելու համար, անիկա տաքութիւնը կը պահէ:

— Գուցէ ատոր համար է որ բնաւ տաքութիւն չի տար:

— Աղէկ, աղէկ, ըսաւ Բիէմօնթէզը մեկնելով, քեզի համար սօսերու խուրձ մը վեր բերել կուտամ, բայց ճշմարտութիւններուն գլուխը պէտք է որ ւառարի վաղը:

— Եթէ կրակ օւնենալու ըլլամ, թերեւս ներշնչուիմ, ըսաւ խափշիկը, որուն վրայէն դուռը կը դուրս գար:

Եթէ միտքերնիս ողբերգութիւն մը գրել բլլար, ճիշտ ասենն է որ սէջտեղ ելլէր խորհրդականը, որուն անունը կամ Նէճմէտաին պիտի ըլլար և կամ Օսման, որ հոգածու և հոգաբար զընդաւոր հովեր տանելով պիտի կրնար թափանձել անոր դժբախտութեան պատճառ եզոզ գողանիքներուն խօրը, հետեւեալ օտանաւորը արտասանելով.

«Ըսէք, Տէր իմ, ի՞նչ սեւ վիշտեր կը դալարեն ձեր հոգին, ինչո՞ւ համար այդ դալուկը օգոստոսփոս ձեր ձեռքին: Միթէ Ալլահ ձեր կամքին դէմ յարուցանէ՞ խոչնդոտ: Եւ կամ Ալին խոտաբարոյ արգելք կ'ըլլայ մինչեւ հոգ: Եւ ուրիշ տեղ կը փոխադրէ, ձեր իղձերուն հակառակ: Գեղեցկութեան այն տաարկան որ օէր առթէր ձեզ համակ»:

Բայց արժեքներ ողբերգութիւն մը գրելու պէտք չունինք, հակառակ խորհրդական մը օւնենալու փափաքնուս, վերոյիշեալին պէտքը շատ չենք զգար և «վաղ» կ'անցնինք իրմէ:

Մեր հերոսը չէ ան, ինչ որ երեւոյթները թոյժ կուտան: Մէկ փաթեթոցով մարդօ խափշիկ չըլլար: Այս երիտասարդը մեր բարեկամ Ռոտօլֆն է, մօրեղբօրմէն հիւրասիրուած, որուն համար աս այժմ ըզբաղած է յօրինելու «Կատարեալ ծխայրագար»ը անունով երկատիրութիւն մը:

Եւ իրաւ ար, Պ. Մօնէթթի, իր տրհետին սիրտհար, կեանքը ամբողջ նուիրած էր ծխայրագարութեան:

Այդ պատուական Բիէմօնթէզը իր անձնական գոհացումին համար նշանաբան մը ընտրած էր, որ քիչ թէ շատ կը նմանէր կրկնութեան գործածածին և անոր պէս իր ոգևորուած վայրկեաններուն հեշտօրէն կ'արտասանէր իր սիրական խօսքը. «Մարդս բանաստեղծ կը ծնի»:

Ապագայ մարդկութեան օգտակար ըլլալու դիտարկով այդ մարդը միտքը գրած էր օրինագիրք մը պատրաստել այն տրհետին համար, որուն մէջ գերակշիռ դիրք մը կը գրաւէր և ճիշտ այդ բանին համար ինչպէս տեսանք, իր քեռորդին ընտրած էր, որուն գօրծը պիտի ըլլար իր սկզբնական դադարներուն անանկ ձեւ մը ասլ որ հասկնալի ըլլար ամենուն: Ինքն էր որ կը հագար Ռոտօլֆի անկողինը, ան-բը, բնակարանը և օտանեւհինգ օսկի խոտաբար մը անոր գիրքը աւարտելուն:

Առաջին օրերուն, քեռորդու այն աշխատասիրութիւնը քաջալերելու համար, Մօնէթթի՝ օտաճածեւզութեան նողայէ մը բռնուած, յիսուն ֆրանքի կանխավճար մը տուած էր անոր: Բայց արժեքներ Ռոտօլֆ մէկ տարիէ ի վեր տառնկ գումար մը տեսած չունէր, խելագարի պէս ինքզինքը դուրս նետած էր ասունէն իր օսկիներուն ընկերակցութեամբ և երեք



օր շարունակ դուրսը անցընելէն ետքը, չորրորդին տուն վերադարձած էր ... մինակուկ:

Բայց որովհետեւ Մօնէթթի կը փափաքէր որ իր գրքոյիը Ժ մ առջ աւարտէր, միտքը գրած ըլլալով անոր՝ վաճառման մենաշնորհ մը ձեռք անցընել

լսեալով որ քեռորդին մի դուրջ նորէն խոտորի ա ստիպելու համար դայն որ անպայման կերպով աշխատի, անոր վրայէն սոսժ էր հագոււաները և անոնց տեղ թողած էր միայն այն ծպտոււմը որուն մէջ տեսանք զինքը քիչ մը առաջ:

Այս ամենուն հակառակ, մարդուն գիրքը չէր յառաջանար սակայն: Ռոտօլֆին քով կը պահուէր այդ օրինակ գրականութեան համար պէտք եղած սաաղձը:

Այս անփութութեան ի պատիժ, մօրաբը շատ մը զրկանքներու կ'ենթարկէր քեռորդին: Երբեմն անոր ճաշերը կը համառօտէր և սօէպ կը կորէր ծխախոտի հայթայթումը:

Կիրակի առաւ և՛ր օդամուտ ծակերուն գլխին վրայ արիւն քրտինք թափելէ ետքը, Ռոտօլֆ կտոր քրտ մտաներուն մէջ աչքող գրիչը և քիչ մը շունչ տունելու համար քովի սենեակը գնաց:

Կարծես զինքը քամահրելու և իր «թիրիաքի» ութիւնը աւելի գրգռելու համար, այլքը ո'ր կողմը որ դարձնէր, անպատճառ կը ըանդիտէր պատուհաններու աջու նստած մարդերու, սրոնց ամէնքն ալ կը ծըխէին:

Նորաչէն տունի մը ոսկեղօծուած պառչգամին վրայ ներքնագգեստով չիք «րիւտիւ» մը աղաներուն աակ կը ծառքէր Հափտնայի հոտաւէտ սիկառ մը, անոր վերի յարկը՝ արուեստագէտ պարոն մը արեւելեան ծխախոտով շինուած սիկառէթի՝ սը ծուխը գէպի երկինք կը բարձրացնէր, սաթէ ծխափոպի մը անցուցած:

Գինետան մը պատուհանին աջու, շնորհքով Գերմանացի մը գարեջուրին փրփուրը կ'ուռեցնէր անոր վրայ փչելով Գօրմէրեան «րիրա»ի մը արձակած ան-

թափանցիկ մուխը: Անդին՝ աշխատանքի դացող բանուարներ կ'անցնէին երգելով, ըբրանսուն վրայ մէյմէկհողէ շինուած ծխափող, վերջապէս հեաիտան անցնողները՝ գրեթէ բոլորն ալ կը ծխէին:

— Աւա՛ղ, հառաչեց Ռոտօլֆ՝ նախանձոտ, ինձմէ և մօրեղբորս «չըմինէ»ներէն զատ չը ծխող չի կայ արարչագարծութեան ծոցին մէջ: Եւ սկսու այս աշխարհիս ունայնութեան վրայ խորհիլ, գլուխը կը թնցուցած պառչգամին երկաթեայ եղբրքին վրայ:

Յանկարծ տակի յարկէն սուր և երկարածիգ քրքրիչ մը աղանջին զարկու: Ռոտօլֆ գէպի աջու ծըռեցաւ տեսնելու համար թէ ուսկի՞ց կրնար գալ խընդողին զնծութեան այդ կրթիւրը. և տեսաւ որ զինքը կը դիտէր վարի յարկի գրացին՝ Օրիորդ Սիտօնի, առաջին դերասանուկի Լիւքսէնպուրկ թատրոնին:

Օրիորդ Սիտօնի իր պառչգամին առջուի մասին վրայ մտաներուն մէջ կը պլորէր Գասթրիլիացի կիներու յատուկ ճկունութեամբ թուղթմը, ուռեցած խորտեալ ծխախոտով զօր թաւիչէ քսակէ մը դուրս կը հանէր:

— Ադ ի՛նչ աղուոր ծխախոտի քսակ է, մուրաց Ռոտօլֆ հայեցողական պաշտամունքով մը:

— Ադ Ալի պտպան օ՛վ կ'ըլլայ կոր, մտածեց ինքնովին Օրիորդ Սիտօնի և հնարք սը փնտռեց խօսակցութեան դուռ բանալու համար Ռոտօլֆին հեա, որ ճիշտ միեւնոյն բանին վրայ կը մտածէր:

— Ա՛խ, Ատուած իմ, բացագանչեց Օրիորդ Սիտօնի, իբրեւ թէ ինքզինքին հեա կը խօսէր, ա ի՛նչ դժբախտութիւն է, լուցկի չունիմ, տեսա՞ր հիմա:

— Օրիորդ, կը ներէք որ քանի մը հոտ ձեզի տամ, ըսաւ Ռոտօլֆ և քանի մը հոտ թուղթի մէջ փաթթելով նետեց վար:

— Հաղար շնորհակալութիւն, ըսաւ Ռոտօլֆ սիկարէթը վառելով:



— Աստուած իմ, Օրիորդ, շարունակեց Ռօտօլֆ֊  
փօխան այն ծառայութեան զոր բարի հրեշտակս  
պատճառ եղաւ որ կարենամ ձեզ մատուցանել, կրօ  
նամ արդեօք բան մը խնդրել ձեռնէ:

— Սա էրիկ սարդիկն ալ եթէ բան մը չուզեն  
չըլար. մտածեց Սիւանի աւելի ուշադրութեամբ դի  
տելով Ռօտօլֆը, կ'ըսեն թէ խափշիկները թէեւ փօ  
փօխամիտ, բայց միւս կողմէ շատ հաճելի կ'ըլլան. և  
զլ-ւխր գէպի Ռօտօլֆ բարձրացնելով հարցուց. ըսէք  
տեսնես. ի՞նչ է ուղածնիր:

— Ո՛հ, Աստուած իմ, պիտի խնդրէի որ քիչ մը  
ծխախոտի ողորմութիւնը ընէիք ինծի, օանկ Վերբա»  
մը լեցնելու չօփ:

— Մեծ հաճեցողով, բայց ի՞նչպէս ընելու է. եր  
կու յարկ վար իջնելու ձանձրոյթը եթէ յանձն կ'առ  
նէք...:

— Կը ցաւիմ որ ատիկա անկարելի է: Սենեակին  
սէջ փակուած եմ, սակայն շատ պարզ միջոց մը գոր  
ծածելու ազատութիւնը կը վայելիմ:

Եւ Վերբա»ն առաստանի սը կապելով մինչեւ վարի  
«պալքօն»ը իջեցուց և ան տեղէն Օրիորդ Սիւանի ձեռ  
քովը առատօրէն զայն լեցուց, որմէ ետքը Ռօտօլֆ  
զգուշութեամբ և ծանր ծանր վեր քաշեց և ձեռք ան  
ցուց առանց փորձանքի:

— Ա՛խ, ըրաւ Ռօտօլֆ, այս Վերբա»ն, օրիորդ,  
մ'ըբան աւելի հաճելի պիտի ըլլար արդեօք, եթէ կա  
րելի ըլլար վառել ձեր աչքերուն կրակէն: Այս փօ  
ղաքուչ «քօնրիման»ը՝ հակառակ հարիւրերորդ տը  
պագրութեան հասած ըլլալուն դարձեալ քիչ մը քիչ  
հաճոյք չպատճառեց օրիորդ Սիւանի:

— Զիս կը փաղաքչէք, հարկ դատեց աւելցնել  
Սիւանի:

— Ոչ, օրիորդ, կ'ապահովցնեմ ձեզ թէ Երեք  
Շնորհքներու պէս գեղեցիկ կ'երեւաք օչքիս:

— Շատ շնորհքով մարդ ըլլալու է սա Ալի պօ  
պան, մտածեց Սիւանի և հարցուց.

— Կրնամ արդեօք հասկնալ թէ իրաւցնէ՞ խափ  
շիկ էք դուք:

— Ոչ այնքան կոչուածով, որքան ի հարկէ ստիպ  
եալ: Թատերագիր հեղինակ մըն եմ ես:

— Ես ալ դերասանուհի, ըսաւ Սիւանի և աւել  
ցուց. Դրացի պարոնս, կ'ուզէի՞ք արդեօք գիշերը մի  
ասին ընթրելու պատիւն ընել ինծի:

— Ա՛խ, օրիորդ, որքան որ այդ առաջար  
կութիւնը երկնից դռները կը բանայ առջիս, սակայն  
և այնպէս կը ցաւիմ որ ի վիճակի չեմ զայն ընդու  
նելու, ինչպէս քիչ մը առաջ պատիւ ունեցայ ձեզի  
ըսելու, սենեակիս մէջ բանաորկուած եմ, մօրեղբորս  
Պարոն Մօնէթթիի կողմէ, որ վառարանագործ ծխա  
յարդար է և սրուն անձնակտն քարտուղարն եմ  
այժմուս:

— Ատիկա պատճառ մը չէ որ նորէն մենք չճա  
շենք միասին: Հիմա աղէկ մտիկ ըրէք ինծի. ես  
ներս պիտի մտնեմ և պիտի երթամ զարնեմ առաս  
տաղին: Զարկած տեղիս ուշադրութիւն ըրէք և պիտի  
տեսնէք թէ հոն ծակ մը կայ, որ թէեւ առաջ բաց էր,  
բայց ետքէն գոցած են վրան: Ըամբան դաէք վրայէն  
վերցնելու առիտակի կտորը, որ այդ ծակը ծածկելու  
համար դրուած է և ապապէս դուք ձեր սենեակին մէջ  
և ես իմինիս, իրարու քով նետուածի պէս կ'ըլլանք:

Ռօտօլֆ սկսաւ անմիջապէս գործի, հինգ վայր  
կեան աշխատելէ ետքը կըրցաւ երկու սենեակները այդ  
ձեւով հաղորդակցութեան մէջ դնել:

— Ա՛խ, ըսաւ Ռօտօլֆ, թէեւ ծովը պղտիկ է,  
բայց նորէն բաւական տեղ կայ սիրտս ձեզի հասցնե  
լու համար:

— Հիմա կերակուրի տեսն է, դուք վերը սեղանը  
պատրաստեցէք և կերակուրները ես ձեզի վեր կուտամ:



Ռոտուֆ իր գլխի փաթթօցը առառանի սը ծայրին կապելով վար իջեցուց և յետոյ վեր քաշեց մէջը ու անխնայեցով լեցուն:

Այսպէս, բանաստեղծ և դերասանուհի սեղան նրօտան սիւննայն ատեն երկուքն ալ զառ զառ իրենց անդերը: Ռոտուֆ ակունքերովը կերակուրները կը լսփէր և աչքերն ալ՝ Սիւտնին:

Երբ ճաշերնին աւարակցին, Ռոտուֆ խօսքը ուղղելով Սիւտնինին.

— Աւա՛ղ, Օրիորդ, ըսաւ, ձեր շնորհիւր ստամոքսս գոհացու՛մ դառաւ, առար պէս պիտի չկրայի՞ք յագեցնել շան քողցը սրտիս որ երկար ատենէ ի վեր բերանը բան գրած չունի:

— Խն՛դձ տղայ, կեհազեց Սիւտնի և կարասիի մը վրայ ելլելով, մինչև Ռոտուֆի չրթներուն մօտեցուց ձեռքը որուն վրայ անցուց Ռոտուֆ համաբոյրնեաբաւ ձեռնօցը:

— Մե՛ղք որ զուք ալ Սուրբ Դիոնիսիօսի ըրածը կ'ող չէք ընելու. ան ուզած ատենը ձեռքերուն մէջ կը կրէր գլուխը:

Ճաշէն ետքը սիրային-գրական խօսակցութիւն մը սկսաւ մէջերնին:

Ռոտուֆ «Վրէժխնդիր»ին խօսքը բացաւ և Օրիօրդ Սիւտնի խնդրեց որ այդ թատերգութիւնը անգամ մը կարդայ իրեն:

Ռոտուֆ ծակէն վար մինչև կէս մէջքը կախուած բերանացի արտասանեց իր երկասիրութենէն քանի մը հատուածներ, որոնցմէ բաւ մը չփախցնելու համար Սիւտնի ելած նստած էր հեշտադարանին վրայ կանգնեցուցած թիկնաթուփին վրայ:

Օրիօրդ Սիւտնի յայտարարեց թէ «Վրէժխնդիր»ը գլուխ-գարծոց սըն էր և խօսաացաւ զայն ընդունիլ աալ այն թատրոնին մէջ, որուն անօրէնին բարեկամուհին էր:

Խօսակցութեան ավէնէն աաք մէկ վայրկեանին դուրօէն՝ նրբանցքին մէջ մօրաբ Մօնէթթիի օտքի հազիւ ժամանակ ունեցաւ

— Առ սըւիկա, ըսաւ քեռորդուսն, ամիս մըն է այս նամակը ետեւէդ կը պարտի:

— Տուէք նայիմ, ա՛խ մօրաբ, ձայնեց Ռոտուֆ, ա՛լ հարօտացայ. այս նամակէն կ'իմանամ որ թուրքուղի գրականմրցումին մէջ երեք հարիւր ֆրանքի մըրօցանակ մը յահած եմ: Երևա մը օտ արտէնկօթնօս և լաթերօ ատէէք, վագեմ երթամ իսկուալ այն դափնիաները որ կապիտուլի մէջ ինձ կ'օպսոնն:

— Է՛յ, օտ մեր օդածակերուն գլո՛ւխը:

— Հիմա ասոր ատե՛նն է, մօյա՛ր, օտ լաթերօ ատէէք կ'ըսեմ. օտ ձեռքը ինտօր դուրս ելլեմ:

— Ասկէ դուրս ելլել չի կայ, մենչև որ Վեաձեան-Մխայարդարութիւնն չլմնցնեա, հասկցա՛ր, ըսաւ մօրաբը և Ռոտուֆին վրայէն դուռը կղպեց:

Մինակ մնացածին պէս, Ռոտուֆ երկար բարակ չը մտածեց ելից ճամբայ մը գտնելու համար: Անկողնին ստուանը ամուր կերպով կապեց պաւլչգամին և հակառակ այդ վտանգաւոր փորձին, վերէն վար սահեցուց ինքզինքը այդ յանպատրաստից սանդուղին շուրջուելով և այսպէս ինքզինքը գտաւ Սիւտնիի «պալքօն»ը:

— Ո՛ղ է, հարցուց անիկա ներօէն, երբ պատուհանին ապակին կը դարնէր:

— Լուռի՛ւն, բացէք կ'աղաչեմ:

— Բայց դուք ո՛վ էք, և ի՞նչ կ'օւզէք:

— Հարցնելնիդ աւելորդ է, «Վրէժխնդիր»ին հեղինակն եմ որ եկած եմ ծակէն վար իջեցուցած սիրտըս փնտռելու:

— Աստուծմէ չը գտնեա, մարդ, ադ ըլլա՛լի՞ք բան էր որ ըրիր, հապա եթէ վար ինայիր, մեռնէիր...:

— Ինձի մտիկ ըրէ, Սիւտնի, յարեց Ռոտուֆ ըսօ



առցած նամակը թոյց տալով անոր. այս նամակը կը  
տեսնե՞ս, ա՛հա բախա՞ր և հարստութիւնը սկսան ինծի  
ժպտիլ: Երանի՛ թէ սէրն ալ անոնց պէս ընէր.

Հետեւեալ առաուն, շնորհիւ Օրիորդ Սիւսանիի  
ճարած ձեռք մը ասնական հագուստին Ռօալֆ կրցաւ  
խոյս տալ ժօրեղբօրը տունէն և շիտակ գնաց գանձեց  
ցոյց արուած տեղէն, երեք հարիւր ֆրանքի դուժարը  
որ դիմացաւ այնքան ասոնն որքան կ'ապրին վարօ-  
ղերը:

Ամիս մը քչեց. Պ. Մօնէթթի հրուիրուած էր  
ներկայ գանակելու «Վրէժխնդիր»ին առաջին ներ-  
կայացման:

Շնորհիւ Օրիորդ Սիւսանիի առաջնորդին, այդ թա-  
տերախաղը ասան և եօթ ներկայացու՞մ ունեցաւ և  
քառասուն ֆրանք վասակցուց հեղինակին:

Քիչ ատեն հօքը. ամառը վրայ եկած էր և այդ  
եղանակին. Ռօալֆ կը ընակէր Սէն Քլոտիի ծառու-  
ղիին երկայնքը, Պուա աը Պուլօնի անտառէն դուրս  
ելլելուդ, ձախ թեւիդ վրայգանուող ծառին չարբորդ  
օտարն վրայ:

### Ե. ՇԱՐԼԸՍԱՆԵՒ ՀԻՆԳ ՖՐԱՆՔՆՈՅԸ

Դեկտեմբեր ամսուան դէպի վերջերը, Պիաօ գոր-  
ծակալութեան ցրուիչներուն պաշտօն արուած էր՝ հա-  
րիւրի մօտ հրուիրագրեր բաժնել իրենց հասցէներուն,  
հրուիրագիր մը օրուն ահաւաստիկ մէկ հարազատ օրի-  
նակը:

Տէր

Պ. Պ. Ռօալֆ և Մարսէլ կը խնդրեն որ հաճիք  
ձեր ներկայութեամբը պատուել այն երեկոյթը որ ի-  
րենց ասան մէջ տեղի պիտի ունենայ յառաջիկայ Շա-  
բթ, Մննդեան Զարթօնքին:

Պիտի խնդացուի:

«Յ. Գ. Կեանքը երկար չի տեւեր»:

### Յ Ա Յ Տ Ա Գ Ի Ր

Ժամը 7ին.— Բացում օրահներու: Ոգեւորեալ և  
բուսն խօսակցութիւն:

Ժամը 8ին.— «Մննդագրեր Լեռ»ին նրբամիտ հե-  
ղինակները ներս պիտի մտնեն օրահներէն և անոնց  
մէջ պիտի շրջագային: «Մննդագրեր Լեռ»ը թատեր-  
գութիւն մըն է մերժուած՝ Օտէանի կողմէ:

Ժամը 8ու կէսին.— Պ. Ալէքսանտր Շոնար, ան-  
զուգական արուեստագէտը դաշնակի վրայ պիտի զար-  
նէ «կապոյտին ազդեցութիւնը արուեստին վրայ» աս-  
նուն նմանողական համերգը:

Ժամը 9ին.— Առաջին ընթերցում ողբերգութեան  
պատուհասին ջնջման վրայ գրուած յիշատակագրին:

Ժամը 9ու կէսին.— Պ. Կիւսթավ Բօլին՝ գերբնա-  
կան փիլիսոփայ և Պ. Շոնար պիտի բանավիճին բազ-  
դասական յաշարհավարութեան վրայ: Ընդդիմախօս-  
ներուն միջեւ ընդհարումի մը առաջը անելու հա-  
մար, երկուքն ալ զատ զատ կապուած պիտի ըլլան:

Ժամը 10ին.— Գրագէտ Պ. Թրիսթան պիտի նը-  
կարագրէ իր առաջին սէրերը և Պ. Շոնար դաշնակի  
վրայ պիտի ընկերանայ իրեն:

Ժամը 11ին.— Գազուարի օրօրգութեան վրայ  
պատմուածք մը օտար իշխանի մը կողմէ:

Ժամը 11ու կէսին.— Երկրորդ ընթերցում ողբեր-  
գութեան պատուհասին ջնջման վրայ գրուած յիշա-  
տակագրին:



### ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

Կէս գիշերին, Պ. Մարտէլ՝ պատմագիր նկարիչ, աչքերը կապել աւազակ, սեւ տախտակին վրայ կաւիճով և յանպատրաստից պիտի պատահէ Նարոլէոնի և Վօլթէռի տեսակցութիւնը Շան զ'Էլիզէի մէջ: Պ. Ռօօօլֆ, նոյնպէս յանպատրաստից պիտի բացառէ այն պարբերութիւնը որ կայ «Չայեր»-ի և «Օսթերլից»-ի հասկամարտին հեղինակներուն միջև:

Կէս գիշերը կէս ժամ անցած, Պ. Կիւսթավ Գօլին պարկեշտօրէն մերկանալով, ողիմբակոն չորրորդ շրջանի ըմբռնական խաղերուն մէկ նմանութիւնը պիտի կատարէ:

Աւառուան ժամը մէկին.— Երրորդ ընթերցումն օղբերգութեան պատուհասին ջնջման վրայ գրուած յիշատակագրին, որմէ ետքը ձեռագրի պիտի շրջագայեցուցուի ի նպատակ այն օղբերգակ հեղինակներուն որ կրնան օրին մէկը անգործութեան դատապարտուիլ:

Ժամը երկուքին.— Սկզբնաւորութիւն խրատականութեանց և կազմակերպութեան ճշտարիտներու որ պիտի տեսն մինչեւ առաւ:

Ժամը վեցին.— Ծագումն արեգակոն և վերջին խմբերգ:

Հանդէսին մտքով տեսողութեանը միջոցին հովանորիչ գործիքներ շարժման մէջ պիտի դրուին:

Ծանօթ. Ամէն անոնք որ ստանաւար կարգալ և կամ արտասանել պիտի օղբն, դուրս պիտի հանուին սրահներէն և պիտի յանձնուին ստականութեան: Կը խնդրուի նաեւ յարգօյ հրաւիրեալներէն, որ մեկնած տաննին վառուած մոմի տակցուք կտորներ դրպաննին չդնեն:

Երկու օր ետքը այս հրաւիրքն նախնիք ձեռքէ ձեռք կը յափշտակուէին արուեստագէտներու և գրագէտներու աշխարհին երրորդ խաւերուն մէջ ուր անագին աղմուկ յորուցին: Կային սակայն հրաւիրեալներու մէջէն անանկներ որ կասկածի տակ կը գնէին՝ այդ երկու բարեկամներուն կողմէն խոստացուած ճօխութիւններու իրականութիւնը:

— Ի՞մ հաւատալս չի դար, կ'ըսէր այդ սկեզարիկներէն մէկը. երբեմն Ռօօլֆին չորեքշաբթիներուն գտնուած եմ՝ Թուռ ԽՕՎէններ փողոցը բնակած տաննը, ուր բարոյապէս բիտոյն կարելի էր նստիլ և անանկ ընտիր ամաններու մէջ չորուած ջուր ժը կը խմէինք որ...:

— Այո անգամ, կ'ըսէր ուրիշ մը, առանկ ստորին բան մը պիտի չըլլայ: Մարտէլ հանդէսին յատակագիրը ցոյց առաւ ինծի որ փայլուն յաջողութիւն սը կը խոստանայ:

— Կիներ ալ պիտի գտնուի՞ն: — Այո՛, Ֆիմի Թէնթիւռիէն ուղած է հանդէսին թագուհին ըլլալ և Շոնար աշխարհիկ կիներ հեռը պիտի բերէ:

Ահաւասիկ քանի սը բառով պատմենք թէ ինչպէ՛ս այդ հանդէսին գաղափարը հնունդ առած էր, հանդէս մը որ դարձանք կը պատճառէր Պօնիմներու աշխարհին, որ կասուրջներուն անդիի կողմը կ'ապրի:

Գրեթէ ամբողջ մը ի վեր Մարտէլ և Ռօօլֆ, ասդին աէդին խօսք բացած էին շրահանդէսի մը վրայ որ միշտ տեղի պիտի ունենար «յառաջիկայ շաբաթ գիշեր»։ Բայց զմոռակ պարագաներ ստիպած էին որ իրենց խոստումը՝ յիսուներկու եօթնեակներուն շրջանը ընէ, այնպէս որ այլեւս քայլ մը չէին կրնար առնել փողոցին մէջ առանց ենթակայ ըլլալու բարեկամներու քաջջուգին, մինչև իսկ անանկներ կային անոնց մէջ որ ուժգին կերպով կը քննադատէին: Այլևս խնդիրը ցիցը ելած ըլլալուն, երկու բարե-



կամները վճռեցին վերջ մը գնել անօր և սկսան խօս-  
տունին յարգելու պատրաստակամութիւն մը ցոյց  
տալ: Ասոր համար անօր ցրուել ասուած էին վերայիշ-  
եալ հրաւիրագիրերը:

— Այլեւս հիմա չենք կրնար ընկրկիլ, դիտել  
տուած էր Ռոտուլֆ, ա՛լ լաւութ՝ ուտել կ'ըրչայ: Աս-  
ջեւեիս դեռ ութ օր ունինք հարիւր ֆրանք ճարելու  
համար, գումար մը, որ անհրաժեշտ է քիթը բերանը  
տեղը բան մը ընելու համար:

— Գանի օր այսպէս է, կը գտնենք, պատասխա-  
նած էր Մարտէլ, և այն ուժեղ սաւառքով որ դիպ-  
ուածին վրայ կը գնէին. գացին պառկեցան, համազ-  
ուած օր իրենց ֆրանքը արդէն բռնած էր ... անկա-  
րելիին ճամբան:

Հանդէսին օրսչեալ թուականին երկու օր մնացած  
Ռոտուլֆ տեսնելով օր բան մըն ալ եկած չունի, խելք  
բրաւ օր աւելի ապահով բան մը ըրած պիտի ըլլային  
եթէ քիչիկ մը օգնէին դիպուածին. վերջապէս պղտիկ  
չմնալու հասար այն ժամուն ուր ստիպուած պիտի ըլ-  
լային հիւրասրահին ջանքերը վտուելու: Գործը աւելի  
գիւրացնելու համար, իրարու ետեւ կրճտեցին նա-  
խագծուած յայտագրին ճօխութիւնները:

Փոփոխութիւն փոփոխութիւն և խել մը ջնջումներ ը-  
նելէ ետքը արտօթաներու գլխին մէջ և զովացուցիչ  
ըսպելիներու յօդուածը արբողութիւն և թիփառելէ ետքը  
ձախքերու ընդհանուր գումարը ասանակինգ ֆրան-  
քի իջեցուցին: Թէեւ խնդիրը պարզուած էր, բայց  
այլ լուծուած:

— Կայնէ նայինք, ըստ Ռոտուլֆ, հիմա կարգը  
եկու միջոցներ փնտռելու: Նախ այս անգամ հանդէսը  
չենք կրնար յետաձգել:

- Ադ անկարելի է, յարեց Մարտէլ.
- Սթուծիանքայի ճակատամարտին պատճառ-  
թիւնը լսելս օ՛րքան ասին կ'ըլլայ:
- Երկու ամիս ... Լաւ, պատուաւոր պայմա-

նստած մը օրմէ մօրեղբայրս գանգառելու իրաւունք  
չունի: Վերջ նորէն պիտի երթամ Սթուծիանքայի  
պատճառթիւնը անգամ մը եւս մտիկ ընելու, ա՛ն քե-  
զի հինգ ֆրանք, բնաւ չի փախչի:

— Ե՛ս ալ, ըստ Մարտէլ, ծերակի Մէտիսիսին  
«Լքեալ Դղեակ» մը կ'երթամ կը ծախեմ, ասկէ ալ  
հինգ ֆրանք ըսէ. իսկ եթէ ժամանակ ունենամ պատ-  
կերին վրայ աւելցնելու աղօրի մը և երեք աշտանակ-  
ներ, կրնանք մինչեւ ասոր ֆրանք ձեռք անցրել:

Աւ երկու բարեկամները այս խօսքերէն ետքը զը-  
նացան, երազելով որ Պէլճօօգօ իշխանուհին կը խնդ-  
րէր իրենցմէ օր ընդունելութեան օրերնին փոխեն,  
իրեն գացող հիւրերէն մաս մը չխլելու համար:

Մարտէլ աստուծ կան լի արթնցածին պէս «Լքե-  
ալ Դղեակ» մը սկսաւ նկարել, պատկեր մը օրուն  
համար մասնաւոր խնդրանք կար՝ Գոուուէլի հրա-  
պարակին վրայ խառնութիւն օւնեցող փերեղակի մը կող-  
րէ: Գալով Ռոտուլֆին, ան ալ գնաց այցելութիւն մը  
տալու մօրեղբորը՝ Մօնէթթիի օր Ռուսերուն նահան-  
ջը պատճելու մէջ շատ վարպետ էր և օրուն Ռոտուլֆ  
տարին հինգ վեց հեզ, այսօրնքն անկուտի և կամ նեղը  
մնացած ասանները պատմելու դոհունակութիւնը կը  
պատճառէր, անոր պատերազմի երթալու պատճառ-  
թիւնը ստիկ ընելով և ասոր փոխարէն քանի մը ֆր-  
րանք փոխ կ'ասէր՝ վաղեմի զինուորական ծխայր-  
գորէն որ շատ «նազ» չէր ըներ ասլու, երբ կը տես-  
նէր թէ քեռորդին ի՛նչ օգնւորութեամբ և ո՛րքան  
համբերութեամբ ականջ կը գնէր պատճութիւններուն:

Ժամը երկուքին ասանները, Մարտէլ գլխահակ  
և թուրն ասկ զբած աստուան գծած պատկերը՝ Գա-  
ուուէլի հրապարակին վրայ հանդիպեցաւ Ռոտուլֆին  
որ մօրեղբորը տունէն կը վերադառնար: Իր կերպա-  
րանքը կը մասնէր թէ լսելերը գէշ ըլլալու էին:

- Ըսէ ասանեմ, յաջողեցա՞ր, հարցաւ Մարտէլ:



— Ոչ, մօրեղբայրս Վէրսայի միւզէն տեսնելու գացեր է. դուն ի՞նչ քրիք:

— Մէտիսիս «օյժածախ»ը «Լքեալ Իդեալ» չնշար ասլեւս, հիմա Թանժէի ունակո՞ծում մը կ'ուզէ:

— Պատիւնիս մէկ փարայի պիտի ըլլայ եթէ այդ հանդէսը չկրնանք տալ. մրմնաց Ռօսօլֆ. բարեկամս ազգեցիկ քննադատը Մնչ պիտի ըսէ եթէ պարսպ տեղը կապել տուած ըլլամ իրեն ճերմակ փողկապ մը և հողցուցած՝ յարգադոյն ձևանօցնե՞րը:

Եւ երկուքն ալ մտնե՞ց ու դիտելոք աշխատանոց վերադարձան.

Այդ պահուն գրացին մը ժամադրոյցը ժամը չորս կը դարձնէր:

— Առջեւնիս մինակ երեք ժամ մնաց, ըսաւ Ռօսօլֆ:

— Բայց, ազգակէց Մարտէլ՝ բարեկամին մօտենայով, աղէկ դիտե՞ս, ապահով ես որ այլեւս բըսնա գրամ չունինք հոս:

— Ո՛չ հոս և ոչ ալ այլուր, ուրկէ՞ց ուր առանկ բան մը մեր քովը պիտի գանուէր:

— Եկաւ սա կարասիներուն մէջ փնտռենք, սա թիկնաթոններուն մէջ...: Կ'ըսեն թէ Ռօսլէս-բիէտի ժամանակ գողթականները իրենց գանձերը ծառակ տեղեր կը պահէին, ո՛վ դիտէ, կ'ըլլայ որ մեր թիկնաթոնը ժամանակին դաղթականի մը պատկանած ըլլայ: Մէյ մ'ալ սա կայ. դիտած եմ թէ անիկա տնանկ կարծր է որ շատ անգամ միտքէս անցած է թէ մէջը՝ անպատճառ սեռազի կտորներ գանուելու են: Եկաւ սըւոր դիտանութիւնը կտորները:

— Աս ըսածներդ պարզապէս պարսպ խօսքեր են, ըսաւ Ռօսօլֆ՝ անանկ չեշտով մը քրուն մէջ խառութիւնը ներողամտութեան կը խառնուէր:

Մարտէլ, որ սկսած էր պրպակ սենեակին բարձր անկիւնները, յաղթական ճիչ մը արձակեց յանկարծ:

— Գործերնիս եղաւ, ա՛լ մի վախնար, պստաց. ես ապահով էի թէ արժէքաւոր բաներ կային հոս: Նա՛, տե՛ս:

Եւ Ռօսօլֆին ցոյց տուաւ հինգ ֆրանքացի խոշորութեամբ գրամի կտոր մը, որ կիսովին ժանգոտած էր:

Հնադրական թիչ շատ արժէք ունեցող գրամ մըն էր անիկա, որուն բարեբաւօրէն չաւրուած շրջանակին մէջ կը կարդացուէր Շարլըմանի անունը,

— Մէկ ու կէս ֆրանք մը բանելու է ատիկա, վճռեց Ռօսօլֆ՝ բարեկամին գտածին վրայ արհամարհոտ տկնարի մը նետելէ ետքը:

— Գործը գիտցողին համար կէկ ու կէս ֆրանքը բաւական պիտանի գումար մըն է: Նաբօլէան հաղար երկու հարիւր զինուորով տաս հազարնոց աւտարիտական բանակ մը անձնատուր ընել տուաւ: Ծարպիկուս թիւնը քանակի տեղ կը բռնէ ստէպ: Ես այդ սկուտը շիտակ «պապա» Մէտիսիսի կը տանիմ: Սրտեղ արկի ծախելիք բան չունինք արդեօք, սա ժաքօնօվաքիի ոլոքը եթէ հետս տանիմ, ինտօ՞ր կ'ըլլայ: անչաւս փարս մ'ընէ:

— Ատ ոլոքը տար նայինք. մե՛զք որ հաս դեղարուեստական բան մը չպիտի մնայ:

Մարտէլի բացակայութեանը, Ռօսօլֆ, որ միտքը գրած էր ամէն զինով այդ երեկոյթը սարքել, գնաց գաւա Բօլինը, գերբնական փիլիսօփան, որ իր տունէն երկու քայլ անդին կը բնակէր:

— Փոքրիկ ծառայութիւն մը խնդրելու եկած եմ ջենէ, ըսաւ, իբրեւ ամսուէր անպատճառ սեւ հագուտ մը ունենալու եմ զօր չունիմ, քուկդ փախ կուտա՞ս:

— Բայց, պատասխանեց Բօլին վարանոտ, ես ալ իբրեւ հրաւիրեալ, «Ֆրաք»ի պէտք ունիմ, ինտօ՞ր ընենք:



— Հոգ չէ, լոբախնակօթ»ով եկուր, ես կը ներեմ։  
 — Աղէկ գիտեա որ կեանքիս մէջ երբեք չառաքէնս կօթ» չեմ ունեցած։

— Եթէ այդպէս է, եկուր բան մը ընենք. ի հարկին կրնաս երեկոյթին չգալ, և «Ֆրաք»դ փօխ ալ բնծի։

— Կարելի՞ է միթէ, քանի որ իմ անունս ալ յայտագրին մէջ գրուած է։

— Առկէ ի՞նչ կ'ելլէ. դեռ ինչե՛ր պիտի պահօրն յայտագրէն։ Սա «Ֆրաք»ը փօխ աւար ինծի, և եթէ անպատճառ դալ կ'ուզես, եղածիդ պէս եկուր, «ժաքէթ» ալ մի հազնիր, անսնողները շատ շատ պիտի կարծեն թէ ասնը ոպատուորներէն ես։

— Ասանկ չըլլար, պատասխանեց Քօլին կարմրեւ լով, կազնեզոյն բալթօ կը հազնիմ, եղաւ գնաց. թէև ըլլալիքը քիչ մը անախորժ բան է։

Եւ երբ տեսաւ որ Ռօաօլֆ «Ֆրաք»ը քանի պիտի երթայ.

— Կայնէ նայինք, մի անապարեք, մէջը պզտիկ բաներ կան ըսաւ։

Քօլինի «Ֆրաք»ը մասնաւոր յիշատակութեան մը արժանի էր։

Նախ և առաջ սա ըսենք որ «Ֆրաք»ը կտտարեւ լապէս կապոյտ գոյն ունէր, թէև Քօլին սովորութեան մը հետեւանքով սեւ անունը կուտար անոր։ Եւ սրովհետեւ իր ընկերներուն մէջ «Ֆրաք» մը ունեցողը մինակ ինքն էր, իր բարեկամները սովորաբար սեւ անունը կուտային Քօլինի հագուուածին։ Ասկէց զատ, այդ նշանաւոր հագուուածը մասնայատուկ ձեւ մը ունէր, այսինքն թէ անոր երկայն քանցքները շատ կարճ մէջքէ մը կախուած՝ իրենց մէջ կը կրէին գրպաններ, ճշմարիտ խորխորատներ, որոնց մէջ Քօլին սովորութիւն ունէր պահելու երեսուն

հաօի չափ գիրքեր, զորո յաւիտենապէս հետը կը պաշտցնէր, և ահա ասոր համար իր բարեկամներուն ըսել կուտար թէ հանրային մտանադարաններուն փակ եզած օրերը, գիտնականները և գրագէտները իրենց ֆնտաած տեղեկութիւնները կրնային գտնել Քօլինի զգեստին քղանցքներուն մէջ, մտանադարան մը որ միշտ բաց կը մնար հասարակութեան առջեւ։ Այդ օրը բացասաբար Քօլինի «Ֆրաք»ին մէջ կը գրտնուէին՝ Պայլի քառածալ մէկ հատորը երեք հատորնոց գերբնական ոյժերու վրայ ուսումնասիրութիւն մը, Քօնաիեաքէ հատոր մը, երկու հատոր Սվէտէնպուրկէ և Բօբի «Մարդկային բարոյագիտութիւնը»։ Իր մտանադարան-հագուուածը պարպելէ ետք, արթօնեց Ռօաօլֆին որ զայն վրան անցընէ։

— Կայնէ նայինք, ըսաւ անիկա, ձախ կողմի գրպանը բաւական ծանր կուգայ ձեռքիս. բան մը մտոցած չըլլաւ։

— Իրաւունք ունիս, օտար յեզուներու գրպանը մտոցայ պարպելու, և անկէ դուրս հանեց երկու արարերէն քերականութիւն, Մալեզեան լեզուի բասաբան մը և Չինարէն «Եզնարածութեան սկզբունքները», որ իր սիրական ընթերցանութիւնն էր։

Ռօաօլֆ ասն դառնալով հան դառա Մարտելը, որ երեք հատ հինգ ֆրանքնոցներով «խայտըրախ» կը խաղար ինքնիրենը։

Ռօաօլֆի առաջին շարժումը եղաւ՝ բարեկամին երկնցուցած ձեռքը սեղմելէ հրաժարիլ, որովհետեւ իրեն այնպէս կը թուէր թէ գործին մէջ անպատճառ օճիք մը կար։

— Շուտ, շուտ, ըսաւ Մարտել, փնտռած տասն և հինգ ֆրանքնիս վերկապէս ձեռքերսուս մէջ են. ահա՛ թէ ի՛նչպէս։ Մէտիսիսի խանութը հանդիպեցայ հնագէտի մը, և երբ անոր ցոյց տուի մեր «անթիք» գրածը, մարդը քիչ մնաց պիտի իյնար սարէր. կ'ե-



րեւի թէ ճիշտ ու ճիշտ մեր այս դրամն էր որ կը պահուէր իր էին գրամներու հաւաքածոյին. բայց աշխարհը տակն ու վրայ բրած էր այդ պակասը լրացրնելու համար. բայց ի զուր: Հեռուարար երբ աղէկ մը ընկեց ձեռքիս մէջ գտնուող Շարլըմոնի սկուաքը, առանց վարկեան մը վարանելու հինգ ֆրանք աստղարկեց ինձի: Մէտիտիս արժուկովը թնդեց գիտեալս որ բեւ ռուսը հասկցուց. ան բեւ Վազէր ինձի—էթէ շահուն կէսը ինձի ապ խոստանաս, ես գինը բարձրացնել կուտամ—և այսպէս մարդը մինչև երեսուն ֆրանքի ելաւ: Տասնհինգ ֆրանքը Հրեային տուի և անուամիկ մնացորդը: Ասկէց ետքը հրաւիրեալները ուղղմունքն չափ հրեան գալ, մենք այլևս ի վիճակի ենք չլողուցիչ բաներ հրապարակելու իրենց, բայց ըսէ անսնեմ, ող ինչ օրը է հազա՞ն:

— Այո՛, Քոլինին օրըքը և թաշկինակը փրկուածելու միջոցին, զուրո հանեց Մանչու լեզուով գրուած հատոր մը, որ մտայնուած էր օտար լեզուներու յատկացուած գրպանին մէջ:

Անմիջապէս երկու բարեկամները սկսան պատրաստութիւններու: Աշխատանքին մէջ կարգ կանոն գրբին, զանի մը փոյս նեանցին վառարանին մէջ, պատերի շրջանակ մը տաին և վրան կտուի կտոր մը անցընելով եզերքները մոմեր անկեցին և իրեւ ճեպիտէ կախեցին ձեղունէն վար. գրասեղան մը դրին ասնդուղին առջև որ պիտի ծառայէր իրեւ ամպիտն ձառնիտներուն, և անոր առջեւ գրին միակ թիկնաթուղ, որուն վրայ պիտի բազմէր աղբիքիկ քննադատը, և սեղանի մը վրայ շարեցին բոլոր այն հատորները, վէպերը, բանաստեղծական գիրքերը, թերթիտները, որոնց հեղինակները իրենց ներկայութեամբ պիտի պատուէին երեկոյթը:

Գրականութեան տարբեր ճիւղերու պատկանողներու միջև ընդհարուսի մը աստղը տանելու համար, աշխատանքը չորս մասի բաժնեցին, որոնց

տէն մէկուն մուտքին վրայ արտաքին շինուած մէկ մէկ արդարիբեր փակցուցին, որոնց վրայ կը կարողացուէր՝

Պուէաներու կողմ Վիպակոնք  
 Արձակագիրներու կողմ Դասականք

Այդ չորս բաժանումներուն մէջ առաջինը յատկացուած էր կիներու:

— Ան չէ ճամբա», աթու չունինք, ինչ պիտի ընենք, բոս, ընկերներէն ճէկը:

— Դուքը սանդուղին գլուխը պատէն կախուած շատ մը աթուներ կան, երթանք ներս կրենք:

— Այո՛, երթանք, ըսաւ Ռոտուլի և գնաց մէկիկ մէկիկ ներս բերաւ այն աթուները որ գրադէի մը կը պատկանէին:

Ժամը վեցին, երկու բարեկամները գաղին պատասար մը ն կետան և կրկին վերադարձան, որտէն ճրագներ վառելու համար: Եղանին վրայ իրենք անգամ մտա խածին: Ժամը Դին Շոնար իր մուտքը ըրաւ՝ ընկերակցութեամբ երեք կիներու որոնք իրենց գոհարեղէնները և գլխարկները վրանին աննելու մտայնած էին. անոնցմէ մէկը ուսերուն վրայ տած էր կարմիր շու մը, որուն վրայ շատ մը սև բիծեր կային:

Շոնար այդ կնկան վրայ հրաւիրեց Ռոտուլի մասնաւոր ուշադրութիւնը:

— Շատ շնորհքով կնիկ է, ըսաւ. Անդուսի մըն է որ Աթուարաներու անկումին հետևանք արտոքի գտաւ պարտուեցաւ և հիմա անդիլիբէն լեզուի գտեր տալով համեստօրէն կ'ապրի: Հայրը Քրոնվէի ժամանակ նախարար եղած է, ինչպէս ինք կ'ըսէ: Հեռը քաղաքավարութեամբ վարուէ, և չըլլայ որ երկարը գէմքով կեար խօսիս:

Սանդուղներուն վրայ խել սը սաքի ձայներ լըս-



ուեցան. հրաւիրեալներն էին որ հեաղհեաէ կուգային  
և ներս մանողները կը զարմանային սրահին մէջ կը-  
քակ գտնուելուն վրայ:

Ռօաօլֆ, իր «Ֆրաք»ովը կը դիմաւորէր ներս  
մտնող կիները և անոնց ձեռքերը կը համբուրէր  
«սէժան» բուրոզ կնամեծարութեամբ:

Երբ եկողներուն թիւը քսանի հասաւ Շօնար  
հարցուց թէ արդեօք տանը չէ՞ր որ սեծարանքներու  
օկուէր:

— Ինչ սը սպասէ, պատասխանեց Ռօաօլֆ, ազ-  
դեցիկ քննադատը գալուն պէս «փօնջ»ը կը հանենք:  
Ժամը օւթին, բոլոր հրաւիրեալները ամբողջովին  
եկած էին և յայտագիրը սկսաւ գործադրուիլ, երկու  
հասուածի միջև բաներ սը կը հրամցուէին, օրօնց  
ինչ ըլլալը երբեք չգիտուեցաւ:

Ժամը տասնին տանները ազդեցիկ քննադատին  
ձերմակ ձիւնէն երեւցաւ:

Ժամ մը միայն կեցաւ և առանց մեծարանքնե-  
րուն գպչելու առաւ քուլեց:

Ժամը տասնեւմէկին տանները այլևս փայտ չէր  
մնացած և սրահին մէջ ջուրաը կօխեց. ասոր վրայ  
հրաւիրեալները իրենց տակի աթոսները  
վառարանին սէջ նեաեցին: Կէս դիշերէն ժամ մը ետ-  
քը ամէնքն ալ ոտքի վրայ մնացած էին:

Շատ օրբայիբ զուարթութիւն մը մինչև վերջը  
օգեւորեց ներկաները և ո և է միջապէս չխանգարեց  
ընդհանուր իրախճանքը. ի բաց տանալ պատուածք  
մը, օրուն զսի գնաց Գօլինի՛ օտար գրականութեան  
յատուկ «Ֆրաք»ին գրպանը և այն փառաւոր ազատկը  
զօր Շօնար իջեցուց Գրօնվէլի նախարարին ազլիան  
երեսին:

Այդ անմտանալի երեկոյթը շարունակ  
խօսակցութեան առարկայ եղաւ թաղին սէջ և Ֆիմի

Թէնթիւոիէս որ հանդէօին թագուհին եղած էր,  
խօսք եղած տանն, իր բարեկամուհիներուն կ'ըսէր.  
— «Նրեա՛խ երեկոյթ էր, «խըեա՛խ», երեւակա-  
յէ՛, հոգիս, որ մտ սնգամ կար:

### ՕՐԻՈՐԴ ՄԻԻԶԷԹ

Օրիորդ Միւզէթ քսան տարու զէզանի ազլիկ  
մըն էր, որ Բարիդ գուէն քիչ ժամանակ ետքը եղած  
էր ինչ որ կ'ըլլան գեղեցիկ ազլիկները որ բարակ ի-  
րան մը ունին, շատ պչրանք, քիչ մը փառասիրու-  
թիւն, և օւղղագրութիւն ընս:

Երկար ժամանակ «Բարթիէ-լաթէն», այսինքն  
օւսանողներու թաղին մէջ եթէ ո՛չ մարդուած, բայց  
գոնէ թարմ ձայնով մը շրջերգեր երդելով փայլելէ  
ետք, ինչ որ վառակցնել տուաւ իրեն անուն մը, օ-  
րով յանգի վարպեա ակնահատէրը պանծացուցին շի-  
քը ետքէն, Օր: Մինզէթ յանկարծ Լա Հարբ փողօցի  
իր բնակած տունը թողուց, երթալ թառելու համար  
Պրէտա փողօցի հիթերական, կրօաչխարհիկ բարձա՛:  
վրայ:

Ինչ ժամանակուան մէջ հաճոյքի ազնուապատ-  
կան շրջանակներու մէջ մեծ համբաւ մը շինեց իրեն  
և կամաց կամաց սօսեցաւ այն բարձրութեան, ուր  
հասնողներու անունները թերթերու մէջ կը ապուին  
և պատկերները կը վիմագրուին փորագրիչներու  
կողմէ:

Սակայն Օրիորդ Միւզէթ բացատրութիւն մըն էր  
կիներու այն աչխարհին միջ, ուր կ'ապրէր: Ինքնա-  
ծին բնաւորութեամբ վայելչաօէր և վերացական, կը  
օրէր պերճանքը և անոր հայթայթած բոլոր վա-  
յելքները: Իր պչրասիրութիւնը փնտաել կուտար ի-  
րեն՝ ինչ որ ազնիւ էր և գեղեցիկ, Գանհիկ ծնողքնե-



բու զաւակ, սակայն բնաւ նեղութիւն չպիտի քայէր նոյնիսկ առնէն արքայական ճարութիւններու մէջ ։  
 Հակառակ դեռառի և գեղանի բլլալուն, Օրիորդ Միւզէթ չպիտի դիջանէր հոմանուհին բլլալու մէկու մը եթէ այդ մէկը իրեն պէս երիտասարդ և գեղեցիկ չլլալար ։ Տեսնողները կը պատահն թէ անդա՞ մը Օրիորդ Միւզէթ մարտած էր առաջարկութիւնները ձերուկի մը, այնքան հարուստ՝ որուն Շօսէ Կ'Անթէնի Բերուն անուր կուտային, և որ սոկիղէն սանզուի մը պատրաստ էր գնելու այդ աղջկան քմայքներուն առջեւ ։

Խելանի և նրբամիտ, կրեա չէր տար ապուշներու և զատարկ մարդոց՝ հակառակ անոնց տարիքին, ախողոսներուն և անուան ։ Մէկ խօսքով, աղնիւ և գեղեցիկ աղջիկ մըն էր Միւզէթ, որ սիրոյ մէջ Շօսէ ֆօրի նշանաւոր վարկածին համեմատ կը դառնէր թէ ճԱէրը երչու քմայքներու փոխանակութիւնն էն ։

Ասոր համար, երբևք իր յարարերութիւնները չէին սկսած այն ամօթալի սակարկութիւններով որ արդի կնամնծարութիւնը կ'անպատահեն ։

Ինչպէս ինքն իսկ կը խոստովանէր, անկեղծութիւնը իր ամէնէն զորաւոր կողմն էր և կը պահանջէր որ զիմացիներն ալ իրեն պէս բլլային ։

Տրուած բլլալով իր քմայքներուն ինքնաբուխ և վառվա եզանակը, այդ քմայքները բաւական երկար տանն չէին կրնար զիմանալ, ճշմարիտ ափանջի մը բարձրութեան հասնելու համար ։

Իր քմայքներուն ծայրայեղ փոփոխականութիւնը և իր շուրջը քննողներուն քսակին և վրայ գլուխին հանդէպ իր տածած անտարբերութիւնը իր կեանքն ալ անկայուն ըրած էին, այնպէս որ անձնական տունի կառքին կը յաջորդէր հանրականքը, ասն սը նախաշարկին՝ հինգերորդ յարկը, մեծաքսէ շրջագետին՝ զգամա փէշը ։

Ո՞վ հիմնալի, աղջիկ, կենդանի բանաստեղծութիւն, երիտասարդական քաղցրահնչիւն ծիծաղներով և զուարթ երգերով առի, գթաշարժ սիրա մը որ ամէնուն համար կը բարախէ կիսաբաց լանջքին տակ ։ Ո՞վ Օրիորդ Միւզէթ, դուն որ քոյրն ես Պէրնըրէթի և Միմի-Բէնտօնի, Ալֆրէտ աը Միւսէի գրիչը պէտք էր՝ վայելուչ կերպով նկարագրելու համար քու անհոյ ու թափառական մողթը՝ երիտասարդութեան ծագուէտ կածանին մէջ և անշուշտ զբեղ ալ պիտի ուզէր փառարանել, եթէ ինծի պէս լսած բլլար քու անուշիկ բայց սխալ հնչող ձայնով երգելը՝ քու սիրական շրջերգերէդ հետեւեալ գեղջկական հատուածը ։

Գարնանային աղուար որ մ'էր  
 Որ իմ սէրս ես յայանեցի,  
 Սեւ մաղերով մէկ աղջկան  
 Որ սիրա մ'ունէր կուպիտոնի,  
 Եւ որ գլխուն վրայ կրէր  
 Թիթեանաձև մէկ նոր գտակ ։

Մեր բնիկն պատմութիւնը սքանչելի յարավէ պերկն մէկն է կեանքէն՝ այդ արկածախնդիր չքնաղ աղջկան, որ քիչ մը քիչ ճխալթաւ չէր կերած ։

Այն միջոցին որ Միւզէթ հոմանուհին էր պետական երիտասարդ խորհրդականի մը որ կնամնծարօրէն անոր յանձնած էր իր ժառանգած անացուածքներուն բանալիները, Օրիորդ Միւզէթ սովորութիւն ըրած էր շարաթը անգամ մը երեկոյթներ սարքելու Լա Պրիւլէտ փողոցի իր ասն սիրուն պղախի սալօնին մէջ ։

Այդ երեկոյթները շատ կը նմանէին բարիզեան երեկոյթներու, սա տարբերութեամբ որ Միւզէթի երեկոյթներոն մարդ կ'զրօսուար, երբ ամէնուն համար նստելիք բաւական տեղ չէր գտնուեր, հրաւիրեալները իրարու ծունկին վրայ կը նստէին ։ Շատ անգամ կը պատահէր որ երկու հոգի մէկ գաւաթէ կը խմէին ։



Ռօտօլֆ, որ Միւզէթի բարեկամն էր և որ բարեկամէ զառ երբեք ուրիշ բան չէր եղած, (ասոր ինչուն երբեք չգիտցան ո՛չ մին և ոչ միւսը) որ մը Միւզէթէն հրաման ուզեց հետը միասին բերելու նկարի Մարսէլը, ապառնողաւոր տղամարդ մը՝ որուն համար կ'աւելցնէր Ռօտօլֆ. ապագան տկարեմականի համազգեստ մը ստեղծագործելու վրայ էր:

— Բե՛ր, ըսաւ Միւզէթ:

Այն իրիկունը որ միասին Միւզէթի պիտի երթային, Ռօտօլֆ գնաց առնելու Մարսէլը, որ ճիշդ տան պահուն որ բարեկամը հագուելու վրայ էր.

— Ադ ի՛նչ է, հարցուց Ռօտօլֆ, գունաւոր շատ պիկով մարդու մէջ պիտի ելլես, հէ՞...:

— Արդեօք առիկա սովորութիւնները կը վերաւորէ՞:

— Վիրաւորելն ալ խօ՞ք է, կը վիրաւորէ՞ մի, նոյնիսկ արիւն հոսեցնելու աստիճան, անաչէ՛ն:

— Ինձօր ընէինք, հարցուց Մարսէլ ակնարկ մը նետելով շապիկին, որ կապոյտ «պասմաճէ էր և որուն վրայ զարդապատկերներ կային որ կը ներկայացնէին որսի շուներէ հալածուած կիններ: Ասկէ զատ այժմ ուրիշ ալ չունիմ: Հոգ չէ սահայն, ճերմակ օձիք մը կը դնեմ և Մաթուսաղէմս մինչեւ վիզս կոճկելուս պէս, շապիկիս գոյնը յայտնի չըլլար:

— Խնդեցա՞ր, հարցուց Ռօտօլֆ մտաւանջութեամբ, նորէն Մաթուսաղէ՞մդ կը հագնիս կոր:

— Ուզեմ չուզեմ, աւա՛ղ, ուրիշ ճար չի կայ, Առտուած առանկ կ'ուզէ, դերձակս ալ նոյնպէս: Զը մոռնանք որ նոր կոճակներ կարել տուի և ծակերը գեռ նոր լեցուցի... սեւ ներկով:

«Մաթուսաղէմ» ըսուածը պարզապէս Մարսէլի պաշտօնական հագուստն էր. այդ անունով մը կրտած էր զայն, որովհետեւ իր հանդերձարանին երիցազոյն կտորն էր: «Մաթուսաղէմ»ը ըստ նորագոյն «մոտաճին» ձեւուած էր քառասուն տարի առաջ և

տակէց զառ, անագորոյն տեսակէ կանանչ չուխայէ շինուած էր: Մարսէլ կը հաւատօտէր օակոյն թէ ճըրագի լոյսով սեւի կը զարնէր:

Հինգ վայրկեանի մէջ Մարսէլ հագուած պատրաստ էր: Վրան գլուխը ամենակատարեալ կերպով անճասնի էր, նկարիչի կտոր մը որ շնորհքով տեղ մը այցելութեան կ'երթայ:

Պայտն Բազիլիը Պոնտուս երբեք այնքան չպիտի զարմանար, երբ գային իրեն ըսէին թէ կ՝առնին անգամ ընտրուած էր, որքան զարմացան Ռօտօլֆ և Մարսէլ՝ երբ ներս մտան Միւզէթի տունէն:

Օրիորդ Միւզէթ ատեն մը խզուած էր իր օխրոզին՝ պետական խորհրդակցանին հետ որ զինքը լքած էր շատ գէշ վիճակի մէջ: Տանտիրոջմէն և պարտապահանջներէն հալածուած, իր կարասիները գրաւուած էին անտնց կողմէ և ասոր համար առժամաբար իջեցուցուած էին վարը, ասնը բախին մէջ, միւս օրը ծախուելու համար: Հակառակ այս միջադէպին, Օրիորդ Միւզէթի մաքէն անգամ անցած չէր զրկանք պատճառել իր հրաւիրեալներուն և կամ յետաձգել երեկոյթը:

Վարի բակը լրջօրէն սրահի վերածած էր. գետինը գորգեր փակ տուած և պէտք եղած կերպով շաղկաւած էր չորս դին: Ընդունելութիւնները ընելու համար վայելչօրէն հագուեցաւ և բոլոր անցիկները հրաւիրեց իր պղտիկ հանգէսին, որուն փայլը տւելցնելու համար, Աստուած վրան տուած էր լուսաւորութեան մասը:

Այս խայտառակութիւնը տեսին յաջողութիւն գաւա: Միւզէթի հրաւիրեալները երբեք այդքան զուարճացած և խնդացած չէին:

Առտուն երբ բռնակիրները եկան կարասիները, գորգերը, ճրանարէճները վերցնելու, անտնք գեռ կը պարէին և կ'երգէին:

Պիտի խօսին ընդ երկար, լա, բի, տա, Հինգ շաբթուան սուտրէիս վրայ,



Պիտի խօսին ընդ երկար, լա, բի, տա:  
Մարտէլ և Ռոտուլի մինակ մնացին Միւզէթին  
հետ, որ վեր ելած էր իր յարկարածինը, ուր անկող-  
նէն դատ ուրիշ բան չէր մնացած:

— Ի՞նչ մեղքս պահեմ, ըսաւ Միւզէթ, գլխուս  
եկածը շատ հաճելի բան մը չէ: Եթէ այսպէս երթայ,  
ստիպուած պիտի լլլլամ «Ընդ Աստեղօք» օթելը բնա  
կելու: Ես այդ օթելը կը ձանձնամ, տնօրին ճշու-  
բան տ'էրջներ կ'ունենայ:

— Ա՛խ, պիկին, եթէ Պղտատոսի ձիրքերը ունե-  
նայի, Սեղոմոսի տաճարէն աւելի հոյակապ տաճար  
մը կը նուիրէի ձեզի:

— Պղտատո մը չէք, բարեմամբ, բայց նորէն չը-  
նորհակալ եմ ձեզի ձեր ազնիւ դիտաւորութեան հա-  
մար, և սենեակին չորս կողմը աչք պտըտցնելէ ետք  
աւելցուց. սիրտս կը նեղանար հոս, և յետոյ, կա-  
րասինելը հիշեցած էին. վեց ամսէ ի վեր կը գործա-  
ծէի գանձը: Այո ամէնը մէկ կողմ, սակայն գիտ-  
ցածս, պարտականդէսն ետքը երթալ ընթրելու ենք:

— Ընդ... ունելու ենք, վրայ բերաւ Մարտէլ որ  
բառախաղերու մենագարութիւնը ունէր մանաւա՛նդ  
առաւունքը կայդէ դուրս աւելնով մը:

Ռոտուլի առջի գիշեր խաղողուած «Լանսօքընէ»ի  
մէջ քանի մը ֆրանք վասակած ըլլալուն. Միւզէթը  
և Մարտէլը ճաշի հրաւիրեց «բէսթօրան» մը որ դո-  
սերը դեռ նոր կը բանար:

Նախաճաշէն ետքը, երեք սեղանակիցները, որ  
երթալ պառկելու միտք չունէին, խօսք մէկ բրին  
գիւղ մը երթալու, ամբողջ օրը հոն անցընելու համար:  
Եւ որովհետեւ երկաթուղիի կայարանին մօտիկը կը  
գտնուէին, մեկնելու վրայ եղող առաջին կառախում  
բին մէկ վակոնին վրայ ցառակեցին և իջան Սէն Ժէո-  
մէն: Ամբողջ օրը բացօթեայ պտօյաներ բրին և իրիկ-  
ուան ժամը եօթին վերադարձան Բարիզ, Թէեւ Մար-  
տէլ կը պնդէր թէ կէսօրը տակաւին հազիւ կէս ժամ

անցած էր և եթէ մութը կոխած էր, ասոր պատճա-  
ռը երկինքին ամպամած ըլլալն էր:

Առջի գիշերուան հանդէսն՝ անուղութեան մի-  
ջոցին և ամբողջ հեռեհալ օրը Մարտէլ, որուն  
սիրտը աղբորակէ շինուած ըլլալուն, մէկ ակնարկով  
չուտ մը կը բռնկէր, սիրահարուած էր Օրիորդ Միւ-  
զէթի, ինչպէս ինք կը խոստովանէր Ռոտուլին:  
Նոյնիսկ առաջարկած էր այդ դեղանի աղջկան աւե-  
լի շքեղ հարասիներ նուիրել իրեն «կարմիր ծովու  
անցք»ի վաճառումէն գոյանալիք գումարով: Հետե-  
ւաբար շատ չսխորժեցաւ երբ հարկ եղաւ բաժնուիլ  
Միւզէթէն, որ թէեւ թող կուտար որ ձեռքերը համ-  
բուրէր, սակայն մեղմօրէն դէմ կը կենար ամէն ան-  
գամ որ Մարտէլ իր սրտին մէջ թափանցել կ'ուզէր  
յանդգնօրէն:

Բարիչ հասնելուն՝ Ռոտուլի բաժնուեցաւ ընկեր-  
ներէն և մանկամարդ աղջիկը մինակ թողո՛ւց բարեկա-  
մին հետ որմէ խնդրեց Միւզէթ ընկերանալ իրեն մինս  
չեւ ասնը դուրս:

— Կը ներէ՞ք որ ձեզի այցելեմ, հարցուց Մար-  
տէլ, ձեր կենդանադիրը չինելու համար:

— Հասցէս չեմ կրնար ձեզի տալ, որովհետեւ  
հաւանաբար վաղը հասցէ չպիտի կրնամ ունենալ,  
բայց ես ձեզ կուգամ կը գտնեմ և կը կարկանդակ  
հագուստը, այնու վրայ ծակ մը կայ այնքան սեծ,  
որմէ մարդս կրնայ անցնիլ առանց ծոկելու:

— Մտախային պէս պիտի սպասեմ ձեզի:

— Այնքան երկար սպասցնել չեմ տար, ըսաւ  
Միւզէթ խնդալով:

— Ի՛նչ հիանալի աղջիկ, կ'ըսէր Մարտէլ առնել  
քալելով: Ճնճութեան դիցուհին է ան: Հագուստիօ  
վրայ երկու ծակ պիտի բանամ:

Տակաւին երեսուն քայլ չէր առած, երբ Մարտէլ  
զղաց որ ուսէն կը զարնէին: Միւզէթն էր:



— Իմ սիրելի Պարոն Մարտէլ, կ'ուզէի գիտնալ թէ ֆրանսացի ապսե՞տ էք:

— Եմ, այո՛, «Ռիւպէն է մտածմ» . ահա իմ նըշանաբանս:

— Եթէ այդպէս է, գլխուս եկածը պատմեմ ձեզի և անշուշտ գուք ինծի հանդէպ կարեկից պիտի գտնուիք: Ո՛վ վեհանձն տէր, յարեց Միւզէթ, որ քիչ թէ շատ գրականութենէ շտախմիչ կ'ընէր. թէև ուղղադրութեան գլխուն փորձանքներ կը բերէր: Տանաէրո յարկարածնիս բանալին առեր ասրեր է և գիշերուան ժամը տասնևմէկն է, անշուշտ կը հասկընաք:

— Պէտք եղածէն աւելի, պատասխանեց Մարտէլ և թեւը առնելով Միւզէթը գոյն անաղնորդեց իր տշխատանոցը, ծաղկավաճառներու քարափին վրայ:

Միւզէթի աչքերէն քունը կը վազէր, բայց բաւական այժ ունեցաւ Մարտէլի ձեռքը սեղմելով անոր հարցնելու.

— Ձեր խոտուսը պիտի բռնէք, չէ՞:

— Ո՛վ Միւզէթ, սքանչելի աղջիկ, բաւ արթիւթը՝ քիչ մը յուզուած ձայնով, հիւրասէր տանիքի մը տակ կը գտնուիք, հանգիստ քնացէք, գիշեր բարի, ես կ'երթամ:

— Ինչո՛ւ, բաւ Միւզէթ, աչքերը գրեթէ գոց. ես բնաւ չեմ վախնար, հաւատացէք, և յետոյ հոս երկու սենեակ կայ, ես ձերնաբէձին վրայ կ'երսկընամ:

— «Քանաբէձ» շատ կարծք է և կարելի չէ վրոնքնանալ: Ես տանս մէջ կը հիւրընկալեմ զքեզ և միս եւնայն բանը կ'երթամ ինծի հարար հայցելու բարեկամէ մը, որ այս միեւնոյն յարկի՞ վրայ կը բնակի: Այսպէս խոհեմութեամբ շարժած կ'ըլլանք: Թէև սոս վարաբար խօսքիս օտէն եմ, սոմայն ի՛նչ կ'ըլլայ:

ի՛նչ չըլլ ր... , չմոռնանք որ ես քսան տարու եմ և գուք՝ տասնևութը: Ո՛վ Միւզէթ, ահա ես կ'երթամ, գիշեր բարի:

Հետեւեալ առաւուն, ժամը ութին, Մարտէլ տուն եկաւ, չուկայէն գնուած ծաղկի թաղար մը ձեռքին մէջ:

Միւզէթ առանց հանուելու նետուած էր ձրանաբէձին վրայ և ապակին կը քնանար: Անոր յարուցած աղմուկէն արթնցաւ և ձեռքը երկնցուց Մարտէլին:

— Աղնու տօի՛րա տղայ, ըսաւ անոր:

— Աղնու տօի՛րա աղայ՝ . . . կրկնեց Մարտէլ, ծաղրելիին բոմանիչը չէ՞ արդեօք այդ բացագանչութիւնը:

— Ո՛հ, բաւ Միւզէթ, ինչո՛ւ այդպէս կ'ըսէք, չի՛ վայելը ձեզի, և փոխանակ առանկ չար բաներ ըսելու, աւելի լաւ է որ այդ թաղարը ինծի նուիրէք:

— Ես ալ ճիշդ ձեզի համար բերի տօիկա: Առէ՛ք և իմ հիւրընկալութեանս փոխարէն ձեր գեղեցիկ խաղերէն հատ մը երգեցէք ինծի. մանսարաիս արձագանգը թերեւս բան մը պահէ ձեր ձայնէն, որով ձեր մեռնելէն ետքը՝ կարենամ ձեզ լսել:

— Ադ ի՛նչ ըսել է, ուրեմն զիս կը վաճառէք, բայց եթէ երթալ չուզեմ ես, ինծի նայեցէք, Մարտէլ, ես բռնիքս բացէ ի բաց ըսող աղջիկ մըն եմ: Արդ, դուք ինծի շատ հաճելի էք և կարծեմ ես ալ ձեզի, թերեւս բոլորովին սէր չըլլայ տօիկա, բայց կրնայ ըլլալ անոր հունար: Ահա, փոխանակ երթալու կը մնամ և հոս պիտի կենամ միեւնոյն որ ձեր բնութեմ ծաղիկները թոռմին:

— Ադ չեղաւ, առանք երկու օրէն կը խամրին, մեղք եթէ առաջուց գիտնայի, անմեռուկներ կը բերէի հետա:

Տասնևհինգ օրէ ի վեր Միւզէթ և Մարտէլ միա



օին կը բնակէին. թէեւ առանց ստակի կը մնային օտէպ, սակայն նորէն ճամբան գտած էին աշխարհ- ըիս լաւագոյն կեանքը վարելու:

Միւզէթ արթնաթիւն համար անանկ խանդաղա- ասնք մը կը զգար որ բնաւ չէր նմաներ սուկէ առաջ իր ունեցած սիրահացութիւններուն, և Մարտէլ իր կողմէն կը վախնար որ լրջօրէն չսիրահարուի իր հօ- մանուհւոյն: Առանց գիտնալու որ ան ալ իր մասին կը վախնար բուն կերպով բռնուելէ, ամէն առտու կը նայէր որ ի՛նչ վիճակի մէջ կը գտնուէին ծաղիկները, որոնց խամրիւր վերջ պիտի գնէր կենակցութեան, և դժուարաւ կը բացատրէր թէ ի՛նչպէս կ'ըլլար որ ա- նոնք Աստուծոյ օրը աւելի թարմ կ'երեւային:

Շատ չանցած, այդ դաղանիքին բանալին ձեռք անցուց, Գիշեր մը, քունէն արթննալուն տեսաւ որ Միւզէթ քովը չէր. շուտ մը վար ցառակեց անկողնէն և այժ արթնացուց սենեակին չորս կողմը, և նշմարեց Միւզէթը, որ ամէն գիշեր իր քունը ըլլալէն օգտուե- լով, կ'երթար կը ջրէր թաղարին ծաղիկները, արգի- լելու համար անոնց չորնալը:

Մարտի 19 էր... Նոյնիօկ եթէ հասնի Գ. Ռոսուլ Ռօյէթի յառաջացեալ տարիքին, որ Նինուէ քաղաքին հիմնարկութիւնը տեսած է, Ռոսուլի այդ թուականը երբեք պիտի չմոռնայ, որովհետեւ ճիշդ այդ Սուրբ Յովսէփի տօնի օրն էր որ. կէօօրէն ետքը ժամը ե- րեքին սեր բարեկամը դուրս կ'ելլէր պանքայէ մը, ուրկէ հինգ հարիւր ֆրանքի հնչուն գումար մը գտն- ձած էր:

Բերուի շերտ մըն էր այդ ստակը, որ գրպանին սէջ կ'իյնար և զոր ամէն բանէ առաջ յատկացուց... պարաքերը վճարելու. ինքզինքին ուխտած էր խնտ- յողութեան ճամբան բռնել և խենդ ու խելառ բանե- րու գրամ չծախել, Հաստա օրոյում տուած էր այդ

մասին և կ'ըսէր թէ աւելորդ բաներէ առաջ պէտք էր մտածել պիտանի բաներու վրայ. ահա ինչո՛ւ իր առ- նելիքը օրներուն կուտ մը չտուաւ, և գնաց ծախու առաւ փող մը, որուն ախար կը քաշէր:

Երեսօրը գրպանին մէջ, շիտակ գնաց Մարտէլի բնակարանը, ուր տեսնէ իվեր կըծիւրընկալուէր: Ար- ուեստագէտին աշխատանոցը մտած պահուն, Ռոսուլ- ֆի գրպանները այն հնչիւնը կը հանէին, ինչ որ կը հանէ գիւղին զանգակառունք տօնական օրերուն: Այս անսովոր ազմուկը իմանալուն պէս, Մարտէլ կարծե- լով թէ սակարանի գործեր ընող իր մէկ դրացին էր, որ արժէթուղիներէ շահած դրամը կը համբէր, ըսաւ.

— Նորէն սա քովի չտեսը ըլլալու է, որ իր շա- րականը կը կարդայ: Եթէ գիտնամ թէ աս ասանկ պիտի տեսէ, խաչօր, տունէն հանել կուտամ, ասանկ ճբաթըրաքի չաշխատուի. մարդուս վրայ «հավէտ» կուգայ կօր արուեստագէտի այս վիճակը մէկ կողմ գնել և լեօը ելլել Չաքըրճալըին պէս:

Եւ առանց մտքէն անցընելու թէ իր Ռոսուլի բաջ րեկամն էր Կրեսոսի կերպարանափոխուած, գրեթէ երեք տարիներէ ի վեր պատկերակալին վրայ գըռ- նուսդ «Կարմիր ծօվու անցք»ին դէմը անցաւ աշխա- տելու:

Ռոսուլի, որ տակաւին ձայն չէր հանած, խաղ մը կը պատրաստէր մտքովը և կ'ըսէր ինքնսովին.

— Բաւական պիտի խնդանք: Ի՛նչ «Թօհաֆ» պի- տի ըլլայ, կայնէ նայինք, և հինգ ֆրանքնոց մը նե- տեց գետին:

Մարտէլ վեր առաւ այժերը և նայեցաւ Ռոսուլ- ֆին, որ «Ռըվիւ տէ աէօ յօնա»ի մէկ յօդուածին պէս լուրջ կերպարանք մը առած էր:

Գոհունակ շարժումով մը գետնէն վերցուց հինգ ֆրանքնոցը և շնորհալի ընդհանրութիւն մը ըրաւ անոր. թէեւ ինքը նկարիչի մը կտոր, սակայն և այն-



պէս գիտէր քաղաքավար ըլլալ օտարներուն հանդէպ։  
Որովհետեւ գիտէր թէ Ռօտօլֆ ստակ գտնելու համար  
դուրս ելած էր, այլեւս աւելորդ համարեց հարցնել  
թէ ի՞նչ միջոցներով այդ դրամը ձեռք անցուցած էր  
այլ դո՛ւտացաւ հիշնալով բարեկամին ճարպիկութեան  
արդիւնքին վրայ։

Առանց բառ մը արտասանելու շարունակեց իր  
աշխատութիւնը և կարմիր Մովու արիւնքներուն մէջ  
լաւ մը խեղդեց եգիպտացի մը։ Այս մարդասպանու-  
թիւնը գործած պահուն, Ռօտօլֆ երկրորդ հինգ Փը-  
րանքնոց մըն ալ վար ձգեց և աչքը անկած նկարչին  
շինելիք ասուրաթնին վրայ, սկսաւ խնդալ մօրուքին  
տակէն, որ եռագոյն էր, ինչպէս ամէն մարդ գիտէ։

Մեծադիրն հանած պերճահնչիւն ազմուկին վրայ,  
եյթքրական հոսանքէ մը մղուածի պէս Մարսէլ ոռ-  
քի ելաւ և գոչեց.

— Այս երգին երկրորդ տունն ալ կայ եղբր։

Երրորդ հինգ Փրանքնոց մըն ալ գետին ին  
կաւ, յետոյ օւրիչ մըն ալ, հաս մը եւս վերջապէս  
սենեակին մէջ պիպիշները սկօան ճքաթրիլ՝ մը  
պօրել խօլական։

Մարսէլ սկսաւ մտային խանգարման նշաններ  
ցոյց տալ, սինչ Ռօտօլֆ կը խնդար «Թէպէր Փրան-  
օէ»ի գետնաթրակին պէս՝ «Ժան ար Ֆլանտո»ի ներ-  
կայացման տաղին գիշերը։

Մէկէն ի մէկ, քառանց չորս կողմը նայելու Ռօ-  
տօլֆ ձեռքերը գրպաններուն մէջ խօթեց և ահա զը-  
րանները կարկուտի պէս գետին թափեցան։ Չակո-  
լուտի յորդում մըն էր այս և Արամազդի շուտամոնք  
մը Դոնայէի շեմին առջև։

Մարսէլ անշարժ, պապանձած, և աչքերը դուրս  
ինկած, վրան անանկ հետաքրքրութեան նսպայ մը  
եկած էր, սրուն զոհ գացած է երբեմն զովոր կինը և  
երբ Ռօտօլֆ զրօին նետեց հարիւր Փրանքնոցի

վերջին դէպը, արթիսթին մէկ կորմը արդէն ազ  
կարած էր։

Ռօտօլֆ դէմը կայնած, շարունակ կը խնդար. իր  
այս հազնադորդ խնդուքին հանած ազմուկին քով  
Պարոն Սաքսի երաժշտախումբին արձակած չոխնդը  
ձծկեր մանկան մը շնորհաներուն պիտի նմանէր։

Շլացած, ապշահար և զարմացկոտ, Մարսէլ կար-  
ծեց թէ տեսածը երազ մըն էր, և զինքը չարչրկող այս  
մղձաւանջը վտնելու համար, արիւն հանելու աստիճան  
մտաք խածաւ, ինչ որ անանկ ցաւ մը պատճառեց որ  
սուր ճիչ մը արձակել տուաւ իրեն։

Այդ փորձին վրայ հասկցաւ թէ կատարելապէս  
արթուն էր և երբ տեսաւ որ ոսկիներու վրայ կը  
կօխկրէր, ողբերգութիւններու մէջ օտոբական եղօզ  
շեշտով մը բացագանչեց.

— Աչքերուս հաւատամ՝ արգեօք։

Եւ Ռօտօլֆին ձեռքերը ձեռքերուն մէջ ամենելով  
աւելցուց.

— Այս գողտնիքին մեկնութիւնը կը պահանջեմ  
քեռէ։

— Եթէ մեկնութիւն մը տամ, արիւս գաղտնիք  
մը ըլլալէ կը դադրի։

— Բացաբէ՛ կ'ըսեմ։

— Այս ոսկիները քրտանցօ պտուղներն են. պո  
տասխանեց Ռօտօլֆին, գետնէն ստակները ժողվելով  
սեղանի մը վրայ շարեց, և յետոյ քանի մը քայլ ետ  
քաշուելով, յարգանքով զիանց իրարու վրայ զիղուած  
հինգ հարիւր Փրանքները և մտածեց ներքնովի.

— Ասկէ ետքն է որ երազներս պիտի կրնամ  
իրականացնել։

— Վեց հազար Փրանք մը կայ սըտեղ, մտածեց  
Մարսէլ, և աչքերը անկած սեղանին վրայ շարուած  
ոսկիներուն, օտ կարմիր Մովու Անցը» Ռօտօլֆին  
եթէ ծախեմ, ինտո՞ր կ'ըլլայ, ըսաւ։



Ռոտուլֆ յանկարծ թափերովայել կեցուած քով մը  
և հանդիսակա՛ն բան մը գնելով իր շորժուածքին և  
խօսքին մէջ .

— Ինձի նայէ, Մարսէլ, ըսաւ արուեստագէտին, «  
չկարծես որ այս հարստութիւնը արդիւնքն է անարդ  
և ամօթալի շահատակութիւններու. գրիչս ի զուր չը  
գործածեցի, պատուաւոր կերպով հարօտացայ, Վե-  
հանձն ձեռք մը այս ստակը ինձի տուաւ և ես ութ-  
տեղի գայն գործածել՝ աշխատութիւնով ես ինձի բո-  
տեղծելու համար առաքինի մարդու վայել լուրջ դէմք  
մը, Աշխատութիւնը ամէնէն սուրբ պարտականու-  
թիւնն է մարդուս...»

— Եւ ձին՝ կենդանիներուն ամէնէն ազնիւը, ը-  
սաւ Մարսէլ՝ Ռոտուլֆին խօսքը ընդհատելով. բայց  
ըսէ տեսնեմ, աւելցուց, ի՞նչ նշանակութիւն ունի  
այդ ձառը և ուրկէ՞ կը քաղես այդ արձակը. ան  
պատճառ ողջմտութեան դպրոցին քարահանքերէն ըլ-  
լալու է :

— Մի ընդմիջեր զիս և սէկ կողմ զիր քաշքշուք-  
ներդ որ պիտի բաղխին կամքի դիմացկուն գրահի  
մը, զօր սակէ ետքը պիտի զգենում :

— Երկայն ըրիր, այդչափ յառաջաբան կ'օգտէ :  
Միտքդ ի՞նչ է, ան զրուցէ :

— Աւասիկ թէ որո՞նք են ծրագիրներս, կեանքի  
նիւթական հնկուքներէ զերծ, ասկէ ետքը լրջօրէն  
աշխատելու պիտի նուիրեմ ինքզինքս. սա ձեռքի  
գիրքս պիտի աւարտեմ և հանրային կարծիքին մէջ  
բացէ բաց տեղ մը պիտի գրաւեմ : Ամէն բանէ առաջ  
կը հրատարիմ Պօհէ՛ի կեանքէն : Եէնք չնորհք պիտի  
հագուիմ, «Ֆրաք» մը պիտի ունենամ և մարդու մէջ  
պիտի ելլեմ : Եթէ օրինակիս հետեւիլ ուզես, կը շա-  
րունակենք միասին բնակիլ, բայց պէտք է որ յայ-  
տագիրս ընդունիս : Վերջին ծայր խնայողութիւն մը

— Ամա՛ ըրիր, ս՛ուրկէց ուր հոգ եկեր է :

— Աւելին կոյ :

— Վճարուած ըլլալն ալ ստորագրուած է, աս-  
ւելցուց Մարսէլ. ըսել է ասն օիրով ստակը գու՛ն  
տուեր ես :

— Ե՛ս, ադ էր պակաս, ըսաւ Ռոտուլֆ :

— Ինչո՞ր կ'ըլլայ սակայն :

«Աս ի՛նչ գողանիք է» երգեցին երկուքը մէկ բե-  
րան «Տամ Պլանչ»ի եղանակին վրայ :

Պաթիթ, որ երաժշտութենէ շատ կ'ախորժէր,  
նեքս եկաւ :

Մարսէլ ստացողիբը ցօյց տուաւ անոր :

— Այո՛, ըսաւ Պաթիթ անհոգ կերպով, մօռցայ  
ձեղի բօելու օր այո տառաւ ձեր հօս չեղած տանը,  
տանտէրը եկաւ : Ես ալ ստակը տուի, օրպէսզի ան-  
գամ մըն ալ գալու ձանձրոյթը չառնէ :

— Ստակը ս՛ուրկէց դասար :

— Ո՛հ, Պարոն, պտտասխանեց Պաթիթ. բաց  
ձգուած միջօցին մէջէն առի. Ինձի անանկ եկաւ որ  
հրոմանքնիդ յատկապէս բաց ձգած էիք այդ նպա-  
տակով և ինքնիրենս ըսի. «Կ'երեւայ թէ աղաներս  
գուրս ելած տեսնին մօռցան ինձի ըսելու. Պա-  
թի՛թ, տանտէրը պիտի գայ վարձքը ուղելու հա-  
մար, ստակը տուր երթայ» : Եւ իբրթէ անանկ հրա-  
մայուած ըլլար ինձի, պէտք եղածը ըրի տառնց հը-  
րամանի :

— Պաթի՛թ, ըսաւ Մարսէլ բարկութենէն կրակ  
կորած, մեր հրամանին չսպասած ինքի գլխուդ բա-  
ներ կ'ընես կօր. այսօրուրնէ սկսեալ հօս գործ չու-  
նիս, սո՛՛ «բրօսթէլա»դ հանէ վրայէդ նայիմ :

Պաթիթ մոմլաթէ ճքաօքէթ»ը, զօր իրեն օք-  
ւած էին, հանեց գլխէն և Մարսէլին երկնցուց :

— Աղէկ, օղէկ, հասկցանք, ա՛լ հիմա կրնաս  
երթալ :



պիտի տիրէ մեր ապրելակերպին մէջ: Եթէ ինքզինք-  
նիս ժողովելու ըլլանք, երեք ամսուան աշխատութիւն  
մը կրնանք ապահովել առանց սիրտ սաշուքի. բայց  
խնայողութիւնը ձեռքէ ձգելու չենք:

— Բարեկամ, ըսաւ Մարտէլ, խնայողութիւնը  
հարուստ մարդոց գիտութիւն մըն է, ինչ որ կը նշ-  
շանակէ թէ ո՛չ դուն ե ո՛չ ալ ես անոր ամբողջական  
սկզբունքները անգամ չենք գիտեր, բայց եթէ վեց  
ֆրանք աչքէ հանենք, կրնանք ծախու առնել Պարոն  
Ժան-Պաթիսթ Սէի գործերը: Պարոն Սէ նշանաւոր  
անտեսաբան մըն է, որ կրնայ մեզի օտրվեցնել այդ  
արուեստին կիրառութեան եղանակը: Ադ ի՞նչ է ձեռ-  
քիւղ, նոր ծխափող մը առեր ես հէ՞...:

— Այո՛, քսանեկինգ ֆրանքի առի:

— Ադ եղա՞ւ հիմա, ծխափողի մը համար քսան և  
հինգ ֆրանք կը վաճենս և խնայողութեան խօսքեր  
կ'ընես ինձի:

— Աս ալ խնայողութիւն մըն է: Ամէն օր քառս  
սուն փարանոց ծխափող մը կը կոտրէի, ամբողջսուն  
այդ հաշիւը հիմակուան ծախսածէս աւելի խօշոր գու-  
սար մը կը ներկայացնէր, հետեւաբար ըրածս իրու-  
ցընէ խնայողութիւն մըն է:

— Իրաւ ալ այդպէս է, իրաւունք ունիս, ատի-  
կա իմ քովս չի կար:

Այդ պահուն գրացիի մը ժամացոյցը վեց զար-  
կու:

— Շուտ մը երթանք ճաշենք, ըսաւ Ռոսօլֆ,  
այս գիշերուընէ պիտի սկսիմ. կը նայիմ որ ամէն օր  
առնը կերակուր եփելու համար տնային ժամանակ  
կը կորսնցնենք, բայց եկուր տես որ աշխատող մար-  
դուն համար ժամանակը հարստութիւն մըն է. հե-  
տեւաբար ատար մէջը պէտք է խնայողութիւն մտցը-  
նենք: Այսօրուընէ սկսեալ կերակուրնիս դուրսը պի-  
տի ուտենք:

— Անանկ է, յարեց Մարտէլ, մեր առնէն քսան  
քայլ անդին պատուական ճաշարան մը կայ, թէեւ  
քիչ մը սուղ է, բայց մեզի մօտիկ ըլլալուն, երթալ  
գալն կը վտանակինք, այսպէս ժամանակի կորուստ  
չենք ունենար:

— Այսօր հող երթանք, բայց վաղը կամ միւս օր  
աւելի խնայողական ձեւ մը գտնելու համար փոխա-  
նակ ճաշարանի մէջ ուտելու, խօհարարունէի մը կը  
բանենք:

— Չէ, չէ, ընդմիջեց Մարտէլ, աւելի լու կ'ըլ-  
լայ որ մանչ մը գտնենք որ միեւնոյն տան մեր կե-  
րակուրն ալ եփէ: Նայէ ի՞նչ առուելութիւններ ունի  
ասիկա, նախ և առաջ առնին գործերը ընել կու-  
տանք, կոշիկնիս կը մաքրէ, մեր վրձինները լու մը  
լուալ կուտանք իրեն, հաս հոն կը զրկենք: Պիտի ջա-  
նամ գեղարուեստի ճաշակը արթնցնել իր մէջը, և  
եօքէն իբրև օգնական նկարիչ կրնայ ծառայել ինձի:  
Այս եղանակով երկուքնուս համար օրական վեց ժամ  
խնայողութիւն մը կ'ըլլայ: Տունին հոգերը մեր վրա-  
յէն կը նստենք, ինչ որ մեր աշխատութեան արդելը  
կ'ըլլար:

— Մտքէս ուրիշ բան մը կ'անցնի, բայց կայնէ,  
երթանք մէյ մը ճաշենք:

Հինգ վայրկեան եօքը, երկու բարեկամները, մօ-  
տակայ ճաշարանին մէկ մասնաւոր սենեակին մէջ  
տեղաւորուած կը շարունակեն խնայողութեան վրայ  
խօսուընալ:

— Նայէ իմ գողօփարս ի՞նչ է. փոխանակապատուար  
մը բանելու, առնին մէջ «մէթրէս» մը պահենք ին-  
տըր կ'ըլլայ, հարցուց Ռոսօլֆ:

— Երկու հոգիի մէկ կի՞ն, ընդմիջեց Մարտէլ  
օտսկումէկ, ատիկա կծծիութիւնը չափյութեան հաս-  
ցընել պիտի ըլլար, և մեր ըրած խնայողութիւնը



դանակներ առնելու պիտի գործածէինք զիրար մարթելու համար: Նորէն մանչը աղէկ է, առանկով մարդու ճորրա՞ կ'անցնինք:

— Թող առանկ ըլլայ, ըսաւ Ռոտօլֆ. աչքը բաց մէկը գտնենք, և եթէ քիչ յոտ ուղղագրութենէ ճիշտօրէն ընենայ, խմբագրելու արուեստն ալ կը սօսօկեցնեմ իրեն:

— Այդ կերպով իր ծերութեան օրերուն ապաւեն մը պատրաստած կ'ըլլայ, ըսաւ Մարտէլ, կերածնուն հաշիւը աչքէ անցընելով, որուն գումարը տասնևհինգ ֆրանքի կը բարձրանար: Աս չեղաւ. քիչ մը ճիշտ է: Մենք մինչև հիմա երկուքնիս օրը մէկ ալ կէօ ֆրանքով փորերնիս կը կշտացնէինք:

— Այո՛, յարեց Ռոտօլֆ, բայց նախ շատ դէշ կերպով կը կերակրուէինք, և չեայ հօրկ կ'ըլլար որ կէօ գիշերէն ետքը ձգուբէ՞ ընէինք: Այդ հաշիւով հիմակուն ըրածնիս խնայողութիւն է:

— Հաւատա որ դուն ճշտօրէն մարդ ես, մըրմնչեց արթիւթը՝ բարեկամին արամարանութենէն յաղթուած, գուն ժիշտ իրուունք ունիս: Է՛յ, ի՞նչ կ'ըսես, այս գիշեր պիտի ախառախնք:

— Միտք չունիմ, երթամ անգամ մը մօրեղբայրը տեսնեմ, պատուական մարդուկը, որուն երթամ նոր վիճակս հասկցնեմ: Անիկա բարի խրատներ կըրնայ տալ ինծի: Դուն ի՞նչ ընելու միտք ունիս, Մարտէլ:

— Ես ալ սա խոփած Մէթիսիսին անգամ մը երթամ հանդիպիմ. թերեւս նորոգել տալիք պատկերներ ունենայ: Աղէկ միտքս եկաւ, օրտեղէն հինգ ֆրանք տուր ինծի:

— Ի՞նչ պիտի բնես:

— Բօն տէ գ'Արէն անցնելու համար:

— Ատիկա աւելորդ ծախք մըն է, թէեւ աննչան,

եթէ կ'ուզես, բայց մեր սկզբունքն շեղիլ կուտայ — Իրաւունք ունիս, Բօն Նէօֆէն կ'անցնիմ, չըլլայ նէ կառք մը կը բռնեմ:

Եւ երկու բարեկամները իրարմէ բաժնուեցան, երկուքն ալ տարբեր կողմեր ուղղուելով, և ետքէն զարմանալի դիպուածով մը առաջնորդուեցան միևնոյն տեղը, ուր գտան զիրար:

— Ըսել է մօրեղբայրդ տունը չէ՛ր, հօրեղբ Մարտէլ:

— Դուն ալ կ'երեւայ օր Մէթիսիսը չտեսար, ըսաւ Ռոտօլֆ:

Եւ երկուքն ալ խնդալէ ճաթեցան: Այրու ամենայնիւ երկուքն ալ կանուխ տուն եկան... հետեւեալ առտուն:

Երկու օր ետքը, Ռոտօլֆ և Մարտէլ կատարելապէս կերպարանափոխուած էին: Երկուքն ալ նոր փեսայի պէս կը ճըռճէին հագուած, անանկ աղուորցած, անանկ ճիւղաբացած, անանկ շնորհքովցած էին օր դժուարաւ ճանչցան զիրար երբ իրարու հանդիպեցան փողօցը:

Իրենց խնայողութեան սխալէմը տեղն էր, բայց ախառութեան եղանակնին տակաւին չէր կողմակերպուած:

Ապաստուօր սր բռնած էին, երեսունչորս տարու Զուցերեացի ճիւճաման՝ աղայ մը օր ժօքրիսի չափ խելք ունէր:

Մտառութեան համար ծնած չբլլալուն, երբ իր աղաներէն մէկը աչքի զարնօղ ծրար մը կը յանձնէր իրեն այս ինչ տեղը տանելու համար, Պաթիսթ՝ զայրոյթէն կը կարմրէր, և փոխանակ ինք անձամբ տանելու, ուրիշի մը ձեռքով ծրարը կը զրկէր:

Աղէկ կողմեր ալ ունէր Պաթիսթ. օրինակի համար երբ տէրերը ճազար մը կուտային ձեռքը, անմիջապէս «եհնի» մը մէջտեղ կը հանէր:



Ասկէց զառ. անոնց քով ծառայութեան մանելէ  
առաջ թորանոցի մը մէջ աշխատած ըլլալուն, իր ար-  
հեստին համար տեսալին սէր մը կը օնուցանէր և իր  
աէրերուն յառկացուած ժամերուն սեծագոյն մտօր  
կը գ զնար՝ գիւար ընելու համար առաջնակարգ վի-  
րադեղի մը, որ իր անունը պիտի կրէր: Նոյնպէս  
առ յաջող էր ընկուզի կեղեւ ձեծելու մէջ: Բայց  
Պաթիւթ մրցակցութենէ չէր վախնար Մարտէլի  
սիկառաները ծխելու մէջ, զորս կը վառէր Ռոօօլֆի  
ձեռագիրներով:

Օրին մէկը Մարտէլ ուզեց նկարել զինքը փարա-  
ւանի հագուստով իր Վարմիր ծովու անցքային հա-  
մար: Այս առաջարկութիւնը մերժեց կոպիտ պա-  
ռասխաններով և պ հանջեց որ իր հաշիւը մաքրեն:

— Շատ աղէկ, բաւ Մարտէլ, այս իրիկուն հա-  
շիւդ կը մաքրենք:

Երբ իրիկունը Ռոօօլֆ ասուն եկաւ, Մարտէլ յայ-  
տարարեց թէ Պաթիւթը ճամբելու էին, որովհետեւ  
բանի մը չէր ծառայեր:

— Շատ իրաւացի ես, անիկա կենդանի գեղոր  
մըն է:

- Էլուն կտորին մէկը:
- Մոյլ ալ է:
- Ճամբելու է:
- Ճամբենք:
- Թէեւ աղէկ յառկութիւններ ալ օւնի. ճեպի-  
նիսն աղէկ կ'եփէ:

— Ընկուզի կեղեւ ձեծելուն ալ ըսելիք չի կայ,  
ընկուզի կեղեւ ձեծելու մէջ Ռափայէլ մըն է:

— Այո՛, բայց աղէկ զառ ի՞նչ բանի օրուա ու-  
նի: Իրեն հետ վիճարանելով մեր ամբողջ ժամանակը  
կը կորսնցնենք:

- Մեր աշխատութեան արգելք կ'ըլլայ:
- Պատճառ կ'ըլլայ որ Վարմիր ծովու անցքը

չկնամ հաօցնել այս ասուածն Վարունին: Փարաւանի  
դերը չուզեց օտանձնել:

— Իր երեօէն չկրցայ աւարտել ինծի ապօզր-  
ուած գիրքը, օրովհետեւ չուզեց Մատենագարանը  
երթալ պէտք անեցած նօթերօ բերելու համար:

- Մեզի կը շնորհ:
- Ըսելիք չի կայ. ո՛ր չենք կրնար վար դնել:
- Ճամբենք երթայ, բայց պէտք է ասնելիքը  
գնենք:

- Ստակը կուտանք, բայց թող առէք ըլլայ:
- Սրտեղէն քիչ մը ստակ ասուր որ աղուն հա-  
շիւը տեսնես:

- Սառի մի, բայց ճշտեցանք թու ձեռքդ է:
- Ո՛վ ըստու, ընդհակառակը թու քովդ է. սա-  
տակարարութիւնը գուն վրագ ասած էիր:

— Բայց կը հաւատացնեմ զքեզ թէ զօվս մէկ  
փարա չմտց. բացադանչեց Մարտէլ:

— Ի՞նչ, լմնցա՞ւ: Անկարելի է, ութ օրուան սէջ  
հինգ հարիւր ֆրանք չուտուիր, երբ մանաւանդ մեր  
ըրածին պէս մարդօ ատանկ բացարձակ խնայողու-  
թեա՛ր կ'ապրի, և որ անհրաժեշտ պէտքէն անդին  
չանցնիր: (Անհրաժեշտ աւելորդէն պէտք էր օր ըտէր)  
Եկուր մէյ մը սա հաշիւները աչքէ անցընենք, թե-  
րեւս օխալ կը գործենք:

— Սխալը՝ թերեւս, բայց օտակը ո՛չ, վրայ բե-  
րու Մարտէլ: Ինչ և իցէ, ծախուց տեարակը քրն-  
նենք նայինք:

Աւտօիկ նմոյշ մը այն ամարտակալութենէն որ  
սկսու ծ էր ընդ հովանեաւ Սրբոյն Խնայողութեան:

- Մարտ 19ին. մուտք՝ 500 ֆրանք: Ելք՝ ծը-  
խափող 4ր 25 ֆրանք. ճայ՝ 15 ֆրանք. այլ և այց  
ծախքեր 40 ֆրանք:
- Այդ այլապէս ի՞նչ տեսակ ծախքեր են, հար-



ցուց Ռոստոլֆ Մարտէլին, որ հաշիւները հասիկ հասիկ կը կարգար:

— Միտքդ չէ՞, այդ ծախքերը այն գիշերը ըրինք որուն յաջորդ առտուն միայն ասուն կրցանք գալ: Թէեւ ասանկ ընկերվ մոմի և փայտի խնայողութիւն մը ըրած եղանք:

— Ետքը՞, շարունակէ՛:

Մարտ 20. նախաճաշ 1 ֆրանք 50 սանթիմ, ծրխախոտ՝ 20 սանթիմ, ճաշ՝ 2 ֆրանք, ակնոց մը՝ 2 սակէօ ֆրանք. գիտե՞՞, այդ ակնոցը քու հաշուոյդ ասունեցաւ: Ի՞նչ պէտք ունէիր ակնոցի, քանի որ աչքերդ աղէկ կը տեսնեն:

— Աղէկ գիտես որ «Սալօն»ին նկարագրութիւնը պիտի ընէի «Լ'Էշարբ Թ'Իրիս»ին մէջ, և կարելի չէ նկարահանդէտի մը քննադատութիւնը ընել առանց ակնոցի. հետեւաբար եղածը օրինակօր ծախք սըն է: Ետքը՞:

— Կնիւնէ գաւազան սը:

— Աս ալ քու հաշուոյդ է, թէեւ գաւազանի պէտք չունէիր:

— Աստնցմէ դատ ուրիշ ծախք չենք ունեցեր 20ին ըսաւ Մարտէլ, առանց Ռոստոլֆի դիտողութեան պատասխան առլու: 21ին դուրսը կերակուր կերեր ենք ցերեկ և գիշեր:

— Այդ օրը շատ սառկ խարճած ըլլալու չենք:

— Իրաւ ալ ասանկ եղեր է... հազիւ երեսուն ֆրանք:

— Բայց այդքան սառկ ո՞ւր ենք տուեր:

— Ես ալ չեմ գիտեր, բայց ամէն ասորգայի մէջ այլ և այլ ծախքերու վերնագրին սակ անցուցեր ենք:

— Տարածմ' և գրուժան վերնագիր մը...:

— 22ին՝ Պաթիսթին եկած օրը հինգ ֆրանք արուեր ենք իրեն աւ հաշիւ ամսականին, 4էս ֆրանք ալ

փողոցի երգեհոնիկին: Երկու ֆրանք 40 սանթիմ արուեր ենք իրեւ փրկանք՝ ազատելու համար չորս չինացի ազաքներ որ դատապարտուած են եղեր Գեօրն մէջ նետուելու՝ բարբորոս ծնողքներու կողմէ:

— Ատիկա եղա՞ւ, եկուր բացատրէ նայինք այն հակասութիւնը, որ այդ յողուածին մէջ աչքի կը դարնէ: Մէկ կողմէն սառկ կուտաս փողոցի երգիոնիկին (օրկ ար պարպարի) և միւս կողմէն կ'անպատուես «պարպար» ծնողքները: Եւ յետոյ ի՞նչ պէտք կար փրկանք առլու փաքրիկ Չինացիներու:

— Վեհանն ծնած եմ, ձեռք չէ: Բայց դուն շարունակէ տեսնե՞ք. մինչև հաս կը տեսնեմ թէ խնայողութեան օկզբունքներէն շատ չենք հեռացեր:

— 23ին բան չենք գրած, 24ին ալ նայնպէս: Ա՛ն քեզի երկու «պիչիմլի» օրեր: 25ին Պաթիսթի ամսականին աւ հաշիւ 3 ֆրանք:

— Ինծի կազայ որ ստէպ սառկ կուտանք կոր Պաթիսթին, ըսաւ Մարտէլ ստածկս չեշտով մը:

— Պարտքերնիս ալ նուազ կ'ըլլայ, պատասխանեց Ռոստոլֆ: Շարունակէ՛:

— Մարտ 26ին, այլ և այլ և պիտանի ծախքեր արուեստի տեսակէտով՝ 36 ֆրանք 40 սանթիմ:

— Այդքան օգտակար ի՞նչ բան կրնանք ծախուսած ըլլալ, ըսաւ Ռոստոլֆ, իմ միտքս բնաւ չի գոր... 36 ֆրանք 40 սանթիմ... ի՞նչ է արդեօք այդ ծախքը:

— Ինտօ՛ր, յոսցօ՛ր: Այն օրն էր որ Նօթր Ծածի աշտարակներուն վրայ ելանք Բարիզը թռչունի աչքով վերէն տեսնելու համար:

— Իմ գիտածս՝ աշտարակներուն վերելքը ութ սու է:

— Այո՛, բայց վար իջածնուս պէս Սէն-ժէւմէն գոցինք կերակուր ուտելու:



— Ինծի կուգայ որ այդ հաշուին խմբագրուած թիւնը յօտակութեան օրինաց դէժ քիչ մը կը մեզ զանչէ:

— 27ին բան մը չենք գրեր:

— Ահա քեզի խնայողութիւն մը:

— 28ին Պաթիսթի բժշականին առ հաշիւ 6 ֆրանկ:

— Ա՛լ չափը անցաւ, ապահով եմ որ այլևս Պաթիսթին բնաւ պարտքերնիս չէ մնացած, կարելի է անհելիք անդամ ունինք. արէկ նայէ:

— 29ին, այդ օրը 29ը՝ չէ նօթագրուած, ծախքի հաշիւի անդ՝ բարքերու վրայ ճառող յօդուած մը բուկրսուած է:

— 30ին, հո՛ւ, այդ օրը մարդ օւնեցեր ենք կե. բակուրի, խոշորկէկ գումար մը՝ 30 ֆրանք 55 սանթիկ: 31ին, այսօրն յայտարար, առկուին ծախք մը չենք ունեցեր: Տեսա՞ր, ըսաւ Մարսել հաշուեհետըրը գոցելով, որ հաշիւները շատ կանոնաւորութեամբ բանուած են. սակայն ամբողջ գումարը 500 ֆ անք չըներ կոր:

— Ուրեմն անաւակին մէջ ստակ աւելցած ըլլալու է:

— Կայնէ նայինք, ըսաւ Մարսել գզրոց մը բանայով: Չէ, բան չէ մնացեր, մտմուկէ մը զատ բան չի կայ:

— Առտուան մտմուկը վիշտի նշան է, յարեց Ռօօօլֆ:

— Այսքան ստակ ո՛ւր գնաց, վրայ բերաւ Մարսել օարսափահար, անաւակին պարագաւեան ի տես:

— Շատ պարզ է, ըսաւ Ռօօօլֆ, եղածը չեղածը Պաթիսթին տուեր ենք:

— Կեցիր քիչ մը, պոռաց Մարսել գզրոցը պրպրօտելով, օրուն մէջ թաւգթի կտոր մը աչքին զարկու, վերջին եռամսեային ստացագրէրը... աղաղակեց:

— Է՛յ, տմտակա՞նս:

— Ինտո՞ր ըսիր, ասնելիքէ գ աւելին տուեր ենք քեզի. ասանեհինգ օր չեղած 14 ֆրանք տուեր եմ, այդքան ստակը ի՞նչ կ'ընես կոր, կ'երեւայ թէ քանոնօրը ներու հետ կերար:

— «Մէթրէս» հէ՞. յարեց Ռօօօլֆ:

— Ըսել է երեսի վրայ պիտի մնամ հիմա, կակոզեց խեղճ սանչը, գլուխս խօթելիք ծակ մը պիտի չունենամ...:

— Նա՛, «քասքէթ»ը քեզի թող լլլայ, ըսաւ Մարսել, ահամայ յուզուած:

Եւ Պաթիսթին տուաւ «քասքէթ»ը:

— Ըսել թէ այդ թշուառականը մեր հարստութեան տակէն ստաւ՝ վրայէն ելաւ, ըսաւ Ռօօօլֆ Պաթիսթին դուրս ելլելը գիտելով: Ան չէ քամա՞, այսօր ո՛ւր կերակուր պիտի ուտենք:

— Վաղը Լայանի կ'ըլլայ, պատասխանեց Մարսել:

### ՀԻՆԳ ՖՐԱՆՔՆՈՅԻ ՍԸ ԱՐԺԷՔԸ

Շարաթ իրիկուն մը, երբ տակաւին Ռօօօլֆ կենակցիլ չէր սկսած Միմիի հետ, որ քիչ մը ետքը պիտի երեւայ այս պատմութեանս մէջ, Ռօօօլֆ ճաշարանին սէջ ծանօթացաւ Լօռ անունով աղջկան մը, որ ասնը մէջ պաճուճանքի առարկաներու վաճառումով կ'ըրազէր: Երբ Լօռ հասկցաւ որ Ռօօօլֆ խմբագիր էր «Լ'Էշարբ ամիս» և «Բասթօր» անուն նորոյթութեթերուն, և այն յայտով որ այդ թերթերը կրնաի յին անէջլամըր ընել իր ապրանքներուն, նշանակալի ստաւթիւն մը ցոյց տուաւ անոր: Իր այս գրգռիչ համարձակութենէն քաջալերուած, Ռօօօլֆ քծնաբանական հրախաղիւթիւնով մը պատասխանեց իրեն անանկ վարպետութիւնով որ կրնար նախանձիլ աս Պէնսըրաթը, Վուաթիւրը և կնասեծար օճի բօլօր Ռուճճիէրիները:

Ճաշը աւարտելուն, Օրիորդ Լօռ, տեղեկացած



լլալով որ Ռօտօլֆ բանաստեղծ էր չքաշուեցաւ ա-ը նոր հասկցնելու թէ հաճութեամբ պիտի ուզէր ըն-դունիլ զինքը իբրեւ իր Բեթրարքը, և նոյնիսկ չի-տէ չիտակ ժամադրութիւն մը տուաւ յաջորդ օրուան համար:

— Խա՛չօք, կ'ըսէր ինքնիրենը Ռօտօլֆ, տուն ա-ռաջնորդելով բարեկամուհին, գէշ աղջիկ չէ, ինծի ա-անկ կուգայ որ թէ՛ ուսմունքով և թէ՛ վրայ գլու-ն խով «փարլախ» մէկը կրնայ համարուիլ. բոլորովին արամաղիր կ'զգամ կօր ես զիս՝ երջանկութիւն պար-գեւելու իրեն:

Երբ ասնը դրան առջեւ հասան, Լօռ ձգեց Ռօ-տօլֆի թեւը և չնորհակալութիւն յայտնեց այդքան հետու թաղի մը մէջ ընկերացած ըլլալուն համար իրեն:

— Ո՛հ, տիկին, պատասխանեց Ռօտօլֆ, մինչեւ գետինը խոնարհելով, պիտի մաղթէի որ Մոսկուա և կամ Սօնտի կղզիները բնակէիք, աւելի երկար տան ձեզի իբրեւ «քավալիէ» ծառայելու համար:

— Քիչ մը հետու չէ՞ր ըլլար:

— Պուլվառներու կողմէն կ'երթայինք, տիկին, պատասխանեց Ռօտօլֆ. ներեցէք որ ձեր ձեռքը համ-բուրեմ:

— Օ՛, պարօ՛ն, բացագանչեց Լօռ, շատ շուտ կ'երթաք կօր:

— Աւելի շուտ հասնելու համար, ըսաւ Ռօտօլֆ. օրրոյ մէջ՝ առաջին կայաններէն քառասմբակ անց-նելու է:

— «Շիրին» աղայ է, մտածեց Լօռ տուն մտնե-լով:

— «Խըբախ» աղջիկ է, ըսաւ Ռօտօլֆ ճամբան երթալով:

Տուն եկածին պէս, շուտ մը անկողին մտաւ և

օկտաւ անուշ երազներ հիւօելլ: Երեւակայութեամբ թեւը կ'առնէր Լօռը, և թատրոն, պարտահանգէս, պր-տոյտի տեղեր կ'առաջնորդէր սիրուհին չքեղօրէն հագուած, և որմէ պիտի նախանձէր Բէոյի մօնրա-վէպերուն մէջ նկարագրուած մա՛նէն գեղանի պըչ-բուհին:

Հետեւեալ առտուն, Ռօտօլֆ, ըստ սովորութեան ժամը առանւթէին անկողնէն ելաւ և իր առաջին մտածումը եղաւ Լօռը:

— Ծիշդ ուզած կնիկս է, մըմնջեց, կտակած չկայ որ Սէն Տընիի մէջ առած է իր կրթութիւնը. վեր-ջապէս հոմանունի մը դտայ: Ապահովապէս չատ մը զոհողութիւններ ընելու պատրաստ եմ իրեն համար: «Լ'էշարբ օ'Իրիս»ին երթամ դրո՞ստ ասնեմ, և զոյգ մը ձեռնոց գնելուս պէս, Լօռը պիտի տանիմ կերտ-կուր կերցնելու՝ անանկ ճաշարան մը, ուր անձեռոց-ներ կուտան յաճախորդներուն: Թէեւ վրաս գլուխս շատ անող չէ, բայց սեւ հագուստը միշտ աղէկ կ'ե-րեւայ:

Եւ դուրս ելաւ «Լ'էշարբ օ'Իրիս»ի խմբագրատունը երթալու համար:

Փողոցէն անցած տանը «օմնիպիլս»ի մը հան-դիպեցաւ որուն կողքին վրայ ծանուցում մը փակ-ցուած էր հետեւեալ վերտառութեամբ.

«Այսօր կիրակի, ջրախաղութիւն ի վերոայլ»: Դարձեալ այդ ծանուցուսին աղղեցութիւնը չպի-տի գործէր վրան:

— Կիրակի է եղեր այսօր, մտածեր էի, մըմնաց, այսօր ստակ չպիտի կրնամ գտնել: Այսօր, կիրակի, աշխարհք արարած վերսայլի ճամբան բռնած ըլլա-լու է, բայց սակայն մղուած ա՛յն ստայօդ պատրան-քէն որուն մարդս կառչած կը մնայ միշտ, Ռօտօլֆ իր լրագրին վազեց այն հաշուով որ, բարեբաօտիկ պա-տահմունք մը հոն բերած կրնար ըլլալ գանձապետը:



իրաւ ալ, Գ. Պօնիֆատ աստուծոյ վայրկեան մը հանդիպած էր հոն, բայց անմիջապէս մեկնած:

— Վերսայլ երթալու համար, դիտել տուած էր գրասենեակին մասնը:

— Եթէ այդպէս է, «հաս»ը կլլեցինք, ըսաւ Ռօուօլֆ: Բայց կայնէ՛ նայինք, մտածեց, ժամադրութիւնս այս իրիկուան համար է, հետեւորար ասկաւին հինգ ժամ ունիմ առջիս հինգ ֆրանք ճարելու համար. այսինքն ժամը մէկ ֆրանք... Պուլա ար Պուլօնեի ձեռնորուն պէս: «Հայտէ» նայինք:

Ճիշդ այն թաղին մէջ կը դանուէր ուր կը բնակէր լրագրող մը որուն ազդեցիկ քննադատի անունը կուտար: Ռօուօլֆ մտածեց անոր մօտ դիմում մը ընել:

— Անպատճառ զինքը տունը կը գանեմ, մտածեց սանդո զնորէն վեր ելած ատենը, այսօր իր թերթօնին օրն է, վտանգ չի կայ որ դուրս ելած ըլլայ. իրմէ հինգ ֆրանք պիտի ուղեմ:

— Դ՞ո՞ւն ես, հարցուց գրագէտը, ազէկ որ եկար, պզտիկ ծառայութիւն մը պիտի խնդրեմ քեանէ:

— Ազէկ ատեն եկեր եմ, մտածեց Վէլչարը օ՛րբիտի խմբագիրը:

— Երէկ գիշեր Օտէոն գացի՞ր:

— Ես միշտ Օտէոնն եմ:

— Եթէ այդպէս է, ուրեմն նոր թատերախաղը տեսար:

— Ի՛նչպէս չտեսնամ, Օտէոնի հանդիտականները և ես, միեւնոյն բանը ըսել ենք:

— Իրաւ է, ըսաւ քննադատը. նոյնիսկ ըսողներ կան թէ այդ թատրոնին տարեկան նպաստը տուողը դուն ես: Ինչ և իցէ, ահա ի՛նչ է քեանէ խնդրելիքս: Նոր կտորին վրայ յօդուած մը:

— Ազ դիւրին է, պարտապահանջի մը չափ յիշուցութիւնս տեղն է:

— Այդ կտորին հեղինակը ո՞վ է, հարցուց քննադատը Ռօուօլֆին, երբ անիկա գրելու կը նստէր:

— Պարոնին մէկը:

— Շատ ազոնու» բան մը ըլլալու չէ:

— Ամէն պարագայի մէջ նուազ հուժկու է քան խափշիկ մը:

— Այն ատեն, ըսել է զօրաւոր ալ չէ: Գիտե՞ս թէ խափշիկները անիրաւ տեղը ուժաւոր ըլլալու համբաւի մը տիրացած են: Անոնք Սափուացիի մը օտքին անդամ չեն կրնար հասնիլ:

— Ի՛նչ բան արգելք պիտի ըլլար ատոր:

— Որովհետեւ Սափուացի ըսելը Օվէրնեացի ըսել է և «համարձեներն ալ Օվէրնեացի կ'ըլլան»: Յետոյ խափշիկները իրականութեան մէջ գոյութիւն չունին, ի բաց առեալ անոնք՝ որ վարնոց դիմակաւոր-պարահանդէսներու մէջ կը կ'երեւիս, և մէյ մըն ալ՝ այն քանի մը հատերը որ Շան զ'էլիէի փողոցներուն մէջ «խուրմա» կը ծախեն: Խորշիկ ըսածդ նախապաշարում մըն է որ «յաւարմասիօն» մը: Արեւելքը լաւ ճանչցող բարեկամ մը ունիմ ես որ կը վտանգեցնէ թէ բոլոր խափշիկները այլաբան եկած են Քօքլնա փողոցին մէջ:

— «Խրեախ» բան է զրուցածդ, ըսաւ Ռօուօլֆ:

— Անանկ չէ՞, թերթօնիս մէջ տեղ մը պիտի քշեմ:

— Ահաւասիկ թատերախաղին վրայ գրած վերլուծումս, շատ «պիշիմիլ» եղաւ, յարեց Ռօուօլֆ:

— Այո, բայց կարճ է:

— Լայն լայն շարուելու ըլլայ նէ կ'երկնայ. ազկէ զատ քու քննադատի գողափարներդ կ'աւելցնես վրան, եղաւ զնաց:

— Նախ որ ժամանակ չունիմ, և յետոյ կարծիքներս շատ աեղ չեն բռներ:

— Ամէն երեք բառ գլուխ՝ ամական մը կ'աւելցնես, չըլլա՞ր:



— Կտրելի չէ՞ արդեօք որ վերլուծումիդ մէջ կարճ, աւելի լաւ եւս է ըսել արկայն գնահատական մը աւելցնես թատերասարդին վրայ, հէ՞. հարցուց քննադատը:

— Իրաւ է որ, պատասխանեց Ռոտուլֆ, սղբերգութեան վրայ, քիչ շատ գաղափար ունիմ, բայց եկուր տես որ զանոնք երեք անգամ տպել տուած եմ «Քառթօր»ի և «Լ'Էշարբ Ե'Իրիտ»ի մէջ:

— Հոգ չէ, մինակ սա ըսէ ինծի. գաղափարներդ քանի՞ տող կը բռնեն:

— Քառսուն:

— Ադ ի՞նչ մեծ գաղափարներ ունիս եղբր, լա՛ւ, ի՞նչպէս կ'ըլլայ եթէ այդ քառսուն տողերդ ինծի փոխ աս:

— Գործս եղաւ, մտածեց Ռոտուլֆ. քսան ֆրանք վասակցնող ձեռագիր եթէ տալու ըլլամ իրեն, հարկաւ տասը ֆրանքնոց մը չի կրնար մերժել: Սակայն պէտք է կանխաւ քեզ ազգարարեմ թէ. ըսաւ քննագաթին գաղափարներս կործածիդ չափ նոր չեն: Քիչ մը շատ գործածուած, սանկ ըսեմ. Չանոնք տպագրութեան տայէ առաջ, Բարիզի բոլոր սրճարաններուն մէջ ոռնացած եմ, այնպէս որ կարծեմ թէ «կառսօն» մը չի կայ որ զանոնք գոց չգիտնայ:

— Ադկէ ի՞նչ կ'ըլլայ, կ'երեւի թէ զիս լաւ չեօ ձանչցած: Այխարհիս վրայ նոր բան չի կայ, բացի առաքինութենէ:

— Առ նայինք, ըսաւ Ռոտուլֆ՝ յօդուածը ուարտելով:

— Վա՛յ օսկու՛մ վա՛յ, օտ նայէ՛, օակաւին երկու սիւնակ կը տակօր կոր: Այդ անդունդը ի՞նչպէս լեցնելու է, ազաղակեց քննադատը: Քանի որ ըլլալիքը եղաւ, ինծի քանի մը շատ չլսուած, նորալուր կարծիքներ մատակարարէ տեսնեմ:

— Կարծիքներս վրաս չեմ առած, բայց կրնամ

միտքս մնացածները փոխ ալ քեզի, մինակ օտ ըսեմ որ իմիններս չեն, զանոնք կէս ֆրանքի ծախու առած եմ նեղը մնացած բարեկամէ մը, այսու հանդերձ շատ գործածուած են:

— Շատ աղէկ:

— «Հա չէօյլէ» ըսաւ ինքնիրենը Ռոտուլֆ, կրկին գրելու նստելով, ա՛լ տասը ֆրանք կրնամ իրմէ ուղել, այս եղանակին նորալուր կարծիքները սուղի կը նստին կոր... «պըթրոն»ներուն պէօ, և երեսուն տողի չափ բան գրեց, որոնց մէջ սնտօր, խենդ սխելառ բաներ ըսուած էին «բիանօ»ներու, կարմիր ձուկի, օզլախոնութեան դպրոցի, Հաննօթի դեպին վրայ՝ օրօն «թուալէթի գինի» ըսուած էր:

— Շատ սիրուն են, ըսաւ քննադատը, մինակ օտ ալ աւելցուր, խնդրեմ, և ըսէ թէ բանալ այն միակ տեղն է՝ ուր ամէնէն շատ պատուաւոր մարդիկ կարելի է գտնել:

— Վ՛այ, էյ ազ ինչո՛ւ:

— Երկու տող վասակելու համար. հիմա գործերնիս եղաւ. առ նայինք, ըսաւ ազգեցիկ քննադատը և տպասաւորը կանչելով թերթօնը տպարան զրկեց:

— Հիմա, ըսաւ Ռոտուլֆ, քիթը մտնալու տեսնը եկաւ, և լըջօրէն իր խնդիրը առջեւ քչեց:

— Ա՛խ, սիրելիս, ըսաւ քննադատը, ասանց մը չունիմ վրաս: Լօյօթը իր «քոմատտ»ներովը խերս կ'առնի՞ կոր, քիչ մը առաջ ունեցածս չունեցածս առաւ տարաւ, վերսայլ երթալու համար, ուր տեսնել կ'ուզէ եղեր արօյրէ հրէշներուն հեղուկ փոխելը:

— Վերսօ՛յլ մի, չըսե՛օ որ վերսայլ երթալը համաճարակ մը դարձած է:

— Բայց ըսէ տեսնեմ, ի՞նչ բանի համար օտակ պէտք կ'ունենաս կոր:

— Ահա հովուերգութիւնս, յարեց Ռոտուլֆ,



«ոանտէ-վա» ունիմ այս գիշերուան համար, շնորհ-  
քով կնիկ մը որ երբեք փողոց չելլեր առանց «միր-  
պիւր» նստելու:

Կեանքս իրենին միացնել կ'ուզեմ քե-  
նի մը օրուան համար, և կը վայլէ որ կեանքի  
քաղցրութիւնները ճաշակել տամ իրեն՝ ճաշարան,  
պարահանդէս, թատրոն, պոռոյտ ևլն. ևլն. և ասոր  
համար հիւսիս ֆրանքի պէտք ունիմ անխուսափելի-  
րէն, եթէ այդ ստակը ճարելու չըլլամ, ֆրանսական  
գրականութիւնը անպատուութեամբ պիտի ըլլայ իմ ե-  
րեսէս:

— Նոյնինքն այդ կտակէն ինչո՞ւ փոխ չես ուզեր  
այդ դրամը:

— Առջի բերան քիչ մը դժուար է ասիկա: Մի-  
նակ դուն այդ «պէլ»-էն կրնաս զիս ազատել:

— Կ'երգնում եգիպտոսի բոլոր մամիւններուն  
վրայ, պատուայ մեծ խօսքս կուտամ քեզի որ երկու  
փարանոց «սիկարա» մը առնելու համար պէտք եղած  
ստակը անգամ չեմ բռներ: Այսու հանդերձ սրտեղ  
քանի մը կտոր գիրք ունիմ, եթէ կ'ուզես ասը  
ծոթէ:

— Այսօր կիրակի է, չեմ կրնար: Մէն Մանսիւն,  
Լըպիկրը, և Սէն Ժաք փ զօցի բոլոր խանութները  
այսօր գոց կ'ըլլան. ինչ տեսակ գիրքեր են բաժնե-  
բեզ. բանաստեղծական հատորներ՝ հեղինակին պատ-  
կերք վրան, անանկ չէ՞, հիմա ատանկ լրբճուկ բա-  
նորուն փարա ասուղ չի կայ:

— Ի բաց առեալ, եթէ դատարանի մը կողմէ զո-  
նոնք կարգալու գտապարտութեամբ չըլլայ մարդո՞:  
Բայց կայնէ նայինք, սրտեղ երգի նօթաներ և նը-  
ւագահանդէսի աստակներ կան, քիչ մը ճարպիկու-  
թիւնով կրնաս զանոնք «կուտ» վերածել:

— Ուրիշ բան մը աւելի գործիս կուզար, բան-  
թալօն մը, օրինակի համար:

— Այդ «ոչվա»-յէդ վազ անցիր, սա Պօսիւէին  
հատորը և Օթիլօն Պէոօի գածէ կիսանդրին հետք առ,  
պատուայ խօսքս ձեզի, ունեցածս չունեցածս ասոնք են:

— Գործին մէջ բարեացակամութիւն կը դնե՞ս,  
«Ֆարխ»-ին եմ, և եթէ ասանցով մէկուկէս ֆրանք  
կարնամ «պէճէրմի» ընել, գիտցած եղիր որ ըրածս  
Հերակիտի իբրեւ երեքասուներորդ քաջագործու-  
թիւնը պէտք է նկատուի:

Չորս փարսախ տեղ քալելէ ետքը, Ռօօօլֆ, շը-  
նորհիւ այն պերճախօսութեան օրուն գաղտնիքը ու-  
նէր նեղ պարագաներու մէջ գործածելի, կրցաւ եր-  
կու ֆրանք փոխ առնել իր յուացարարուհիէն, անոր  
քով աւանդ ձգելով բանաստեղծական հատորներ, ու-  
մանոները և Պարոն Պէոօի կիսանդրին:

— Հիմա, ըսաւ կամուրջներուն վրայէն վերա-  
դառնալով, յօսուցանս գանուեցաւ, գործը «քէպտա»-ին  
մնաց, Մէյ մը սա սօրեղբորս երթամ նայիմ:

Դէս ժամ ետքը Մօնէթթի մօտեղբորը քովն էր.  
անիկա անմիջապէս քեռորդուայն կերպարանքէն կու-  
հեց զլխուն գալիքը և ասոր համար զգուշական մի-  
ջօցներ ձեռք առաւ և գործին առջեւը առնելու նպա-  
տակաւ շատ մը «մահանա»ներ մէջտեղ դրաւ հետեւ-  
եայներուն պէս:

— Գործերը գէշ կ'երթան կօր, հացը սղեց,  
պարտականները չեն վճարեր կոր, վարձքերը օրին  
ցնծալու է, առեւտուրին խերը տես ևլն. ևլն. վեր-  
ջապէս «սարաֆ»ներու բոլոր շանքարօղները իրարու  
ետեւէ շարեց:

— Կը հուսածա՞ս, ըսաւ սօրբը, որ խանութին  
մանչէն ստակ փոխ առի՞ փոխանակագիր մը վճարելու  
համար:

— Թող ինծի յուր զրկէիր, ըսաւ Ռօօօլֆ, ես  
կրնայի ձեր պէտքը ունեցած գրամը փոխ առլ. Երեք



որ առաջ երկու հարիւր ֆրանք ձեռք տնցաւ:

— Շնորհակալ եմ աղաս, բայց զուէն ալ օտակի պէտք ունիս, նա՛, քանի որ հոս ես և աղսւոր ալ գէր ունիս, քանի մը հաշուեցուցակներ կան, ընգորինակէ որ զրկեմ գոնձել տամ:

— Սա գետնին տալը անցնելիք հինգ ֆրանքը ինօ ծի քանիի՞ կը նստի կոր, մտածեց Ռոտօլֆ և սկսաւ գւրծի, կարելի եղածին չափ հասառօտելով զայն:

— Սիրելի մօբար, ըսաւ Մօնէթթիին, գիտեմ որ ամբողջը չէ կ'ախորժիք, անոր համար նուագածանդէսի տոմօտակներ բերի ձեզի:

— Շատ ազնիւ ես, աղաս, կերակուրի ինծի կը կենա՞ս:

— Շնորհակալ եմ մօբար, Սէն Ժէոմէն թաղին մէջ ճաշի հրաւիրուած եմ, օակայ «թէրօ» պիտի ըլլայ, Ժամօնակ չունիմ որ մինչեւ ասուն երթամ ըստակ ասնելու համար որպէսզի զայդ մը ձեռնոց գնեմ:

— Ձեռնոց չունի՞ս, եթէ՛ կ'ուզես իմիններօ փոխ տամ քեզի, ըսաւ մօբարը:

— Շնորհակալ եմ, մինակ միեւնօյն ձեռքերը չսուսինք, եթէ կը հաճիք ինծի փոխ աւլ...:

— Ձեռնոց գնելու ըամար մէկ ֆրանք քառօտունօ եւհինգ, ինչո՞ւ չէ աղաս, ա՛յ նայինք: Մարդու մէջ մտնելու համար վրաց գլուխդ տեղը ըլլալու է: Աւելի լաւ է նախանձ շարժել, քան արգօտօտանք, կ'ըսէմ օտէնկէ՛սդ, կը նայիմ որ մարդու կարգ կ'անցնիս, դօհ եմ, հաւատա որ օտէն ակելին կ'ուզէի աւլ, բայց դղրոցիս մէջ գտնուածը այսքան է, վեր ալ չեմ կրնար ելլել, օրովհետեւ իտնութը մինակ ձգելու չի գար, ամէն վայրկեան նայիս յաճախորդ մը կը օնկուրի:

— Հապա գործ չի կայ կ'ըսէիք...:

Մօբար Մօնէթթի չլսելու զարկաւ և քեռօրդւօյն որ մէկ ֆրանք 45 սանթիմը գրպանելու վրայ էր, ըսաւ:

— Աճապարելու պէտք չունիս, երբոր կարենա՞ս այն օտեն կլ վերադարձնես:

— Սայտառօ՛կ քեզի, մտածեց Ռոտօլֆ, և առաւ քալեց: Ճամբան հաշուեց որ տակուին մէկ ֆրանք յիսուներկինդ սանթիմի պէտք ունէր հինգ ֆրանքը ամբողջացնելու համար:

— Հիմա ի՞նչ օպուր ուտելու է: Աղէկ եղաւ, եկուր օտ նախախնամութեան քոտուղին երթանք նայինք, հարկաւ բան սր կ'ըլլայ:

Ռոտօլֆ «նախախնամութեան քոտուղի» կը կաչէր Բօրիզի ամէնէն կեղրանօկան մէկ անկիւնը: Բալէ Ռուանալ փողոցը: Տեղ մը ուր անկարելի է օտօը վայրկեան կենալ առանց օտօը ճանչուց մարդերու հօնդիպելու, մտնուանդ... ասնելիքուորներու:

Ռոտօլֆ շիփ շիտակ գնաց կեցաւ պտակ գլինարի պէս Բալէ Ռուանալի դրան օտջեւ: Այս անգամ նախախնամութիւնը քիչ մը ուշացաւ գալու: Բայց վերջապէս Ռոտօլֆ հասուէն նշմարեց զայն: Այդ օրը նախախնամութիւնը հագած էր ձերմակ գլխարկ մը, կանանչ քալթօ մը, և ձեռքը բռնած էր ոսկի կօթով գաւազան մը: Շիք նախախնամութիւն մը, օղունիւ և հարուստ երիտասարդ մը, թէեւ հետեւօղ Փուրիէի ընկերագրիօտական վարդօպտօտութեան:

— Ձեզի հանդիպած ըլլալու շատ ուրախ եմ, ըսաւ Ռոտօլֆին, եկէք միաօին քալենք, ճամբան կը խօսուըռօտինք:

— Աս պակաս էր, հիմա ալ ընկերագրիօտական սկզբունքներ մօիկ պիտի ընենք, ըսաւ ներօրիգիէն Ռոտօլֆ և ընկերօցաւ ձերմակ գլխարկին, որ իր շանքօրոզին վերջը չէր բերեր:

Բօն օէ գ'Առի մօց, Ռոտօլֆ ընկերօջը ըսաւ:

— Սախուրած եմ ձենէ բօժնուելու, օրովհետեւ կօմօւրջին ստակը օտուլ ի վիճակի չեմ:



— «Վազ» անցիր ըստ մարդը՝ Ռոտուֆին քր-  
ղանցքէն բռնելով և երկու ասու» նեանց դրամանու-  
ւաքին:

— Ատենը եկաւ հիմա, մասնեց ճէ՛ղչարբ Թիբի-  
օրն խմբագիրը՝ կամուրջին վրայէն անցած ատեննին.  
և երբ կամուրջին գլուխը հասաւ Էնթիթիլ ժամա-  
ցոյցին առջեւ Ռոտուֆ մէկէն ի մէկ կանգ առաւ և  
յուսանաւ ժէսթով մը ժամացոյցը ցոյց տալով Թ-  
ղաղակեց.

— Չոր ստանայ, հինգին քառորդ կայ եղեր,  
սո գլխուս եկածը նայէ:

— Ի՞նչ կայ որ, ըսաւ բարեկամը զարմացած:

— Ի՞նչ պիտի ըլլայ, քու երեսէդ է որ մինչեւ  
կաստեղ զիս քաշկռակցիր. ժամագրութիւն մը փախ-  
ցուցի:

— Կարեւոր էր:

— Այ այ խօ՞սք է. ժամը հինգին Պաթինեօլի  
կողմը պէտք էի գտնուիլ ստակ գանձելու համար: Այլ  
չեմ կրնար հասնիլ, սա եղածին նայէ հիմա, ինձօր  
ընեմ:

— Ինձօր պիտի ընեա. շատ պարզ բան ք, եմ-  
կուր տուն երթանք, ես քեզի փոխ կուտամ:

— Անկարելի է, դուն Մօնրուժ կը բնակիս, և  
ես ժամը վեցին գործ ունիմ Շօնէ Թիթէն փողոցը,  
վո՛յ շունչանարդի...:

— Վրաս քանի մը փորո ունիմ, ըսաւ Նախախ-  
նասութիւնը երկչոտութեամբ, բայց շատ քիչ:

— Գոնէ կարենամ կողք մը բռնել, թերեւս ա-  
տենին Պաթինեօլ կը հասնիմ:

— Դրամապանակիս մարդ չ պարունակու թիւնը  
ահա՛, մէկ ֆրանք և յիսունեկինգ օսնիմ:

— Շուտ ըրէ տուր, վազեմ երթամ, ըսաւ Ռո-  
տուֆ, ականջ դնելով ժամացոյցի, որ հինգ կը զար-  
նէր, և գլուխը առած վազեց ժամագրութեանը:

— Աս ի՞նչ քաշցի, ըսաւ ստակները համբելով,

էիդ հինգ ֆրանք: Վերջապէս ինքզինքս գտայ, և  
Լօռ պիտի տեսնէ թէ ապրիլ զիտացող մէկու մը հե-  
տէ գործը: Այս օտակէն օտնդիմ մը վար պիտի չդնեմ:  
Պէտք է որ գրեկանութեան պատիւը տեղը տանիմ և  
միանգամ ընդ միշտ պէտք է հաստատեմ թէ գրագէ-  
տին հարուստ ըլլալուն համար մինակ պակասած բանը  
գրամն է:

Ռոտուֆ ժամագրութեան վայրը կազմ ու պատ-  
րաստ գտաւ Լօռը:

— «Հա շէօյէն», ժամացոյցին գիւտը ընող Պրէ-  
կէին կնկանը պէս ճշգրտաբար է եղեր:

Գիշերը սիւսին անցուցին և հինգ ֆրանքը հալե-  
ցուց շուտապէս կան ջրուային մէջ: Օրիորդ Լօռ կը  
սքանչանար անոր շարժումներին վրայ և հազիւ նշա-  
րեց թէ փոխանակ իր առնը առաջնորդելու, կամա-  
ցուկ մը իր ամուրիի պենեակէն ներս կը խօթէր  
զինքը:

— Ըրածս յանցանք մըն է, գիտեմ, բայց չըլլայ  
որ զիս զղջացնել ասք ձեր ասերախտութիւնով, ինչ  
որ ձեր սեսին յատուկ բան մըն է:

— Տիպին, իմ հաստատաւորութիւնս ամէնուն  
ծանօթ է:

Այնքան հաստատամիտ եմ որ՝ բոլոր բարեկամ-  
ներս կը զարմանան հաստատաւորութեանս վրայ և  
ասոր համար ռօրոյ ժէնէրալ Պէրթուանը կը կո-  
չեն զիս:

### ՀԻՍՏՈՐԻԱՅԻՆ ԲԵՒԵՌԻ ՄԱՆՈՒՇԱԿՆԵՐԸ

Այդ օրերուն Ռոտուֆ խնդի պէս սիրահարած էր  
իր մօրեղբոր աղջկան Անժէլին, որ իրմէ բնաւ չէր  
ախորժեր, և ճարտարագէտ Շըվալիէի ջերմաչափը՝  
զէրօյէն առաներկու աստիճան վար ցոյց կուտար:



Օրիորդ Անժէլ աղջիկն էր Պ. Մօնէթթիի՝ ծխարդար-վառարանագործին, որուն վրայ խօսելու առիթը ունեցանք արդէն:

Անժէլ ասօնելութիւնը ամբողջ աղջիկ մըն էր Պաւրինէն նոր վերադարձած, ուր հինգ տարի կեցած էր ազգականուհիի մը քով, որ մահուընէն ետքը իր ամբողջ ունեցածը անոր պիտի թողուր:

Այս ազգականուհին պատու կին մըն էր, որ երբեք ո՛չ գեղեցիկ եղած էր և ո՛չ ալ երիտասարդ: Բայց եղած էր միշտ չար, թէեւ ջերմասնդ ժամու կնիկ մը, և գուցէ ասոր համար ժամանակ չէր ունեցած բարի ըլլալու:

Անժէլ այդ կնկան քով չգացած շնորհագեղ պարամունհի մըն էր, որ սքանչելի երիտասարդութիւն մը կը խօստանար, բայց հինգ տարի ետքը վերադարձին կատարեալ չափահաս օրիորդ մը եղած էր, չոր, ցամաք և անտարբեր:

Գաւառի քաջուած կեանքը, ջերմասնդական ծայրայեղ սկզբունքները և իր ստացած ոգորմելի կրթութիւնը սիւքը լեցուցած էին գոհիկ և անճոռնի նախապաշարունակներով, սեղմած, կարճեցուցած իր երեւակայութիւնը և իր սիրտը վերածած էին տեսակ մը գործարանի, որ աստանող ճօրրիկի դեր կը կատարէր միայն:

Մէկ խօսքով Անժէլ իր երակներուն մէջ փոխանակ արիւնի խաչահանգիստի ջուր կը կրէր: Վերագարձին ռառնային ընդունելութիւն մը ըրաւ իր ճշուզէնին օր պարսպ տեղը կ'աշխատէր անոր օրրաին մէջ թրթռացնելու վերյիշումներու թելը, վերյիշումներ՝ իրենց երբեմնի Պօղ և Վերգինէի՝ ոճով ըսկրած սիրաբանութեան, որ աւանդական է երկսեռ զարմիկներու միջեւ:

Սակայն նորէն Ռօալֆ հոգի կուտար իր մօրեղբօր արջկան՝ Անժէլի համար օր չէր ախօթէր բնաւ:

Օր մը սակայն իմացած ըլլալով օր Անժէլ իր բարեկամուհիներէն մէկուն հարօտնեկան պարահանդէօին պիտի երթար, ծաղկեփունջ մը խոտանալու չափ տաք տարաւ իր համարձակութիւնը: Անժէլ հօրը հաւանութիւնը առնելէ ետք ընդունեց Ռօալֆի կնամեծար առաջարկութիւնը և խնդրեց օր բերելիք ծաղկեփունջը օպիտակ մանուշակէ կապուած ըլլայ:

Իր ճշուզէնին ցոյց տուած ազնուութենէն խելայեղ՝ Ռօալֆ երգելով, ցատկաբերով քայլերը ուղղեց դէպի իր Սէն Պէրնաօի սառագագաթը: Այս անունով մկրտած էր իր բնակարանը. քիչ մը ետքը պիտի հասկնանք թէ ինչո՛ւ:

Բալէ Ռօալֆալը կտրած պահուն, Տիկին Բօլօօի, այդ հռչակաւոր ծաղկավաճառին խանութին առջեւէն անցաւ, որուն ցուցափեղկին մէջ ճերմակ մանուշակներ ցուցադրուած էին: Հետաքրքրութեան հովաք և անօնց գինը հասկնալու նպատակով խանութէն ներս մտաւ: Ներկայանալի փնջիկ մը տաօը ֆրանքէն պահաւ չէր կրնար ըլլալ, թէեւ ատկէ օուղերն ալ կային:

— Անիծի՛ց արմատ, ազաղակեց Ռօալֆ, ամօրը ֆրանք... և ըսել թէ առջիս ութ օր ունիմ միայն այդ միլիոնը գտնելու համար: Գործ ունինք... բայց ինչ կ'ուղէ թող ըլլայ, ճշուզինս իր ծաղկեփունջը պիտի ունենայ, միտքս դրած եմ:

Ռօալֆի գլխուն եկած այս նոր փորձանքը տեղի կ'ունենար իր գրական գործունէութեան սկիզբները: Այդ միջոցներուն ամիզը ասօնըհինգ ֆրանքի եկամուտ մը ունէր միայն, զոր իրեն յատկացուցած էր մեծ բանաստեղծ բարեկամ մը, որ երկար տե՛սն Բարիդի մէջ տարելէ ետքը, կրցած էր պաշտպանութիւններու շնորհիւ վարժապետի պաշտօն մը ձեռք անցնել գաւառի անկիւն մը:

Ռօալֆ, որուն կնքամայրը շոայլութիւնը եղած



էր, ամսակառնը չորս օրուան մէջ կ'ուտէր կը լմնցնէր, և որովհետեւ չէր ուզեր Վժառ թնցնիլ եղերերդակ բանասանգծի իր սուրբ բայց ոչ արդիւնաբեր ճիւղէն, ամուսնան մնացած օրերը կ'ապրէր այն փորձանաւոր մանանայով, որ յամբար վար կը թափի նախախնամութեան սեղանէն:

Այս ծոմապահութենէն աչքը չէր վախնար և ուրախութեամբ կը օտնէր զայն ստոյրկեան ժուժկալուսութեամբ մը և շնորհիւ երեւակայական անսպառ գանձերու, զորս կ'սպասէր ամէն օր ամուսնու գլուխը բռնելու համար: Զատկի օր մը վերջ կը գնէր ծոմապահութեան: Այդ շրջանին Ռոստոյֆ կը բնակէր Քօնթրէ-Քարա-Սէն-Մարտէլ փողոցը խոյսը շէնքի մը մէջ:

Ռոստոյֆ ամէնէն վերի յարկը կը բնակէր այդ օտն, տուն մը որմէ աւելի բարձրաշէնը չի կայ ամբողջ Բարիդի մէջ, իր սենեակը որ տեսակ մը ճեղքովի ձեւով շինուած էր. հիանալի էր մէջը բնակողին համար՝ ամառը, բայց Հոկտեմբերէն մինչեւ Ապրիլ փոքրիկ Քամիւթքայի կը վերածուէր պարզապէս:

Չորս գլխաւոր հովերը չորս կողմէն պատու հաններէն ներս թափ-նցելով քառաձայն ահարկու համերգ մը կը թնդացնէին հոն ձմրան ամբողջ տեղութեանը: Հեգնութիւնը կատարեալ ընելու համար այդ սենեակին մէջ կը գտնուէր անծայրածիր բերնով ձխնելոյզ մը, որ կարծես իբրեւ պատույ մուտք կը ծառայէր Բորէասի և իր հետեւորդներուն:

Չմտը մօտենալուն, Ռոստոյֆ կը դիմէր ջեռոցման իր մէկ մասնաւոր եղանակին, որ կը կայանար կարասիները կտոր կտոր ընելով վառարանին նիւթ հայթայթելու մէջ, այնպէս որ ութ օրէն իր կարասին զգալապէս համառօտուած կը տեսնէր: Արդէն մահճակալէն և երկու ամիսէ զատ ուրիշ բան չէր մնացած. իրաւ է որ կարասիի այդ մնացորդները կրակի դէմ բնականօրէն սպառնալուքուած էին իրենց երկաթէ

ըլլալուն հանգամանքով: Յունվար ամսուան մէջ կը պատահէր այս ամէնը և Հիւնէթի քարափին ջերմաչափը որ տասներկու աստիճան ցոյց կուտար, անպատճառ քանի մը աստիճան վար պիտի իջնէր եթէ զայն զետեղելու ըլլային Ռոստոյֆին ճեղքովին մէջ, որուն Սէն-Պէրնառ, Սբիցպէրկ, Սիպերիա անուաները կուտար մէր բանաստեղծը:

Այն իրիկունը որ ճերմակ մանուշակներ պիտի տաննէ ճեղքին, Ռոստոյֆ սենեակը մտած պահուն օտարիկ բարկութիւն մը դրաց: Չորս գլխաւոր հովերը ճեղքուն-ձախեմ խաղացած տեսնին ապակի մը եւս խառնակած էին: Տեսնուէին օրուան մէջ այս երբորդ անդամն էր որ այդ վնասին կ'ենթարկուէր: Ռոստոյֆ ա՛յ բերանը բարձու և սկսաւ անիծել Եւոզոսը և անոր խորտակիչ ընտանիքը:

Այս նոր բացուած խրատաւոր գէշ աղէկ բարեկամի մը իւզաներկ կենդանագրովը գոցելէ ետքը, առանց հանուելու գնաց պառկեցաւ քարի պէս կարծր անկողինին մէջ և գիշերը ամբողջ սպիտակ մանուշակներ տեսաւ երազին մէջ:

Ամբողջ հինգ օրեր անցած էին և Ռոստոյֆ իր երազը իրակենացնելու հասար ու և է միջոց չէր գրած, և առջին երկու օր կը մնար ճեղքին ձաղկեփունջը տանելու համար: Մէկ կողմէն սակայն ջերմաչափը երթալով վար կ'իջնար և խեղճ բանաստեղծը խելքը կը թոցնէր մտածելով որ օտարիկ ցուրտին պատճառաւ մանուշակները երթալով վրայ կը գնէին:

Վերջապէս սակայն նախախնամութիւնը մեղքը ցաւ իրեն և օգնութեան հասաւ. տես թէ ինչպէս.—

Առաւ մը խելքին փչեց նախաճաշի երթալ իր բարեկամին՝ նկարիչ Մարտէլին: Ներս մտած պահուն այս վերջինը խօսքի բանուած էր օգուտը կնկան մը հետ: Միեւնոյն թողը բնակող օրբեւայրի մըն էր որ քանի մը օր առաջ կորսնցուցած էր ամուսինը, և ե-



կած էր Մարտէլին հարցնելու թէ քանի՞ով կրնար գրծել ասլ իր կանգնել ասուած ասպանագիրին վրայ էրիկ մարդու ձեռք մը, որուն ասկ գրել պիտի ասը ԲԵՁ Կ՛ՍՊԱՍԵՄ, ԻՄ ՍԻՐԵԼԻ ԿՈՂԱԿԻՑՍ

Եւ սակարկած աշխատութիւնը աժանով ընել ասու համար, դիտել ասու արթիւթիւն թէ այն օրը օր Աստուած զինքը էրկանը քով պիտի զրկէր, դարձեալ իրեն պիտի դիմէր գծել ասու համար երկրորդ ձեռք մը, այս անգամ իրենը ասպարանջանով մը զօրքարուած, սրուն վրայ գրել պիտի ասը հեռուեալ վերասուսթիւնը

—ԱԼ ՎԵՐՁԱՊԷՍ ՄԻԱՑԱՆՔ ԻՐԱՐՈՒ

—Այս պայմանը կտակիս մէջ դնել պիտի ասմ և պիտի պահանջեմ, կ'ըսէր այրիացեալ արիկինը, որ այս գործը քեզի յանձնուի:

— Քանի որ ասանկ է, արիկին, պատասխանեց արուեստագէտը, ձեր ասուած զինք կ'ընդունիմ, այն յոյսով որ զիս չպիտի սոռնաք ձեր կտակին մէջ:

— Պիտի փոփաքէի որ ձեռքը կարելի եղածին չափ շուտ յանձնէիք ինծի: Այսու հանգերձ աճապարելու պէտք չի կայ, մինակ բթամատին վրայի երաշխէպը չմոռնաք: Ուզածս կենդանի ձեռք մըն է:

— Խօսուն անգամ պիտի ըլլայ, հանգիտ կրնաք ըլլալ, արիկին, ըսաւ Մարտէլ, մինչեւ դուրը առաջնորդելով յաճախորդուէին. բայց անիկա դուրս ելլելու պահուն ետ եկաւ:

— Բան մըն ալ պիտի հարցնէի ձեզի, պարոն նրկարիչ, միտք ունի էրկանս չիրիմին վրայ օտանաւոր բան մը գրել ասու, որուն մէջ յիշատակուէր իր բարի ըլլալը և սահուն անկողնին մէջ արասանած վերջին բառերը: Վայելուչ չէ՞ք գտներ:

— Խիտ պատշաճ, ասոր անունը ասպանագիր է և իրաւ ար դէշ չըլլար:

— Անանկ մէկը չէ՞ք ճանչնայ, որ աժանով այդ գործը վրան աւնէր: Դրացի մը ունիւ, Պարոն Կէսէնը որ ասոր անոր գիրերը կը գրէ, բայց ասպանագիր մը գրելու համար «պապայիտ» զինք կ'ուզէ կօր:

Այս խօսքին վրայ Ռօօօլֆ անանկ աչք մը ըրաւ որ Մարտէլ անմիջապէս կուսնէր ըսել ուզածը:

— Տիկին, ըսաւ Ռօօօլֆը ցոյց տալով, բարնպատեկ զուգարիպութիւն մը այս պահուն ձեր դէմը կը հանէ մէկը որ այս սրտաճմլիկ պարագային կրնար օգտակար ըլլալ ձեզի, պարոնը նշանաւոր բանաստեղծ մըն է որսէ աղէկը չէք կրնար գտներ:

— Ուզածս արուր բան մը պէտք է ըլլայ որուն մէջ ուղղագրութեան օխալներ չդանուին:

— Տիկին, պատասխանեց Մարտէլ, բարեկամս ուղղագրութեան օէջ մէկ հատիկ է, դարձեալ եղած ասանք բոյոր մրցանակները ինքը կ'աւնէր:

— Իրաւ, ջեռօրդիս ալ անցեալ օր մրցանակ մը ասաւ, և հազիւ եօթ ասրու կայ:

— Ադ ի՞նչ աչքը բաց աղայ է եղեր...:

— Բայց, հարցուց այրին յամառօրէն, պարօնը արուր բաներ գրել պիտի՞:

— Իրեն ոտքին եկող չի կայ այս մասին, որովհետեւ ինքը ամբողջ կեանքը ախրութեան մէջ անցուցած է և ասոր համար մէկ հատիկ, անզուգական է արուր օտանաւորներու մէջ, բան մը զոր լրագիրները երեւին կը զարնեն:

— Ինձա՞ր ըսիք, լրագիրները իր վրայ կը խօսին հէ՞, չըսէ՞ք որ Պարոն Կէսէնին պէտ գիտնականին մէկն է:

— Անորմէ ալ արելի, արուր իրեն գիտեցէք չէք զողար:

Երկանը գերեզմանին վրայ գրուելիք ասպանագիրին իմաստը լաւ մը բանաստեղծին բացատրելի ետքը, ըսաւ որ եթէ գրածին հաւնելու ըլլար, լաւ



պիտի վորձաարէր, մինակ օտանաւորը շուտ գրելու էր, Բանաստեղծը խոստացաւ յաջորդ օրն իօկ զրկելը իրեն բարեկամին ձեռքով:

— Ո՛վ դու ամուսնական հաւատարմութիւն, բացառնչեց Ռօտօլֆ օրբեւայրբիրն մեկնելէն ետքը, քեզի մօհաչչուկ քնօրերգութիւն մը գրեմ առէ՞ տեսնես, ուղղօգրութիւնը քսեօ նէ՞ դքսուհիէ մը աւելի «փառալախ» պիտի ըլլայ: «Սէնի կիտի» խրոֆած, Ա. օտաւած տայ օր, ի վորձաարութիւն ըրածիդ, հարիւր եօթը տարի ապրեցնէ զքեզ:

— Արգելք կ'լլամ ատոր, ընդմիջեց Մարսէլ:

— Իրաւունք ունիս, յարեց Մարսէլ, մօսցայ օր անոր մահուընէն ետքը ձեռք մը եւս ունիս գծելիք, և թէ ըսածիս պէս երկարակեցութիւն մը գօրծիդ չի գար. և ձեռքերը երկինք բարձրացնելով «Ատաւած պապա՛, աղօթքո մի բռներ», ըսաւ:

— Յետոյ աւելցուց. ի՛նչ աղուօր խելք մը ըրիք հօս գալով:

— Իրա՛ւ, բայց ի՛նչ ուղելու եկեր էիր:

— Քանի կը մտածեմ, մանաւանդ հիմա օր ըստիպեալ եմ գիշերը ոտանաւորը գրելու, այնքան կը տեսնեմ թէ կարելի չէ որ «վազ» անցնիմ քենէ խնդրելէ առաջին՝ ճաշ մը, երկրորդ՝ ծխախոտ և մոմ, երրորդ՝ ճերմակ առջի հագուստդ:

— Դիմակաւօր պարահանդէօի՞ պիտի երթաս: Կարծեմ այս գիշեր առաջին պարահանդէսը կը արուի կօր:

— Չէ, բայց այնպէս՝ ինչպէս կը տեսնեօ զիօ, Ռուսիոյ պատերազմին գացազ զինուորներուն պէս կը սաօիմ կօր: Իրաւ, կանանչ շլօթիկ»է բալթօս և արքօչէզ մէրինօ»է բանթալօնօ գէշ չեն, բայց քիչ մը գօրնանային են և յարմօր՝ այրեցեալ գօտիին տակ բնակօզի մը համար, բայց երբ մարգօ ինծի պէս հիւ-

օխային բեւեօի տակ կը բնակի, ճերմակ արջի շքօթիւմ» մր աւելի պօտչած է և կարծեմ աւելի անհրաժեշտ:

— Փոօօր առ գնա, դադօփարդ գէշ չէ, անիկօ տաք կը պահէ, և անգամ մը որ մէջը մօնաօ, փուար նետուած հացի պիտի նմանիօ:

Ռօտօլֆ անմիջպէս վրան անցուց կենդանիին մօրթը:

— Ասանկով, ջերմաչափին ջիղերուն պիտի դպչի եզեր, հոգօ:

— Ատա՛նկ դուրս պիտի ելնեօ, հարցուց Մարսէլ բարեկամին, երբ ճաշերնին աւարտեցին հինգ փարանօց պնակներու մէջ:

— Ի՛նչ կ'ըլլար որ, բան պիտի ըսեն եզեր, թօզ երթան ըսեն, հոգօ անդամ չէ. սա ալ կայ որ բարեկենդանը այսօր կ'սկօի:

Եւ այսպէս Բարրիգի մէկ ծայրէն միւօր գընաց ծանր ծանր քայլերով, ինչպէս պիտի ընէր այն չարքօտանին, որուն մորթին մէջ կը բնակէր աճաճաճար:

Շըվալիէի ջերմաչափին առջեւէն անցած պահուն հինգ մատերը քիթին մօրթին վրայ աւելցնելով «մասխարա» ըրաւ անոր քիթին:

Տուսէն ներս մտած տանը, գոնապօնը սոսկուճով նայեաւ իրեն. բայց բանաստեղծը չիփ չիտակ վեր ելաւ, մամը վառեց և խնամով շրջապատեց զայն թափանցիկ թուղթով մը, այսպէս պօշտպանելու համար զայն հովին յարձակումներուն դէմ:

Աօ ալ ընելէն ետքը, նստաւ գրելու:

Պահիկէ մը օտկայն տեսաւ որ թէեւ մարմինը պատասպարուած էր ջուրաին դէմ, բայց ձեռքերը նոյն վիճակին մէջ չէին գանուէր, և հազիւ մէկ երկու օտղ գրած էր իր տապանագիրէն, մտտերը մօեցան և գրիչը վօր ձգեցին:



— Ամէնէն քաջարի մարդը բնութեան չորս աստ-  
րերուն հետ գլուխ չի կրնար երեսել, ըստ Ռոմալֆօ  
աթոսին վրայ դիակի պէս ինչալով: Կեսար Ռուպիքո-  
նի անցքը կառարեց, բայց քիչ մը «զօռ» պիտի կրնար  
անցնիլ Պէրէչիւայէն:

Յանկարծ ուրախութեան ձիւ մը արձակեց Ռո-  
մալֆօ իր առջի օրտին խորէն, և նստած անդէն խեն-  
դի պէս վեր ցառկեց անանկ անձոտնի կերպով օր  
կազմարը չընկնու և էջի մեկունը թափեցու իր  
մուշակին սպիտակութեանը վրայ:

Միտքը բան մը ինկած էր որ կրնար կրկնու-  
թիւնը համարուիլ Շաթրըթօնի գող-փառին:

Ռոմալֆօ անկողնին տակէն դուրս հանեց թղթի  
խոշոր ծրար մը, որուն մէջ կը գտնուէին իր «վրէժ-  
խնդիր» ողբերգութեան ձեռագիրներէն մասնեակ մը  
մեծագիր էջեր: Այդ ողբերգութիւնը, օրուն համար  
երկու աստի ոչխարած էր, այնքան անգամներ գըր-  
ուած, սրբագրուած, արուած, նորէն մքրուրի ա-  
նուած էր սր եթէ անոր համար գործածուած թուղ-  
թերը քովէ քով բերուէին, ապահովապէս եօթը քի-  
լօնոց ծանրութիւն մը կրնային ներկայացնել:

Ամենէն ետքը գրած թուղթերը մէկ կողմ դրած  
Ռոմալֆօ և սիւսները քոյնց բերու վառարանին առ-  
ջեւը:

— Ես արդէն գիտէի թէ ասոնք քիչ մը համար-  
ութեամբ պիտի կրնային վերջապէս բանի կը ծա-  
սայել, Ա՛ն քեզի ձեռագիրի գեղեցիկ օտարու խուրձ  
մը: Ա՛խ, եթէ առաջուց գիտնայի թէ ի՛նչ պիտի  
գար թատերագութեանս գլխուն, կ'ընէի չի ըներ  
յատաջարան մըն ալ կը գրէի և այսպէս, այսօր վա-  
սելիք անիլի նիւթ կ'ունենայի, մե՛ղք: Բայց ի՛նչ ը-  
նենք, մարդս ամէն բան չի կրնար նախատեսել:

Վառարանին մէջ քանի մը թուղթ ձեռագիր կու  
նետեց և անոնց արձակած բոցերուն վրայ մատուր-

նեբուն թմրութիւնը փարսակ առաւ: Հինգ վայր-  
կեանի մէջ «Վրէժխնդիր» ձեռագիրն արարուածը  
«խաղացուած» էր, և Ռոմալֆօ երեք ասոյ միայն գրած  
էր իր ասպանագիր սառնաւորէն:

Աշխարհի վրայ օչինչ կրնար նկարագրել չորս գըլ-  
խուր հովերուն զգացած զարմանքը, երբ անոնք Ռո-  
մալֆօի գտնարանին մէջ կրակ գտնուիլը տեսան:

— Այրերնու հաւատարու չենք, փչեց հիւսիսա-  
յին հովը, որ Ռոմալֆօի մուշակին մագերը խոնջակե-  
լով կ'ըրօսուէր:

— Եկէք երթանք սըւոր ծխնելոյզին վրայ փչենք,  
թելադրեց ուրիշ հով մը, օտակ քիչիկ մը անոր վա-  
սարանը ծխել տանք:

Բայց երբ պիտի շարունակէին Ռոմալֆօին հետ ինչալ,  
հիւսիսային հովը տեսու որ Պարոն Ասակօ՝ գիտարա-  
նին մէկ պատուանին տոջեւ կեցած, մատիկովը կը  
սպասար քառածայն հիւսիսակներուն: Ասոր վրայ  
այոթօսը իր եղբայրներուն պոռոց:

— Եկէք սըտեղէն շուտ մը կծիկը դնենք, օրա-  
ցոյցը կ'ըսէ թէ պարզ և հանդարտ օդ պիտի ընէ այս  
գիշեր, եթէ մենք այսպէս շարունակենք և ժամանա-  
կին տեղերնիս չ'երթանք, կէս գիշեր չեղած դիտարա-  
նին հանդէպ կանսնազանց գտնուած պիտի ըլլանք,  
և խիստ հաւանական է որ Պարոն Ասակօ մեր պատ-  
ժուիլը պահանջէ:

Այդ միջոցին «Վրէժխնդիր» երկրորդ արար-  
ուածը մեծ յաջողութեամբ կը փայլէր, և Ռոմալֆօ իր  
ոտանաւորէն ասօր ասոյ գրած էր, բայց երկրորդին  
հազիւ կրցաւ երկու ասոյ արատորել:

— Միտքէս միշտ կ'անցնէր թէ այս արարուածը  
կարճ պիտի ըլլար: Թատերախաղի մը թերութիւննե-  
րը ներկայացման պահուն սիայն մարդու տալքին կը  
զարնեն, Բարեբախտաբար այս արարուածը անլի  
երկար պիտի տևէ, մէջը քոտն երեք տետի կայ:



ընդ որս և գահոյից տեսարանը, որ միեւնոյն ատեն իմ համբաւիս ալ գտնը պիտի ըլլար . . . :

Գահոյից տեսարանին վերջին հատուածը բոցավառ թռիչքով մը անյայտացած պահուն, Ռոտուլֆ ասակաւին վեց աող ունէր գրելիք:

— Կարգը չորրորդ արարուածին եկաւ հիմա, ըստաւ Ռոտուլֆ քիչ մը տաքցածին պէս: Ատիկա գտնէ հինգ վայրկեան մը կը դիմանայ. ծայրէ ծայր մենախօսութիւն է մէջինը:

Անոր ետեւէն վառարանին մէջ նեւեց թատրերգութեան վախճանը, որուն բունկիւր և մարիւր մէկ եղաւ: Ծիլդ այդ վայրկեանին, Ռոտուլֆ ջնարերգական շքեղ թափով մը կը վերջացնէր գովասանքը հանգուցելոյն, որուն ի պատիւ այնքան աշխատութիւն թափած էր: Երկրորդ ներկայացման մը համար ալ տակաւին նիւթ կը մնայ կոր, ստածեց Ռոտուլֆ, քանի մը ուրիշ ձեռագիրներ խօթելով ռնկոզնին տակը:

Հետեւեալ օրը, երեկոյեան ժամը ութին, Օրիորդ Անտէլ պարտարահէն ներս կը ժանէր ձեռքը բռնած ճերմակ մանուշակի օքանչիւի փունջ մը, որուն մէջտեղը երկու վարդեր, անոնք ալ ճերմակ, իրենց փրթթոււմովը կը փայլէին: Ամբողջ գիշերը ծաղկեփունջին երեսէն Անտէլ արժանացու կիներուն շնորհաւորութիւններուն և էրիկ մարդոց դարպասին: Ասոր վրայ Անտէլ բուական գոհ մնաց իր ճշուղէնձէն, որ պատճառ եղած էր անձնատիրութիւնը զգուտը գոհացումներ հայթայթելու, և թերեւս աւելի խանդաղապանքով մտանէր վրան, առանց այն կնամեծար հետապն գումներուն, որոնց կ'ենթարկէր զինքը նոր հարսին մէկ աղգականը, որ քանի մը անգամ հեռը պարած էր:

Ստորեալ երիտասարդ մըն էր ան, զոյգ մը փառասոր ոլորուն պիւերով, տեսակ մը կարթեր որոնց ծայրերէն կը կախուին նորընծայ աղջիկներուն օր-

տերը: Երիտասարդը Անտէլէն խնդրած էր որ իրեն տայ երկու ճերմակ վարդերը որ ծաղկեփունջէն կ'ուսելնային՝ մանուշակները արգէն փեթրուած ըլլալով ասոր և անոր կողոսէ: Բայց Անտէլ մերժած էր, ետքէն գտնոնք մոռնալու համար բազմոցի մը վրայ շարկէ խորտեալ երիտասարդը գացած առած էր:

Այդ պահուն Ռոտուլֆի ճշտօքսին մէջ տասնեւչորս աստիճան ցուրտ կը տիրէր, և ինքը պատուհանի մը առջեւ կեցած Մէնի պատնէչին կողմերը՝ պարտարահին լոյսերը կը դիտէր, և ուր կը պարէր իր զարմուհին՝ Անտէլը որ իրմէ չէր ախորժեր բնաւ:

### ՃԿՆԱԺԱՄԱՅԻՆ ԹՈՒԱԿԱՆԸ

Այն ամիսներուն մէջ, որոնցմով կ'սկսին նսր

եղանակները, թուականներ կան որ օարտափելի են: Սովորաբար ամսուն 1ր և 15ը կ'ըլլան ասոնք:

Այդ օրը վարդածածն արշալոյսը չէ որ կը բանայ արեւելքի գուռները, այլ պարտապահանջները, ասն տէրերը, զատարանի բարապանները և այս կարգի դրամահաւաքի պայուսակով մարդիկ: Այդ օրը կ'սկսի հայուեցուցակներու, ընկալադիրերու, փոխանակագիրերու տարափով մը, և կը վերջանայ ճարթէտթօններու կարկուտով: «Աստուած ողորմի»:

Ասանկ ալ, Ապրիլի 15ի առաուն Ռոտուլֆ մշիկ կը ջնանար և երազին մէջ կը տեսնէր հորեղբայր մը որ կտակով իրեն կը թողուր Բերուի մէկ նահանգը, մէջի կիներն ալ միասին:

Երեւակայական Պակասուլուի մը օլիքներուն վրայ լողացած պահուն, մէյ մըն ալ դրան կղզանքին մէջ մացուած բանալիի մը հանած ձայնը եկաւ արթնցուց յանձնապատան ակէրտեղ-



տրան՝ իր սահեղինիկ երազին ամէնէն շողջողուն մէկ փուլին:

Անկողնին մէջ վեր ջառկեց քունով ծանրաբեռնեալ մտօք ու տչքերով, և չորս կողմը փնարկ մը պարօցուց:

Տարածօրէն նշմարեց այն ատեն սենեակին մէջ սօքի վրայ կեցած մարդ մը: Եւ ի՞նչ մարդ:

Վաղազարթոյց այցելուն եռեղջիւր գլխարկով մէկն էր, կոնակն ի վար կախուած կաշեայ պայտսաակ մը և ձեռքը բռնած թղթապանակ մը:

— Լա՛ւ, բաւ Պարոն Պրնուա, ուրախացած այն յոյսով որ վերջապէս հաշիւները պիտի կարգադրուէին: Ահաւասիկ կօշիկներուն համար առանձին հաշիւ մը: Երեք դոյզ կօշիկ, քսանականէն կ'ընէ վաթսուն:

Ռօտօլֆ ակնարկ մը պարօցուց զոյգ մը ոտնակարկամ կօշիկներուն վրայ:

— Աւա՛ղ, մաածեց, ձեթէ թափառական Հրեայա՛րն ալ զառայած ըլլային, առկէ աւելի խերերնին անիծուած չէր ըլլա՛ր. այսուամենայնիւ Մարիին ետեւէն վազելով վազելով այս ճակար մտան: Շարունակեցէք Պ. Պրնուա:

— Վաթսուն ֆրանք ըօինք, յարեց անիկա, աս որ վրայ աւելցուցէք ձեզի փոխ տուած քսանեկօթք ֆրանքս...:

— Վայրկեան մը: Մենք ըսինք որ ամէն ուրբ իր պահապօնը պիտի ունենար: Յանուն բարեկամութեան է որ զուք այդ ստակը փոխ տուիք. արդ, հօ՞ճեցէք կօշիկի սահասանէն անցնիլ վառահուլթեան և բարեկամութեան սօհմանը, որ զօտ հաշիւ մը կը պահանջէ: Ձեր ինձ համար ունեցած բարեկամութիւնը քանի՞ ֆրանքի կը բարձրանայ:

— Քսանրեօթք

— Քսանրեօթք ֆրանք... Պարոն Պրնուա, շատ ժամ գինով բարեկամ մը ձեռք անցուցած էք. ինչ

և իցէ, ուստի նորէն սկսինք, եօթանասունեկինք, վաթսուն և քսանը եօթը. քանի՞ կ'ընէ:

— Հարիւր վաթսունեկու ֆրանք, ըսաւ Պ. Պրնուա հաշուեցուցակները ներկայօցնելով:

— Հարիւր վաթսուն երկու ֆրանք, գորմանս լի բան: Գուժարուժը ի՞նչ աղուոր բան է եղեր... ուրեմն, Պարոն Պրնուա, քանի որ հաշիւները այլեւս կարգադրեցինք, երկուքս ալ կրնանք հանգիստօր ըլլալ, առկէք ետքը ընչիքնիս գիտենք: Ես եկող ամիս հաշիւները ձեռնէ կ'առնեմ, և որովհետեւ միջնեւ այն ատեն ձեր իմ վրայ ունեցած վստահութիւնը և բարեկամութիւնը կրնան աւելնալ, ի հարկին նոր պայմանաժամ մը անշուշտ շնորհ պիտի ընէք ինձի: Ասօք հետ մէկտեղ, եթէ ատնաէրը և կօշկապարը նեղը դըսնեն զիս, պիտի խնդրէի որ բարեկամը խօսք հասկըցնէր անոնց: Չարմանալի է, Պարոն Պրնուա, աս մէն անգամ որ ձեռ ատնաէրի, կօշկապարի և բարեկամի երբեակ յատկութիւններուն վրայ կը մտածեմ, կը փորձուիմ հաւատալ Սուրբ Երբորգութեան:

Քանի Ռօտօլֆին ըսածները մտիկ կ'ընէր. մարդուն երեսին գոյնը կարմիրի, դեղինի և ձերմակի կը փոխուէր, և իր վարձակալին ամէն մէկ հեգնութիւնուները, բարկութեան այս ծիրանի գօտին մարդուն երեսին կնճիռները կ'աւելցնէին:

— Պարո՛ն, բաւ, ես չեմ հանդուրժեր որ ուրիշները քիթիս խնդան: Ա՛յ համբերութիւնս հասաւ, պէտք է որ տունէս ելլէք, և եթէ միջնեւ այս իրիկուն ստակս չբերէք, ես ընչիքս զիտեմ:

— Սառ՛կ մի, ես ձեռնէ ստակ ուզած ունի՛մ, ըսաւ Ռօտօլֆ, ստակ ունենամ իսկ, գարձեալ ձեզի տալու արամաղիր չեմ: Ուրբա՛թ որ մը... ատիկա ասղուրսուղութիւնը կը բերէ:

Պարոն Պրնուայի բարկութիւնը ուրականի կը



փոխուէր, և եթէ տանը կարասիներք իրը չըլլային, անպատճառ թիկնաթոռի մը մէկ օտքը գլխուն վրայ կը կտարէր: Առանց ատանկ ընելու սպառնալից խօսքեր արտասանելով դուրս ելաւ:

— Տօպրակնիդ հոս մօտեցաք, պոռաց Ռօտօլֆ ետեւէն:

— Ա՛խ, Առաւուած իմ, «ս ի՛նչ աղօռ» գործ է եղեր, սուրբաց Ռօտօլֆ երբ մինակ մնաց, ասիւծ մը զօպելը աւելի դիւրին է, խաչոր:

— Բայց, յարեց Ռօտօլֆ, անկողնէն վար ցած կելով և աճապարանօք հագսելով, այլեւս կարելի չէ հոս կենալ, «կնքահայր»երու արշաւանքին վերջը չպիտի գայ: Պէտք է փախչիլ, ինչպէս պէտք է նաեւ ճաշել: Եթէ Շոնարին երթամ, ինտօ՛ր կ'ըլլայ արդեօք, հետը կերակուրի կը նստիմ և քիչ մը օտակ փոխ կ'ուզեմ իրմէ, հարիւր ֆրանքը կը բաւէ ինծի: Եկուր երթանք Շոնարին:

Վար իջած առան սանգուխներուն վրայ դէմը ելաւ Պարոն Պրնօւա, որ ուրիշ վարձակալի մը քով միեւնոյն ձախողուածքին հանդիպած էր, ինչպէս կը վկայէր ձեռքը բռնած սօսակի տոպրակը, դեղօ՛ր մը:

— Ինծի փնտռող ըլլայ նէ, բւէք որ օդափոխուած թեան գացի Ալպեան լեաներու կողմը, բաւ Ռօտօլֆ, բայց չէ, ըսէք որ այլեւս հոս չեմ բնակիր:

— Ճամբաբաւթիւնը ըսած պիտի ըլլամ, մր'նջեց Պ. Պրնօւա, իր խօսքերուն շատ նշանակալից շեշտ մը օտարով:

Շոնար Մօնմարթըրը կը բնակէր: Բարիզի մէկ ծայրէն միւս ծայրը պէտք էր երթալ: Այս ճամբորդութիւնը խիստ վառնալու էր Ռօտօլֆին համար:

— Այսօր, կ'ըսէր ինքնիրեն, փողոցները առնելիքներնեքով օալոյառակուած են:

Միտքը դրածին պէս սակայն արտաքին պալու վառներէն չգնաց. ընդհակառակը ցնորական յուսա-

հառութիւն մը խրախուսեց զինքը Բարիզի կեդրոնական փողոցներու վառնալու ուղեցոյցին հետեւիլ: Ռօտօլֆ կը մտածէր թէ անտնկ օր մը որ միլիոնները հոտարակութեան մէջ կը պարզկէին հաւաքիչներու կանակին վրայ բնոցուած, կրնար պատահիլ որ հօգար ֆրանքնոց պանքառմս մը գեռին ինկ . ծ ըլլալով ընկեցիկ մանկանց պաշտպան՝ Սուրբ Վէստան օր Բօլի պէս մէկու մը կ'սպասէր: Ասոր համար Ռօտօլֆ օչքերը գեռինը անկած սկօսաւ կամօց կամօց քալել, բայց երկու գնդասեղէ զօտ ուրիշ բան չգտաւ:

Երկու ժամ ետքը Շոնարի օտնը կը հասնէր:

— Վա՛յ, գո՛ւն ես, ըսաւ անիկա:

— Այո՛, ճաշի եկայ քեզի:

Մրանօցիներու յառուկ գորշ վիշնիի գոյն ըզգեստ մը հագած էր և շունչը բռնուած ըլլալ կը թըւէր հինգ յարկերէ վերելքէ մը:

Քաղցրաբարոյ շարժուածներ ունէր և խորիւմ քարուածք մը, իբրեւ թէ լուսայափոխի «թէզկեան» մը եղած ըլլար՝ շարժականութեան սէջ դրուած:

Վայրկեան մը դող ելաւ Ռօտօլֆ, և ետեղջիւր գլխարկէն դառելով՝ այդ մարդուն մէջ կարծեց տեսնել ոստիկան մը, բայց դրամով լեցուն պայտուակէն՝ օխալած ըլլալը անմիջապէս հասկցաւ:

— Հիմա հասկցայ, մտածեց, ժառանգութենէս թերհաշիւ մը ըլլալու է, այս մարդը անպատճառ Բեքուէն կուգայ. բայց ինչո՞ւ սեւօտրթ չէ, զարմանալի բան:

Եւ մարդուն նշան ըրաւ, ցոյց օտարով պայտուակը:

— Ինչ ըլլալը գիտեմ, հոգ տեղ դրէք, շնորհակալ եմ:

Մարդը Պանք օր Մրանօի մէկ հաւաքիչն էր օր Ռօտօլֆի հրաւերին վրայ սօսեցաւ իրեն և օչքին օտչել դրաւ բազմերանգ թուանշաններով և գիրերով նշանագրուած թղթի կտոր մը:



— Ընկալագիր մը կ'ուզէք, չէ՞. իրաւունք ունիք, սո սեղանին վրայի գրիչը և մելանը ինծի տուէք:

— Ո՛չ, ես հարիւր յիսուն ֆրանքի մուրհակ մը գանձելու եկած եմ: Այսօր Ապրիլի 15ն է:

— Հա՛, բաւ Ռօօօլֆ՝ պարտաճուրհակը քննելէ ետքը, Պիրսօնի՛ հրամանին: Պիրմանը դերձակօ է:

Աւա՛ղ ռակայն, յարեց, փոխն ի փօխ ակնարկ մը նետելէ ետքը անկողնին վրայ նետուած «արքէն-կօթ»ին և պարտաճուրհակին վրայ, պատճառները կ'անհետանան բայց արդիւնքները երեւան կ'լլեն: Իրա՞ւ այսօր Ապրիլի 15ն է... «Թօհաֆ» բան և բռել թէ դեռ բերանս ելակ չեմ գրած...:

Պանքային պաշտօնեան Ռօօօլֆի դանդաղութեանէն նեղացած դուրս ելաւ անօր բօնիով:

— Մինչեւ ժամը չորս տասն ունիք վճարելու:

— Պատուաւոր մարդոց համար ժամ չի կայ, բաւ Ռօօօլֆ, և հոեղջիւր գլխարկով մարդուն ետեւէն նայելով, աւելաց:

— Սա վարնօցին նայեցէք, պայուսակն ալ հետը կը տանի կոր...:

Ռօօօլֆ անկողնին վարագոյրները քայեց և ջանաց իր ժառանգութեան ճամբան շարունակել, բայց հետեւած ուղիին մէջ չփոթուելով, աչալրժող մը ուրիշ երազի մը հանդիպեցաւ, որուն մէջ «Թէթր Ֆրանսէ»ի անօրէնը գլխարկ ի ձեռին եկած էր իր Թաթրոնին համար տաած մը խնդրելու, և Ռօօօլֆ սովորութիւններուն տեղեակ ըլլալով՝ կանխավճար մը կը պահանջէր: Բայց այն պահուն որ անօրէնը ձեռքը գրպանը կը տանէր, քնացողը նօրէն կէօ մը արթնցաւ ուրիշ մէկու մը ներս մտնելէն. Ապրիլ 15ի տարրեր արարած մը:

Եկողը Պարօն Պընուան էր, իր բնակած ասունին տէրը, որ միեւնոյն տասն թէ՛ ասնաւորն էր և թէ՛

իր վարձակալներուն կօչկակօրը և վախառուն: Այդ տատուն Պ. Պընուայի վրայէն օդի և անվճար մտացած մաւրհակներու գարշելի հոտ մը կուգար: Չեքն ալ պարապ քսակ մը բռնած էր:

— Չար ստասնայ...ասիկա Թէթր Ֆրանսէի անօրէնը չէ. եթէ ան ըլլար ճերմակ փողկօպ կապած կ'ըլլար և քսակն ալ աստեկ պարապ չէր ըլլար:

— Բարի լոյս, Պարօն Ռօօօլֆ, բաւ Պ. Պընուա անկողնին մօտենալով:

— Պարօն Պընուա, բարի լոյս, ի՞նչ պատահուունքի կը պարտիմ ձեր հաճելի այցելութիւնը:

— Եկած եմ պարզապէս ձեզի ըսելու թէ այսօր Ապրիլի ասանկահինգն է:

— Արդէն ասանկահինգը եղեր է, չէ՞. ժամանակը ի՞նչ շուտ կ'անցնի, խելք հասնելիք բան չէ, ուրեմն ճերմակ բանթալօն հագնելու տանը եկեր է, վաղը երթամ հա՞մ մը առնեմ: Ապրիլի 15ը հէ՞. խաչօր եթէ դուք եկած չըլլայիք, մաքէս անգամ չպիտի անցնէր ասիկա: Ան չէ «ամմա», ես քանի՞ ամսական պարտք ունիմ ձեզի:

— Աւիէ դառ, բացէն հարիւր վաթսուն երկու ֆր նք կ'ուզեմ ձեռնէ, բաւ Պ. Պընուա. այս հաշիւը մաքրելու տանը եկած է:

— Աճագարելու բացարձակ պէտք չունինք. տոր համար մի նեղանաք, Պ. Պընուա: Առջեւնիս տասն ունինք: Պղտիկ հաշիւներուն մեծնալու համար ժամանակ տալու ենք:

— Բայց, պատասխանեց ասնաւորը, արդէն քանի մը անգամ այսպէս յետաձգեցիք ձեր վճարոմները:

— Այդ պարագային եկէք հաշիւնիս մաքրենք, այսօր կամ վաղը, ինծի համար տարբերութիւն չըներ, և յետոյ ի՞նչ կ'ըլլայ ի՞նչ չըլլար, մարդս մահկանացու է, մաքրենք:

Գոհունակութեան ժպիտ մը ճառագայթեց ասն-



տիրոջ երեսին փոթերուն վրայ, և մինչև իսկ իր պա-  
րապ պարկիկը յոյսով սուտեցաւ:

— Ես ի՞նչ կը պարտիմ ձեզի, հարցուց Ռոսուլֆ:

— Նախ և առաջ երեք ամսական վարձք կը պար-  
տիք, որ ամիսը ջրանեկինդ ֆրանքէն կ'ընէ եօթանա-  
սունեկինդ ֆրանք:

— Եթէ երբեք հաշիւին մէջ սխալ մը չի կայ:

— Յետոյ, երեք զոյգ կօշիկ, ջրանական ֆրան-  
քէն....:

— Հոգ կայնեցէք քիչ մը, Պարօն Պրնուա, հաշիւ-  
նիդ իրար չխառնենք: Հիմա գործս ասնտիրոջ հետ չէ,  
այլ՝ կօշկակարին, հետեւաբար եկէք հաշիւները զա-  
տենք: Թուանշանները լուրջ բաներ են և պէտք չէ  
որ իրար խառնենք:

— Ա՛խ օրերիս, բախտ չունիս եղբք. հոմանու-  
հիս, զոր առանկինդ օրէ վեր տեսած չունէի. քիչ մը  
առաջ հոս էր. եթէ վայրկեան մը աւելի կանուխ եկած  
ըլլայիր....:

— Դոնէ հարիւր ֆրանք ալ փօխ չես կրնոր  
առլ ինծի:

— Ի՞նչ ըսիր, գուն ալ հէ՞, պատասխանեց Շա-  
նար յառին աստիճան զարմացած, ստակ ուզելու կու-  
գաս հէ՞, ըսել է թշնամիներուս կը միանաս:

— Երկուշաբթի կուտամ:

— Կամ Մազաթիւն, կ'երեւայ թէ կը մտնաս,  
օրերիս, թէ այսօր ի՞նչ օր է: Հաւատա որ ձեռքէս  
բան մը չի գար, բայց յաւատաեցիւ աեղի չի կայ,  
գեա օրը իրիկուն չէ եղած. կ'ըլլայ որ նախախնա-  
մութիւնը դէմդ ելլէ, անիկա երբեք կէօրէն առաջ  
անկողնէն չելլեր:

— Ո՛հ, յարեց Ռոսուլֆ, ան քու ըսած նախախ-  
նամութիւնդ փոքրիկ թաչնոց կեր առլէ զառ ուրիշ

բանով զբազած չունի: Մէյ մը երթամ Մարսէլը  
տեսնեմ:

Այդ միջոցին Մարսէլ Պրէտտ փոզսը կը բնակէր:  
Ռոսուլֆ շատ Եսուր վիճակի մը մէջ գաւա բարեկամը  
որ իր Վարմիր ծովուն անցքը պատկերացնող նկա-  
րին առջև կեցած խորունկ խորունկ կը մտածէր:

— Ի՞նչ ունիս, հարցուց Ռոսուլֆ ներս մտնելով,  
ինկած կերպարանք մը կայ վրագ:

— Զգէ՛, Աստուածդ օրիեո, բոաւ այլաբանական  
սկզբնաւորութիւն մը առաջ խօսքին, առանկինդ  
օրէ ի վեր Աւագ Շաբթուան մէջ կը գտնուիմ:

— Զոր առինկա՞նու սեւ ճթուրփ», միաքէս չելլեր:  
Ապօքէն Ռոսուլֆ աղի յիշատակ մը պահած էր  
այն օրերէն ուր սիմիայն այդ ձուկը կը կազմէր իր  
ամբողջ օնունդը:

— Վ՛ախ, վ՛ախ, ըսաւ, գործերնիս գէշ է, ես  
ալ եկած էի քենէ հարիւր ֆրանք սուզելու:

— Հարի՛ւր ֆրանք... ըսաւ Մարսէլ, յաւիտենա-  
պէս բանըդ, գործըդ զգէվզէկա՞սութիւն պիտի ըլլայ:  
Ատանկ դիցարանական գումար մը գալ ինձմէ ուզե՛լ  
...անանկ տեսն մը որ անկուտաիւթեան այրեցեալ  
գօտիին տակ կը գտնուիմ...: Անպատճած հաշիւ կե-  
րած ըլլալու ես:

— Ընդհակառակը, բնաւ բան մը չեմ կերած,  
աւա՛ղ:

Եւ Ռոսուլֆ առաւ քալեց իր բարեկամը ձգելով  
կարմիր ծովին փառնց վրայ:

Կէս օրէն մինչև ժամը չորս, Ռոսուլֆ մէկիկ մէ-  
կիկ պարկու իր բոլոր ծանօթներուն դուռները, քա-  
ռասունեկութ թագերը ժուա եկաւ, և դրեթէ սեթ  
մղոն տեղ քալեց առանց որ և է յաջողութեան: Ապ-  
րիլի 15ը ամէն տեղ իր ազգեցութիւնը բանեցուցած  
էր միեւնոյն սասակութեամբ. և սակայն կերակուրի



ատենը կը մօտենար, բայց ճաշին՝ կերակուրի ժամուն հետ մօտենալուն քիչ հաւանականութիւն կար:

Բօն նէօֆի վրայէն անցած ատենը միտքը բան մը կհաւ:

— Հօ՛, հօ՛, ըսաւ ինքնիրենը, Ապրիլի՛ 15ը... բայց այսօրուան համար ճաշի հրաւիրուած եմ:

Եւ գրպանը խառնելով դուրս հանեց ապագրուած ասմակ մը որուն վրայ գրուած էր.

Վիէթի Փակոց.— Օ Կաան Վէնքէօր:

300 Հօգինոց ձաշարան—Տարեկան Հացկերոյթի պատիւ Ծննդեան մարդասէր Մեօիային

15 Ապրիլ 184.—

Մտից տոմս մէկ անձի համար

Ծանօթ.— Ամէն օք կէս յիշ գինիի ժիւղն իրաւունք ունի:

րը, որ մինչև ամառու իրենց թափած արցունքներէն կաս կործիր կորած էին: Յաւազին և անաւոր գիշե-  
րաջանութիւն, որուն նմանը մեր մէջէն ամէնէն ծաղրասէրը, ամէնէն սկեպտիկը քանի մը անգամներ անցուցած է կեանքին մէջ

Առտուն, երբ բարեկամները ներս մտան սենեա-  
կէն, աւրուած էր:

— Տե՛՛՛ք հիմա, բաւ Մարտէլ, ես բողէն գի-  
տէի որ առանկ պիտի ըլլայ. իր երէկի ուրախու-  
թիւնն է որ սրտին զարկած ըլլալու է: Աս առանկ չի  
կրնար տեսել սակայն:

Եւ երկու երեք ընկերներու հետ համախորհուրդ սկսու օրիորդ Միմի վրայ խել մը անխորհուրդ յայտ-  
նութիւններ ընել, որոնց ամէն մէկ բառը փուշի պէս Ռոտոյֆի սրտին մէջ կը մխուէր: Բարեկամները իրեն ապացուցին թէ ամէն առանկի պէս խաբուած էր թէ իր տանը մէջ և թէ դուրսը և ծիւրախաի հը  
րեշտակին պէս այդ դաշկադէմ արտաքին չար զգա-  
ցումներու և վայրագ բախտերու առաջ մըն էր հա-  
մակ:

Մէկը և միւսը փոխնիփոխ ձեռք առին իրեն մը-  
տազրած գործը, որուն նպատակն էր հասցնել Ռո-  
տոյֆը այն կէտին ուր գառնացեալ սէրը անգոհու-  
թեան կը փոխուի, բայց իրենց մտադրութիւնք կի-  
սովին միայն յաջողութիւն գտան. բանաստեղծին յու-  
սահատութիւնը զայրոյթի վերածուեցաւ: Կատաղօրէն նեռուեցաւ ասոր օրուան պատրաստած ծրարներուն վրայ և մէկ կողմ դնելէ ետքը այն ամէն բաները զորս համանուէին հետը բերածէր ամէնէն ներս մտած ատե-  
նը, մէջանդէն վերցուց ինչ որ ինքը տուած էր անոր իրենց կենակցութեան տեսողութեանը, այսինքն ա-  
նոր գոյքերուն մեծագոյն մասը և մանաւանդ պաճու-  
ձանքի առարկաներ, որոնց վրայ Միմի հոգի կուտար

բոլոր զօրութեամբը իր պլառասիրութեան որ կշտանալ  
չէր գիտեր վերջին ասեմները:

Յաջորդ օրը ցերեկին Միմի իր ծրարները առնե-  
լու եկաւ: Ռոտոյֆ տունն էր և մինակը:

Արժանապատուութեան բոլոր զօրութիւնները  
հարկ եղաւ որ մէջանդ գային վար դնելու համար  
զինքը որպէսզի հոմանուէիին լանջքին չփթթուի:  
Համար նախապիւնքերով ասոր ընդունելութիւն մը բո-  
րու և օրիորդ Միմի պատասխանեց իրեն այն սասն  
և սիրա ծակող հեզնութիւններով որ ամէնէն ապի-  
կարներուն և երկչոտներուն ճանկեր բուսցնել կու-  
տայ: Հանդէպ այն արհամարանքին, որով իր հոմա-  
նուէին լրբեմի յամառութեամբ մը զինքը կը ձողկէր,  
Ռոտոյֆի բարկութիւնը վայրագ և զարուբի կեր-  
պով պոթիւց: Վայրկեան մը եկաւ որ Միմի բար-  
ստփէն աստի գոյն կարած, վախցաւ որ մի գուցէ չը  
կայինայ ողջ ազատիլ անոր ձեռքէն: Արձակած ձի-  
չերէն դրացիները վաղեցին եկան և զուրս հանեցին  
զինքը Ռոտոյֆի սենեակէն:

Երկու օր ետքը, Միմի բարեկամուէիներէն մէ-  
կը եկաւ Ռոտոյֆին հարցնելու համար թէ տրամա-  
դիր էր արդեօք ալլալ վար դրած հագուստի ծը-  
րարները:— Ոչ, պատասխանեց: Իր հոմանուէիին կող-  
մէ եկող բաներ կնկան բերանը փնտաեց և շաղկօ-  
բատել տուաւ: Միմի վրայ, Այդ կինը իմացուց որ  
Միմի շատ թշուառ կացութեան մը մէջ կը գտնուէր  
և քիչ օրէն ամառէրը զինքը դուրս պիտի նետէր:

— Հոպա սերօ՞ղը, որուն վրայ հոգի կուտար:

— Բայց, պատասխանեց Ամէլի՛ յիշեալ բարեկա-  
մուէին, այդ մարդը բնաւ նպատակ չունի զայն իր-  
բեւ համանուէի պահելու: Արդէն ան հաս մը ունի  
շատոնց ի վեր և շատ երես տուած չունի Միմի, որ  
վրաս մնացած է և շատ նեղութիւն կուտայ ինծի:

— Թող գլխուն ձարը նայի, բաւ Ռոտոյֆ, ին-  
քը իր ձեռքովը բրաւ, ես չեմ խոտնուիր...:

Եւ քննարանութիւններ ըրաւ օրիորդ Ամէլիի և  
հաւատացնել ալ ուզեց անոր որ իրմէ գեղեցիկ կի-  
չի կար աշխարհիս վրայ: Ամէլի գնաց Միմի ահանջը



ձգեց Ռոսուլֆի հետ ունեցած տեսակցութիւնը:

— Ի՛նչ կ'ըսէ, ի՛նչ կ'ընէ, հարցուց Միմի, իմ խօսքս ըրա՛ւ:

— Ամենեւին, արդէն մտացեր է քեզ, անուշիկս. Ռոսուլֆ նոր հստանուհի մը բռներ է և հիանալի շըրջազգեստ մը առեր է անոր. կ'երեւայ թէ այս օրերս ձեռքը չառ ստակ անցեր է, ինքն ալ ըսես՝ լօրաք պէս հագուեր էր. ի՛նչ ալ շնորհքով երեւաստորդ մըն է, ինծի անանկ ազուար բաներ ըսաւ որ...:

— Ես պիտի փնտռեմ հասկնամ թէ ի՛նչ ըսել է ասիկա:

Ամէն օր, օրիորդ Ամէլի՛ Ռոսուլֆը տեսնելու համար կուգար օրևէ պատրուակով և Ռոսուլֆ, ուղէր չուղէր, չէր կրնար ինքզինքը զօպել Միմիի վրայ խօսելէ:

— Անանկ սերտիս է որ, պատասխանեց բարեկամուհին, կարծես թէ այդ թշուառ վիճակին մէջ չը գտնուէր: Մնաց օր, ան կը հաւատաէ թէ ուղած տանը պիտի գայ ձեզ գտնէ ասանց կանխաւ իմաց տալու, և միտքը դրած է ասանկ ընել օրայն և միմիայն ձեր բարեկամները կտաղեցնելու համար:

— Աղէկ, աղէկ, ըսաւ Ռոսուլֆ, թող գայ տեսնենք:

Եւ նորէն գարպաս ընել սկսաւ Ամէլիին, որ ասուն գացածին պէս, տեղն ի տեղօքը եղածը կը պատմէր Միմիի և երզում կը հանէր որ Ռոսուլֆ խենդի պէս սիրահարած էր իրեն:

— Երէկ ալ, թէ՛ ձեռքս պողաւ և թէ վիզս, կ'ըսէր: Կ'ուզէ որ վաղը զիս հետը պարտանդէս տանի:

— Սիրելի բարկամուհիս, ըսաւ Միմի զգածուած, ինչ ըսել ուզելիզ կը հասկնամ կոր, ինծի շլլեցնել ասալ կ'ուզես թէ Ռոսուլֆ սիրահարած է քեզի և զիս քանի տեղ չի գներ: Պարօպ տեղը ժամանակը կը կործնցնես թէ՛ անօր և թէ ինծի հետ:

Իրօզութիւնը այն էր որ Ռոսուլֆ Ամէլիի հետ կը

թացիկնար զայն իր առնը աւելի ստէպ բերելով անօր հետ Միմիի վրայ խօսելու ասիթներ ստեղծելու համար, մաքիւմէլութիւն մը որ թերեւս նպատակ մը ունէր, բայց Ամէլի տեսնելով որ Ռոսուլֆ միշտ կը սիրէր Միմին, և այս վերջինը չառ չպիտի ուշանար զալ անօր հետ բնակելու, բայց ջանքը կը թափէր ձարպիկօրէն յերիւրուած քաւթիւններով, կարելի եղածին չափ չբացնել ամէն ինչ որ կրնար երկու տարփածուները մօտեցնել իրարու: Այն օրը որ պարաս հանդէս պիտի երթային, Ամէլի առասուն կանուխ Ռոսուլֆին գնաց հարցնելու թէ օրոշումը որոշու՞մ էր:

— Այո, պատասխանեց անօր. ասիթը չեմ ուզեր փախցնել արդի ժամանակներու ամէնէն գեղեցիկ կընկան պաշտպան ասպետը ըլլալու:

Ամէլի առաւ այն պրօնայ կերպարանքը, զոր ունեցած էր, առջին և միակ անգամը, որ երեւցած էր Բարիդի շրջապայրին մէկ անշտն թատրոնին բեմին վրայ, նստիչաի շարքարդական դերի մը մէջ, և Ռոսուլֆին խորատացաւ որ գիշերը պատրաստ պիտի ըլլար պարահանդէսին համար:

— Աղէկ միտքս ինկաւ, ըսաւ Ռոսուլֆ, ըսէք օրիորդ Միմիի որ եթէ կ'ուզէ թող գայ գիշեր մը ինծի հետ անցընէ, ես ալ պատրաստ եմ իր ինչքերը իրեն վերադարձնելու:

Ամէլի կտարեց Ռոսուլֆի յանձնարարութիւնը, բայց անօր իր հասկցածէն տարբեր իմաստ մը տալով:

— Ինչ Ռոսուլֆը վարնոց մարդուն մէկն է եղեր, ըսաւ Միմիին և ըրած առաջարկը պարզպէս խայտառակութիւն է: Իր այս ընթացքովը զքեզ ամէնէն անարգ, ամէնէն գծուծ արարածներուն կարգը կ'ուզէ իջեցնել. եթէ դուն իր առնը երթաս, ոչ միայն լաթերը չպիտի տայ, այլ և իր բոլոր քրեկամներուն տղու զքեզ ծաղրուծանակ պիտի ընէ: Աօրիկ մէջերնին կարգադրուած գաւակցութիւն մըն է:

— Ես ալ չեմ երթալ, ըսաւ Միմի: Բայց երբ տեսաւ որ Ամէլի իր պատճառները կը



պատրաստէր, հարցուց որ պարահանդէս պիտի երթա՞ր:

— Այո՛, պատասխանեց միւսը:

— Ռոտօլֆի՞ն հեա:

— Այո՛, պիտի գայ և առնէն քօան քայլ հետևինձի պիտի սպասէ:

— Բարի զուարճութիւն, ըսաւ Միմի և տեսնելով որ ժամագրութեան ատենը կը ճօտենար, շտապաւ վազեց գնաւ Ալէլիի սիրողին առնելու և իմաց առաւ անոր թէ Ամէլի զինքը խաբելու մրայ էր իր նախկին սիրականին հետ:

Պարտնք վագրի մը պէս նախանձոտ և անուայայ մէկու մը հանգոյն դնաց գտաւ Ամէլին և ըսաւ անոր թէ գիշերը միասին անցընել կ'ուզէր:

Ժամը ութին Միմի վազեց այն անգը ուր Ռոտօլֆ պիտի սպասէր Ամէլիին: Տեսաւ որ սիրողը վեր վար կը պառաւէր մէկու մը սպասողի շարժումներով: Երկու տնգամ քովէն անցաւ, առանց մօտենալ համարձակելու: Այդ իրիկունը Ռոտօլֆ խիստ վայելչապէս հագուած էր և ութ օրէ ի վեր անցուցած սաստկայայտ ասֆալտները մեծաշուք դրոշմ մը առած էին դէմքին: Միմի չափազանց յուզուեցաւ. վերջապէս սորոշում առաւ հեռը խօսելու: Ռոտօլֆ առանց զայբայթի զինքը գիմաւորեց և որպիսութիւնը հարցուց, յետոյ հասկնալ ուզեց թէ ի՞նչ էր քովը գալու շարժառիթը, և այս ամէնը ըսաւ քաղցր, մեղմիկ ձայնով մը, որուն մէջ կը ջանար զգալի ընել չը աւալու օրիբողին շնչա մը:

— Ե՜տ դէ՛լ լուր մը ձեզի տալու եկած եմ: Օրիորդ Ամէլի չպիտի կրնայ պարահանդէս գալ ձեզի հետ, որովհետև սիրողը թող չի տար կոր:

— Ոտրեմն մինակս պիտի երթամ:

Հոս օրիորդ Միմի սահելու պէտք ըրաւ և Ռոտօլֆի ուսին վրայ կոթնեցաւ: Բանաստեղծը թեւէն բռնեց և առաջարկեց զինքը առնալ առաջնորդելու:

— Չէ, ըսաւ Միմի, Անժէլին հետ կը բնակիմ, և որովհետև ան իր սիրողին հետն է հիմա, մինչև որ ան չմեկնի, չի կրնար առնել երթալ:

— Ինձի մօտիկ ըրէ ուրեմն, ըսաւ Ռոտօլֆ, քօնի մը օր առաջ օրիորդ Ամէլիի միջոցաւ առաջարկուած թիւն մը ըրի ձեզի, չեմ գիտեր թէ զայն ձեզ հարգե՞ց:

— Այո, ըսաւ Միմի, բայց անանկ ձեռով մը, որուն չուզեցի հաւատալ նայնիակ մեր մէջ անցած դարձածէն ետքը: Չհաւատացի թէ հակառակ այն գանդաւաններուն, զորս ինձի գէժ սուսնալ կը կարծես դուն կրնայիր երեւակայել որ առանկ սակարկութիւն մը ընդունելու չափ ստորնացած ըլլայիր:

— Դուն զիս լաւ մը չես հասկցեր և կամ սխալ կերպով բացատրեր են ձեզի: Ըսածս ետ չեմ տոնէր, ըսաւ Ռոտօլֆ, հիմա ժամը ինն է, խորհելու համար գեո առջևնիդ երեք ժամ ունիք: Մինչև կէս գիշեր բանալին դրանս վրայ պիտի գտնես:

Գիշեր բարի, մնաս բարով և կամ ցտեսութիւն:

— Մնաս բարով ուրեմն, ըսաւ Միմի դողդոջուն ձայնով մը:

Եւ իրարմէ բաժնուեցան...: Ռոտօլֆ առնալ գրնաց և առանց վրան հանուելու նեառեցաւ անկողնին վրայ: Ժամը առանկ մէկուկէտին օրիորդ Միմի սննեակէն ներս կը մտնէր:

— Եկած եմ խնդրելու որ հիւրասիրես զիս ըսա՛: Ամէլիի սիրողը քովը մնացեր է և չկրցայ առնել երթալ: Առաւան մինչև ժամը երեքը իրարու հետ խօսակցեցան, բացառելի խօսակցութիւն մը, որուն մէջ մերթ ընդ մերթ ընթանի աղաւան կը յայտնուէր պաշտօնական վիճարանութիւններու ազուրձին:

Ժամը չորսին մօտերնին մարտնչաւ: Ռոտօլֆ նոր մը վառել սկսեց:

— Չէ, չուզեր, ըսաւ Միմի, չարժեք, ալ պտուկու առնելու եկած է:

Եւ հինգ վայրկեան ետքը իր թխահեր աղաւոր գլուխը բարձին վրայ իր անգը դրաւ տեղը: Հետեւեալ առաւուն ամէնէն առաջ Ռոտօլֆ ելաւ անկողնէն և խել մը ծրարներ ցոյց տալով Միմիի, անուշութեամբ ըսաւ անոր:



— Ահա քու բոլոր ունեցածներդ, կրնաս տանել  
տանիւ. ես խօսքիս օէքն եմ:

— Օ՛հ, բաւ Միմի, շատ յոգնած եմ ինչպէս կը  
տեսնեմ, և չպիտի կրնամ մէկ անգամով տանել տա-  
նիւ: Աւելի լաւ կը սեպեմ նորէն գալ:

Եւ օրովհետեւ վրան հազուած էր, մինակ փող-  
կապ մը և զայդ սը թեւնոցներ տաւ:

— Մնացածն ալ կը տանիմ... կամայ կամայ, յա-  
րեց ժողովուրդ:

— Ինձի նայէ, զամ ամէնքը տար և կամ բան  
մը մի տանիր, բայց միտնգամ ընդ միշտ թող վեր-  
ջանայ:

— Թող վերսկօի, ընդհակառակը, և թող տեսէ,  
բաւ թարսագեղ Միմին:

Միտնին նախաձայնին ընելէ ետք, քաղքէն դուրս  
պտօյտի ելան, Լիւքսէնպուրի պարտէզէն անցած օ-  
տաննին, Ռոօօլի մեծանուն բանաստեղծի մը հանդի-  
պեցաւ ոչ զինքը սքանչելի բարութեամբ մը հիւրըն-  
կալած էր միշտ: Պատշաճութեան համար Ռոօօլի զօյն  
չաեսնելու պիտի դարնէր, բայց բանաստեղծը ժամա-  
նակ չթողուց և քովէն անցնելով բարեկամական նշան  
մը ըրաւ և մանկամարդ բարեկամուհին բարեւոց շը-  
նօրհալի ժպտով մը:

— Ո՛վ է այս պարօնը, հարցուց Միմի:

Ռոօօլի անունը անուն մը արտասանեց որ հա-  
ճօքէ ու պարտութենէ չիհնիլ տաւ Միմին:

— Ա՛խ, բաւ Ռոօօլի, այս հանդիպումը բա-  
նաստեղծին հետ օր այնքան հիտնալի կերպով քնա-  
րերդած է սէրը բարեգուշակ դէպք մըն է որ բարե-  
բաւակ օտի դարձնէ սեր հաշտութիւնը:

— Ի՛նչ կ'ուզես ըսէ, ես քեզ կը սիրեմ, ըսաւ  
Միմի բարեկամին ձեռքը սեղմելով, ասանց կարեւո-  
րութիւն տալու շուրջերնին խոնուած բազմութեան:

— Աւա՛ղ, մտածեց Ռոօօլի, չեմ գիտեր թէ օ՛րը  
աւելի ազէկ է, ձգել որ քեզ խաբէն հաւատացած ըս-  
լալուդ համար և կամ չհաւատալ երբեք, միշտ խաբ-  
ուելու վտիւռդ:

### „ՀԱՃԵԼԻԻՆ ԸՆԴ ԱՌԱՋ“

Արդէն պատմած ենք թէ ի՛նչպէս նկարիչ Մար-  
օել ճանցած էր օրիորդ Միւղէթը: Անոնք առաւ  
մը միացած էին քմայքին միջնորդութեամբ օր երեք-  
առօտներորդ շքանակին քաղաքական է. անոնք  
կարծած էին, ինչպէս սաէպ պատահած բան մըն է,  
ամուսնացած ըլլալ օրաբաւ անջաման օրէնքով:  
Բայց գիշեր մը, բաւն կախէ մը ետքը, օրու միջո-  
ցին օրօշեր էին անմիջապէս զիրար ձգել, նշարեցին  
օր իրենց ձեռքերը օր հրեժշտի համար սեղմած էին  
մեղմիկ, զատուիլ չէին ուզեր, չուզեղմիկն իրենց  
կամոյտութիւնը սէրի փոխուած էր: Երկուքն ալ ի-  
րարու խոտովանեցան հէս մը խնդրով:

— Գլուխնուս եկածը շատ ձանրակչիւ բան է.  
չունչանայի՛ր, ինձօր քրինք:

— Ո՛հ, յարեց Միւղէթ, երկուքս ալ անճարակ  
զանուեցանք, առայուց պէտք եղած զգուշութիւննե-  
րը ձեռք չառինք:

— Ի՛նչ կայ, ի՛նչ կ'ըլլաք, ըսաւ Ռոօօլի օր  
Մարօելի դրացի եկած էր:

— Ի՛նչ պիտի ըլլայ, սա կայ օր պատասխանեց  
անիկա Միւղէթը օրոց տալով, օրիորդը և եօ գեղե-  
ցիկ գիււտ մը բրինձ, զիրար կը սիրենք եղեր:

— Տղօքս, ձեր գօրծը շատ պոյժաւ է: Ուզեր  
էք դիտնալ թէ ձեր մէջէն ո՛վ աւելի ճարպիկ պիտի  
փրթէր և երկուքդ ալ պարապ տեղը ալխատեր էք:  
Միւսնայն բաձը ինձի և Միմիի պատահեցաւ: Երկու  
տարեցոյց հիշուցինք զիշեր ցերեկ իրարու հետ կըն-  
ուելով, Ամուսնութիւնը մշանջեմաւորելու միակ մի-  
ջոցը ադ է: Այո՞ւ մը զուգեցէք ճոշի մը հետ և ա-  
հա կ'ունենաք Փիլիման և Պօրիօ պէս սիրակցօրդ ա-  
մօլ մը: Ձեր աստին կեանքը զայդը պիտի ըլլայ ի-  
մինիս, և եթէ Շօնար և Յիմի գան այս տան մէջ  
բնակելու, ինչպէս սպասեցաւ սեղի, ձեր կենակցո-



կան խումբը խիստ հեշտաւէտ պիտի ընէ այս  
տունը իրբեւ ընտկարան:

Այդ պահուն կիւսթով Գօլին վրայ եկաւ: Անմի-  
ջապէս անոր պատմեցին Միւղէթի և Մարսէլի գըլ-  
թուն եկածը:

— Ըսէ՛ նայինք, փիլիսոփա՛յ, այս եղածը ի՞նչ  
պէս կը գտնեաս:

Գօլին քերեց գլխարկին մազերը, գլխարկ մը որ  
իրբեւ տանիք կը ծառայէր իրեն և մրմառաց:

— Ասանկ ըլլալուն ապահով էի արգէնս: Սէրը  
բախտախաղ մըն է: Ով որ անոր կը քսուի, կը թայ-  
թուի: Աղէկ չէ որ մարդս մինակը մնայ:

Իրիկունը տուն գալուն, Ռոսուլֆ ըսաւ Միմի:

— Կայնէ ճեղի լուր մը ասմ, Միւղէթ կը խեն,  
դէնայ Մարսէլի վրայ և չուղեր անկէ բաժնուիլ:

— Խեղճ աղջիկ, պատասխանեց Միմի, գոնէ ա  
խորժակը տեղը չըլլայ:

Իր կողմէն ալ Մարսէլ ընտուած էր Միւղէթի:

— Զայն երեսուննվեց քրազ կը սիրէ կար, ինչպէս  
պիտի ըսէր Գօլին:

— Խեղճ աղայ, ըսաւ Միմի, ան ալ գոնէ նա-  
խանձոտ չըլլար:

— Ըսածդ ճիշդ է, ան ու ես Օթէլլօյի աչա-  
կերտ ենք:

Քանի մը ասեն ետքը Ռոսուլֆ և Մարսէլ ամու-  
նեբուն եկաւ միացաւ Շոնար ամուլը: Երաժշտապէտը  
այդ ասն մէջ կը փոխադրէր կարասիներ Ծիֆի Թէն-  
թիւրիէան ալ միասին:

Այդ օրէն սկսեալ միւս ըսլար անեցիները հրալե-  
սերու վրայ կը քնանային և վարձավճարութեան  
պայմանաժամին ամէնքը համաշունչ աւունէն ելլելու  
օրջումներն կը հաղորդէին ասնախորջ, Եւ սաուզելին  
թէ որ չէր անցներ որ փոթորիկ մը չպայթէր մէկ  
կամ միւս անեցիներուն մէջ, Երբեմն Միմին և Ռո-  
սուլֆն էին որ ա՛լ խօսելու կարողութիւննին մնացած  
չըլլալով, ձեռքերնուն տակ ինկած որ և է նետուե-

լիք սարկայով խօսք կը հասկնէին իրարու: Շոն-  
արամ ալ Շոնարն էր որ գաւազանի ծայրով մը դի-  
տողութիւններ կ'ընէր մեղամաղձիկ Ծիֆիին: Իսկ  
Մարսէլ և Միւղէթ դոնփակ կը կոտորէին. անոնք  
գոնէ վիճարանութեան չսկսած դուռ և պատուհան կը  
գոցէին:

Սթէ երբէք պատահէր որ խողողութիւնը արբէր  
այդ անուորներուն մէջ, միւս վարձակալները նուազ  
դոկերը չէին բլլար այդ միակամութեան:

Միջնորմաբու անխորհրդապահութիւնը իրենց լը-  
սելի ընել կուտար պոճեմ ամբներուն բոլոր գողա-  
նիքները և առանց ուղեւու խելամուռ կ'ըլլային ո-  
նոնց ամբողջ սիրային օրտազեղումներուն:

Անա ինչո՛ւ վարձակալներէն շտաբը կը նախըն-  
տրէին անոնց հաւապատմանները քան հոշտութեան  
դաշնագրերու վաւերացումը:

Շիտակը զրուցելու համար ըսենք որ վեց ամիս-  
ներէ ի վեր անոնց անցուցած կեանքը պար-  
զապէս զօրմանալէ էր: Եղբայրակցութեան ամէնէն  
անկեղծը և անսթեւեթը կը արբէր այս ակումբին  
մէջ ուր ամէն ինչ ամէնունն էր և որուն տեղամները  
միւսնայն չափով կը մասնակցէին ամէն տեսակ ձա-  
խողանքի և ժամ օր և է յաջողութեան:

Ամասուան մէջ ձօխութեան անանկ օրեր կային  
ուր փողոց չպիտի իջնէին առանց ձեռնոց հագնելու,  
ցնձութեան օրեր ուր մինչեւ գիշեր կերուխումի կու-  
տային իրենք դիքենք: Ուրիշ օրեր ալ կային, ուր  
արջունիքին այգելութեան պիտի երթան ին ասա՛յդ  
կոշիկի, ծամպահութեան օրեր ուր միտոեղ չձայե-  
լէ զոտ, ընկերութի ալ չէին ընթերթ և կամ եթէ որ-  
քեք անսեռագրիակեան ճարպիկ հնարագիտութեան  
մը շնորհիւ կարէնային ճաշ մը ձեռք անցոնել, այն  
տանն ալ սեղանին վրայի պնակները ու սպասները  
գողար կ'ընէին, ինչպէս կ'ըսէր օրիորդ Միմի. բ-  
այդ արմանակրո՛շ բան... այսինքն թէ այս ընկերու-  
ցութեան մէջ, ուր սեղանի և այնպէս երեք դեռափ



և գեղանի կիներ կը գանուէին, էրիկ մարգոց մէջ  
երկպառուութեան և ոչ մէկ ցոյց տեղի ունեցաւ: Ա.  
նոնք սաեպ կը ծնրադրէին իրենց հոմանուհիներու  
ամէնէն չնչին մէկ զմայքին տաջեւ, բայց ոչ մէկը  
նոնցմէ վայրձեան մը պիտի վարանէր կնիզան և բա-  
րեկասին միջեւ:

Սէբը ինքնաբերութենէ կը ծնի մանուանդ, բա-  
րեկամութիւնը ընդհակառակը կը կառուցուի. սանկ  
ըսեմ, զգացում մըն է ստիկա որ շրջակայեցութեամբ  
կը յառաջանայ: Բարեկամութիւնը մաքրին ետեղանու-  
թիւնն է, իսկ սէբը սրտին:

Վեց տարի կ'ընէր որ Պօհնմները կը ճանչնային  
զիրար: Ա. տնօրեայ մտերմութեան մէջ անցած ժա-  
մանակի այս երկար միջոցը, առանց ամէն մէկին հա-  
տու անհատականութիւնը խթարելու, անոնց միջեւ  
մացուցած էր գաղտփորներու համաձայնութիւն սը,  
համակցութիւն մը, զոր չպիտի կրնային գտնել այ-  
լուր: Իրենց մասնուար բարքերը ունէին և մտերմա-  
կան լեզու մը, որուն բանալին կարելի չէր որ օ-  
տարները գտնէին: Ա. մէն անոնք որ մօտէն և կամ  
մտերմօրէն չէին ճանչնար զանոնք, անոնց համար-  
ձակ ընթացքը շնականութեան տեղ կը դնէին: Ա. տի-  
կա սակայն անկողնութիւն էր սոսկ:

Հասա հ. գիներ, հանգէպ հարկադրուած և պայ-  
մանագրակու բաներու, ամէնքն ալ կ'առաջնորդէր  
և կ'արհամարհէին ինչ որ գեհնիկ էր: Չափազանց սը-  
նափառի անուն հանած էին թէեւ, սակայն անոնք  
հպարտօրէն կը շոշակէին իրենց փառասիրութիւննե-  
րու յայտագիրը և իրենց արժանիքներուն գիտակցու-  
թիւնը ունենալու ինքզինքնին չէին խաբար: Այն-  
քան տարիներէ ի վեր որ միասին կ'ընթանային մի-  
եւնոյն կեանքի մէջ, երբեմն միայն մրցորդութեան  
մասնուած արուեստին ըերմամբ, նարէն սակայն  
ձեռք ձեռքի աւուած, և սանտիս ըրած էին առանց  
ուշադրութիւն ընելու, անձնական արժանապատու-

ութեան խնդիրները, ամէն անգամ որ սերէններ այդ  
տեսակ խնդիրներ յարուցանել փորձեր էին պատակ-  
տելու համար զանոնք:

Ա. սկէ դատ, անոնք կը յարգէին զիրար ճիշդ այն-  
քան որքան արժանի էին յարգուելու, և հպարտան-  
քը, որ մասնաբիւն դեղթափն է, զիրենք կը պակաս-  
նէր արուեստին բարձր փանաքի նօթանձառութիւն-  
ներէն:

Սակայն վեցամսեայ ընկերովի կենակցութենէ  
ետքը, կնթողութեան ախա մը ճարակեցու յանկարծ  
մէջերնին:

Նախաքայր աւնաղը Շանարը եղաւ: Օր մը դիտեց  
որ Ֆիմի Թէնթիւրիէսի մէկ ծունկը սուշի ձեւուար  
էր սիւսէն, և որովհետեւ ձեւակերպութեան և գնդեց-  
կագիտութեան մէջ խիստ յատկախնդիր մէկն էր,  
ճամբու դրաւ Ֆիմին, իրրեւ յիշատակ նուէր ընելով  
իրեն այն գաւազանը, որուն ծայրովը այնքան յաճախ  
գիտագութիւններ ըրած էր իրեն: Չայն ճամբելէն ետ-  
քը Շանար դնաց բնակեցու այն տնակիին մէջ զոր  
ձրիտար իրեն յատկացուցած էր ազգական մը:

Նրկու շարժեթ ետքը, Միմի Ռոտօլֆր կը ձգէր եր-  
թալ օրգալու համար կառքերուն մէջ դերկոմս Բօլի  
Բարօլիւօի նախկին աշակերտին տնակու գոյն շրջազ  
գետաներ խոստացած էր անոր:

Միմիէն ետքը Միւղէթն էր որ փախու առնէն  
և վերադին զնոց մեծազորդ կերպով մտաւ տարփա-  
կան աշխարհին բարձր գոտուն մէջ, որմէ քաշուած էր  
Մարտիլին ետեւէն երթալու համար:

Այս բաժանումը առանց կռիւի, առանց ցնցումի:  
առանց կամ խստածութեան անդի ունեցաւ: Մնած  
քմահաճօյքէ մը որ սէր եղած էր ետքէն, այդ կողմ  
սերիչ յամանձայքով մը խզուեցաւ:

Բարեկենդանի գիշեր մը Օրէրայի պարանոնդէսին  
սեր Մարտիլին հետ դացած էր, հակապարի մը մէջ  
իրրեւ «վի գ'ա վի» ունեցեր էր երիտասարդ մը, որ  
առանօք դ ըպաւ ըրած էր իրեն: Հոն իրարու հան-  
գիպեցան և պարած ատեննին իրարու հետ քանի մը



բաւ փոխանակեցին: Գուցէ առանց ուղղելու, այդ հարիստասարդին իր ներկայ կեանքին վրայ անգեղակութիւններ ասած պահուն բերնէն փոխցուց թէ շատ զը փնտէր իր անցեալ Լեւոնքը: Եւ անանկ եղաւ որ «քառարիւղը անարեւուն, Միւղթ օթալեցու և ձեռքը փոխանակ Մարտէլին ասլու, որ իր ճշովալիէն» էր, «վի զ'ա վիճին թեւը մտու և աներեւութացու բազմութեան մէջ:

Մարտէլ մտածուի, փնտռելու ելաւ դոյն: Ժամ մը ետքը երիտասարդին թեւը մտած Օրէլայի սրճարանէն անոր դուրս ելլելը տեսաւ, բերանը յանկերդերով լեցուն: Մարտէլը նշմարելուն, սր անկիւն մը քաջաւած էր թեւերը կուրծքին վրայ թաշածեւած, մնաք բարձր վիճան մը ըրաւ, անոր ըսելով. «պիտի վերագուցանամ»:

Այսինքն «ինծի մի՛ օպտեր» թարգմանեց Մարտէլ: Նախանձաւ էր, բայց արամարտելու կարողութիւնը չէր կորսնցուցած և լու կը ճանչնար Միւղթը ասոր համար բնաւ չպատեց անոր գալուն: Ուստի ասուն դարձաւ սիրաը դանձալած, բայց ստամէքը պարտաւ:

Գորանի մը մէջ փնտռուքի ելաւ տեսնելու համար թէ արդեօք մէջը օւտելիքի մնացորդ մը կրնանա՞ր գտնուի կրանիդի կարծրութեամբ հացի կտոր մը և աղած հրինիդի կմախք մը գորկաւ ուղի:

— Գայլերու դէ՛ չեմ կրնար մտքաբիլ, մտածեց Միւղթի գոնէ «սուբէ» մը որո՞ւ ըլլալու է: Եւ թաշակիւնակին ծայրավոր ուղիքը սրբելէ ետքը, խնջել պատրուակելով. դնաց պահեցաւ: Երկու օր ետքը Միւղթ վարդազոյն սրահակներով դարդարուած զարդախօսի մը մէջ կ'արթննար. վարը գրան աղկէ կապոյտ «քուբէ» կառք մը կ'ապասէր, և կանչուած բալոր պարիկները իրենց հրաշալիքները օտքին բարձ էին: Միւղթ հիանալիօրէն աղաւթած էր և իր երիտասարդութիւնը կործնու ու լի թորմացած էր վայելչագեղութեան այս շրջանակին մէջ: Վերակաու իր նախկին կեանքը վերապրիլ, որ և է կանդէսէ չէր

պակտեր և կրկին օրացաւ իր երբեմնի համբաւին: Ամէն տեղ իր խօսքը կ'ընէին սակարանին նըրբանցքներէն սկսեալ մինչեւ Խորհրդարանին շմպեւանցներուն մէջ:

Գալով իր նոր սիրող Պ. Ալէքսիսին, օրրուն երիտասարդ մըն էր ան: Ստէպ կը գանգատէր Միւղթի անոր թեթեւարարութենէն և թէ անփոյթ էր երբ իր սիրոյն վրայ կը խօսէր: Ասոր վրայ Միւղթ անոր երեսը կը նայէր խնդալով և ձեռքը անոր ձեռքին դարնելով կ'ըսէր.

— Ի՞նչ կ'ուզեօ, սիրելիօ, վեց աւիօ շորունակ արքեղայ մարդու մը հետ, որ զիս աղցանով և սառնիկ կարագի ապուրով կը կերակրէր. «պատճա» չըրջողգեւտով կը հագուեցներ և ստէպ Օտէոն թափառնը կը տանէր, օրովհետեւ հարուստ չէր: Եւ օրովհետեւ խենդ կարած էի այդ հրէշին համար, և որովհետեւ ոէրը առանց ծախքի բան մըն է, ձեռք յոյժ կարի, չափէն աւելի ոէր մտխեցինք: Հիմա այդ սէրէն փշրանքներ միայն աւելցած են քովս, հաւաքեցէք զանոնք, եօ արգելք չեմ ըլլար ձեզի: Մնաց օր, եօ խօրգախութեամբ չարժեցոյ հետերնիդ և եթէ ժապուէ կներք այսքան սուղ չըլլային, եօ տակաւին իմ շկարչիօ հետ կ'ըլլայի: Եթէ օրրաւ կը հարցնեօ, օւթտուս ֆրանքնաց ճօրտէ՞ մը հագած օրէս ի վեր անոր գարնելը չեմ իմանար և շատ կը վախում օր գայն մոռցած չըլլամ Մարտէլի գզրոցներէն մէկուն մէջ:

Պօհեմ երեք անուորներուն անհետացում: Եղի տուաւ մեծաչաւը հանգէսի մը, օր անդի ունեցու իօրենց բնակած ասն մէջ: Ինչան ուրախութեան ասնաւէրը փոռաւը հայկերոյթ մը տուաւ և վարձակալները իրենց պատուհանները լուսավառեցին:

Ռօտօլֆ և Մարտէլ միասին բնակութիւն հաստատած էին, թէ՛ մին և թէ՛ միւրը մէյ մէկ կուլը կը պաշտէին առանց ճշգրտօրէն անոնց անունը գիտնա-



լու: Երբեմն կը պատահէր որ մէկը Միւզէթի վրայ  
խօսէր և սրւօը Միսիի և այսպէս առաւ կ'ընէին:  
Իրենց նախկին կեանքը մտքերնին կը , երէին , ինչ-  
պէս նաև Միւզէթի երգերը և երգերը Միսիի , իրենց  
անջուն անցուցած դիչերնները , դանդաղկոտ առ ւօտ-  
եան ժամերը և երազի մէջ ըրած ճշերնին:

Այս երկեակ խօսակցութիւններու մէջ , մէկիդ  
մէկիկ հնչեցնել կուտային բոլոր այդ փախուտ ար-  
ւած ժամերը և օսվօրբօր կը յանդէին հոն՝ որ ան-  
ցելոյն մէջ անցած դարձածին հակառակ երջանիչ էին  
գարձեալ միտօրն գտնուելու և կարենալ ոտքերնին  
վառարանին փայտակալներուն վրայ դրած , Դեկտեմկ  
բերի փայտի կռնկերը հրահրելով ծխափօղնին քաշե-  
լու և երկուքն ալ խօսակցութեան ձեւին առկ կա-  
րենալ բարձրաձայն իրենք իրենց պատմելու , ինչ որ  
ցած ձայնով իրենք իրենց կ'ըսէին մինակնին գտնը-  
ւած տաննին , թէ շատ բիրտ էին այդ անյայտ-  
ցած էակները , որ հեռերնին առած օտրած էին ի-  
րենց երիտօտօրգութենէն ծուէն մը , զօր թերեւս կը  
օրէին առկաին:

Դիչեր մը պուլվառէն անցած տանը Մարսէլ իր  
մէ քանի մը քայլ անդին մանկամարդ կին մը նշմա-  
րեց որ կաթէն իջած տանը , թող կուտար որ տե-  
նաւի անքննադատելի կերպով պրկուած ձերմակ  
գուլպայի կտոր մը : Կոռպպանը անգամ աչ-  
քովը կը լսփէր այդ հիանալի պատխիչը:

— Նո՛ , ըսաւ Մարսէլ , ա՛նէք ռո կինը , նա-  
յինք ինձօր մօտենալու է իրեն... գա՛մ , գա՛մ որ  
ինքնատիպ բառ մը :

— Ներողութիւն , արկին , ըսաւ , քովը երթալով  
անձանօթ կնկան որուն գէճքը առջի բերան չտեսաւ ,  
պատահմամբ թաշկինակս ձեր ձեռքը անցօւ արգեօք:

— Այս՛ , պարօն , պատասխանեց դեռատի տիկի-  
նը . ահաւտօրկ , և ձեռքը բռնած թաշկինակը ասաւ  
Մարսէլին:

Արուեստագէտը զօրմօցմօն անդունդի մը մէջ  
թաւալլօր եղաւ:

Յանկարծ խնդադին քրքիչէ մը , որ երեսն ի վեր  
արձակուեցաւ , ինքզինքին եկաւ և այդ ցնծալից վա-  
վառին մէջէն ձանչցաւ իր վաղեմի օերերը:

Օրիօրդ Միւզէթն էր անիկա:  
— Հո՛ , հո՛ , ճչեց Միւզէթ . պարօն Մարսէլը ար-  
կածախնդրութեան ելեր է : Ասիկա մաքէդ չէր անց-  
ներ օակայն , չէ , ընդունէ որ այս հանդիպումը զւրկ  
չէ համոզութենէ:

— Ես զայն տանելի կը գտնեմ , պատօթանց  
Մարսէլ:

— Այս տանն ի՞նչ գործ ունիս հասակուանքը ,  
հարցաւ Միւզէթ :

— Հոյակերա օտ չէնքը կ'ելթայի , բսաւ Մար-  
սէլ , ցոյց տալով պզտիկ , աննշան թափօն մը , սւր  
ձրի մուք ունէր:

— Արուեստի՞ն սիրոյն կամար:

— Ո՛չ . Լոռի օիրոյն : Ահա՛ քեզի բառախաղ մը ,  
(ամուռ ար լ՛առ , ամուր ար Լօօ) մտածեց Մարսէլ ,  
տանիս Բօլինի ծախեմ , բասախաղ րու ժողովածու մը  
ունի անիկա:

— Այ Լօռ ըսածդ ի՞նչ տեսակ բան է , շարունա-  
կեց Միւզէթ , որուն աչքերէն հարցական նշաններ կը  
ժայթքէին:

Մարսէլ իր անշօհ կատակօրանութիւնը շարու-  
նակելով .

— Քիմէր մըն է ան որ այս ծախին մէջ անմեղ  
աղջիտն դերեր կը խաղայ , և ձեռքովը մաս-  
ցածին յանջանոց մը կը ձմթկէր:

— Այս գիչեր ինձօր օրամիտ ես , ըսաւ Միւ-  
զէթ:

— Եւ դուն շատ հեռաքրքիր , յարեց Մարսէլ:

— Քիչ մը կամօց խօսէ , ամէն մարդ կ'իմանայ ,  
պիտի կարծեն թէ օրբահարներ ենք որ կը կուռը-  
օինք:



— Այդ բանը առօրին անգամ չէ որ պիտի պատահէր մեզի, ըսաւ Մարտէլ:

Այդ խօսքին մէջ Միւզէթ գրգիռ մը կարծեց տեսնել և շուտով մը պատասխանեց.

— Վերջինն եւ չգիտի ըլլայ, չէ՞:

Բառը յօտակ էր և Մարտէլի ականջին գնդակի մը պէս չկանց:

— Ո՛վ երկինք շքեղագորգ, բացագոնչեց Մարտէլ ասողերուն նայելով, վկայ էք որ ասալին գնդակը արձակազը ես չեմ: Շտու, զբա՛ւ մը ասէք ինծի:

Այդ վայրկեանէն սկսաւ առփամարտը: Մինակ սիջագոյ մը պէտք կար դէմ առ դէմ բերելու համար այդ երկու քեանձայնները, որ այդքան աշխուժիկ կը նորոգուին: Քալած ասեանին Միւզէթ Մարտէլին կը նայէր և Մարտէլ Միւզէթին: Չէին խօսեր իրարու հետ, բայց ուղեբերին, սրտին այդ լիազօր թարգմանները, ասէպ կը հանդիպէին իրարու: Դիւանագիտական քառորդ ժամէ մը ետքը, նայուածքներու այդ ճշունկըձան խնդիրը կարգադրած էր լսելեայն և գործը վաւերացումի կը մնար:

Ընդհատուած խօսակցութիւնը վերստացաւ:

— Շիտակը ըտէ, Մարտէլին ըսաւ Միւզէթ, քիչ մը ասաց ո՛ւր կ'երթայիր:

— Ըսի արդէն, Լոռը տեսնելու:

— Ազու՞ր է:

— Բերանը ժպիտներու բայն մըն է կործնու:

— Հասկցուեցաւ, ըսաւ Միւզէթ:

— Բայց, հարցաւց Մարտէլ, դուն ո՛ւրի՛նչ կու գալիր Եսիթատիւնին (տեսակ մը կառք թեւերուն վրայ հեծած):

— Ալէքսիսին ընկերացեր էի մինչև կայարան, ուրկէ մեկնեցաւ ընտանիքը տեսնել երթալու համար:

— Ի՛նչ տեսակ մարդ է ադ Ալէքսիս ըսածդ:

Միւզէթ ալ իր կարգին օգտնչի կերպով պատահերացօց իր նոր սիրողը: Գուլվաններուն մէջտեղուանքը պարտած ասեանին Մարտէլ և Միւզէթ այսօր

պէ: շարունակեցին գրգռել իրենց սիրային յիշատակները: Միեւնոյն անկեղծիկ կերպով, փոխնիփոխ գողօր և ծողրական, ասն առ ասն կը վերկենդանացնէին այն անմահ ասողերը, ուր Ովրասիոս և Լիւզիտայն անքան շնորհալիօրէն կը փոստարանէին իրենց նորգոյ սէրերուն հրագոյրները և իրենց երբեմնի սէրերուն վրայ յետագրութիւն մը աւելցնելով կը վերջացնէին: Փողօցի մը անկիւնէն դարձած ասեանին, մէկէն ի մէկ գիշերապահ շինուորներու օտուոր խումբ մը գէմերնին ելաւ: Միւզէթ անբեկեալ վիճակ չ'ը պարզեց և Մարտէլին թեւին պըլլուելով ըսաւ անոր.

— Ա՛խ Ատաւած իմ, ասնի նայէ, աս ո՛րքան շինուոր փողօց թափուեր են, վախում նորէն յեղփոխութիւն պիտի հանեն, փախչի՛նք, ստեղծում կու գայ վրաս, զիս ասն ասր:

— Բայց ո՛ւր երթալ կ'ուզես, հարցուց Մարտէլ:

— Տունս, ըսաւ Միւզէթ, տեսնաս ի՛նչ աղւոր շակուած է, ասուրէ՛ճի կը հրաւիրեմ զքեզ, քողօքօհանութեան վրայ կը խօսինք:

— Ո՛չ, պատասխանեց Մարտէլ, որ պարեն Ալէքսիսի վրայ կը մտածէր, քու ասուց չեմ երթար: Գինիս ուրիշին գաւթին մէջէն խմել չեմ սիրեր:

Այս մերժումին առջև Միւզէթ ձայնը քաշեց: Յետոյ իր յիշատակներուն մշուշին մէջէն, խեղճ արթիթիւն աղքատիկ բնակարանը ուղեին առջև բերաւ, վասնզի Մարտէլ միլիոնաւէր չէր եղած. մէկէն Միւզէթ գողօփօր մը յղացաւ և գիշերապահներու ջոկատի մը երեւումէն օգտուելով, կրկին տեսողի մասնուեցաւ:

— Հիմա ուր որ է, պիտի սկսին կառելի, աղօքակեց, ասն երթալ չպիտի համարձակեմ երբեք: Մարտէլ, բարեկամ, զիս մէկ բարեկամուհիս ասունը ասր, որ քու բնակած թողիդ մէջ կը գտնուի:



ԲՕՆ Նէօֆ կամուրջէն անցած ասեմնին Միւզէթ քահանայ ժրն է բրցուց:

— Ի՞նչ կ'ըլլաւ, հարցուց Մարտէլ:

— Ոչինչ, բաւ Միւզէթ, միտքդ եկաւ որ բաբեկամակիս տունէն ելաւ. հիմա Պաթիննօ ի կողմերը կը նստի:

Երբ Ռոսուֆ Մարտէլին և Միւզէթին թնւ. թեւի ասուն դուր անաւ, բնաւ զարմանք չյայտնեց:

— Գէշ թաղուած սէրերը, ըսաւ, միշտ ասանկ կ'ըլլան:

### ԿԱՐՄԻՐ ԾՈՎՈՒ ԱՆՑԲԸ

Հինգ վեց տարիներէ ի վեր Մարտէլ կ'աշխատէր այն նշանաւոր նկարին վրայ, որ ըստ իր ասուած հաստատիքներուն, պէտք էր որ ներկայացնէր կալմիր ծովու անցքը և հինգ վեց տարիներէ ի վեր ներկի այդ գրւթ-գրծոցը յամասօրէն կը մերժուէր քննիչ յանձնախումբին կողմէ:

Ահա ինչպէս, արուեստագէտին աշխատանքէն մուսէտն և մուսէտնէն աշխատանք այնքան անգամ ներ դացած եկած էր որ այդ ճամբան դոց սորված էր և եթէ անուակներու վրայ զեռնողէին դայն, այդ նրկարը ի վիճակի պիտի ըլլար միս մինակը Լուգրի թանգարանը երթալու:

Մարտէլ, որ ասան անգամ վերսկսած էր այդ պատկերը և զայն վերէն վար փոփոխած, «Ժիւրի»ի անդամներուն անձնակազմ թշնամութեանը կը վերադրէր այն խեցեղծիւքը, որով այդ նկարը ամէն ասարի կանոնաւորապէս ետ կը դարձուէր նկարահանգէտի սալօնէն, և իր պարտապ մէկ ժամուն՝ կանաթին կերբերասներուն ի պատիւ լուսանքներու բազումն մը յօրինած էր դժնէօրէն օտարասուր պատկերներով զարդարուած: Այդ համառուար եղած հաւաքածոն աշխատանքներուն և Գեղարուեստից վարժարանին մէջ գտած էր այն ժողովրդական մեծ յաջողութիւնը, զոր օւնեցած էր Մարտէլ Սուլթանին անձ:

նակաւն նկարիչ՝ Ժան Պէլէնի անսեռ «աէթօն»ը: Բարիգի բոլոր նկարիչները անկէ օրինակ մը կը պահէին յիշողութեան սէջ:

Մարտէլ երկար ասեմն չէր վեճած այն կատարմաներժ մտերէն, որով կ'ընդունուէր ամէն մէկ նկարահանգէտի: Ինքը հանդիսաւ որով աս համոզման կայանք ասուած էր որ իր նկարը պղտիկ տարբերութեամբ մը սպասուած զայդն էր «Կանայի հարսանսեաց», այդ հոգեյակաւն հրաշակներին օրուն պայծասներանգ շքեղութիւնը չկրցաւ աղօտել երեք դարերու փոշին: Այսպէս, ամէն ասարի «Սալօն»ի թուականին, Մարտէլ իր նկարը կը զրկէր «Ժիւրի»ին քննութեան: Մինակ, քննիչները շուարեցնելու և ջանալու համար որ անոնք վրիպին հանխակալ օրոջման մէջ որ ասուած ըլլաւ կը թուէին «Կարմիր ծովու անցքը» անպայտան մերժելու համար, Մարտէլ, ասանց բան մը փոխելու ընդհանուր յօրինուածէն, քանի մը մանրամասնութիւններ կը փոփոխէր և ուրիշ անուն մը կուտար նկարին:

Այսպէս, անգամ մը «Ժիւրի»ին ասջեւ բերուեցաւ «Ռուպիքօնի անցքը» անուան տակ, բայց Փարուսն կենարի պատմուածանին ասկէ գէշ ծպտուած, անսխիլապէս ճանչցուեցաւ և արժանապայել պատիւներով զրքուեցաւ ետ: Յաջորդ ասարին, Մարտէլ իր պատկերին հարթ երեսներէն մէկուն վրայ ճերմակ ներկի խաւ մը նեակց որ ձիւնը պիտի հեղձէր, անկիւն մը եղեւին մը անկեց և եզրագագիթի մը կայտերակաւն պահակի զօրքի համազգեստ հագցնելով, նկարը մկրտեց իրբու «Պէլէնիայի անցքը»:

«Ժիւրի»ս, որ այդ օրը իր ակնոցները լու մը օրքած էր, արմաւենիի տերեւներով նկարուն իր համազգեստին հանգրիմովը այս նոր հնարագիտութեանէն ալ յիտարուեցաւ: Ան կատարելապէս ճանչցաւ այդ յամառ պատկերը, մտնուանգ բազմափեան անձօնի ձիւ մը, որ կարմիր ծովուն մէկ կոնակին քօլն ի վեր կը վերաանէր: Այդ ձիւն մարթը կը ծառայէր Մարտէլ:







բու ասեւաուրով կ'զբողէր: Տան մը համար պէտք եղած աստներկու ֆրանքէն սկսեալ մինչև երեք հազար ֆրանքնոց մտրող կտրասօրներու կողմաներ կը ծախէր: Ամէն բան կը գ'էր և գիտէր շահով ծախելու ճամբան: Պարոն Բրէստօնի փոխանակութեան պանքան բան մը չէր բողզած մամբ այն օրօթէմին, զոր կը կիրարկէր Մէտիսիս, որ շահավոճառութեան հանձարը ունէր և զայն հասցուցած էր բարձութեան այն աստիճանին, որուն չէին կրցած հասնիլ իր կրօնակիցներուն ամէնէն վարպետորդները: Իր խանուած թը որ Բասուղէլի հրապարակին վրայ կը գտնուէր, գիւթահրաշ վայր մըն էր, ուր ուղածդ կը գտնէիր: Բնութեան բոլոր արտադրութիւնները, արուեստին բոլոր ստեղծագործութիւնները, ինչ որ կը ծնի բնութեան ընդերքէն և մարդկային հանձարէն, Մէտիսիոի համար ասեւաուրի ասարկաներ էին: Իր ասեւաուրը ամէն բանի ձեռք կը զարնէր, իրեն հարաք ամէն ինչ որ գոյսութիւն սւնէր, բացարձակապէս վաճառելի էր, նայնիսկ ան կը գործէր տեղաբնական աշխարհին մէջ: Մէտիսիո գողափորներ կը գնէր զանանք շահագործելու և համ ծախելու համար: Բոլոր գրագէտներէն և արուեստագէտներէն ճանչցուած, երանգապնակին մտերիմ և կողմաւորին ընտանի, արուեստաներուն Ազմօան էր ան: Թերթօնի ծրագրի մը փոխարէն օրկառ մը կը ծախէր քեզի, հողաթափներ հնչեակի մը փոխարէն և թորմ ձուկեր՝ փոխան ասարակերպ կործիքներու:

«Ժամու վրայ» կը խօսէր այն հրապարակագիրներուն հետ, որ պաշտօն ունէին լրագիրներու մէջ արձանագրելու քաղքին մէջ ասարածուած շոգմօզ շարախօսութիւնները, խորհրդարաններու վերնաստան մէջ ձեղի համար տեղ կը գտնէր ինչպէս նաեւ անհասական աշխարհիկ երեկոյթներու համար հրաւիրագիր մը, մէկ գիշերուան, մէկ շաբթուան և կամ մէկ ամսուան համար ընտկարան կը գտնէր թափառիկ նըրկարիչներու համար, որոնք Լուվաի մեծ վարպետնե-

րուն նկարներուն ընդօրինակութիւններով կը վճարէին զինքը: Թատրոններու նրբանցքները գողանիք չունէին իրեն համար և ձեռք օր և է մէկ թատերախաղը ընդունիլ կուտար և խաղացանկին մէջ ձեղի նըրկաստուօր տեղ մը կ'երաշխուարէր: Գլխուն մէջ քրտան և կինգ հաղար հասցէներու օւկեցոյցէն օրինակ մը կը պահէր և լու կը ճանչնար ընտկարանը, անունը գողանիքները բոլոր ականուար անձերու, ինչպէս նաեւ անչան եղողներունը: Իր համարակալութեան ձեռագործին մէջէն քաղուած քանի մը երեսներու ընդօրինակութիւնը պիտի կրնայ օ և է մանրամասն բացատրութենէ ակելի լու գողափոր մը տալ իր ասեւաուրին ընդանրականութեան վրայ:

— Հնախայր Պ. Լ.ի ծախուած այն կարկիճը զոր Արքիմէդէս գործածած է Սիրակուսոյի պաշարման ատեն, 75 ֆր.:

Օրագրող Պ. Վ.էն գնուած ակադեմիական Պ.\*\*\*ի գործերուն չկարուած էջերով հաւաքածան, 10 ֆր.:

Նոյնին ծախուած քննադատական յօդուած մը ակադեմիական Պ.\*\*\*ի, մտրողական երկատիրութիւններուն վրայ, 30 ֆր.:

Ակադէմիոյ անդամ Պ.\*\*\*ի ծախուած աստներկու օրուակնոր թերթօն մը իր մտրողական գործերուն վրայ, 250 ֆր.:

Գրագիր Պ. Պ.էն գնուած գնահատական քննադատութիւն մը, ֆրանսական ակադէմիոյ անդամ Պ.\*\*\*ի մտրողական գործերուն վրայ, 10 ֆր., ասկէ զատ, 50 լիպրօ հանքածուի և 2 քիլօ սուրճ:

Պ. Պ.ի ծախուած արկին Տիւպաօի պատկանած ձեռնապակեայ անօթ մը, 18 ֆր.:

Նոգ'լուշուք Օր. Տ.էն գնուած՝ իր մտրերը, 15 ֆրանք:

Պ. Պ.էն գնուած բարոյախօսական յօդուածներու շարք մը և Սէնի գաւառապետին սղղագրութեան վերջին երեք սխալները, 6 ֆր. ասկէ զատ Նորօլիի զոյգ մը կօշիկ:



Օր. Օ.ի ծախուած խորտեալ գիւտի մը, 120 ֆրանք:

Պատմ. գէտ նկարիչ Պ. Մ.էն գնուած վրան բաց պատկերներու շարք մը, 25 ֆր.:

Օր. Մ.ի ծախուած զոյգ մը սասակս և վեց զոյգ ձեռնոց, 36 ֆր., (սա հաշիւ սասցուած 2.75 ֆրանք):

Գրագէտ Պ. Ռ.էն գնուած 120 ֆրանքի պահանջ մը հաշուեցողութեան մէջ գտնուող լրագրէ մը, 5 ֆր.: (Ասկէց զսա երկու լրագր Մօրավիտի ծխուած):

Պ. Ֆէրտինանի ծախուած երկու սիրահարական նամակներ, 12 ֆր.:

Օրագրող Պ.էն գնուած 52 անոց իր Վարիզեան Սուրհանդակէն, 100 ֆր. սակէ զսա «չըմիւնէ» կազմած մը:

Այս քանի մը մէջը բումիւրէն կը տեսնուի թէ ինչ անտեսան համեմատութիւններ անէին հրեայ Մէտիտի գործառնութիւնները, որ հակառակ իր անդի ծայր ընտրական բանաւորին քիչ մը ապօրինի տեսակին, ոչ ոք սակայն զինքը անհանգիստ ըրած էր մինչեւ այդ օրը:

Երբ ներս մտաւ Պօկեմիսիւրու ասուէն այն վարպետարդի և ճարտիկ կերպարանքով որ զինքը կը յառկանչէր, Հրեան զուշակած էր որ պատէ ժամու վրայ կը հասնէր: Իրաւ ալ, չորս բարեկամներ ժողովի նստած էին և անհուշա քաղդի մը նախագահութեան տակ, հացի և միտի ծանրակշիւ հարկին վերայ կ'ոճաէին: Ամսուսն վերջին կիրակին էր, չորս բաստիկ օր, և զժնեայ ամսաթիւ:

Մէտիտի մուտքը խմբովին օղջունուեալ խընդագոյն եղանակով մը, վասնզի զիտէին թէ Հրեան ժլտաութեամբ կը գործածէր իր ժամանակը և քաղաքավարական այցելութիւններու համար չէր զոհեր զայն. հետեւաբար իր գալուտը կապակցութիւն անենալու էր գործի մը հետապնդման հետ:

— Բարի իբրիզուն, գարնանք, ինտա՛ր կ'երթաք 40:

— Բօլի՛ն, ըսաւ Ռոտօլֆ իր բարեկամին, որ անկողնին վրայ պատկած էր և հորիզոնական դիւքի քաղցրութիւնը կ'ըմբոյշինէր, ե՛լ, հիւրասիրութեան պարտականութիւնը կատարելու համար, թող մը ասուր մեր էր. ինչ. հիւր մը միշտ նուիրական բան մըն է: Յանուս Արթուսու կ'ողջունեմ զձեզ, աւելցուց բանաստեղծը:

Բօլին թիչն թող մը ասու որ անգագղինձի աստղութիւնը ունէր և զայն մտածեցուց Հրեային, հիւրասէր ձայնով մը բռնով անոր:

— Ենթադրեցէք վայրկեան մը որ կ'նստն էք զուր և ասէք սա սթօրը:

Մէտիտի ինկու թիկնաթօռին վրայ, և քիչ մը նաց պիտի զանգատէր անոր կործրութեանն եթէ յանկարծ միտքը չի գար թէ ինքն էր որ զայն փոխանակած էր Բօլինի հետ փոխան սկզբանց դաւանանքի մը զոր ծախած էր երեսփոխանի մը որ յանպատասաթից խօսելու դիւրութիւնը չունէր: Նստած ասենք Հրեային գրգռունեքը արծաթաձայն աղմուկ մը հնչեցուցին և այս քաղցրանուագ համարքը չորս Պօկեմիսեքը հեշտալից երազներու մէջ նետեց:

— Հիմա երգասացութեան նայինք, ցած ձայնով ըսաւ Ռոտօլֆ Մարտէլին, նուագակցութիւնը դէլ չեք բեւար կար:

— Պարօն Մարտէլ, ըսաւ Մէտիտի, ես պարզապէս եկած եմ ձեր բախար շինելու: Այսինքն թէ փառաւոր ասիթ մը կ'ընծայեմ ձեզի արուեստագիտական աշխարհին մէջ մուտք գործելու համար: Արուեստաբար, աղէկ զիտեցէք, պարօն Մարտէլ, անջրդի ճամբայ մըն է, որուն սկառիսն է փառքը:

— Պապա Մէտիտի, ըսաւ Մարտէլ, որ անհամբերութեանն ինքզինքը կ'ուտէր, յանուն ձեր պաշտպան ասրբին, յիտուն առ հարիւրին, կարճ խօսեցէք:

— Այո՛, ըսաւ Բօլին, կարճ ինչպէս Բէրէն Թագաւորը որ ձեզի պէս կարճ վեհապետ մըն էր (Սիր քօնօի մի), զուր ալ թլիփասուած ըլլալու էք (օրօքօնի), ս՛վ որդիդ Յակօբայ:



— Օ՛ւ՛, օ՛ւ՛, օ՛ւ՛, ազադակեցին Պօկնմները  
տախտայտառեցին նայելով՝ անտեսելու համար թէ արդ-  
եօք ան չէ՞ր ձեղքաւեր փրկութեան կլլելու համար:

Բայց այս անգամ ալ Գօլին խորատու չեղաւ:

— Ահա թէ ի՛նչ է խնդիրը, յարեց Մէտիօիս:  
Հարուստ արուեստաւէրին մէկը, որ նկարահանդէս  
մը կազմակերպելու վրայ է Եւրոպայի չըջնը ընկու-  
սանմանուած, պաշտօն յանձնեց ինծի նշանաւոր նըս-  
կաբներ հայթայթելու իրեն: Այս միւլգէտնին մէջ  
կ'ուզեմ որ գուց ար ձեր տեղը սեննաք: Մէկ թու-  
քով, եկած եմ ձեր ճիւղի մտաւ անցըն գնելու:

— Կանխիկ դրամով, հարցուց Մարտել:

— Կանխիկ, պատասխանեց Հրեան, գրպաննե-  
րուն նուազախումբը հնչեցնել տալով:

— Գո՛հ ես, բոաւ Գօլին:

— Ադ ալ հարցնելով բան է, վրայ բերաւ Ռօ-  
տուֆ մուկին, ժանտաւանձ մը գտնելու է այս սին-  
լըքարին յիմարաբանութիւններուն շնչամաւը դո-  
ցելու համար: Աւազակ զեղի, չէ՞ս անտեր թէ մար-  
դը սկսուաի թուք կ'ընէ, բսել է ձեզի համար նուրի  
բական բան չի կայ այս աշխարհիս վրայ, անտա-  
ուած...:

Գօլին կորատի մը վրայ ելու կայնեցու լաւ:  
Թեան չառուածին կեցուածքը սասծ:

— Շտաւնակեցէ՛ք, Մէտիօիս, բոաւ Մարտել,  
իր նկարը ցոյց տալով, այս անգին գործիս գինը օ-  
րուելու պատիւը ձեզի կը թողում:

Հրեան սեղանին վրայ դրաւ 50 սկուա, փոզեց-  
նացէն նոր ելած արծաթ դրամով:

— Յնա՛յ, բոաւ Մարտել, տարկա առաջապա-  
հըն է:

— Պարո՛ն Մարտել, յարեց Մէտիօիս, գուց լաւ  
զիտէք որ իմ առաջին թուքս վերջինն ալ է: Բան մը  
ուելի չեմ կրնար տալ, աղէկ մասծեցէք, 50 սկուաը  
150 ֆրանք կ'ընէ. տարկա գումար մըն է կարծեմ:

— Փանքըի գումար մը, վրայ բերաւ արթիսթը,  
Գարաւսնիս պատմուածնին մէջ 50 սկուաի մինակ

«քօպուլթ» կայ: Գոնէ շինողչէքը վճարեցէք ինծի.  
այդ դրամին դէզերը հաւատարեցուցէք. կըրցուչէք  
գումարը և ես զձեզ լէտն Ժ. պիտի տնւաւենմ:

— Ահա իմ վերջին թուքս, շտաւնակեց Մէտի-  
օիս, մէկ սու աւելի չեմ տար, բայց ամէնքը հայի  
կը հրաւիրես և ուզածնուդ չփ անտկ անտկ գի-  
նիներ ձեզի և ագանդերին՝ սկեդրամով կը վճարեմ:

— Աւելցնող չի կ'ո՛յ, տանաց Գօլին, բաւնցքը երեք  
անգամ սեղանին դարնելով: Աճուրդը լմնցած է, արը-  
ուած...:

— Ա՛լ յարմարեցանք, բոաւ Մարտել:

— Ես վաղը մէկը կը զրկեմ պտակերը ամնելու  
համար բոաւ Հրեան. երթանք ձալը պատրաստ է:

Չորս բարեկամները սանգուղներէն վար իջան  
ճիւղըսօաներու խմբերգը երգելով: Երթա՛նք ձալի,  
երթանք...:

Մէտիօիս սոտաձեւանօրէն պատուաւիրեց Պօ-  
կնմները. անտնի բաներ կերցուց անտնց որ մինչեւ  
այն ատեն անտիպ մնացած բաներ էին իրենց համար:  
Այդ ձալէն սկսեալ էր որ սոտակօսը դարգեցաւ Շա-  
նարի համար տատապել մը ըլլալէ: Եյնուհետեւ էր որ  
երաժշտագէտը այդ երկակենցողին համար սենեցաւ  
սէր մը, որ երթալով ցնորումի տալիճանին հասաւ:  
Չորս բարեկամները այդ մեծափարթամ խնջօյքէն  
դուրս ելած ատենին գինով էին այդեկուլթըի օր-  
ուան մը պէս: Այդ գինովութիւնը քիչ մնաց որ փ-  
ստալի հեռուութիւններ սեննար Մարտելի համար,  
որ սատուան ժամը երկուքին, իր դերձակին խանու-  
թին օւջելէն անցած ատենը, սք կտիեց իր պար-  
տապանանջը արթնցնելու և դեռ նոր ձեռք անցուցած  
150 ֆրանքը անոր տալու համար. բանականութեան  
յետին նշոյլ մը որ Բօլինի մաքին մէջ տակաւին ար-  
թուն կը մնար, արթիսթը զօպեց այդ անգունդին  
եղբրը:

Այդ կոչունքէն սւթ օր ետքը միայն Մարտել  
գիտցաւ իր պատակերին ո՛ր նկարահանդէսին մէջ անկ



բաներ: Աէն թ'Օնօրէ թողէն անցած ասենը վայր-  
 Կեան մը կայնեցաւ բազմութեան մը մէջտեղ որ հե-  
 ասքքորէն կը դիտէր խանութի մը վրայ նշանա-  
 ասխատիկ մը զետեղումը: Այդ նշանաստիպակը ու-  
 րիչ բան չէր բայց եթէ Մարտիլի նկարը, զոր Մեօի-  
 օրն նպարտվածութի մը ծախած էր:

Մինակ՝ «Կարմիր ծովու անցքը» նոր փոփոխու-  
 թիւն մը կրած էր և նոր անուն մը առած: Վրան  
 յոգնուաւ մը ակնարկներ էին և անունն էր «Մարտի-  
 լիսց նաւահանգրտին մէջ»:

Շատ փողօքուչ պատուոյ ցոյց մը եղաւ հետքերը-  
 քիր ամբօխին կողմէն երբ քողովերձ բրին պատկերը:

Այսպէս անա Մարտիլ ասուն գործաւ այս յոգնա-  
 նակէն զհրօցած, քիթին սակէն մըմնջելով «Ձայն  
 բազմաց ձայն Աստուծոյ»:

\*\*\*

Օրիորդ Միմի որ սովորութիւն ըրած էր առ-  
 ասուն ուշ արթննալու, աստու մը ժամը ասար զոր-  
 կած ասենը աչքերը բացաւ և շատ զարմացաւ երբ  
 քովը չսեսաւ Ռոտուիքը և ոչ ալ սենեակին մէջ:

Առջի զիշեր սակայն զեռ չդառնած անասն էր  
 զայն գրասեղանին առջեւ նստած և որ միտքը զրոյս  
 ըլլալ կը թուէր ամբողջ զիշերը անցընելու գերազան-  
 ցօրէն գրական աշխատութեան մը վրայ. որ արքս-  
 պրուած էր իրեն և որուն ակարասւմէնմասնաւորապէս  
 կը շահագրգռուէր մանկամարդ Միմին: Եւ ստուգիւ-  
 իր աստանքին հասոյթէն, բանաստեղծը խոստացած  
 էր իր բարեկամակիին գործանային շրջազգեստ մը  
 գնել «Տէօ Մօօ» նորաձեւութեանց վաճառասունէն,  
 որուն ցուցափեղկին մէջ ցուցադրուած էր կերպարը:  
 Այդ ցուցափեղկին առջեւ ստէպ ուխտի մ'երթար Մի-  
 միի պնծածութիւնը: Անա ինչո՛ւ յիշեալ գործը ըս-  
 կըսուած օրէն ի վեր, Միմի մած անհամբերութեամբ  
 կ'զբաղէր անոր յաւաղացումով: Շատ անգամներ Ռո-  
 տուիքի կը մտենար անոր գրած պատկան և գլուխը  
 անոր ուսին վրայ հակելով լրջօրէն կ'ըսէր անոր.

— Ընչ տեսնե՞ք, շրջազգեստ ասով կ'երթա՞յ  
 Կոր...:

— Արդէն մէկ թեւը պատրաստ է, քիչ մը համ-  
 բերէ. կը պատասխանէր Ռոտուիք:

Գիշեր մը Ռոտուիքի մասները շփեցնելը իմացաւ,  
 ինչ որ սովորաբար ցոյց կուտար որ գոհ էր կատ-  
 րած աշխատութենէն: Միմի անմիջապէս ելաւ նստե-  
 ցաւ անկողնին մէջ և թխակեր գլուխը վարագոյրէն  
 դուրս հանելով հարցուց անձկանօք.

— Շրջազգեստ լինցա՞ւ արդեօք:

— Նո՛ւ, նայէ՛ պատասխանեց Ռոտուիք և ցոյց  
 տուաւ անոր՝ չորս մեծադիր էջեր խիտ առ խիտ դըր-  
 սուած ասղերով ծածկուած, ճքօրսածո՞ք հիմա ակար-  
 անցի:

— Այ ի՞նչ բարեւ է, բաւ Միմի, մինակ փէշը  
 կը մնայ, ասանկ քանի՛ երես պէտք է փէշ մը շինե-  
 լու համար:

— Գործը զիտէ. բայց որովհետեւ դուն շատ  
 բարձրահասակ չես, ամէն մէկ ասղը երեսուն և երեք  
 գիրով, ասանեակ մը էջերով, մարդու պէտ փէշ մը  
 պիտի կրնանք շինել:

— Իրա՞ւ, հասակս բարձր չէ, բաւ Միմի լրջօ-  
 նէն. բայց կերպարս խնայած ըլլալու երեսոյթը ու-  
 եենալու չենք. արդէն հիմա փէշերը թօյ կը կարեն և  
 րս կ'ուզեմ որ փէշը շատ ծալքեր ունենայ որպէսզի  
 «Ֆրու ֆրու» րնէ:

— Ուզածդ եզ թո՛ղ ըլլայ, պատասխանեց Ռո-  
 տուիք ծանրութեամբ. ամէն մէկ ասղի մէջ ասար գիր  
 ունիլի գրածիս պէտ, շրջազգեստ ուզածիդ չափ «Ֆը-  
 րու ֆրու» կ'ունենայ:

Եւ Միմի երջանկացած ջնացաւ վերածին:

Միմի անխափնութիւնը գործած էր իր բարեկա-  
 մակիներուն ականջը ձգելու թէ Ռոտուիք իրեն գեղե-  
 ցիկ շրջազգեստ մը պատրաստելու վրայ էր. ասիկա  
 իմացածնուն պէտ երկու մանկամարդ կիները ասիթը  
 ձեռքէ չփախցուցին խօսք բանալու Գ. Գ. Մարտիլի և



Շօնարի իրենց բարեկամին առաածեանութեանը վը-  
րայ հանդէպ իր բարեկամուկիին, և այս թուլբերա-  
նութենէն ետքը բացէ ի բաց սպասնօցան ճնանց  
անպատճառ հետեւիլ իրենց բարեկամին աւած օրի-  
նակին:

— Այսինքն, կը յարէր օրիորդ Միմի՝ Մարսէլին  
պիտերէն քօչելով, այսինքն թէ դեռ սասնկ սւթ օր  
եթէ երթալու ըլլայ, դուրս ելլելու համար սօխ-  
ուած պիտի ըլլամ բանթալօն մը փոխ առնելու ձենէ:

— Շնորհքով վաճառասունէ մը սասնկմէկ ֆը-  
րանք առնելիք ունիմ, եթէ այդ սասկին տիրանամ,  
զայն պիտի նւիրագործեմ քեզի օրթի տերև գնելու  
ըստ վերջին նորաձեւութեան:

— Հսպտ ե՛ս, կը հարցնէր Ֆիմի Շօնարին, իմ  
բէնեւաւաս ծախի ծախի եղեր է:

Շօնար գրպանէն երեք ռուս հանեց և սիրուհւ-  
ւոյն առլով ըստ անոր.

— Ա՛ն քեզէ աւել և դերձան գնելու չափ դրամ,  
նստէ բէնեւաւորդ կարկառէ, սասնկ ընելով թէ՛ բան  
կը սորվիս և թէ կ'զբօսնուս: Օգտակարը հաճելիին  
հետ:

Սակայն և այնպէս, գաղանի պակասած խորհրդ-  
գակցութեան օր մէջ, Մարսէլ և Շօնար Ռոօուֆի  
հետ համախորհուրդ, սրայեցին օր մէն մէկը իրենց,  
մէ ջանք չպիտի խնայէր դեպքուծ ալու համար ի-  
րենց բարեկամուկիներուն արդարացի պչրասիրու-  
թեան:

— Այդ խեղճ օղիկները, բրած էր Ռոօուֆի, ու-  
չի՛նչով մը կը պնտուին, բայց այդ օչինչը պէտք է որ  
գտնեն: Ատենէ մը ի վեր զեղարուեստները և գրա-  
կանութիւնը, փասք Առասուօյ, աղէկ կ'երթան և  
մենք բեռնակիրներու չափ սասկ չափելու վրայ ենք:

— Սուտ չէ, ես այ սղբալի վիճակ մը չունիմ  
այսօր, ընդմիջեց Մարսէլ, գեղարուեստները շատ  
բարդաւած ընթացք մը շատ են, կարծեա լէօն Ժ. Բ  
օրերուն մէջ կ'ապրինք:

— Ասանկ ըլլալու է, ըստ Ռոօուֆի. Միւղէթ  
ինծի բոտ օր սասուն կ'երթաս և իրիկունը միօյն  
աուն կուգաս եղեր: Արդեօք ձեռքդ զօ՛րք մը տնցու:

— Սքանչելի գործ մը, բարեկամ, զօր Մէտիօի  
ինծի գաւա: Ակվէ. Մարիօ՞ զօրանցին մէջ կ'ենդաս  
նագիրեր կը շինեմ, սասնկութեք սկայագորքեր իրենց  
պատկերները ինձմէ ուղեցին հասը սէկ մէկո՛ւ վրայ  
վեց ֆրանցի. նմանութիւնը երաշխաւորուած մէկ  
սարուան համար, ժամացոյցներուն պէս: Կը յուսամ.  
ամբողջ զօրագունդը ձեռք օնցընել: Իմ այ դիտու-  
ութիւնս էր Միւղէթի վրայ գլուխը կոկել Մէտիօի-  
օր վճարելուն պէս, սրովհետեւ գործը անօր հետ սա-  
կարկած եմ և ո՛չ թէ պատկերացուներուս:

— Երբ ինծի կը հարցնէք, բոտ Շօնար անփու-  
թօրէն, թէեւ վրայէս յայտնի չէ. բայց ես այ երկու  
հարիւր ֆրանք ու՛ իմ օր այժմ կը քնանան կօր:

— Վա՛յ անխի՛նջ արմատ, եկուր երթանք օր-  
թընցնե՛ք. գօչեց Ռոօուֆի:

— Երկու երեք օրէն կը յուսամ այդ դրամը  
գտնել, յարեց Շօնար, բայց ի՛նչո՛ւ մեղքս պահեմ,  
մեղքս ցանկութիւններէս մէկ քանին իրակամացնել  
է: Բո՛վի՛ հնավաճառին խանութը ձեռք մը հազուստ  
և գայտարափող մը կայ մտնուածդ, սրանց երկօր սո-  
տնէ ի վեր այք ունիմ և անտարակոյս ես ինծի  
պիտի պարդուեմ այդ երկու կտոր բաները:

— Բայց, հարցուցին Մարսէլ և Ռոօուֆի միտեր-  
քան, ուրկէ՞ կը յուսաս դուրս հանել այդ բողմակոյլ  
դրամագլուխը:

— Կայնեցէք ըսեմ, ըստ Շօնար ծանրայուք  
կերպարանք մը առած, և երկու բարեկամներուն մէջ-  
տեղը նստելով, մէկըմէկէ ծածկելու պէտք չունինք  
թէ մինչեւ օր կաճօտի տնգամ և հարկապարտ քա-  
ղաքորիներ ըլլանք, դեռ շատ փուռ հոց ունինք սո-  
տելիք, և հանապազօրեայ հոցը չազուել ըստ կարի  
դժուարին գործ մըն է և սրովհետեւ Առասուած զգայ-  
նիկ արարածներ ստեղծած է զմեզ, մենէ իւրաքանչիւն



չիւրը ընտրած է իր կենսակիցը, որ միևնոյն ասան իր բարստակիցն ալ է: Ուստի սաստիկ խոստովութեամբ ասրելով հանդերձ, յառ դժուար է բան մը աւելցնելով մէկ կողմ գնելը երբ մանուսնդ մարդ իր պնակէն աւելի մեծ արտօսակ մը ունի:

— Ի՞նչ բան կ'ուզես, հարցուց Ռոստիֆ:

— Սա բան կ'ուզեմ թէ, յարե՛ր Շոնար, ներկայ մեր կացութեան մէջ, իրաւունք չունինք բան չհաւնողի հովեր առնելու, նայնիակ մեր արուեստէն դուրս, երբ ասիթը կը ներկայանայ թուանչան մը գնելու զէրօին ազնու, որ մեր ընկերովի ունեցած դրամագրուէր կը ներկայացնէ:

— Շոնար, ըստ Մարտելի, մեր մէջէն որո՞ւն համար կրնաս ըսել թէ բան չի հաւնէր կոր: Հեղուակ օրին մէկը մեծ նկարիչ մը ըլլալու կոչումիս, չը զիջանեցոյ՝ միթէ իմ վրձիններս նուիրելու Փրանսոսի մարտիկներու նկարչական վերաբաղումը ընելու դարձին. մարտիկներ որ զիս իրենց օգորմելի թուչակէն կը վճարեն. չեմ կործներ սակայն թէ ասանկ ընելովու աստիճան մը իսկ վար իջած ըլլամ իմ աստղայ բարձրութեանս սանդուղներէն:

— Իսկ ես, յարե՛ց Ռոստիֆ, չի՞ր դիտեր որ ասանեկինդ օրէ ի վեր յօրինելու վրայ եմ վարդապետական-բժշկութիւնը փոխելու օսկրակերտական քերթըւած մը, նշանաւոր ասամն արայտի մը համար որ իմ ներշնչութեան կը դրամէ՛ ալէքսանդրեան աստղերու ամէն մէկ երկասանեակը ասանեկինդ ասուծի հաւով, այսինքն սարէներէն քիչ մը աւելի սուղ:

— Սակայն ես այդ ըրածէս չեմ ամչնար բնաւ: Ես լուսագոյն կը սեպեմ սիրով թող ալ Մուսայիս որ վիպերգի վերածէ «Բարբիզի սուղեցոյցը», ըսն ձեռքը ձեռքին վրայ պարապ նստի: Երբ մարդս ձեռքը ըրնար մը ունի, ի՞նչ բան է, պէտք է որ օգտուի անկէ. և յետոյ Միմի կոչիլի ծարու մը ունի որ. . .

— Այսպէս, յարե՛ց Շոնար, ինձի բան չպիտի կրնաք բռնել երբ իմանաք թէ ո՞ր ակէն կը բղիթի Պատիզուար, որուն յարդումին կ'օգտուես:

Աւստիկ թէ ի՞նչ էր Շոնարի երկու հարիւր Ֆրանքներուն պատմութիւնը. — Մասնաւորապէս ասան և հինգ օր կոր որ Շոնար՝ երաժշտական երկերու հրատարակիչի մը խանութէն ներս էր մտած, հրատարակիչ մը որ խոստացած էր գալնակի դասեր և կամ «աջօրաէ» ըլլալիք «բիանո»ներ գտնել իր յաճութարգներուն աշխարհին մէջ:

— «Բարի առօրեցոք», ըստ հրատարակիչը երբ աեռու անար ներս մտնելը, այսօր իսկ գալնակ զարնող մը սուղեցին ինէ, ճրչող ժամանակին եկաք. սուղեցող Անգլիացի մըն է, որ կործեմ առատաձեւորէն պիտի վարձաբէ ձեզ: Բայց բո՛ւք անանմ, իբրև գալնակահար, բուսկան վարպէ՞ք էք:

Շոնար խորհեցաւ որ ինքզինքը կամեա եթէ թոյց առլա ըլլար, ասիկա կրնար աննպաստ արգիւնք մը յառաջ բերել հրատարակչին մօքին մէջ, Երգայարէսը սը և գալնակահար մը մանուսնդ որ կամեա է, հազուադիւրս բան մըն է ապագէն: Հետեաբար, Շոնար անդիին յախրասնքով մը պատասխանեց.

— Առջնակարգ գալնակահար մըն եմ, անհուսառարկի կարողութեամբ օժտուած, եթէ երբեք կիւ ծախաէ վարակուած թօք մը, երկայն մողեր և սեւ հագուստ մը ունենայի, կիմա արեւին պէս հոյակապ մէկը կ'ըլլայի. և փոխանակ «Ինաստի աղջկան մօկը» երաժշտական կատար փորագրել առլա համար սեթ հարիւր Ֆրանք սուղելու ինէ, դուք սաքս գալով երեք հազար Ֆրանք պիտի առջարկէիք ինձի ծնրագիր և արծաթ փսէի մը վրայ:

Սա ալ սասոյգ է որ, շարայտեց արթիւթը, ասօր մասներս՝ ասօր արթիներէ ի վեր հինգ սեթերակներու վրայ աստանակիր աշխատութիւն թափած ըլլալնուն հետեանօք, արտօսար կը ձեռնովորեմ փզօսկը և կիովերները:

Այն անձնաւորութիւնը, որուն Շոնարը կը դրկէին, Մրթր Պըսն ասուեով անգլիայի մըն էր: Երգական նախ և առջ ընդունուեցաւ կապոյտներ



հագած սպասուարէ մը որ զայն ներկայացոյց կասեցնէր հագած սպասուարի մը. ան ալ յանձնեց սեւեր հագածի մը, որ Շանարը ներս մտցուց սալօնէ մը ուր գէժ առ դէժ գանուեցաւ կղզեցիի մը որ կեղծ նստած էր և որ իր ձանձրութեամբ կեղծութեամբ վրայ շատ կը նմանէր մեր ունայնութեան վրայ, խեղցող ճշմարէթի:

